





~~N 698~~

1774 *b*



Dur
2633

2713

ԸՆՏԻՐ
ՄԵՏԵՆԱԳԻՐԳ



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՆ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ՆԵՐԵԿԵՅ ՎԱՆԻՅ

ՎԱՆԱԿԱՆԻ

ՈՂԵՆՐԳՈՒԹԻՒՆ

2739

ՅԵՌԱԶՆՈՐԳՈՒԹԵԱՆ
ՏԵԱԹՆ ՄԱՏԹԻՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ
ԵՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ԶՄԻՌՆԵԱ

Ի ՎԱՐՃԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԵՅ

1843 թվոց

1843
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ՆԵՐԵԿԵՅ ՎԱՆԻՅ
ՎԱՆԱԿԱՆԻ
ՈՂԵՆՐԳՈՒԹԻՒՆ

Աղօթք առաջօրու . բան . խ . ձգ . ձե . զք :

Աղօթք զԻշխրայնոյ . ժք . խա . զա . զք :

✕ Աղօթք զըջման . է . ը . իք . իկ . իէ . հա :

Աղօթք խնդրելոյ զնորհս և զթողութիւն մեղաց . դ . ժե . ի . իդ . լ . լք . խ . խէ . խթ . ծ . ծէ :

Մաղթանք հաւատոյ . ծ . ժա . ժք . լք . խք . հէ :

Մաղթանք յուսոյ և սիրոյ . բ . ժք . լք . լէ . խք . խթ . կե . ձք :

Աղօթք յառաջ քան զպատարագն կամ զհաղորդելն . լք . դ . ե . իք . խէ . ժք . ժք :

Աղօթք զինի պատարագին կամ հաղորդելոյն . լք . ա . ե . իք . կէ . զե :

✕ Աղօթք ՚ի սուրբ շարչարանս Քրիստոսի . հէ . իք . լք . կք . հք . հք . խք . կէ . լէ . ժք . ժք . զ :

Աղօթք առ սուրբ Աստուածամայրն . ձ . իդ :

Աղօթք բարեխօսութեամբ սրբոցն . լա . հ . հա . ձք . ձգ . ձէ . զա :

Աղօթք առ հրեշտակս և առ պահապան հրեշտակն . ձա :

Աղօթք վասն բարի մահուան . բ . կք . հք . ձ . ձե :

Աղօթք վասն բժշկութեան . դ . ժք . ժէ . ժք . իե . լե . խք . խք . խք . կք . կք . կք :

Աղօթք վասն հոգեվարաց , յիշատակաւ մահու գերեզմանի յարութեան և դատաստանի : ա . բ . է . ը . ի . իք . լք . լէ . լթ . խ . կե . կք . հք . հթ . ձ . ձա . ձք . կէ . զա . զե :

Աղօթք վասն ննջեցելոյ . ձգ :

Աղօթք վասն հարուածոյ արատեից . գ . կք . ձք . ձք . ձք :

Աղօթք վասն հարուածոյ արատեից . գ . կք . ձք . ձք . ձք :



Գ Ր ՈՒՆՔ

ՅՈԳՆԵԹԵԽՆՁ

ԲԸՆԻՑ ՕԳՏԵԿԵՐԷՑ ԸՊԸՇԸԻՆԸՑ
ՀՈԳԵՇԸՀ ԽՐԷՏՈՒՑ

ԸՆՁԻՆ

ՍՏԳՏԸՆԸՑ .ՉԴ.ՋԼԿԸՆԸՑ ԿԸՆՈՒՆԸՑ
ԿԵՆԸՑ

ԿԸՄԱՒՈՐԸԿԸՆ ՅԸՆՁՆԸՌՈՒ
ԹԵՆԸՑ

ԸՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԸՅՏՆՈՒԹԵՆԸՑ
ՄԵԳ.ԸՑ ԽՈՍՏՈՎ.ԸՆՈՒԹԵՆԸՑ
ՅՈՒՅՄՈՒՆԵՐ

ԳԸԴՏՆԵՆՑՆ ՏԸՐԱԾՄՈՒՆԵՐ ԾԸԾ-
ԿԵՑԵՆՈՅՆ

ՅԸՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆԵՐ ԹԸԳՈՒՅԵՆՈՅ

ՍՊԵԿՏՐԻ ԶՕՐԸՒՈՐԻ Վ.ԻՐԸՑ ԸՆ-
ԲԸԺՇԿԸԿԱՆԸՑ

ԴԵԳՐ Ը.ՉԴՈԴ ԸԿԱՆԵՐ

ՅԸՒՈՅ ԸՆՏԵՍԸԿԸՆԸՑ ՀՆԸՐԸՒՈ-
ՐՈՒԹԻՒՆԵՐ ԲԸ.ՉՄԱՐԸՄՆԸՑ

ԵՐԿԸՆՑ Վ.ՏԸՆԳԻՑ Ի ԳԻՄԱՑ
ԿԸՐԵՆԸՑ ԸՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵՆԸՑ
ԸՈՒԹՐ ԸՐՏԸՍՈՒՆՑ ՊԸՏՃԸՌՐ
Ը.ԴՕԹԻՑ

Ի ԽՆԴՐՈՅ

ՀԸՅՑՄԱՆՑ ՀԸՐՑ ՄԻՆԸՁԱՆՑ
ԵՒ ԲԸ.ՉՄԸՑ ԸՆԸՊԸՏԸԿԸՆԸՑ
ԸՍԸՑԵՒ.

ՄԸՏԵՆՆ ՈԴ ԲԵՐԳՈՒԹԵՆՆ

Գ Ր Ի Գ Ո Ր Ի

ՆԸՐԵԿԱՑ Վ.ԸՆԻՑ

Վ.ԸՆԸԿԱՆԻ

Ի ԽՈՐՈՅ ՄՐՏԻՅ ԽՕՍԻՐ

ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ :

ԲԸՆ Ա .

ՉԵՅՆ ՀԱՌԵՉԱՆԱՅ՝ ՆԾՈՒԹԵԸՆ
ողբոց , սրախց աղաղակ քեզ վերընծայեմ , տե-
սողդ գաղտնեաց . և մատուցեալ եղեալ 'ի հօր թախ-
ձուլթեան անձին տոչորման զպտուղ ըզձից ճենձերոյ
սասանեալ մտաքս , բուրջառու կամացս առաքել առ
քեզ : Այլ հստոտեցիս հայեցիս , գթած , քան 'ի
պատարագն բոլորպատուղ մատուցեալ ծխոյն բարգու-
թե : Բնկալ զսակաւամանեայ բանիցս յօգուած քեզ
'ի հաճութի , և մի 'ի բարկութի : Այցէ 'ի խորոց սըր-
աի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժա-
մանել առ քեզ կամաւորական նուէր բանական զօհիս ,
ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝ որ յինն է պարարտու-
թիւն : Այլ 'ի գնելս իմ ընդ քեզ դատ խառնեալ ա-
ղերսիւ , հզօր . մի իբրև զհամբարձումն ձեռաց ամբարըշ-
տեալն Յակոբու , ըստ բողոքելոյն Ասայեայ , և զանիրա-
ւուլթին Բարեղոնի , տաղտկալի քեզ երևեցի . զոր ա-
ռակ եօթանամներորդի երկրորդի սաղմոսին աղղէ . այլ
իբր զբուրեալ խունկն հաճոյական 'ի խորանին Սելովայ ,
զոր Դաւիթն կանգնեալ նորոգեաց տապանակին հան-

զըստեան 'ի գերութենէն դարձելոյ , որ 'ի վերասին գիւտ կորուսեալս հոգւոյ առակի , ընդունելի կամաց քոյ լինի :

Բ. Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ ուժզինս հնչեցեալ 'ի ձորն վրէժինդրութեան՝ կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս , այժմէն զուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց , որ յիմունս անձին ցուցանի : Խոռվութիւնս ամբօխից , հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոցն հոյք , շարեացն ընդ բարինս , և զերեալ զիս 'ի մահ ըստ հին գիպուածոյն՝ որ նախ քան զշնորհին ժամանել առ իս . զոր ընտրեալն յառաքելականացն դատուց (Պօղոս)՝ առ օրինակեալ զՍուլսէս , զԲրիտտոսի փրկութիւնն յաղթօղ ցուցանէ : Վասն զի թէ մերձ է օր տեառն , որպէս զիր ազգէ , 'ի հովիտն անձուկ ասպարիսին (Յովսափաթու և հեղեղատին Աեղրոնի , փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութեանց , որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ զհանդերձելոցն ինձ կերպարանեն . ապա ևս յաւետ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութիւնն (Նստուծոյ՝ մարմին եղելոյ , մեծապէս գտեալ զիս առիթ վնասուց բազմաց տոկոսեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատից , քան զձեռին նորին վերակայումն անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եղովմայեցւոց և փղշտացւոց , և այլոց բարբարոս ազգաց : Բանզի այն ընտրութիւն ամօք շափեցաւ , իսկ պատուհաս իմունս պարտուց առանց աւարտման ունի զսահման : ՄՏ՝ զուր՝ և որօգայթ անձողդարելի , ըստ մարդարէին և առակողին , տապնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր աստէն զծագրել : Չոր միայն քո է հրաշագործել պտուղս զեղոց 'ի հնարս կենաց ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից , քաւիչ ամենայնի , զովեալ 'ի փառս անձառս անսահմանելի բարձրութեան , յաւետեանս յաւիտենից , ամէն :

ԲՆՆ Բ .

Պ Էրասմոսն յաւելլած իրեն հեծուլեան ասին հոգիէն առնայն յաղթուող Բանն . 'ի խորոց սրտից խօսք ընդ Մարտիոյ :

Ա. Առ արդ քանզի առ բարձրեալն Նստուած յօղաւորական շրթամբ կարգաս , որ զործուք միայն զրաւի , և ոչ ստեղծաբանութեամբ կաշառի , որ յէզիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն , զի՛նչ օրինակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական աստանօր եղից՝ անձն իմ պարտաւոր , պատժակիցդ կործանեցելոյն Սողոմայ . ըմբերանեալ դատախազս Աինուէի , անարի բարբարոսս քան զաիկինն հարաւային , վաթարագոյնս քան զԲանան , յամանեցեալս քան զՄաղէկ , անբժշկականս քաղաք դրօշելոց , նշմար մնացեալ ապտամբութեան հինն Խորայէլի , յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն Յուդայ , կշտամբեալս զեր քան զՍուր , տարամբժեալս քան զՍայդան , խորթաբարոյս քան զՎայելեա , աններելիս քան զանհաւանն Աափառնաում , պարսաւեցեալս իբր զԲորագին , բամբասեցեալս ընդ Բեթսայիդայ , անպարկեշտ ծաղկեցեալ ալիքս Եփրեմի , աղուտղանիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հանդարտութեամբ , 'ի կորեանց առիւծուց անձնական օձս եղեռնային , կերպս ձուոց քարբից լցեալ՝ ժանտութեամբ , պատկերս վերջին հարուածոցն Երուսաղէմի , ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնի : Տաղաւարս մերժեալ հասեալ 'ի կործանումն , խորտակեալ զբացս վտահարան , և կրկին ծրդեալ՝ շինուածս՝ խօսուն , թողեալ ժառանգութիւնս յարմարական , մոռացեալ տունս աստուածակերտ , ըստ բանից նախագրեցելոցն Սովսէսի , Ղաւթայ և Երեմիայի : Յարկս բանական ունօղս բորոտութեան ,

Հարուածեալ խրատու քերմանն օրինիւ կազդուրեալ ,
 օծեալ կաւովն՝ ողորական հեղութեամբն , անձարակ
 գտեալ յեւր հնարից , քակտեալ վերստին ձեռամբ շի-
 նողին , արտաքս ընկեցեալ իրաւացի . հատույցամբ հը-
 բամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ , հերքեալ տարա-
 գրեալ խորոյցաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ :
 Ծածկեալ դրամս յերկրի չարեօք , ըստ աւանդակորոյս
 ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի :

Բ . Այլ դու , Աստուած , Աստուածդ հոգւոց և ամե-
 նայն մարմնոց , ըստ դաւանելոյ աստուածաշնորհին , երկալ-
 նամիտ և բազումողորմ՝ ըստ սրբոյն Զովնանու ձայնին ,
 շնորհեա՛ կատարել 'ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամաց՝
 զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգու-
 թեան : Այլ ընդ լալով սերմանել բանիս 'ի նախընթաց
 չուս աստիճանաց օթեանացս պատրաստութեան , 'ի կա-
 տարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն , դարձայց բերկ-
 րեցեալ լուծեամբ քաւութեան՝ պողոյն երանութեան
 որայիցն բարութեան : Այլ տայեօ ինձ արգանդ սրտի ան-
 որդի իբր Իսրայէլի , և ստինս աչաց ցամաքեալս՝ ո՛վ
 ամենագութ : Այլ բանական մաղթողիս՝ հզօր և ողոր-
 մած , նախ քան երկնի , և երկին երկրի , և նա ցորենոյ
 և դինուոյ և ձիթոյ , և նորա Իսրայէլի : Այլ երկնաւու-
 բացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս ազդեսցէ , քան թէ
 տարերաց ապականացուաց : Դու ստեղծիչ՝ և ես կաւ ,
 բաց տարակուսելոյս 'ի մուտս մաղթանաց այսր հեծու-
 թեան՝ կամս քաղցրութե՛ն՝ զօրանալ աստէն . զի մի 'ի
 բանալ վերնայինն երկնի՝ անընտիր գտեալ կրթութեան
 վայելման լուսոյ , իբր զնիւթ մոմոյ սպառեցայց ջնջեալ
 'ի միջոյ : Ոգի զրկելոյս , ըստ մաղթանաց զոչման ասու-
 ղին , և ոյժ թալկացելոյս , և կեանք մաշելոյս՝ մտացս
 խղճիւ , այլ ոչ տաժանամբ կրից՝ աշխատութեամբ ըզ-
 րեզ խնդրելոյ , սօ դաւանդ մաղթանացս , և տուր զողոր-

մութիւն քո շնորհացդ . ընկալ զփոքրս 'ի տկարէս , և
 շնորհեա՛ զմեծդ առ 'ի հզօրէդ . զօրացի՛ զբանս զղջման ,
 առաքեալ 'ի մեզ Հօգիդ քո սուրբ 'ի բարձանց՝ աստուա-
 ծաշունչ պատգամօքս 'ի սմա եղելոցս : Արդեւեա՛ բարե-
 բար՝ զառակն Ասայեայ , լուսաւորեալ առ ճշմարտու-
 թիւնն , մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ պղնձոյս
 գոյի անարգս ձայնի՛ զոսկի քո շնորհի . ընդ անգարգու-
 թեան երկաթոյս սեւութեան գունոյս՝ պղինձ պճնելի ,
 ցոյցք առաքինութեան , հրաշել Ա իրանանու : Ինդէր
 կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝ չեղկնել 'ի քէն , ան-
 ճառ և ահաւոր : Այլ եղէց անպտուղ 'ի փոքր վաստա-
 կոյս՝ իբր ապաշան սերմանող անբերրի երկրի : Այլ լեցի
 ինձ երկնել և ոչ ծնանել , ողբալ և ոչ արտասուել ,
 խորհել և ոչ հատաչել , ամպել և ոչ անձրեւել ,
 ընթանալ և ոչ հասանել , ինձ ձայնել և քեզ ոչ
 լսել , պաղատիլ և անտես մնալ , կողկաղել և ոչ ողոր-
 մել , աղաչել և ոչ ինչ օգտել , զոհել և ոչ ձենձերել ,
 զբեզ տեսանել և գատարկ ելանել : Այլ ինձ նախ քան
 զկարգալս իմ՝ առ քեզ , միայնդ հզօր . մի՛ զանվճար
 տանջանայն տոյժս՝ ընդ թուով աւուրց մեղօք կեցելոյս
 չարագործիս ինձ հատուցաներ : Այցն զիս զթած , լուր
 ինձ ողորմած , մարդասիրեա ներօղ , խնայեա երկայնա-
 միտ , պաշտպանեա՛ ապաւէն , բարերարեա՛ հզօր , ա-
 զատեա՛ ամենակալ , կենսագործեա՛ նորոգօղ , վերականդ-
 նեա՛ ահաւոր : Արուստրեա՛ երկնային , բժշկեա՛ հնարա-
 ւոր , քաւեա՛ անքնին , պարզեատրեա՛ առատ , շնորհա-
 զարդեա՛ աննախանձ , հաշտեա՛ անախտակիր , ընկալ
 անոխակալ , սրբեա՛ 'ի պարտուց օրհնեալ : Այլ թէ յա-
 ուեցից զաչս իմ՝ նայեցեալ 'ի հայեցուած երկուց վը-
 տանդից յաւուր թշուառութեան , զքոյդ տեսից փրկու-
 թիւն , յոյս և խնամակալ . եթէ նկատեալ զիտեցից 'ի
 վեր յամենագրաւ ուղին սոսկալի , հրեշտակ քո խաղա-

ընթացին քաղցրութեամբ ինձ պատահեցէ : Յ՛յց ինձ ,
տէր , 'ի յերկնս աւուր շնչոյս արձակման՝ մաքրութեան
ոգի՛ լուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝
պարգևօք սիրոյ քոյ եկեալ հասեալ : Ի յարդարոյն
կատարելոյ՝ կարեաց ինձ կյորդ ժամանեցուցես . զան-
ակնկալն բարի , չարիս՝ 'ի յուսահատութեանն աւուր
շնորհեցես : Քա՛ւ լիցի քեզ , բարեբանեալ , որ փրկու-
թիւնդ ես ամենայնի , եթէ ակտացեալս քո ոչխարի՝
զազան դժնդակ տաղես ուղեկից . մեղօք մեռելոյս՝ ան-
ակտ կեանք , կործանելոյս պարտօք՝ փրկութիւն :

Գ . Արդեօք մոռացես զբարերարելո՞ւ ակնկալութիւն .
անտեսեսցես զլթասիրելո՞ւ խնամօղ . այլայլեսցես զմար-
գասիրելո՞ւ անփոփոխ , նհանջեսցես զկենսագործելո՞ւ ան-
վախճան . թողուցնու զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ :
Աղաւաղեսցես զքաղցրութեանդ բարեշնորհ ծաղիկդ . ան-
պատուեսցես զնիւթ պանծանաց քումդ ճոխութեան .
յեղանակեսցես զփառս հերաց քումդ բարձրութեան .
ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան
քումդ պսակի : Այժմէ ողորմածացն է երանութիւն , իսկ
դու բնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ , ո՞չ
զլուրդն պարգևեսցես փրկութիւն . ո՞չ մատուցանիցես
գեղ վերացս , զնչ սպեղանիս խոցուածոյս , ո՞չ դարման
տկարութեանս . ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յու-
սացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգևդ տիեզերաց ,
որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ իսկութեամբ և
յարակայ մշտնջենաւորութեամբ , վկայեալ 'ի բնաւից ,
օրհնեալ և փառաւորեալ յերիս յաւիտեանս , և անզր
քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից ,
ամէն :

Բ Ա Ն Գ .

Ս Երբ որ յաւիտեանս ինչն հիշուիլն անսխալ
նայն անհոգ Երբ որ յաւիտեանս ինչն հիշուիլն անսխալ
Երբ որ յաւիտեանս ինչն հիշուիլն անսխալ

Ը . Տէր իմ տէր , տուիչ պարգևաց , ինքնաբուն
բարի , ամենից տիրող հաւասարապէս . Միայն արա-
րիչ զբնաւս յոչէից , փառաւորեալ , անքնին , ահեղ ,
ահարկու , սոսկալի , հզօր , սաստիկ , անտանելի , անմը-
ձենալի , անըմբռնելի , անիմանալի , անձառելի , անտե-
սանելի , անզննելի , անշօշափելի , անորոնելի , անսկիզբն ,
անժամանակ : Անշամանգաղ զիտութիւն , աներկեան
տեսութիւն , ճշմարիտ էակնութիւն , բարձր և խոնարհ ,
օրհնարանեալ զոյութիւն , անստուեր ծագումն , ամե-
նափայլ ճառագայթ , խոստովանեալ լոյս , անտարակոյս
վստահութիւն , անտարտամ հանգիստ , անյեղլի կնիք ,
անսահմանելի տեսիլ , վկայեալ անուն : Ճաշակ քաղց-
րութեան , բաժակ բերկրութեան , հաստիչ հոգւոյ հաց ,
օտար մթութեանց սէր , աներկբայ խոստումն , ծածկոյթ
ցանկալի , զդիստ անկապուտ , օճոց բաղձալի , զարդ
փառաց , ձեռնկալու միծ , ապաւէն դովեալ , աննուա-
զելի շնորհ , անպակասելի զանձ : Անապական անձրև ,
արիւիացնցող ցօղ , ամենատեղաց դեղ , ձրի բժշկու-
թիւն , կրկնաձիր առողջութիւն , վեհագոյն երախոյս ,
անպատիր կոչումն , համօրէն աւետիս : Ատրկամեծար
թագաւոր , աղքատասէր պաշտպան , մշտահարուստ տուիչ ,
անխափան ղլմեցումն , անահանջելի հրաման , անհա-
մառօտ յոյս , երկար տեսողութիւն , անզղջական տուր ,
անմենարաշխ աջ , արդարակշիռ ձեռն , անաչտատես
ակն : Միսկութեան ձայն , սփոփանաց լուր , բերկ-

րութեան բերումն , անուն կենդանի , նախախնամող մա-
տըն , անդայթազդելի եջ , անխարդախ ընթացք , կեն-
դանարար կամք , աննենդելի խրատ , աննախանձ պա-
տիւ : Այնական հնարք , անձկական պայման , անդտանե-
լի հետք , աներևոյթ շաւիղ , անշափաղիր պատկեր , որ-
քանութիւն անսահման , աննմանական տիպ , անզուգա-
կան դուր , ողորմութիւն բազմագեղ , խոնարհութիւն
տօնելի , համրոյր փոկական : Աւ ես քան զայս ազգ-
մունք վայելականք աստուածութեանդ նուիրելիք . օրհ-
նեալ , զօրեալ , բարեբանեալ , քարոզեալ , աւետա-
րանեալ , հոչակեալ , հնչեցեալ , պատմեալ , անխորելի
կամօք ազաչեալ , և որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն
հոսմունք քաղցրութեան , զոր հանդերձելոցն ճատից
լուսաբանեն կերպաւորութիւնք . որով դուարթ ցուցա-
նիս 'ի փրկութիւնն իմ երանութիւն , իբր 'ի պարարտու-
թենէ իմեքէ ախորժ տենչանօք լցեալ . զի ոչ իմովս
ինչ սնտիապատուաստ փառատրիս երզով , այլ զի
պատճառ իմն աուցես զփորոս աղերս մեծիդ փրկանաց :

Բ . Աւ քանզի առ ամենայն հասակ անկեցեալ յերկրի
ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ
մատենի ողբոց նուագի , որ զամենեցունց ունի զկրից
պատահմանց նշաւակեալ յիւրում պատկերի : Իբր կը-
ցորդ մեծ զիտակական կարեաց համայնից , առ բոլոր
զումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից , առ
նախնի ժամն ժամանողաց , և առ երկրորդ կոչեցեալ
չափու արբունն : Առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝
սակաւաձեռն ծերութեամբն , առ պարտաւորս և ար-
դարս , առ ինքնարդոյ բարձրայօնն , և սխալեալ անձնա-
դատ դատեալն , առ բարիսն և եղեոնապօրծս , առ նը-
կունս և առ արիս , առ սորուկս և ներքոյանկեալս , առ
սեպուհս և գերաշխարհիկս : Միջակայնոց և պայազա-
տաց , շինականաց և սոհմականաց , արուաց և իգաց ,

հրամայողաց և հնազանդելոց , զեր ելոց և նուաստից ,
վեհից և փորոնց , պատուականաց և բամկաց , ձիա-
վարժից և սոսկականաց , քաղաքականաց և գեղջկաց ,
արքայից գոռոզութեանց 'ի սանձս ահաւորին ըմբռնե-
ցիլոց : Միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց , մաք-
րականաց տիրանուէր զգաստութեանց , քահանայական
երջանկակրօն ընտրութեանց , այցելութեանց բարեզգես-
տից դիտողութեանց , ակնուկալութեանց նախադահից
սրբանուէր տեսողութեանց : Արոց ոմանց աղերս աղա-
չանաց , և ոմանց խրատ բարեաց առ դէմն աղօթից
այսու մատենիւ մատակարարեցի , ձեռնարկեալ հոգւոյդ
զորութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմագիւխս , և
ամենեցուն սոցին խնդրուածս՝ զթութեան մեծիդ յան-
դիման լինել սովաւ հանապազ :

Գ . Աւ արատցես զսոյն ընթերցողայն 'ի սիրտս յըս-
տակս՝ բժշկութիւն հոգւոց և մաքրութիւն յանցանաց ,
թողութիւն պարտուց և արձակուրդ մեղաց կապանաց :
Աղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն , և պար-
գեեալ տացի 'ի ձեռն սորին սպաշաւ ըզձից : Հնոր-
հեցի , տէր , և ինձ ընդ նոսին առ 'ի քէն զղջումն կա-
մաց , և նոցա իմովս ձայնիւ շունչս բարեհամբոյրս :
'Աուիրեսցի վասն իմ այսու մատենիւ պաղատանք նոցին ,
և բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկե-
ցին : Ընդ համբոյր ճաշակման այսր ողբերգութեան ,
շնորհ լուսոյ քոյ մտեալ բնակեսցէ : Աթէ եցնն ինձ
բարեպարիշտք ընծայիլ սովաւ , ընկալ կենդանեօքն
վասն քո , 'զթած՝ և զիս ընդ նոսին . եթէ ախտս ինչ
սրբանուէրս կաթուածոց աչաց սովմբ բերիցի , եղիցի
'ի քէն , խնամակալ , և յիս անձրեալ . եթէ զրեսցի
և 'ի փրկութիւն կարցեսցի հաղորդելոցն յայս կիրս
կենաց , արասցես կամաւ քո , օրհնեալ , և ինձ համա-
րեալ : Աթէ հեծութիւնս աստուածահաճոյս 'ի ձեռն
Ը* 2

այսր բանի 'ի գաղանեաց ուրուք յառաջ եկեսցէ , քա-
տեցայց քեւ , բարձրեալ , և ես ընդ նմին : Աթէ ձեռն մա-
քուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի , հաս-
ցէ միացի ընդ իմն ձայնի և աղաչողացն աղերս՝ յառաջ
մատուցեալ : Աթէ պաղատանս բազմադիմիս ընդ իմն
երկնեսցի , լիցի և ինձ քեւ վասն սորին կրկին նուի-
րեալ : Աթէ յարգեսցի այս անձին բանի պատարագ
քեզ 'ի հաճութիւն , նախայրոցն ընդ իս քեւ ընծայես-
ցի : Աթէ 'ի տխրանաց ինչ ձանձրութենէ որ նուա-
ղեսցի , կանգնեսցի վերստին հաստարանաւ այս հառա-
չանաց՝ 'ի քեզ յուսացեալ : Աթէ համբարտակն վոս-
տահութեան մեղօք յատակի , այսու արձանօք պատկա-
նեսցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուցի :
Աթէ յուսոյն ձգարան՝ սուսերրն յանցանաց հատեալ
կտրեսցի , կցեսցի դարձեալ միւսանդամ կամօք ամենա-
կալիք բարւօք պատուաստեալ : Աթէ վտանգ մահո՞-
անձնական ցաւոյ զօք պաշարեսցէ , զտցէ փրկութիւն
սովաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ , կեցու-
ցիչ : Աթէ տագնապաւ որ տարակուսի 'ի սիրտ խոցի-
ցի , քաղցրութեամբ քո սովաւ ապրեալ ողջացի : Ա-
թէ անբաւելի կորստեամբ պարտեսցի՝ յանդունդս որ
խորոց իցէ ընկուզեալ , եկեսցէ 'ի յոյս կարթիւ այս
հնարից՝ քեւ պատսպարեալ . Աթէ թմբութեամբ խա-
րից խաւարին դործոց իցէ որ մեասեալ , զօրացի անդ-
րէն վասն քո , միայն ապաւէն , 'ի քեզ ապաստան եղեալ :
Աթէ պահպանակն վստահութեան զանձն ուրուք թցէ ,
ընկալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի
նոյն հաստատութեան : Աթէ ամայի 'ի զգուշութենէ
պահողացն որ դեգերեսցի՝ սպասեսցէ սովիմբ , առ 'ի
նոյն դարձ նորոգողիդ : Աթէ սարսուռ զիւային ջերման՝
զողութեամբ ինչ զօք խոռվեսցէ , սթափեսցի 'ի սոյն
յայս նշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խոր-

հրդոյ . եթէ անօրէնութեան մորիկ խորտակիչ հողմոյ
յանկարծ բախեսցէ զհաստուածս մարմնոյ շինուածոց
մարդոյ յերկրային ծովուս , հանգարտեսցի անդրէն զե-
կաւ այս թեոց 'ի քեզ պատկանեալ :

Գ . Այլ արացես լինել դեղ կենաց առ հնարս ցաւոց
հողոց և մարմնոց քոց ստեղծուածոց՝ զայս կարդեալ
սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո , բար-
ձրեալ : Օսկսեալս իմ դու կատարեա . եղիցի հոգի քո
խառնեալ 'ի սա . շունչ զօրութեան մեծիդ միացի 'ի
քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս . զի դու տաս
զօրութիւն վհատեալ սրտից , և ընդունիս փառս յամե-
նեցունց . ամեն :

Ի ԱՆ Դ .

Վ Էրոսի յաւելում ինչիս հեծո-լեւոս նսքն հսկիւն ա-
նայն առ իւր հողմանոց բանի . 'ի խորոց որոնց խոսք ընդ
Աստուծոյ :

Ա . Այլ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ 'ի
ձեռին ունիս զշունչ կենդանութեան հողոյս բազմա-
մեղի , յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ
յաւէտ երկնչիմ : Վասն զի ահաւոր և անտանելի և
'ի սահմանէ բանի փախելի յիշատակ անձողպրելն
անաչառք քո ատենի՝ 'ի կշտամբումն իմ պարտաւո-
րի , արարիչ երկնի և երկրի : 'Այ զի և չիք իսկ բժշկու-
թիւն բազմավտանգ սաստկութեան վիրացս անողջանա-
լի . խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժա-
նեսաց՝ որսողին զանձն իմ 'ի կորուստ : Մանաւանդ զի
ոչ գոյ պատասխանի , ըստ առակողին , յաւուր պատե-
րազմի , և ոչ բանիւ իրաւանալի , և ոչ վերարկուաւ
պատսպարելի , և ոչ զիմակօք կեղծաւորելի : Ոչ առ
երեսս բանիւր մատչելի , և ոչ կերպարանօք երբէք խա-

բերի , ոչ յօղուածովք բանից ստերի , ոչ արադմամբ ուտից փախչելի , ոչ թիկանց դարձուցանելի , ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի , ոչ բերանով ընդ հող հաստելի , ոչ 'ի խորս երկրի զօղելի : Վանդի մերկ են քեզ ծածկեալքն , և հրապարակեալ են աներևոյթքն . արդարութիւն իմ նուազեալ և իսպառ ունայնացեալ . մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առաւելեալ . չարիքն իմ մնացական , և ես կորստական : Իրաւանցն կշիռ պակասեալ , և անիրաւութիւնն իսկոյն զօրացեալ . բարեացն բերք հալեալ , և սխալմունքն արձանացեալ . աւանդն կորուսեալ և դատակնիքն այժմն գտեալ . մահուն մուրհակ զծեալ և աւետեացն կտակ եղծեալ : Բարերարն տխրեցեալ և բանսարկուն ուրախացեալ . հրեշտակաց գունդն թաղծեալ և սատանայ խնձղիւք պարեալ . վերնական զօրքն ողբացեալ և ստորնայինքն բերկրեցեալ . սպանողին մթերք լցեալ և պահողին գանձն կապտեալ : Օտարին կողմն կանգնեալ և ստացողին պարզե մատնեալ . հաստողին ձիր մոռացեալ և կորուսչին հաղբ պահեալ . երախտիք փրկչին հենդնեալ և բելիար զւարթացեալ . կենացն աղբիւր փակեալ և զոսողին ժանդ ժանդիս ժամանեալ :

Բ . Եւ արդ ոչ ապաքէն ըղձալի էր , ըստ գրոյն կանխութեան նախաձայնելոյ , ոչ ստեղծանիւն երբէք յարգանդի' և ոչ նկարիւն 'ի յորովայնի , ոչ 'ի ծնունդ յառաջագոյնի և ոչ 'ի լոյս կենաց հասանիլ , ոչ 'ի թիւս մարդկան գրիլ և ոչ 'ի հասակ աճման ամբառնալ . ոչ 'ի պատկեր զեղոյ վարդարիլ , և ոչ բանիւ հանդերձաւորիլ : Վան ընդ այսպիսեաց սաստկագունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց , զոր և ոչ վիմաց կարծրութիւն բերէ , թող թէ մարմնոց լուծականութիւն :

Գ . Եւ արդ տուր , բարեգութ , աղաչեմ գեղ , տուր ինձ ողորմութիւն , որ զայսոսիկ դու ինքնին քեզէն քոյ-

ովք բանիւ մեղ սահմանեցեր ստելով , թէ տուք զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ Աստուծոյ , և սուրբ եղբրուք . զի զողորմութիւն կամիմ , և ոչ զպատարագ : Ահա բարձրայլի վերստին , ինկեալ , այսր յիշատակաւ , որ ունիս զամենայն , և 'ի քէն է ամենայն , և քեզ փառք յամենեցունց . ամէն :

Բ Ա Ն Ե .

Վ Իրոպին յաւելած կրկն հիշումն նախն հսկողի առնայն ողբեր մտլեանայ բանի . 'ի խորոց սրտեց իտա ընդ Աստուծոյ :

Ե . Եւ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն գոյիւ զըաղեալ , և յիմարութեամբ պատրուականաւ զինեաւս յիմարեալ , որ ամենայնիւ ստեմ , և ոչ միով իւրիք ճշմարտեմ : Վանդի որովք դիմօք վերազրեցելովք նշանախօք աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ , ո՛վ իրաւագատ ահաւոր , անձառ , անպատում , հզօր , Աստուած բոլորից : Վանդի դասեալ աստտին 'ի սոյն զապերախտութիւն մեղուցեալ անձինս առ քումդ երախտիս , ցուցից զերաւունս քո միշտ զօրացեալ և զանիրաւութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ : Որ արարեր 'ի քո պատկեր պանծալի' 'ի ձեռն վեհիդ սուաւորութեան , զտկարս օժանդակելով :

Բ . Օգարբարեցեր բանիւ , փայլեցուցեր փլմամբ , մտօք ճոխացուցեր , իմաստիւք աճեցուցեր , հանձարով հաստատեցեր , 'ի շնչականացն որոշեցեր , հողով իմանալեա խառնեցեր , իշխանականին գոյիւ պճնեցեր . ծրնար հայրաբար , սնուցեր դայեկապէս , տածեր ստացողապէս : Տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ քաւթի , ջրովն կենաց սոսոցեցեր , աւաղանին ցօղով մաքրեցեր ,

կենսոցն վտակաւ արմատացուցեր , հացիւզ երկնայնով
 ջամբեցեր , աստուածային արեամբդ արբուցեր , անհպիցն
 և անհասանելեացն ընտանեցուցեր : Չաչս երկրեղէն 'ի
 քեզ համարձակեցեր , լուսովդ փառաց վերածածկե-
 ցեր , զհողանիւթ մատուենս անմաքուր ձեռացս 'ի քեզ
 մատուցեր , զմոխիրս անարդ մահացու՝ իբր զնշոյլ լու-
 սոյ յարդեցեր , զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մար-
 դասիրապէս և անարժանիս իմոյ՝ անձին կնքեցեր : Ոչ
 կիղեր զքերանս լցեալ նանրութեամբ 'ի ժառանգակիցն
 կարդալ զքեզ , ոչ կշտամբեցեր զյանդոցնալս 'ի քո
 կցորդութիւն , ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս 'ի
 քումդ ակնարկութիւն , ոչ արգելանաւ կապանաց ընդ
 մահապարտացն տարագրեցեր : Ոչ խորտակեցեր զգաս-
 տակ բազկիս , որ անմաքրապէս առ քեզ համբառնայր .
 ոչ մանրեցեր զոսաս իմոց մատանցս 'ի շօշափելն զբանդ
 կենաց . ոչ պատեցին զինև մառախուղք 'ի ձօնելն ըզ-
 քեզ՝ ահաւոր . ոչ փշոցեր զպարս առամանցս յըմ-
 բողմանելն զքեզ՝ անսահմանելի : Ոչ զնացեր բարկու-
 թեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետևօղս , իբր
 ընդ վրիպեալ տունն Իսրայէլի , Ոչ խայտառակեցեր 'ի
 հարսնարանիդ զանարժանս քումդ պարերդութեան , ոչ
 'ի դձուձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր ,
 ոչ կապանօք ձեռացս և ոտիցս՝ յարաաքին խաւարն
 հալածեցեր :

Գ. Չայս ամենայն մասունս բարեաց և զներելոյդ եր-
 կայնմտութիւն ընկալեալ 'ի քէն , բարերար , օրհնեալ և
 յամենայնի միշտ երկայնամիտ , փոխադրեցի զնասակարս
 պարսեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւնս ,
 մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածուփ
 խորհրդոց յուզմանց երկրաբարշտութեանց : Չայստսիկ
 քեզ , Մտուած իմ և տէր , ընդ այսքանեաց բարեաց
 փոխաբերեցի . զայս քեզ ինձէն հատուցի չարիս , ըստ

մովսիսեան յանդիմանութեանն առակի , մոռացեալ
 զիմաստութիւն և սիրօղս յիմարութեան : Չայսց բա-
 րեաց երախտեաց կաճաւս՝ ընդունայնութեան գնացիւք
 չարաչար ունայնացուցի . զայս լուսաւորութիւն շնորհաց
 անձառից 'ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ՝ մերկան
 խելագարութեան ցնդեցի : Եւ թէպէտ բազում անգամ
 ծանուցար կարկառմամբ ձեռին քո այցելութեան ձգել
 զիս առ քեզ , ոչ հաւանեցայ ըստ մարդարէին որ
 զԻսրայէլէ ախրաստանութեան . և թէպէտ խոստացայ
 դաշնաւորեցի քեզ հաճոյանալ , և ոչ ընդ այսմ սահ-
 մանաւ ուխտիւ փակեցայ , այլ դարձեալ զնոյն նիւթեցի
 չարիս , անդստին յոճն առաջին մատեայ , փշոցն մեղաց
 հերկեցի զանդաստան սրտիս յորոմանն արդիւնատրու-
 թիւն : Եւ իս ելանեն առածք աստուածարեալ սուրբ
 մարդարէիցն . քանզի մնացեր յինէն խաղողոյ , և ես ընդ
 այնորիկ փուշ շտուաւիղեցի . դարձայ յանախորժ դառ-
 նութիւն պտղոյ՝ այդիս օտարացեալ : Բուռն հարի զան-
 հաստատ հողմոյ , որովք միշտ տատանեալ այսր անդր
 տարաբերիմ . ըստ ձայնի երանելոյն Զօրայ ընդ ձանա-
 պարհ իմն անգարձ գնացի . 'ի վերայ աւազոյ շինուածս
 յիմարութեան կառուցի : Եւ այնատարր հետովք խաբեցայ
 կենացն անձկալեաց հասանել . փակեցի ինձէն զելիցն
 ուղեորութիւն . բացի կամաւ զկորստեան խորխորանս :
 Խցի զպատուհան լսելեացս իմոց առ բանիդ կենաց ըն-
 դունելութիւն . կափուցի զաչաց հողոյս հայեցուած
 առ 'ի զկենացն դեղ նկատել : Ոչ ընդոստեայ 'ի
 թմրութեանց լքմանէ մտացս 'ի պատգամ փողոյդ ա-
 հաւորութեան . ոչ զզատացայ 'ի բողոք զուժի հրա-
 փորձական աւուրն ընտրութեան . ոչ երբէք զարթեայ
 'ի նիհմանէ քնոյն մահացուի , որ 'ի կորուստն կարա-
 պեաւ : Ոչ՝ ետու հանգիստ քոյ հողոյդ 'ի մարմնե-
 ղէնս տաղաւարի . ոչ ընդ բնութիւն շնչոյս խառնեցի

զման շնորհաց քումը պարզեի . իմոյս ձեռք կոչեցի կորուստ , ըստ առակողին , զհոգիս կենդանի մահացուցանել :

Գ. Եւ զի՞նչ է ինձ սակաւ և նուազադոյնս յօրել սահմանս կսկծելիս չափաբերականս , մինչ անցեալ է ըստ քանականութիւն և վրիպեալ ըստ բժշկութիւն : Արդ քո է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս , և անոխակալութեամբ մատչել առ այցելութիւն դատապարտելոյս , Որդի Աստուծոյ կենդանւոյ . քեզ փառք յամենայնի . ամէն :

Բ Ա Ն Օ .

Վ Էրրաբն յաւելած իրին Գեթու-Լեան Կարին Կսկսիս ասոյն աղբիւս հաղ-Լանոյ Բանի . ի խորոյ սրտից Եսոս ընդ Աստուծոյ :

Ա. Իսկ արդ զի՞նչ բարեք զոյ առ այս , կամ որ օգուտ ինձ առ սոյն , զսահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել , և ոչ զամբարեալ շարաւ մահացու վերիս խարանաւ բանիս արտաքս հերքել , և կամ ըզձանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս , իբր տաղտկացուցանողական հնարաւորութեամբ , մատնամուխ զզուանօք փսխել :

Բ. Եւ բանզի ոչ գտայ արժանի ՚ի փառս ընդ սրբոցն դասս . որոց լի են բերանք նոցա ծաղու՝ և շքութունք իրեանց ցնծութեամբ , ըստ առակողին և սաղմոսողին , ՚ի կարգն երկրորդ զիմեցից՝ զմամսիսն իմ յիշատակել համայն աստանօր . թէպէտ առ իմում թերութեան բարուցս անբարեաց՝ և նոքա յաղթականք իցեն , իբր ապաշաւեալն քան զանապաշխարն : Տօնելի եղել Մանասէ առ իմոց պարտուցս աղաւելութիւն . պատուեցաւ և փառիսեցին առ դժնէիս ամպարշտութիւն :

գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ուխտազանցութիւն . յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն Ամասեայ առ անշնորհութիւն ապախտաւորիս . օրհնաբանեալ եղիւ աւազակն , որ դատտխաղն է անհաւատից . պատուեցաւ կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշաւողաց : Ոչ պակաս քան զՓարաւոն զստեղծուած սրտիս իմ խստացուցի . ըստ օրինակի խռովութեան մրկաց ծովու ծփեցայ . ոչ այնքան սարսեցի և պատկառեցի ՚ի սաստկութենէ քումը հրամանի , որքան արեք ծովուն յեզերացն : Ինչ թիւս չափուց կշռութեան առ իմս գործոց՝ և ոչ աւազոյն կոյտ սահմանեցաւ . պակասեաց անբաւիցն շիղջք առ համբարս իմոցս անօրէնութեանց :

Գ. Օ ի թէպէտ և յոյժ բաղում են մանունքն ՚ի յափուենս ջրոյն համահաւաքեալք , այլ ուրոյնք և առանձնականք ՚ի ծննդոց աձեղութենէ . իսկ մեղանք իմոց յանցանացս անթիւք . զորս անհնար է առնուլ ՚ի միտ : Ոմն և ծնունդք իւր , ոմն և շառաւիղք իւր , ոմն և բիծք իւր , ոմն և արկածք իւր , ոմն և փուչք իւր , ոմն և արմատք իւր , ոմն և հաստուածք իւր , ոմն և պտուղք իւր , ոմն և նշխարք իւր , ոմն և ճիւղք իւր , ոմն և ոստք իւր , ոմն և արմկունք իւր , ոմն և ճիրանք իւր , ոմն և մատունք իւր : Ոմն և խլրտմունք իւր , ոմն և զօրութիւնք իւր , ոմն և ազգամունք իւր , ոմն և նշմարանք իւր , ոմն և տիպք իւր , ոմն և մնացուածք իւր , ոմն և ստուերք իւր , ոմն և մթութիւնք իւր : Ոմն և յարձակմունք իւր , ոմն և հնարք իւր , ոմն և պատիրք իւր , ոմն և դիտմունք իւր , ոմն և դիմեցմունք իւր , ոմն և չափք իւր , ոմն և խորք իւր , ոմն և գարշութիւնք իւր , ոմն և կայծակունք իւր , ոմն և կիրք իւր , ոմն և մթերք իւր , ոմն և զանձք իւր : Ոմն և ցնցուղք իւր , ոմն և աղբերք իւր , ոմն և գետք իւր , ոմն և շանթք իւր , ոմն և հրդեհմունք իւր , ոմն և պատկաստանք իւր , ոմն և վեհք իւր , ոմն և ան

2739



գունդք իւր, ոմն և բորբոքմունք իւր : Ոմն և աղջութիւնք իւր, ոմն և ամպրոպք իւր, ոմն և կայլակք իւր, ոմն և հոսմունք իւր . ոմն և հեղեղք իւր, ոմն և սառամանիք իւր, ոմն և դրունք իւր, ոմն և շաւիղք իւր : Հնոցն և տապ իւր, հրատն և գորշիք իւր, հալոցն ճարպին և ճինճերմունք իւր, օշինդրն և դառնութիւն իւր, կործանիչն և հնսզանդեալք իւր, բռնաւորն և յելուզակք իւր, գոռոզն և սպառազէնք իւր, աւազակապեան և դումարտակք իւր, գազանն և կորիւնք իւր, խածանօղն և ծակտուածք իւր, ապականագործն և նմանիք իւր :

Դ. Արդ այսոքիկ պետք են ղխաւորութեանց ապականողաց ոգւոց համայնից, դասեալք ընդ ինքեամբք նուաճութիւնք մասանց՝ իւրաքանչիւրոք ՚ի սոցանէ բիւրք բիւրուց և հազարք հազարաց . իսկ զհամայնիցս թիւնա միայն զօրէ իմանալ, որ զառ ՚ի մէնջ չէութիւնն գրեալ իբր զէութիւն գործոց տեսանէ : Աւ արդ եթէ որ զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ գինքըն ծանիցէ, և հասարակագ բնութեամբ վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և ՚ի չսփու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի և կամ զբռնաւ իսկութիւնն սահմանեցի, որ ՚ի մերս բնութեան պտուտկի ազգի ազգի վրիպականութիւն : այլ ՚ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ մի երեւեցուցի, զի նոքօք և զայլն իմաստասիրեսցիք, թէպէտ և ոչ բաւանդակապէս :

ԲԱՆ Լ :

X
 Վերստի յաւելուած իրեն հեծողութեան նորին հսկողն ունոյն ողբիս հարկանաց բանէ . ՚ի խորոյ սրբից ետս ընդ Աստուծոյ :

Լ. Եւ զի մի ղերկութեանն վստահութիւն ՚ի սպաւկտրեցից, և ապաղէն եղեալ մատնեցայց այսքանեաց աներծութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք, զոր վերագրեալք սահմանեցին՝ զօրբանութիւն պատկերին ձեւոյ եղեալ ահարկուս, ցուցից առ սմին բազմաբոյլ քանութեան մարտկացդ՝ զօրեղ ախոյեանս աստուածականս՝ ամենայաղթօղս և անպարտելիս, թէ և կսկծելիս վիրս և գժուարակութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ ճանապարհաց երկք և տաժանմունք : Բանղէ զայն ամենայն գունդս չարութեան բանսարկուին զօրաց՝ սակաւ մի արտօսք կաթուածոց աչաց, իբր զճճիս զեւտունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խրտմանց՝ անկեալ ՚ի վերայ ծորումն ձիթոյ կամ գոյզն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ : Աւ զոյզն մի հառաչումն սրտի հեծութեան ելեալ ՚ի յոգւոյ, իբր շնչումն հարաւային ջերմութեան խառնեալ յարեւու, ըզսառամանեաց սաստկութիւն հալէ : քանզի ըստ միումդ նմանութեան հեշտածիւք են, և ըստ միւսումդ դիմազրութեան դիւրամեոք :

Բ. Այլ ես ոչ երբէք կասեցից դատել զգատապարտեալս՝ բանից կսկծմամբ, պարսել զպարտաւորեալս՝ իբր զֆեսասակար անփրկանաւոր անհամոզելի . վասն զի զոմանս սատակեալ ՚ի յիմոց նեղչացն, ոմանց զօրութիւն տամ կենդանանալ առ հողոյս կորուստ : Տունկս դառնոստեան, որ զգարշութիւն անստակ վս-

րուց ծաղկեցի . բարունակս ապականաբեր և մահողկու-
զեան , որ զկորստեան զինին երկնեցի . « Բանանու զա-
ւակս » և ոչ Յուզայի , ըստ ասից մեծին Ղանիէլի . որ-
դիս գեհնին , և ոչ արքայութեան . ժառանգս դը-
ժոխոց , և ոչ փառացն փափաքելեաց . նիւթս տանջանա-
ցըն , և ոչ հանգստեան : Ապերախսս առ երախտաւորդ ,
ապաշնորհս առ բազմապարգեւդ , միշտ մեղուցեալս առ
երկայնամիտդ , դառնացուցիչս քաղցրութեան բարերա-
րիդ , ծառայս չար և վատ , ըստ տէրունեան յանդիմա-
նութեանն , իմաստունս զչարիս գործել ըստ Եսայեայ
նախասացութեանն , ժիրս առ ժանդագործութիւնս զազ-
րութեան : Փոյթս առ 'ի բարկացուցանել զտէրն , մըշ-
տաշարժս առ զիւտս սպտանայականս , հանապազորդեան
վիշտս ստացողին , թոյլս առ բարեացն թուիչս , ծոյլս առ
երանութեանն ընտանութիւն . դանդաղս առ դիտմունս
խոստացելոցն , անարիս առ կարիս պիտանեացն և օգ-
տակարացն , պաշտօնեայս տիրադրուժ երախտամոռաց :

Պ . Վ լայ անձինս մեղաւորի , զի զարարիչն իմ բար-
կացուցի . վայ որդւոյս կորստեան , որ զկենդանութեանն
ձիր մոռացայ . վայ պարտապանիս անհամար բիւրուց
քանքարաց , որ ոչ գոյ հատուցանել : Վ լայ բեռնակրիս
ծանրութեան մեղաց դժնէից , որ չունիմ դառնալ առ
հանգստարարն . վայ վնասակարիս առ տէրունեան պար-
տուցն , որ չիք յանդիման լինել հզօրին : Վ լայ եղէգնա-
խուր կիզանողականս նիւթոյ , որ տոչորելոց եմ 'ի գե-
հնին . վայ ինձ առ այս յիշատակ , զի նետք բարկու-
թեանն Աստուծոյ այրեցելովք են գործեալ . վայ յի-
մարութեանս , որ ոչ մտառեցի զծածկեցելոցն հանդէս .
վայ ամպարշտիս , զի միշտ անդադար ոստայնս չարեաց
կիկեցի : Վ լայ զմարմինս պարարողի կերակուր որդանցն
անմահից , կտտողացն թունաւորաց զխորդ համբերեցից .
վայ ինձ առ արբուն մահուն բաժակի , որպէս զյաւի-

տենականն տուժեցայց . վայ ինձ առ եյս անարժան
հողոյս յիզկելի մարմնոյս , ի՞բր դատաւորին ճշմարտի
յանդիմանեցայց : Վ լայ ինձ առ նուազութիւն իւզոյն
լապտերայ , զի անարժարծելի է աղօտանալն . վայ ինձ
առ ձեպ տագնապի ահին պակուցման , յորժամ առա-
գաստին մուտն փակեցցի . վայ ինձ առ ձայնին ահաւո-
րութիւն դողացուցչաց և սարսափելեայն բանից՝ երկ-
նաւոր թագաւորին վճռաւն կնքելոյ , թէ ոչ գիտեմ
գրեզ :

Բ Ա Ն Ը .

Վ իւրաքին յու-ելլ-աժ իրին Հեծ-լե-ան Դպրն Ընկու-
նոյն որ-ելլ-սող-անաց Բ-անի 'ի իւրոց որ-ից Ես-ս-լիդ
Ա-ս-ս-ձայ :

Ը . Լ Ե արդ զիւչ գործեցես , անձն իմ կորու-
սեալ , կամ ուր թաքիցես , կամ զխորդ ապրեցիս ,
կամ ո՞րպէս ելցես 'ի մեղացդ բանդէ : Բանկի բազում
են պարտիքդ և անթիւ հատուցմունքն , սատտիկ են կըշ-
տամբանքն և անվախձան նախատինքն . անողորմ են հը-
րեշտակին և անկաշառ դատաւորն , հզօր ասեանն և
անաչառ բեմն , քստմնելի սպառնալիքն և անողորմ հա-
տուցմունքն , ահարկու հրամանն և մերկապարանոց յան-
դիմանութիւնն : Հրեղէն են գետքն և անանցանելի են
վտակքն , թանձրամած խաւարն և արտաբոյ այցելու-
թեան մառախուղն . ապականութեան է դուբն և մշտն-
ջնեաւոր է տագնասն , ամենագրաւ տարտարոսն և ան-
զերծ սառամանիքն : Լ Ե արդ արդարեւ քեզ են զան-
ձեալ դառինքս այսոքիկ դժնդակք և տարժանելի օթե-
ւանք անըմբերելեացդ պատուհասից , ով անարժան անձն
իմ մեղաւոր , չարագործ , պոռնիկ , բազմաբիծ , և սահ-
ման անդաստանի բնաւին անմաքրութեան : Ահա զար-

դիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեսցես , թիրեալդ 'ի յուզըութեանց և զառածեալդ 'ի մաքրութեանց , տարազեալդ յարգարութեանց և 'ի կարգաց պարկեշտութեանց , ունայնդ 'ի լիութեանց հոգեպարզեւ հարստութեանց , նախանձարիւու բարերարին և ամենակալ թագաւորին :

Բ. Եւ քանզի կառուցեր քեզ անել արդեւան և անփախչելի որողայթ , խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէր և զանօրինակդ հարուած , վկայելով զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկութիւն , ո՛վ չարդ 'ի բարեաց , ո՛վ դառնութիւնդ 'ի քաղցրութեանց , ո՛վ խաւարդ 'ի լուսազարմից , ո՛վ կապտեալդ 'ի սքճնելոց : Ո՛վ դսրովեալդ 'ի գովելոց , ո՛վ անպարիշտդ 'ի բարեպաշտից , ո՛վ շնչականդ 'ի բանականաց , ո՛վ անմիտդ 'ի մտաւորաց , ո՛վ անհանձարդ յիմաստնոց , ո՛վ անմաքուրդ յընտրելոց , ո՛վ մահացուդ 'ի կենդանեաց : Ո՛վ խոհերականդ 'ի սրբոց , ո՛վ արբշիւդ 'ի պարկեշտից , ո՛վ կեղծաւորդ յարգարոց , ո՛վ անպիտանդ 'ի պիտանեաց , ո՛վ անարգդ 'ի փառաւորաց , ո՛վ նուազդ յառաւելութեանց , ո՛վ գերիդ 'ի դերագունից , ո՛վ նըւաստապոյնդ 'ի վեհից , ո՛վ աղքատդ յընչեպաց , ո՛վ անարժանդ 'ի փրկութեանց , ո՛վ անանկդ 'ի բարձրութեանց և 'ի հոգեւոր հարստութեանց , և հաստուածեալդ յօրհնելոց :

Բ Ա Ն Թ .

Վերստին յաւելուած իրկնն Հեծալեան նորին Հոյսն ունայն տղերս մողլանոց Բանի . 'ի խորոց սրբից Խօս ընդ Լսարանայ :

Ե. Եւ արդ զինչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարադրեցից 'ի կտակ մաղթանաց մատենի այսր

ողբերգութեան , ո՛վ անձն իմ թշուառ , ամենապատկառ և առ պատասխանիս բանից անբարբառ , անպիտան Լստուածոյ և սրբոյն մասնակցութեան : Օ՛ի եթէ զիճ մի ծովուց 'ի յորակութիւն դեղոյ յեղեղեցից , և ըզգաշտս ստպարիսօք բազմօք սահմանեալ 'ի տարածուն լայնութեան քարտենի չափեցից , և զպուրակս յորունց անտառաց շաւից եղեղանց 'ի հաստուածս գոյութեան զրջաց կազմեցից , և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ զրով սահմանի դրաւել : Կա՛ղի թէ գմայրս Վիրամարու 'ի մի լուծ կըռոց զօղեցից , և կամ զեւառն արարատեան 'ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կազոյցից , ոչ հաւասարէ այնր հարթութեամբ համազուգակցել :

Բ. Ծառս ամբարձուղէշ՝ ստուարաստեղն տերեւալից ունայն 'ի պտղոց , նմանակից յաւետ հարազատ այնր թղենւոյ՝ զոր տէրն գօսացոյց . քանզի սաղարթօք վարսից , այս է արտաքին դիմօք բարեշուք կերպից՝ իբր պսակաւ իմիք պաճուճեալ , բայցականացն գոս բազձալի : Իսկ եթէ մերձեացի տնիօղն խուղել զեւրդերին , գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց և գարշելի 'ի գեղեցկութեանց , ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց : Օ՛ի եթէ ապաժաման յանդպոյշ ժամուն հերպանձ տունկն պտղակորոյս անկենդան , որ դոյզն պատկերն է անպատրաստից , եկն ընդ անիծիւք , և կամ երկիր ուղղեալ ցօղով , և ոչ բազմապատիկ զուանդս արդասեաց երկրագործութեան տածողացն մատուցանէ՝ քեալ մոռանի , իսկ դու՝ ո՛վ անձն իմ եղկելի , սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իբրեւ՝ պտղաւոր , իբր ոչ զնոյն կրեցես պատիժ նախնում առակիդ : Վասն զի զհամայնն ընկալար 'ի քեզ անպակաս յառաւելութեանց , սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին և մինչև 'ի սպառումն ծննդոց նորին , զբերս գործոց նանրութեանց և զդիւտս

նորոգս՝ ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ Աստուծոյ :

Գ. Եւ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէս՝ երեսաց տեսութեան մտացս, անձն իմ անպիտան, վիճօք ձգելոց արձանաց բանից, իբր զանընդեղ զազան վայրենի անողորմաբար զքեզ քարկոծել : Ար թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնումն պատասխանող՝ իբր ընդ ոսոխի ումեմն ընդ անձին յօժարալիտ կամօք ողորիմ, ըստ իմաստութեանն բանի, և զյոյզս մտաց խորհրդոցս զաղտնեաց իբր զզխաւորեալ յանդաւորութիւն չարութեան գործոց խոստովանեալ քեզ տարածեցից, Աստուած իմ և տէր : Օ՛ի որով չափով չափեցից զանձինս ստղտանք, ՚ի քոցդ աննուազ գթութեանց այսրէն չափեցայց՝ ընկալեալ ըզչնորհսդ յաճախագոյնս ընդ մեծագունիցս պարտեաց : Եւ որքան վիրացն հարուածք անբժշկականք և անհրնարաւորք ճարակեցին, այնքանօք չափովք կրկին առ ամին և իմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհրոչակեալ լուսաւորեցին : Եւ ՚ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ առատատրութիւն բարեբանեալ միշտ պսակեցի ըստ խնկաւորդ քում առակի : Օ՛ի քո է փրկութիւն, և ՚ի քէն է քաւութիւն, և աջով քո նորոգութիւն, և մատամբ քո զօրեղութիւն, և ՚ի հրամանաց քոց արդարութիւն, և յողորմութեանց քոց ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութիւն, և ՚ի դիմաց քոց զուարճութիւն, և հոգեովք քո բարութիւն, և օժմամբ իւրոյ քոյ սփոփութիւն, և ցօլով ջընորհի քո զուարթութիւն : Եւ դու տաս մխիթարութիւն, և մոռացուցանես զվհատութիւն, և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութիւն ողբոց ՚ի ծաղր փոխես : Եւ քեզ վայելէ օրհնութիւն գովութեամբ հանդերձ յերկնից յերկինս, և յազգս հարց և ՚ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ժ .

Վ Երսոյն յաւելուած իրկն Էթա-Էթան նսրն Հսկսն սոնայն աղիւս ճասլ-անայ Բանի . ՚ի խորայ սրբից խոս անդ Աստուծոյ :

Ը. Եւ սրբ քանդի միապէս մատնէ կորստեան և զզջումնն ուժգնապէս և մեղանչելն մտեգնաբար . զի թէեւ օտարացեղ իմն են ՚ի միմեանց այլայլութիւնք նմանութեանցն, սակայն զկերպարանս երկաբանչիւրոցն առ միմեանս երեւալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս սրաաղբեն : Օ՛ի մինն զհզօրին ձեռն իբր ապիկար թերահաւատէ, իսկ միւսն ըստ նմանութեան քառոտանեաց պաճարեղինաց յանդգայս եղեալ, գուտոյն առասան խզէ : Վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքչեալ խնդայ հանապաղ սատանայ, իսկ երկրորդաւն ըստ նմանութեան լափիլզօղ դժոխորովայն դազանի՝ իբր կերակրով արեամբ պարարի :

Բ. Եւ սրբ իբր զդանեալ բազմահարուածեան հեծանաւ և յափն մահու ժամանեալ, դոյզն ինչ դարձումն շնոյ ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կազուրեցայց պատսպարեցայց, կանդնեցայց յարեայց յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ Քրիստոսի ձեռամբն՝ որ յթածն է յամենայնի . ՚ի բարերար յերկնաւոր Հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս տխտացելոյս և մահացելոյս : Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից . քանզի և ոմն ՚ի նախնեացն սղբմբք զինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին . զպայաշխարութեանն դեղ ընկալեալ, ապաշաւանաց թողականն զցրաւականն անեղծութեան առտէն ժառանգեաց : Ի վեր քան զորոց Առաքեալ ընդ նմին ցու

ը * 4

ցանկ , որք զհանդէան մրցանակին յերկրի կատարեալ 7
 ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին , և սն-
 տեսիցն ճոխութեամբ փարթամացան : Իսկ զխրախոյս
 տէրունի պաշտելի բանին յիշեալ առ սմին , զի ամենայն
 ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն , է զի և զչափն
 ընտրականաց բարեմասնութեան Աստուծոյ հաճելեացն
 զննեալ աստանօր , զայս պատկեր բանի ընկալաք նախնի
 գահերէց առ 'ի սրբութեանցն մնւտ սովիմբ հանդերձել :
 Առանց որոյ և ոչ աէրն փառաց զիւրսն առ մեզ հրա-
 շագործեաց զօրութիւնս , եթէ ոչ նախ լծակից խնդ-
 րեաց բարերարութեանն իւրոյ զհաւատսն մեր : Ուստի
 և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւականութեամբ
 տոնութեր զորով Աստուծոյ քանզի հաւատք քո կեցուցին
 զքեզ , օրհնաբանեալն Աստուծոյ բերան վկայեաց : Քան-
 զի արդարեւ սեռն տեսութիւն և կատարեալ իմաստու-
 թիւն և առ Աստուած ընտանութիւն և բարձրելոյն ծա-
 'իօթութիւն հաւատոց մասն՝ երջանիկ և ընտրեալ ա-
 նուն , որ յարաձգեալ մնայ անվթար և անփակելի 7
 պատուակից զորով սիրոյ և յուսոյ : Օ՛ի եթէ փոքու
 սերմանի գոյի հատի մանանխոյ չափոյ նուաքսի հաւատք՝
 զւերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս 'ի սիրտս ծովու ,
 ապա յիրաւի ընկալաք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ
 կենաց՝ աներկմիա պաշտօն առ Աստուած , որ զապաւ-
 նիսն և զծածկեալսն առանց երկբայութեան 'ի հոգւոյն
 աչ տեսանէ , Արրորդութեանն փառատրելն անուամբն
 պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ :
 Օ՛ի թէ և զերիսն հատուածս առանձնաւորականս 'ի մի
 և 'ի նոյն խորհուրդ դիտեսցես , յաւէտ մեծասցիս նորօք
 'ի յԱստուած . քանզի թէ հաւատաս 'ի նա , և սիրես .
 որով և յուսաս աներեւութից պարգեւաց նորին : Ամս
 փառք յաւիտեանս . ամէն :

ԹԵՆ ԺԸ .

Մերոյն յաւելում ինչն՝ Հեթո-Թեան Կորն Հոկոբ աս-
 նոյն աղէրն հաղթանայ Բանի . 'ի խորոյ որոնի խօսւ ընդ
 Աստուծոյ :

Ը . Եւ արդ ես յետինս դաւանողաց ունայն 'ի
 բարեաց , նայեցեալ խորհրդով մտացս 'ի սկզբնաւորն
 քով եղիլութիւն 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից ,
 յուսով հաւատամ Զիսուսի Քրիստոսի առնել զոր կա-
 մի : Քանզի հաւատացի , վասն որոյ և խօսեցայ խրա-
 տեալ Պօղոսիւ , ուսեալ 'ի Ղաւթայ , թէ և արդ
 կենդանի մաղթանք նոցա այց ինձ արասցէ . որպէս հա-
 ւատովք ճանաչել զնա , և զզօրութիւն յարութեան նու-
 բա , ըստ Առաքելոյ , և զհաղորդութիւն չարչարանաց
 նորա , և որ զլինի բերին ասացեալքն : Ացորդ է սմին և
 յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս և 'ի նորոգս այս
 փոխադրութիւն , որ 'ի մեղացն 'ի քաւութիւն , և 'ի
 չարագործութենէ յարգարութիւն , և յանմաքութենէ
 'ի սրբութիւն , և յանքաւեկեացս պարտեաց մահու յան-
 ցանաց՝ յանդատապարտն երանութիւն , և 'ի ծառայա-
 կան կապանացս յերկնաւորն ազատութիւն : Քանզի
 զիմրդ ոչ արդեօք չքնաղ քան զբան՝ և 'ի մթութենէ եր-
 կեանութեան խաւարի զտեալ՝ և Աստուծով օժանդա-
 կեալ և օգնեալ սիրտ մեղաւորի , որ ընդ մարմնապէս
 կեալ և օգնեալ սիրտ մեղաւորի , որ ընդ մարմնապէս
 ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպէս : Որ թէպէտ և համ-
 բարձմանէ բարձրութեան գերագունիցն կայից՝ ստորասու-
 զեալ ծանրութեամբ յանդնապիւն վճին խորխորատ գրոյն
 կործանման , նորադիւտ մեղօքն անջրելեօք , ունի և նը-
 խար նշուլից փրկութեան կենաց հպաւոր , իբր կայծակն
 լուսոյ պահեցեալ 'ի միտս և յոգի : Որպէս զհուրն նշանա-
 ւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վե-

հին հրամանի 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոցն : Ուստի և մեղուցելոյն 'ի սպառ թաղծելոյ, և ակնկալութիւն բարւոյն բարձելոյ, և համարձակութիւն շնորհին լքելոյ, յուսալ վերստին անդրէն միւսանգամ նախապարզելոյն փառազարդութեանց դարձեալ հասանել : Վանզի և յատուածուստ անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս, վասն զի սա զտուողին զօրութիւն՝ ամենահնար աւետարանէ : Յոր խունկ հաճութեան մեծապէս հոտուտի Մտուած, քան յամենայն բուրումն անուշից, և քան 'ի խառնեալն երբեմն աղայմամբ 'ի սպաս խորանին, որ է կերպարան անձանց խոնարհից զիջեալ բեկութեամբ՝ առ 'ի միութիւն նոյն նմանութեան : Բայտ որում հարցեալ Փրկչին ամենից՝ ցոմանս ակտացեալս տեսանելեօք, հաւատայք ասելով առ այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ, ոչ պարզեւեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն դրաւ ընկալաւ : Վանզի զինչ քան զմեռելութիւն քառօրեայն դիոյ առ կենդանութիւն մեզ անյուսաղոյն, առ որ կանանցն ժամանելոց 'ի յոտս արարչին հաւատոցն հանդերձանօք, անյապաղարար զփառացն Մտուածոյ տեսին զհանդէս՝ 'ի յեղբօրն կենդանութիւն :

Բ. Իսկ աստատին անկապուտ շնորհին մնացելոյ զկնի մեղանայն՝ հզօրադոյն են վկայք : Նախ Ննուք, զկնի Մհարոն, յետ նոցա Գաւիթ, դարձեալ և Պետրոս. ընդ որս և փոքրն Լոյիազար, որ 'ի մեծէն Մտուածոյ ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ : Եւելորդ է առ այս և բանն առակի անառակ որդւոյն, թողում ըզպտոնիկն՝ որ 'ի տեսունէ զովնցաւ, և զմաքսաւորն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ, և զաւազակն երջանիկ՝ որ յարձակումն վերջին շնոյն հաւատովն պատկեցաւ : Եւ զոր անբաւելին են պարտիք՝ զհաղորդեալն սոյանման մահու արարչին. առ որս և զխաւորն բնորելոց Պօ.

զոս, որ երբեմն նախնին էր անօրինաց : Յորոց ոմանք ծանօթութեամբ օրինին զլորեալք, անդրէն կանգնեցան բիւրապատկեան դերագանցութեամբ քան զնախալորնիցն առաւելութիւն : Իսկ որ նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն պահեալ հայրենի, մերձաւորադոյն դոլպատուիրանի սկզբնահօրն դաւանութեան, որ և զնախնւոյն պարտիս ինքեան վարկուցեալ, զնորայնս իւրովն տուժեաց կրկն տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի, այլ չարչարեալն մարմնով՝ բանականաց բնութեանս կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս բռնութեան մահու փոխեցաւ : Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ, 'ի կատարեալ տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանս կայից հոնեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեանց դժնէից կենացս 'ի կամարն երկնից համարձան : Եւ թէ այն ժամանեաց կանխա՝ զօրացեալ 'ի չարեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութեան, և պատկերն արքունի 'ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունականն քանդակուածով, անկուրուստ և անփոխադիր և յաղթօղ դաւաճանութեան զմերս ենթադրեալ բնութիւն : Եւս առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անքօղ և անվերարկու՝ տերամբ Վրիստոսիւ ուխտեալ : Որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ քան տէրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան և կնիք հաստատութեան առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշանջենաւոր բարեխօս : Եւս ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ պայմանի, համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բանիս, և ակն ունիմ փառացն շնորհի. քանզի արդարեւ յարգարացուցանելն զմեզ Մտուածոյ՝ ոչ ոք զօրէ դատապարտ առնել, ըստ առաքելական բանիս սահմանի :

կառեայս զխմբ . փարատեան , ամենապարզեւ , զամօթա-
կան ակրութիւնս . բարձ յինէն , ողորմած , զանբերելի
ծանրութիւնս : Անշրպեաեան , հնարաւոր , զմահացու
կրթութիւնս . աւարեան , միշտ յաղթող , զխարողին հա-
ճութիւնս . բացազրեան , վերնային , զմոլելոյն մառա-
խուղ . կնքեան կեցուցիչ , զկտրուսչին ընթացմունս . ցը-
րուեան , ծածկատես , զըմբոնողին չար գտմունս . խոր-
տակեան , անքնին , զմարտողին զխմցմունս : Տեսունաղը-
րեան քո անուամբդ զուսանցոյց երդ յարկիս . պարփա-
կեան քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս . զծաղրեան քո
արեամբդ զմուտ սեմոց սենեկիս . կերպայո՞ գքո նշանդ
'ի հետս ելից մաղթողիս . ամբայո՞ քո աջովդ զհասնդըս-
տեանս խշտի . մաքրեացես 'ի հաղթից զծածկարան ան-
կողնայս . պահեացես քո կամօքդ զտառապեալ անձն ու-
զուոյս : Անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչմարմ-
նոյս . կացուցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ .
կարգեացես 'ի զիմի ընդդէմ զիւսցն դասու : Տուր հան-
գիստ բերկրութեան մահահանդոյնս նիրհման 'ի խորու-
թեան զիշերիս , բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ
Աստուածածնիդ և ամենայն բնորելոց : Ամիովեալ պա-
րուրեան զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաս-
տից անզարհուրելի գետեղմամբ 'ի ծփական խոռովու-
թեանց , կենցաղական զբաղմանց , անըջական երազոց ,
խօլականաց ցնորից , յիշատակաւ քո յուսոյդ անփա-
սելի պաշտպանեալ , Աւ սթափեալ վերստին 'ի ննջմա-
նէ ծանրութեան ամենագգաստ արթնութեամբ , հոգե-
նորոզ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ , զայս
ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ , ամենօրհ-
նեալ թագաւոր փառաց անձառից , փառաբանողաց
երկնազուամար խմբից երգակցեալ , յերկինս առաքել :
Օ՛ի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ա Ն Ժ Կ .

Վ Երբին յաւելուած իրին Հիժու-թեան ասորի հոյսի աս-
նոյն ասէրս Տաղ-մանայ Բանի : 'ի խորոյ սրբոյ խօսս ընդ
Աստուծայ :

Ա . Աստուած բարերար հօր ահաւոր , Հայրդ բա-
րի ողորմութեանդ շնորհի , որոյ անունդ իսկ մեծիդ
զգթութիւն և զընտանութիւն աւետարանէ , քաղցր
դժնէից և անգոհացողաց : Ընդ քեզ և Որդիդ քո իբ-
րե քեզ , զօրաւոր ձեռն իբրև զբոյր , անմամանակ
տէրութեամբ ահեղ , ընդ արարչութեանդ քում բարձ-
րացեալ : Աւ Հոգիդ սուրբ ճշմարտութեան՝ բղխեալ առ
'ի քէն անսպառութեամբ , կատարեալ իսկութիւն գոյի ,
էութիւն մշտնջենաւոր , հաւասար քո ամենայնիւ , փա-
ռակից Որդւոյ քոյ տէրութեամբ : Արբեակ անձնաւո-
րութիւն՝ համայն անքնին , տրոհեալ 'ի դիմաց՝ ուրոյն
զատուցմամբ : Իսկ միաւորեալ համագուգութեամբ , նոյ-
նագոյ բնութեամբ տիրապէս , անշիտթ և անանջոպետ՝
միով կամօք և կցորդութեամբ : Աշ երկցութիւն ուս-
մին 'ի յուսմն , և ոչ քթթել մի ական առ նուազութիւն
միոյն ժամանեալ , քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ
անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութիւն , միով
պսակաւ սրբասացութեան անսկզբնաբար աստուածաբա-
նեալ : Վանդի արդարեւ վերաձայնեալս այս խոստովա-
նութիւն երեքփառատրեանդ դաւանութեան զվէմն հա-
ւատոյ Վեարոս երանեաց : Իսկ զգատապարտելոյս անձն
մեղօք՝ բարեհրաման քո ակնարկութեամբ , ով խնորոզդ
գերելոյս , հրաշանորոզ արգարացուսցէ : Վանդի թէպէտ
և քո իցեն պարգեւք , և քո ողորմութիւնք , այլ ոչ 'ի
պարգեւան ես այնքան հոշակեալ , որքան յողորմութեանն-
զի երկրորդն գրայդ յաճախէ զփառս , իսկ առաջինն ըզ .

Ճգնաւորացն յայտնէ զգործս . զի պարգեւք՝ վաստակոցն են փոխատրութիւնք , իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բարերարութիւնք :

Բ . Եւ արդ մի զօրասցին մարդկայինս գործք առաջի քոյոցդ շնորհաց , Եստուած գթութեանց , թէ և անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց բնաւորականս հոսմանց . այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայնամութեան , նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց , Վրանդի և որ մաքրութեամբն պերճանային օրինականացն վստահութիւնք , ՚ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիս , ամենանուազ անձկութեամբ քեալ հրէութիւնն յետնեալ , և յաւէտ ընդ տարապրական ողորմելոցն , առաւել նոքա գտան կարօտեալ մարդասիրութեան : Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ , բարերար , լոր պաղատանաց գոչման հեծութեանս՝ որ կարդամս առ քեզ . ողորմեա՛ , կեցո՛ և մարդասիրեա՛ : Չի քո է երկայնամութիւն , քաղցրութիւն , փրկութիւն , քաւութիւն , և փառք յամենեցունց յաւիտեանց ազգաց . ամէն :

Բ.Ե.Ն.Դ.Թ.Գ.

Վ իրարին յո-ւ-ր-ա-ծ իրին հեծութեան նորին հոգին ունայն ասիւր հող-մասայ բանի . ՚ի խորոց սրբից խօսք ընդ Եստուածոց :

Ե . Պաղատիմ՝ առ քեզ լուսոյ ճառագայթ , արքայ երկնաւոր , գովեալ անպատում , Որդի անձառ մեծիդ Եստուածոյ . խոնարհեցո՛ զուսկն քո , բարձրեալ բարեպութ , կենաց ապաւէն , նորոգ մերձեցեալ կրկին աստանօր ՚ի հառաչումն նուաղս ձայնի վերաւորելոյս :

Բ . Ոչ ցուցեալ է երբէք , եթէ աղաչեաց քեզ ՚ի ձեռն անազակացն սրոյ խողխողեալն , քանզի կարկամեալ

էր . ոչ ձայն պաղատանաց զինի արձակեաց , քանզի անկոխն էր : Ոչ մատամբն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց անսողիդ , քանզի խորտակեալ էր : Ոչ աչս կողկողազինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց , քանզի Ֆեսասպարտ էր . ոչ ՚ի պատգամ բանից միջնորդի զողորմածիդ կամս հաճեցոյց , զի անայցելու էր . ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւններանգ ներկուածով ձորձոցն՝ զգթածիդ սիրտ ճմլեցոյց , վասն զի անյոյս էր : Վա և ոչ ծրնգովքն հաստատութեամբ իբր գարշապարաւ ոտին վարեցաւ , այն զի անյարիր էր . քանզի կիսամեռն ասել կենդանոյն՝ սակաւ ինչ նուազ է ՚ի մեռելութենէ : Սանաւանդ զի ՚ի քոյոցդ խրատեալ բանից , և բարերարեալ քոյդ ողորմութեամբ , և փառօք քո լուսազարդեալ , ոչ միայն զի ոչ վերջացաւ ՚ի հակառակն քո ընթացից , այլ ստահակեալ ապստամբութեամբ յիւր թշնամեացն թիւ յաւելաւ՝ ընդ նոսին դաշնաւորեցաւ , միաբանեաց ատելեացն քոց :

Գ . Իսկ դու , բաղմապարգեւ բարերար , անտխակալ ամենակեցոյց , ոչ միայն ոչ պահեցեր զարագործին մեղաց յիշատակ , այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր . ոչ ոտն հարեր անկելոյն , այլ կարեկցաբար մատուցեալ զծայրագոյն ցուցեր զինամս : Ոչ քահանայապէս ըստ ահարովնեան տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ ՚ի խորտակումն խոցելոյն արագեալ մատար . և ոչ որպէս դեւտականն կարապետային անկատար գործի յերկուցն միջի բաժանեալ խտրոց , հնոյն լուսն և նորոյս սկիզբն , ունայն ՚ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ , զի մի սատակիչն օրինակութեամբ տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշտօն ՚ի քեզ նկատեալ , յառաջ քան զփորձ

առակայիցն սասակեցի . այլ հեթանոսացն պահպան
անունն ասորեստանեացն , որք 'ի հրէիցն ընկալեալ զօ-
րէնս ամբողջ պահեցին , զոր նոքա մոռացան , հողին
կցորդեալ մարմնոյդ վերսրկուաւ մերակերպական խառ-
նութեամբ , զաղատարարն դժագրեցեր զաւետիս առ օ-
տարազգիսն . և աստուածաբարզ ներգործութեամբ
անապականաւ ձեռն կարկառեալ , յարուցեր զմարգն
նախնի՝ մեղուցեալ 'ի մահ իւրոյնն ծննդովք : Օտորտ-
մեցելոյն սիրա բերկրեցուցեր , և զվհատեալն հաստա-
սեցեր , և զթշուառացեալն միանդամ՝ կրկին զուարթա-
ցուցեր : Աւազանին կենարար օծմամբն և բաժական
լուսոյ լցեր . հայիւդ երկնայնով արարչականդ քոյին
մարմնով նոր յեղանակեցեր : Վերակացութեամբ երջան-
կացն ազանց ընտրելոց յանձանձեցեր , զրգեցեր և խնա-
մարկեցեր : Հանդարտընթաց գրաստուն տաժողութեամբ
անզգուելի պահեցեր , մինչեւ յարկն լուսոյ ածեր : Ի
ձեռն երկաբանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրոր-
դաց տուչութեան կտակաց կենդանականաց , մարդասի-
րապէս դարմանատրեցեր : Այլ որպէս երբեմն ընդ Սով-
սեսի՝ թեւս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար
զնա , և 'ի հանգիստ հանդարտութեան երկրին բարու-
թեան առաջնորդեցեր , և զբանին կերակուր ջամբել
հրամանատրեցեր վարդապետութեանց :

Գ . Այլ արդ որ զբնուն ծայրագունին բարութեան
լուսոյ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր ,
զօջտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն
առ քեզ դարձուցեր , կեցո՞ և զիս մաքրեալ 'ի մեղաց
պարտեաց , որ ձրի պարգեւես և անպատրաստից : Ընդ
որոց և ինձ տայես քաւութիւն և բժշկութիւն , բարե-
գութ զօրեղ անքնին , անեղծ ահաւոր օրհնեալ միշտ
յաւիտենից յաւիտեանս , ամէն :

Բ Ա Ն Ո Ւ Ն

Վ Է լոսի՛ն յաւելաւ իրեն հեծալեան նորին հսկիւն ա-
նոյն աղէրս մողլեանաց բանի . 'ի խորոց սրտեց խօս ընդ
Աստուծոյ :

Ա . Իսկ զարձեալ աստուած վերստին առ նոյն հե-
ծութիւն սրտիս վտանգի ինձէն մատուցեալ , սովին նը-
ւագաւ 'ի նոյն ո՞՞՞՞ բանի զամենապարզեւզ արգահատե-
ցից , տաղնադեալ ոգւոյս վտանգիւ 'ի սպառ : Կրք մե-
ոեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ Աստուծոյ , խոս-
տովանեալ ընդ փառացդ քո զիմն անարդութիւն , և առ-
չարեօք՝ իմովք գբոյդ բարութիւն . որովք յաղթեալ
դոայ քան թէ բժշկեալ , և ամաչեցեալ քան թէ հա-
մարձակեալ , ուխտակորոյս աւանգամոռաց :

Բ . Իսկ կրկին առակն որ առիս , որ ոչխարին տրբու-
պին տարացուցիւ , որ յետին անզղայութեանն էր մատ-
նեցեալ մողորեալ , և 'ի լերինն՝ ուր ոչ է այցելութիւն ,
ընդ զագանականացն դիւաց և կոոցն վայրենութեան
թափառեալ : Այլ մերձաւոր դու սակաւ մի հօտին , ոչ
բան ունէի , որով և զցաւոցն աղէտ պատմէի , ոչ ձեռն
ձգողական , որ համբոցն է ազդողարան : Իսկ դու միայն
զովեալդ յսկզբանցն յաւիտեանց և յարդի ծնելոցս ,
գտեալ ըստ մաղթանաց գոչման երդողին զիս զմեղու-
ցեալս յաննչոյն մորբութեան , խնամողորէն տեսչութեամբ
կամաց հովիւ կոչեցար : Այլ ոչ միայն հոգացար , այլ
և խնդրեցեր . և ոչ գտեր միայն , հրաշագործ , այլ և
անձառելիդ բարերարութեամբ սիրոյ 'ի կենդանարարդ
քո յուս բարձեր , և ընդ երկնային զօրսն դասեցեր 'ի
հայրենիդ քո ժառանգութիւն : Այլ արդ դու , հզօր կե-
նարար օրհնեալ այցելու գթածդ յողորմութեան , եթէ
զնոսս ընդարար զապարանեալսն աղերսանաց , որ մինն

'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ , իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութեան վտարանդի բացամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ , 'ի բառաջ ձայնի բարբառոյ , որ անկերպաւոր աննշանական , աստուածային բարեխնամութեամբդ տնտեսեցեր զտիեզերահրաշն խնամողութիւն առ կորուսելոյն մեծ թշուառութիւն : Հայտնեաց վերստին և արդ , զթութեանցդ խոզք և բարերարութեանցդ հոսանք , առ անօրինեալս առաւելութեամբ վերագրելոցդ օրինակութեամբ , առ բազմօրինակ մահու պարտականս , առ որ 'ի բարութեանց խառնից քաղցրութեանց յատուկ համս չար : Առ 'անդամս մարմնոյ արժանաւորս հատման , առ համայնաձարակ ամենաբոլոր ակտացեալ հոգիս վիրաւոր , առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց , առ օտարացեալս յընտանութենէ իմաստնոց , առ անմանս հանգունակից բանաւորութեանց : Որ եթէ տարացոյց գոյր , ես ասէի . թէ նմանակից գոյր իմ , պատմէի . թէ հանգունակից գոյր , ես ճառէի . թէ հաւասար գոյր . ես գրէի : Թէ զուգադործ գոյր , ցուցանէի . թէ օրինակ գոյր , ես ազդէի . թէ յանցեալսն , հայթայթէի . թէ 'ի ներկայումս աստ , ես յուսայի : Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ , և հրաժարեալ ըստ նմանութիւն , զոր միայն քո է քաւել բժշկել և կենագործել , կենդանարար համայն մեռելոց , նորոգութիւնդ տիեզերաց :

Գ . Օ՛ի եթէ սրբոյն սրտի տեսութեամբ երջանկին Դաւթայ անօրէնութիւն չարեաց բարձրացեալ ասի բան զգլուխ , և ըստ ծանրութեանց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց : Իսկ որ առ իս կրին սխալմունք գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասոյզ ամենասպառ ծովուն յորգութիւն , և զլիտոյ լերանց վերագրէ : Այլ շնչեցէ օդ քո քաղցրութեան իբր առ 'Արցիւն , և որ դերբնս հալէ զօրութիւն , ցամաքեցու-

ցանիւ զշիղջ ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրակործան իմոցս պարտեաց և լեռնակարկառ բարձրութեան մեղացըս ամբարձելոց : Առ համառօտեալ զսան քո հզօր՝ ամենակար հնարաւորութեամբ հակիրճ հատուցմամբ , արասցես ահա ելս քաւութեան , ըստ մարդարէին , առ երկարաձիգս անօրէնութիւն : Առ ներելով իմս յամառութեան , ով երկայնամիտ ողորմած օրհնեալ , թուցես միանգամայն , բարեգործեսցես իսկապէս , հասցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տուկոսեացս տոյժս տարժանակիրս : 'Աս զի և չիք իսկ առ քեզ ցասումն սրտի , և կամ բորբոքումն բարկութեան , որպէս ոչ կրին նենգութիւնք և կամ նշմարանք մըթութեան . քանզի կեանք են 'ի կամաց քոյ և լոյս , և ոչ արարեր զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ Դաւթի և Սողոմոնի :

Գ . Աթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի 'ի բարեվիճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անգրէն չարի չար , այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զւերաբանչիւր մեղանաց զպարտիս : Առ այդ բան առ մեզ , որ միշտ 'ի բնութեան ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց անհամար բիւրուց նորոգ յայսնելոց , որք օրինաւորին երեւին յանդաստան սահմանի ամենաբոյս փշածին բընութեանս , ըստ անսուտ քո վկայութեան , թէ միաք մարդայ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութենէ : Օ՛ի որ զկատարեալ մաքրութիւնն ունէր աւետարանիչն կենացդ բանի Հովհաննէս , և զինքն ընդ հասարակաց բնութեան լծակցեալ , հաստատեաց զճրճմարտութիւն քո առ իմս ստութիւն յոյժ արդարացեալ . թէ ասեմք , ասէ , մեզս ինչ մեք չունել , սուտ առնեմք զնա : Առ արդ կատարեալ է բան քո , խնկեալ , և 'ի զլուխ ելեալ անպակաս 'ի ստուգութենէ առ իմս մար-

բութիւնն և դժուրակ անիրաւութիւնն : Վ ասն որոյ խր-
նայեալ յիս ողորմութեամբ , քաղցրութեան ճաշակաց
աղբիւր , միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից . ա-
մէն :

Բ Ա՛Ն Ժ.Օ .

Վ Երաբն յաւելլած կրկն հեծալեան Դարն Հսկողն ա-
նայն աղբիւր հաղթանաց Բանն . 'ի խորոց սրբից խօսք ընդ
Աստուծոյ :

Ը . Եւ արդ դու միայն Աստուած երկնաւոր բարձ-
րեալ բարեգործ . քո է զօրութիւն , քո ներողութիւն ,
քո բժշկութիւն , քո առատութիւն , քո են պարգեւք ,
քո միայնոյ են ձիրք ձրի , քո քաւութիւն , քո պաշա-
պանութիւն : Վն հնարք անիմանալիք , քո արուեստք
անգտանելիք , քո չափք անչափելիք , դու սկիզբն և դու
կատարած : Վանդի ոչ երբէք ստուերացուցանէ զոյս
ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան . վասն զի ոչ
ես գրաւեալ ընդ մատամբ ախտից՝ 'ի վերդ քան զբանն :
Վատկեր անպարագիր անդր քան զօրքանութիւն կշու-
թեան , անչափ լայնութիւն փառաց , անտարրափակ ըն-
դարձակութիւն հատու զօրութեան , անամփոփելի առա-
ւելութիւն բացարձակութեան , անտկարանալի բարերա-
րութիւն գթութեան : Ղու դարձուցանես , ըստ մարգա-
րէին , յայդ՝ զստուերս մահու . որ իջեր կամաւ 'ի հար-
տարոսն ներքին արգելականացն բանտի , յորում և ըզ-
մաղթանացն դուռն էր աղիեալ , և գերեալ անտի զմը-
թերիցն կապուտ վտարանդելոցն հոգւոց , սուսերք հրա-
մանի յաղթական բանիգ զկաս սատակման մահուն խը-
զեցեր , և զմեղացն կարծիս ցրուեցեր : Ղարձ առ իս՝
որ զնդամ՝ զնդանաւ վհիս տղմասիգ պէոյս յերկաթս
մեղաց , վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանասրկուին
նետից :

Բ . Եւ զու յամենայնի տէրդ բարերար , լոյսդ 'ի
ձջ խաւարի , օրհնութեանդ գանձ , ողորմած գթած
մարդասէր , կարող զօրաւոր անպատում անքնին ան-
ճառ , բաւական ըստ սրբոյն Յակոբայ : Անհնարիցդ ա-
մենից դիւրապատրաստ հնարաւորութիւն , հուր ծախիչ
զխոիւս մեղաց , ճաճանչ կիզանող ընդհանրական թա-
փանցանցութեան խորհրդոյ մեծի : Յիշեալ զիս յողոր-
մութեան քո , օրհնեալ , և մի յիրաւունս քո . 'ի նե-
րողութեան քո և մի 'ի հատուցման . յերկայնմտութեան
քան 'ի հաւաստութեան : Եթէ կշուեսցես զմեղանաց ի-
մոց ծանրութիւն , ընդ քաղցրութեան քո՝ և մի ընդ
արդարութեան . զի առ սակ նախնումն՝ յոյժ է նուա-
զեալ , իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւետ ծանրակիր :

Գ . Արդ մատիւր առ իս , բարութիւն , որպէս յուն-
կանն բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն . բարձ
'ի մեղուցելոյս զհողմ մահու խռովութեանս , զի հան-
գիցէ յիս ամենակալ Հոգիդ խաղաղութեան : Եւ քեզ
փառք յամենայնի , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ա՛Ն Ժ.Զ .

Վ Երաբն յաւելլած կրկն հեծալեան Դարն Հսկողն ա-
նայն աղբիւր հաղթանաց Բանն . 'ի խորոց սրբից խօսք ընդ
Աստուծոյ :

Ը . Արդ աղաչեմ՝ զննամակալդ վտանգաւորաց տա-
ժանելեաց կրից թաղծութեանց հոգւոց վշտացելոց , մի՛
յաւելուր հեծութեանս ցաւ , մի խոցեր զվիրաւորեալս ,
մի դատապարտեր զպատժեալս , մի տանջեր զչարչարեա-
լս , մի գաներ զհարուածեալս : Մի՛ զլորեր զանկեալս ,
մի կործաներ զգայթազղեալս , մի մերժեր զհեռացեալս ,
մի տարագրեր զհալածեալս , մի ամաչեցուցաներ զպատ-
կառեալս , մի կշտամբեր զհարթուցեալս , մի խորտակեր
ը* 6

զբեկեալս , մի խռովեցուցաներ զամբոխեալս , մի ալէկոծեր զբքացեալս , մի սասանեցուցաներ զդղորդեալս , մի շփոթեր զմրրկեալս , մի կեղեքեր զգիշատեալս , մի ջաղջախեր զբեկեալս , մի զօշեր զմորմոքեալս : Մի կուրացուցաներ զխաւարեալս , մի զարհուրեցուցաներ զպաշեալս , մի խորովեր զխարշատեալս , մի մահացուցաներ զՏիւանդս , մի բեռանց ծանրութեան մատնեղ զտկարս : Մի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս , մի կրկնակի ողորմն դառն հեծութեանս , մի ուժգնապէս վարեսցիս առ հողս , մի սաստկապէս առ մոխիրս , մի անաչառապէս առ ստեղծուածս , մի ահարկութեամբ առ փոշիս , Մի ընդ հարկանիւր խստութեամբ մեծը ընդ փոքուս , լոյսը ընդ ստորնականիս , բնութեամբ բարիք ընդ 'ի բնէ չարիս , ողկոյզը օրհնութեան ընդ պտղոյս անիծից , քաղցրութիւնը իսկապէս ընդ համայն դառնութեանս : Փառաւորեալդ անփոփոխ ընդ ամենեւին անարգիս , կենացդ նշխար ընդ կաւոյս զանդուածոյ , տէրդ տերանց ընդ տղմիս երկրայնոյ , աննուազ լիութիւնդ ընդ չքաւոր ստրկիս , անկապուտ ճոխութիւնդ ընդ անպատուար տառապելոյս , անկարօտ բարութիւնդ ընդ ամենաթշուառ աղքատիս : Քանզի ո՞վ որ հասեալ յառաւօտ' և 'ի ծագման լուսոյն խիթայ մ'թանալ , և կամ ընթերակաց կենաց' մահանալ , կամ ազատութեան' և պարտաւորիլ , կամ շնորհաց' և դատապարտիլ , կամ փրկութեան' և մատնիլ , կամ 'նորոգման' և եղծանիլ , կամ օրհնութեան' և տարագրիլ : Կամ բժշկութեան' և վերաւորիլ , կամ լիութեան' և նուազիլ , կամ յաճախութեան հացի' և քաղցնուլ , կամ զետոց հոսանաց' և պասքիլ , կամ մայրենի գթոց' և նենգիլ , կամ խնամոց աստուածեան աջոյդ' և զզուիլ :

Բ. Եւ արդ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյն բորոտութեամբ' հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ ,

տէր , եթէ կամիս , կարող ես զիս սրբել : Ինչ աչացաւացն նեղելոց մշտագիշերն խարխափանօք' մեծակական ձայնիւ հառաչեմ . ոչ որդի անուանեմ Կաւթի , այլ ծնունդ Լիդ Լստուծոյ գաւանեմ . ոչ միայն ուարթի կոչեմ , որ վարդապետացն է պատիւ կարծողական զիսկն զիտելոյ , այլ տէր երկնի և երկրի հաւատամ : Ոչ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան , ո՞վ բարեգութ Լստուած մերձաւոր , այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ' ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութիւն : Ոչ թէ ինչ խտրոց կասկածանաց միջոցի բանի , որ երկմտութեանն կարծի նշանակ , 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմութեան , այլ կամիս որպէս բարեգութ , և կարես որպէս զարարիչ . ասա՛ բանիւդ , և բժշկեցայց : Ինչ հարիւրապետին հաւատոց և ես լծակցիմ . ոչ մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորան 'ի խորանէ հաւատամ ազդել քո կարողութեանդ առ յարութիւն և բժշկութիւն , այլ 'ի վերինն երկնի բազմելով և 'ի ստորինս երկրի բովանդակ , առ հրաշխն ըսքանչելութիւն :

Գ. Ոչ ունիմ հատուցանել , շնորհեա՛ ինձ , որպէս դատակնիք բանին քո վճռեաց առ պոռնկին ընդունելութիւն , հնդից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութիւն , Լստուած բարութեանց և տէր երանութեանց , որ յաճախն ընձեռեմ' բազումս փառաւորիս , և 'ի շատն մատուցանել' նովին չափ սիրիս , և յառաւելն ողորմել' կրկին բարգաւաճիս : Եւ յայսքան բարիս իրաւամբք գովիս , և ամենայնի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս , և որ զբոլորն ունիս' ընդ մերումս կշռիս , և անձառեւեաւդ ձրիւ մերայնովքս վճարիս : Եւ ընդ երկրաւորիս զանվախձանն պարտ վարկանիս , և մեծագրեալ քո զմերն վեհս գոհաբանիս , և 'ի սակաւուն տուչութիւն րոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս : Երա՛ և ինձ

զնոյն գթութիւն ունողիս զգործս անհամար պարտուց .
զի և 'ի ճառս երախտեաց քումդ պարգեւաց՝ նորին իսկ
սակով սիրեմն կարգեսցի . և քեզ փառք յամենայնի .
ամէն :

Բ Ա Ն Ո Ւ .

Վ Էրոսի յաւելում իրին հեծակեան Դարին հայրն աւ
նայն աղբիւս հարկանաց բանի . 'ի խորոյ սրտից խօսս ընդ
Արոսայ :

Ա . Արդ ես ծնունդս մեղաց , որդիս մահացու եր-
կանց , արդարեւ անսահման բիւրուց քանքարաց տուժից
գոլ հատուցանող 'ի միում աւուր : Այլ ոչ թէ առ
փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն , այլ
առ անուուազ լիութիւն փրկչիդ Յիսուսի Քրիստոսի
պաղատիմ մարդասիրութիւն . որ չէի երբեմն՝ և ստեղ-
ծեր , չմաղթեցի՝ և դու արարեր , չեւ եւս եկեալ 'ի
լոյս՝ և տեսեր : Ոչ յայտնեցեալ իմ՝ և գթացար , ոչ
կարդացեալ՝ և խնամարկեցեր , ոչ համբարձեալ ձեռն՝
և նայեցար , ոչ պաղատեալ՝ և ողորմեցար , ոչ կերպա-
ցեալ ձայնիս՝ և լուար , ոչ հեծեծեալ՝ և ունկնդրե-
ցեր : Գիտելով զարդեան դիպուածոյս՝ և չանտեսեցեր ,
նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտիս չարա-
գործութիւն՝ և յօրինեցեր : Եւ արդ քո արարեալս և
զքեւ փրկեալս և զայսբանեաց խնամոց յանձնաձեալս մի՝
'ի սպառ կորուսցէ մեղացն հարուած , պիտք բանսար-
կուին , մի յաղթեսցէ յամառութեանս իմոյ մառախուղ՝
ներողութեան քո լուսոյ : Ո՛ր սրտիս կարծրութիւն՝ եր-
կայնամիտ բարութեանդ , մի մահացու մեղիս՝ ամենա-
կատարող լուութեան , մի տկարութիւնս նիւթոյ՝ անպար-
տելիդ բարձրութեան :

Բ . Ահա կարկոտեմ զկարկամեալ բազուկս հողոյս
յանուն քո , հզօր , արասցես ողջ իբրեւ զառաջինն մինչ

'ի գրախտին փափկութեան զպտուղն կենաց կթէի :
Վաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն
տաղնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն ,
ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ՝ սատանայական
բուռն կապանօք , զի մի զերկնայնոյդ ընկալցի զողջոյն :
Խոնարհեաց առ իս , միայն ողորմած , զի բարձրացու-
ցես զվիայոս խոնարհ բանաւոր անկեալ , և զչորացեա-
լս ծաղկեցուցես 'ի բարի կրօնս վայելչութեան , ըստ
աստուածաբանութեան սուրբ մարգարէին : Որպէս զ'ի
ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան , որով զըս-
տեղձիդ նկատեալ զկերպ մաղթեցից , հզօր բարեգութ ,
միայն դու պաշտպան ակնարկեալ խնամուք անձառ քոյ
սիրոյ՝ 'ի շնչական խօսուն քո անօթս , յանէից գոյաւո-
րութիւն լուսոյ հաստեսցես : Ինդ երկոտասանամայ
չարեօք չարչարեալ վշտադին կնոջն տանջեցելոյ՝ զետուք
մեղանաց արեան հեղեղիմ : Հայեաց 'ի բարձանց ան-
մատոյց լուսովդ պարածածկեալ , ուր ոչ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ , այլ տարածումն
հրաշից ամենայն ուրեք զօրացեալ : Ոչ օծութեամբ իւ-
ղով պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ
կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչացս վար-
սիւք հերացս ընծայեցուցանեմ , այլ զամբիծ հաւատս
ամբարձմամբ բազկացս ստոյգ դաւանմամբ հոգւոյ ուղու-
նիւ շրթանց կափուցմամբ՝ զերկիր համբուրեմ , խառ-
նեալ հեծութիւն ընդ աղբրցս արտասուաց՝ բժշկու-
թիւն հոգւոյս աղբսեմ : Ս՛տանեալ մեղանօք հոգւոյս
գոյութիւն լուծեալ մեղկութեամբ , և յերկուց կայից
միայնակողմամբ անհաստատ հետուք , զընթացից գոր-
ծին՝ նահանջմամբ չարին զհետեւականն բարձրութիւն
շինուածոյ մարմնոյս՝ առ ելս ծառոյն կենսաօրիթ պաղոյն
խափանեցելոյ , պատսպարեսցես անդրէն վերստին , միայն
հնարաւորդ առ 'ի փրկութիւն : Օ փառաբանարան

հաստուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրուցոյց արգել հողմն բանսարկուին . հողիդ քո ազդեալ մեծդ ողորմութեամբ , ըստ յաւետարանին բըժըշկեցելոյ , հրաշափառապէս բարեգործեսցես , խանգ կենդանի , ինձ խօսողութիւն անսայթաքելի : Ընկեալ կամ չարեօք 'ի մահի՞նս ախտից ընկողնոց մեղաց՝ զի կենդանի և խօսուն մեռեալ , կարեկցեալ իմուան թըշուառութեան՝ ողբականօք քքուանաց ձայնից , ո՛վ բարեբար Որդի Աստուծոյ , օրհնաբանեալ աչացդ ցօղով վերականդնեսցես 'ի կենդանութիւն , իբր զսիրելին 'ի յանշնչական մեռելութենէ : Ստոյգ դառնացողս 'ի դբի մեղաց կամ տարակուսեալ , ձեռն մատուցեալ , արեւ անստուեր Որդի բարձրելոյ , հանցես զես 'ի լոյս քումդ նշուելից : Բնդ աղիողորմ թշուառութեան կականման ձայնի այբույն 'ի Այլին մօր միամօրին , տատանմամբ մատանցն , կոծմամբ կրծիցն , հոսմամբ արտասուացն , սոււայտանօք ախրութեան դիմացն , և ես պալաաիմ վերջին հեծութեամբս : Տնր յուսահատելոյս զքաջալեռութիւն մխիթարութեան զթած քո բանիդ , ասելով և ինձ գովեալդ բարի ստեղծիչ աշխարհի , թէ մի լար գերի բազմաց ողբալի . որով ընդ պատանւոյն կենդանացելոյ 'ի վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ : Բնդ այսակիր անգգայեցոցն դիւալուել և քարակոշկոճ հեղձամղձուկ եղկելի անձանցն , քսամենլի զիսախօիւ հերացն , վայրեններես քանդադուշելոցն , 'ի քէն ողորմեալ , փրկիչ բոլորից , իբրև զնոսին առ քեզ դիմեցից : Հերբեալ մերժեսցես զգունդս չարացն ապականողայ 'ի քո խորանէս , զի ժամանեալ Հողիդ քո բարի այսբէն հանդիցէ , լցեալ զմարմինս մաքրութեամբ շնչոյս՝ զվեցմամբ անդամոցս , զգաստ արասցես զխեղագարեալս ամենաթշուառ : Բնդ գերեցեալ դժոխարնա

կաց վտարանդելոցն հողւոց արդելեալ կամ 'ի վտանգի . զձառագայթ ողորմութեան փառաց քոյ ծագեալ , լոյսդ իմ անձկութեան , 'ի կապանաց օջտողին զերծեալ զես ապրեցուցես : Գալտնորոգայթ աներեւութեակ վրիպակ արահետ գարշութեամբ մեղացս ջրգողեցեալ ուրոյս կերպարան կայ 'ի տալնապի . զծածկեցեալն 'ի տեսողութեանց զչարագործին թիւնիցն այտուցմունս , քո ինքնաւորդ զօրեղութեամբ , Որդի Աստուծոյ , զթածաբար առողջացուցես : Օրազմագան տարազս ցիղիցն զանաղանից ախտաւորութեանց մահացուցանողաց իւրականօք կորստեան բերիւք , դժնդակարմասն շառաւեղօք հաստատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս , տարակորդեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի , որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հողւոց առ բանիդ կենաց արդիւնասարութիւն :

Գ . Եւ քանզի անցաւ ըստ նմանութիւն օրինակութեանց յանցուածոցս վէր , ըստ ճարակողն քաղցկեղի , առ բնաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումն , չիք սպեղանի իբր Խորայելի առ անշափութիւն խարանացն մատուցանել : Ի խարսխաց բարձիցս մինչև ցափն կառուցման լրութեան անդամոցս չէ առողջութիւն , այլ ամենեւին անբժշկութիւն : Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ և երկայնամիտ թաղաւոր անմահ , լուր պաղատանացս արգահատութեան սրտիս վտանգի , որ կարդամս առ քեզ , տէր , 'ի նեղութեան :

Բ Ե Կ Ի Ժ Թ .

վ Էրստին յա-Էրսած իրին հեծու-Է-Է-Է Զարին Հսկողի ա-
նայն առ-Է-Է Զա-Է-Է-Է Է-Է-Է . Ի Խորոց սրբից Խոսք Ընդ
Էրստ-Է-Է :

Ը . Սրայեաց ամենահայեաց տեսութիւն կենաց բա-
րութեան յուսոյ՝ ՚ի մեծարարբառ աղաղակ ցաւազնեալ
անձինս հեծեծանաց : Ընհաս մեծութիւն, անուն ահա-
ւոր, բարբառ կենդանի . լուր ցանկալի, ճաշակ ախոր-
ժեղի, կոչումն պաշտելի, բարութիւն խոստովանելի , ազ-
դումն խնկելի, իսկութիւն դաւանելի, էութիւն փառատ-
րելի, ղոյութիւն օրհնաբանելի, աէր Զիսուս ընդ Հօր
քում՝ զովեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ սրբոյ
բարձրացեալ և վերաձայնեալ : Որ միայն մարմնացար
վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո ըստ
քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած հզօր երկ-
նային, և այժմ՝ ղլուծեալ և զխորտակեալ հողանիւթ
անօթս՝ աստուածօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ
զթած, նորոյ հաստատեա : Օփոյին պատկերս մեղօք
հնացեալս՝ ՚ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ, պա-
ղատիմ առ քեզ, վերստին ձուլեա : Օխախտեալ շի-
նուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս՝ պահ-
պանաւ հոգւոյս մաղթեմ, բարերար, ՚ի բնակութիւն
քեզ մաքրագործեա : Մի հատուցաներ չարեացն իմ
գործոց զնոյն փոխատրութիւն : Ըրբեալ եմ ըստ մար-
գարէին բանի՝ և ոչ ՚ի զինւոյ . թափեա՛ զմրուրս անօ-
րէնութեան թմբրութեան մահու բաժակիս՝ ազատարար
հրամանաւդ, ամենակեցոյց, զի մի զքոյդ քամեցից ՚ի
վերջին աւուր յետնուս՝ հասուցմանն :

Բ . Ըրգար ես յիրաւունս քո, և յաղթօղ ՚ի դա-
տաստանի . եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք

քո . եթէ դատապարտես աստուտ սկսեալ զտանջողա-
կանն կշամբութիւն, ստոյգ են հատուցումնք քո : Եթէ
յանդունդս խորոց սուզեացես, թէ զկենդանութիւն շարժ-
մանս բարձրես, թէ զգանիս զօրութիւն ունայնացու-
ցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուցես, թէ
զկենացն ճաշակ ՚ի քեզ ինքն ամփոփեսցես, թէ զհա-
սարակաց կերակրոյս դարմանս բարձրես, թէ զաւուրցս
հարստութիւն համառօտեսցես, թէ ընդ իջման քաղց-
րութեան ցօղոյ՝ և հուր տեղացես : Թէ ՚ի լրութենէ
բանի քոյ սովեցուցես, թէ զախանջացս դրունս խցցես,
թէ զշնորհիդ ձիր կտրեսցես, թէ զպիտին յատակի
ոտիցս սասանեսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քո
հանցես, թէ ՚ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես,
թէ փայլատակմամբք հրոյ պակուցես : Թէ անբժշկա-
կան ցաւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես,
թէ զազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցասման
հոսեսցես : Եւ թէ այլ ինչ նորոգ արարած տանջա-
նարանաց կազմեսցես՝ չար քան զՏարտարոսն և սաստիկ
քան զգեհենն, թունաւորագոյն քան զօրդունն, տա-
րակուսելի քան զխաւարն, երկիւղազին քան ղխորխորա-
տրն, ողորմելի քան զմերկութիւնն, վկայեմ անձամբ
անձին՝ յոյժ պարտապան գոլ սոցա :

Գ . Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանու-
թիւնք փոխատրութեանցն առ ազգակցութիւն մեղանացս՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք նշանակիցք
այսր խորհրդոյ, արդ կարեւոր է խոստովանել և յան-
դիմանել զերեսացն ծածկոյթս առ ծանօթութիւն խնդ-
րողին : Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս
մատուցայ, յիրաւի ՚ի նախնումն վտանպին տաղնապեալ
սառնում : Եւ զի ոչ զցանկականն խրոխտականութիւն
սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս զանզովանալի զկի-
զումն : Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, ար-

դար Հասուցմամբ 'ի մթութիւն ըմբոնողական միգին կորստեան վրիպեալ դանդաչեմ : Եւ զի ոչ խտրեցի զմանունս փոքունցն յանցանաց , իբրեւ անփասակարք վարկանելով , պատկանապէս 'ի խածանողականաց զազերն զեռնոց խթեալ խոցոտիմ : Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին , 'ի դէպ իսկ ըստ զծագրութեան այսր օրինակի ապականութեանն զբոյ նուիրեալ մատնիմ :

Դ . Եւ արդ ոչ յաստուածուստ ամենաբարի զանձուցդ չարիս , և ոչ 'ի լուսոյդ նշուից խաւար , և ոչ յապաւինութենէդ զայթաղութիւն , այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ : Մեղանք անօրէնութեան իմոյ զանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութեան մթերս . հոգւոյ իշխանին մոլութեան հնազանդեալ , թողի գտեղի քո նորա , ըստ պրոյն խրատու յանգիմանութեան : Եւ քանզի յայտնեցաւ յետուստ գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոյ , և արկաւ զերեսք կերպիս անվայելուչ ստուեր ամօթոյս , ըստ մարդարէին առակի , տգեղս ցուցեալ զիս ամենեւին իբր մերկացեալ խայտառակեցելոյ պողնկի : Կազեմ՝ յիս զլոսքաութեան , արքայ երկնաւոր , զի թօթափեալ զմեղաց փոշիս , ըստ աւետեաց ձայնին դարձելոցն 'ի Բաբելոնի , նստայց վերստին կանդեալ 'ի հողոյ , և 'ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ անասանելի : Ըստ եսայեան բանին , զգեցեալ զգարութիւն բազկի կարութեան նախնում մաքրութեանն , վասն մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգեւ քոյ Ղստուածութեանդ . օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ե Ն Ի .

Ս Էրոսին յուրաւոր իրեն հեծս-լեւան նորին հսկողն առնոյն որչեր ճողլուսոց Բանի . 'ի խորոյ որոյնց ետու ընդ Ղստուածոյ :

Ե . Տեր տէր , անոխակալ և երկայնամիտ , ներօղբարեգութ , հզօր ողորմած . ահա ճշմարտութեամբ են գործք քո , և խոստովանեալ դատաստանք քո . վկայեալ են ընտրութիւնք քո , տեսողք ծածկութից : Ընդ երկց երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցովն փորձեցան և ոչ փնասեցան 'ի Բաբելոնի , զնոցա թախծութեան զերդն հառաչեմ , մեղայ , անօրինեցայ յանցեայ ամպստամբեցայ , և պատուիրանաց քոց ոչ անսացի : Եւ քանզի մաքուր գորով 'ի փնասուց նոքա , և զայս խոստովանութիւն գոչէին , իսկ ես ընդ նոցայն նովին աղերսիւ ձայնակցեալ սմին որքոց երդութեան , և այլ յաւելից ամենապարտս մահու : Ընդ Գանիէլի երանեալ և սուրբ մեծ մարդարէի , որ 'ի քում հարազատութեան ազգականութենէ տանն Հուդայի շառաւիղ ընտրեալ , զնորայն առեալ ընդունական և նուիրական բանից պաղատանս , իմովս պատժականութեան գոչմամբ հեծութեանս և այլ կրկնեցից : Ի մէջ գիտութեանս՝ անպատշաճականս գնացի , զարտուղի սխալեալ դժնդակապէս . այս է ամենայնիւ ամենայն իրօք մեղանչելն : Ըստ սահման կշռութեան կամաց քոց արտաքս վազեցի . որ է հաւատի կերպարան բաւիր անօրէնութեան : Ընդիտիցն չափոց չարութեան գործոց լրումն յաճախութեան նիւթեցի . որ է ճշգրիտ պատկեր յանցաւորութեան : Ըսպառնացար , և ոչ զարհուրեցայ . արգահատեցեր , և ոչ երբէք լուայ . որ է ապստամբութեան յայտնի նշանակ : Բեզ արդարու-

Թիւն հանդերձեցեր, բարերար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր. քեզ փառս վայելականս, և ինձ նախատինս յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ, և ինձ մաղձ քաղցախեալ ՚ի կատարածի: Քեզ բարերանութիւն անյոելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի. քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն տարապրութեան. քեզ իրաւունս բազմարժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամենավարանս. քեզ բարձրութիւնս անձառ գովեստից, և ինձ զաճիւն լիզելոյ պատիժ ձաղանաց:

Բ. Եւ արդ ընկալար դու, բարեաց ընտրութեանց անկշիռ սահման, զբոյոցդ ակործականաց կնգրկաց պրտոց վերառեալ ըստ քեզ, և ես զիմոյս աստէն առ սմին պարսաւանս յոգունս կրկնակի բարդեալ ինձ ըստ իս: Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր յանձնառութիւն, իսկ ինձ գործ հիւսեցից շարս և տողս բանից դարովականաց, որ քան զամենայն դժնեայս յաւետ վրիպիցայ: Մոլորեցայ անառակ ընթացիւք ՚ի միտս վարենիս, յանդրնեցայ շրթամբք խօսից ՚ի բանս երկրաւորնս, զակատեցայ անկասելի ՚ի պատկանելեացն գործոց: Քրացայ վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի ՚ի հող մահու եմ իջանելոց. գոռոզացայ բարձրացայ, որ և ոչ զգրաւական հողոյս տուրեւառութեան շնչոյս ունիմ ՚ի ձեռին: Ըմբարտաւանեցայ փոշիս շնչաւոր, ամ պարհաւաճեցայ կաւս ձայնաւոր, հպարտացայ հողս անարգութեան, ՚ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի, բազուկ կառուցի բաժակս մանրելի: Տարածեցայ առաւել իբր վեհ, և դարձեալ իբր զհերքեալ առ իս իրքն ամ փոփեցայ: Բարկութեանն բոցով ցողացայ տիղմս բանաւոր: Իբր զանմուռք մեծամտեցի, որ ընդ քառոտանեաց մահու եմ փակեալ: Վերկս արկի կենցաղոյս սիրոյ, և ՚ի քեզ թիկունս փոխանակ դիմաց դարձուցի:

՚ի Թոխլու մտաց ընդ խաւար խորհրդոց սլացայ: Օտնաբառ հոսիս մարմնայս փափկութեամբ յաւետ վտտեցի: զգորութիւն աջակնս կողմանս տկար արարի, ահեկանաց ըս կայից ուժգնութիւն տալով յազլեցի: Օքեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ, զոր չէ աստ գրելի, և ոչ պատկանելի. իբրև զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսեան բանին առ Եփրեմ, ՚ի նախնին իմ սովորութիւն: Էջաղթարանս վայրի ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ. ոչ կացուցի յոտին զերիվար մտացս երասանաւ բանին: Ընդ հին չարութեանցն նորոց ինքնաստեղծութիւնս գտի. անուրս ըստ Էդրայ ծանունս և անտանելիս ինձէն ինձ սաստկացուցի: Երկրած անկարկատելի, ըստ Երեմիայի, զանձն իմ արարի. իբր զվիժած անդրելի կոչման, ըստ առակարկուն, ՚ի մարդկանէ համարոյ եղձայ: Եբր զհանդերձս ինչ ապարահից, ըստ եսայեան բանին, զազրացայ. որպէս զթրծեալ աման խեցեղէն փշրեցայ անարժարժելի. ըստ բամբասանացն Եզդմայ ՚ի մարդարէէն զգորրորդ չափն անօրէնութեան սատակման ինձ պատրաստեցի: Եւ զի՞նչ սքտութիւն առ այս՝ և զայս յաւելու ընդ այս. քանզի զվրանն իսկ դիւանուէր Մողորայ առի ինձ այսրէն՝ առ դժոխոյն ժառանգութիւն, լթեալ զերկնայինն. յեղանակաւ իմն օրինակի նմանակիր ձեւակերպութեան, որպէս առակ պատկերի աստելն Ռեփանայ բարեկականի՝ յարայել պատուեցեալ գուցաւ ՚ի Մինայ:

Գ. Իսկ արդ զի ՚ի նախնի շնորհին համարձակութեան դարձեալ փոխեցայ զրկեցայ, ելայ հեռացայ բաժանեցայ և անպատուաստելի կարեցայ: Երդ ընկալ զիս, աէր, վերստին կերպարանեալ ՚ի պատկեր հողոյ, զանարժանս կենաց իբր զմահապարտ, իբր զչարագործ, իբր զպատկառեալ, իբր զկոխան եղեալ բանասրկուին: Որպէս զանրժնելի մատնեցեալ, որպէս զհա-

սեալ յատակս մահու, որպէս զգարչեցեալ, որպէս ըզ-
խոտան դտեալ քո կոչմանց, որպէս միանդամայն 'ի կո-
րուստ վարեալ: Արպէս գեղերեալ, որպէս վաննեցեալ,
որպէս սարսկուսեալ, որպէս թշուառացեալ, որպէս
վհատեալ: Արպէս կործանեալ, որպէս խորտա-
կեալ, որպէս բեկեալ, որպէս զթախծեալ, որ-
պէս յողի տրտմեցեալ, որպէս թշնամանեալ: Իսկ դար-
ձեալ ակնարկելով քո գթած մարգասէր հզոր, 'ի յա-
ղերս բանիս՝ որպէս զզջացեալ, որպէս խոստովանեալ,
որպէս 'ի յոսս քո գիմեցեալ, որպէս զապաշխարեալ:
Ար կշոնս գրես և մեծ համարիս զհատաչ հոգւոյ, և
զաղ դուսն շնչոց հեծութեան, զկակիծ շրթանց, զպաս-
քել լեզուի և զսխրականութիւն երեսաց, զկամս խոր-
հրդոց և զյօժարութիւն խորութեան սրտից: Ար փր-
կութիւնդ ես անձանց, և անսօղ ոչ գործեցելոց, և ըս-
տեղծիչ բոլորից, և բժիշկ վերաց աներևութիւց, պաշտ-
պան յուսացելոց, և բարեխնամօղ տէր ամենեցուն: Եւ
քեզ փառք յամենայնի, յաւիտեանս. ամէն:

Բ Լ Ե Ն Ի Լ .

Ո՛ր Երսրիւն յաւիտեանս կրկնէ Ընդդէմ Լեւոն Կոնստանտինոպոլսեաց
հայն աղէրս հողմանայ Բանի . 'ի խորոց սրտից Խոստ Ընդդ
Լուսիւնայ:

Ը . Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ
'ի մահ՝ ոչ կացի երբէք 'ի յոսս մարդոյ, և ոչ սիրտ
բանականի ստացայ, ըստ գրոյն: Եւ քանզի ոչ փոփո-
խեցայ 'ի նախակարգիւրոցդ, և ոչ ընդ բարւոք ուղին ըն-
թացայ, ընդէր ոչ զխոտորնական հետոյն խաւարայնոց
զգէմն ցուցից 'ի սահման կարգի այսր ընթերցուածոց:
Եւ որս ամեալ յարմարեալ առ տոյն զկերպարան աե-
սակի բանիդ երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ ան-

փոխադրելի պահելով, խոստովանեցայ վերստին դար-
ձեալ աստանօր զմեացեալ չարութեանցն զրիծս, զոր
յաջորդաւդ է իմանալի:

Բ . () Եսար ժանտագործս արժանապատիժս՝ անեցուն
արարի զնացիւք անաստութեան զգունդն (Բեկիարայ):
Կաքաւս կայթից և ցոյցս վազից խաղաղացն դիւաց
դարչելիաց ճարտար խաբողաց՝ ծուլութեամբս իմով շը-
նորհեցի: Քանս գաղտնիս և խոցուածս անյայտս 'ի
կործանեցելոցն դահճաց ընկալայ: Այ հերքեցի զվա-
նեալսն խաչիւն Քրիստոսի, քան թէ անդէն առաւել
կրկին իսկ զօրացուցի: Այսն իմոյ հիբոյս անօրէնու-
թեան՝ անունդ Յիսուսի հայհոյի 'ի մէջ այսականաց,
որպէս վասն Խորայելի 'ի մէջ հեթանոսաց: Հարուածս
հարուածոց փասակարս ապականութեանց ժանդոյ և
թրթրոյ և այլոց կերչաց վատնողաց զծաղիկ հոգւոյս,
ըստ սրբոյն (Յովելեայ) հրաշական ողբոցն, որ 'ի ցոյցս
երկրի վասն Խորայելի՝ յառակս հինից և չարաց հոգւոց,
յիս ինքն տնկեցի. ստեղծանել զնոսս պատրաստեցայ,
քան թէ ստտակել: Բիւրս կուտեալ հաւաքեցի անձին
իմում մարտիկս մահազէնս. կշտամրիչս ինձ գոյացուցի
անիրաւս և անպատկառելիս: Այերհակս ինձ զօրացուցի
ապառուսն և անկուռելիս. դառինս ինձ առի մասունս
ընդ քաղցրաւենեացն ճաշակաց, առ ստացօղն միշտ
նենգաւորս, և առ բանասրկուն յաւէտ հաւատարիմս:
Եւ աղ աղէտիս, վեշտ վտանդիս, խաւար ամօթոյս, մութ
պատկառածացս. զիմորդ և առ բանիս յանդիմանութիւն
համարձակեցայց. մեծ է ձայնս զուժի, և անբերելի
բողբոս աղաղակի: Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսա-
նել, տղեղս և նուաղս և ամենեւին ներգելեալս, ցա-
ւովք հեծութեանս 'ի վերջինս վարեալ վարսնուժն, և
մրճոտեալ աղտեղեալ գունով զսգրութեան իբրեւ ըզ-
պաշտօնատար մահենի: Այսն զի նոյն է սպաս տանել

ձուլեալ պատկերի , և մեղաց ախտի : Արդ ես գնացի ընդ այս ճանապարհ հորստեան հետոց խաւարի . ետու զբաժինն քո ցանկալի յանապատ անկախ , ըստ մարդաբէին որ առ քահանայն խորայելի ամբաստանութեան :

Գ . Աւ զհարգ ասացից անձին իմում մարդ՝ զբեալս ընդ անմարդիս . և իբր անուանեցայց բանական՝ անբաւնիցն յիմարութեան կցորդեալ . և որպէս կոչեցայց սեւանողական՝ մթացուցեալ զլսսս որ յիս : Աւ ընդէր համբաւեցայց զգոյական՝ զինաստիցս զբունս փակեալ : Ամ որոնք ցուցայց տպաւորութիւն նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յողի մահացեալ : Ա, և ոչ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել . թող թէ հոգեկան կամ մտաց ընդունական : Անպիտանս 'ի թիւս անթոյ , անարցս 'ի քարինս որմոց , արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց , վաթարս 'ի յազգըս հրաւիրելոց , արհաւրօք մահու պակուցիալս , անխրատուսելի 'ի բոյորեցունց՝ ցաւովք և տանջանօքն Արուսաղէմի ըստ Արեմիայի բանին խրատեցեալ , պակասեալ աւուրցս 'ի հեծութենէ , և ընթացք ամացս 'ի հատաչմանէ , ըստ նուազարանաց երդողին : Իբր ասուի 'ի ցեղոյ և փայտ 'ի յորգանէ , ըստ իմաստնայն բանի , 'ի խիթմանէ սրտիս հալեցայ : Իբր զըստայն սարգից մաշեցայ , ըստ սաղմոսովին , և խոտան դտայ . իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի , ըստ մարգարէութեանն ձայնի , սպստեցայ : Ա, ոչ 'ի մարդ ոք ունիմ զյոյս եթէ անիծեալ 'ի տեսանողէն անյուսադրելի վահատիմ , այլ 'ի քեզ , տէր իմ ոպեսէր , որ ընկղմեալ 'ի քոյք վթութեանց բարեոց անբաւից , և 'ի բեւեռելոյն ժամու 'ի խաչն մաղթեցեր մեծը ողորմութեան առ Հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն : Արդ շնորհեալ ինձ յոյս քաւութեան , կեանք և ապաւէն , և 'ի տուր շնչոյս թշուառի՝ առից զողիք քո բարի : Աւ քեզ ընդ

Հօր Հողուվգ սրբով՝ զօրութիւն յաղթութիւն մեծութիւն և փառք յախտեանս . ամէն :

ԲԱՆ ԻԲ .

Վ Երարին յաւելուած ինչին Հիծու-Թեան Դարին Հսկողն ասոյն ողբիս Տարլեանոց Բանի . 'ի խորոց սրբից խոսք ըստ Աստուծոյ :

Ա . Բարձեալ այլբանեցից 'ի նոյն շարունակ բարդեալ զկշտամբանացս եղանակ գորովեալ անձինս , ածեալ մատուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի : Թերեւս զբեսցէ ինձ ամենագէտն զայս յանդիմանութեան դատակնիք կսկծեցուցանողականս բանի ճշմարիտ խոստովանութիւն համայնից գործոց գաղտնութեանց չարեաց :

Բ . Ա, ոմն ձիս խօսնական կարծրերախ սանձակոտոր արձակերասան , յովանակս անհամբոյր վայրենական և անկրթական , երինջն աւողական անուղղական և անվարժական : Մարդս մողեզնական սարագրական և կորրտական , մանուկս մեղանչական անխրատական և վարատական : Տնտեսս մահապարտական տարտամական և անզորժական , բանականս անանական գազանական և անմաքրական : Ձիթենիս ամայական անպտղական և կործանական , մարմինս հոգւոյս իմ թախժողական դատողական և տանջողական , խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական : Ոսկի շարս կայսերական արգվասնական և անգտական , ծառայս սխալական փախրտական և թշուառական :

Գ . Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան , հոգեկորոյս և միշտ մտախաբ , կամակոր իսկ և սրտաբեկ , ուշամոռաց և հանձարազրաւ , զպայակերկ և իմաստասպառ , յայրատատես և եղեռնա

սաստիութենէ յանցանացն յիշատակի յուէտ յուսա-
 չատեալ , և տագնապաւ նախագործելոցն միշտ տարա-
 կուսեալ , և յստակութիւն աղերսին 'ի սպաս սղտու-
 րեալ , և խղճիւ մտացն յուզմանց կրկին ձենձերեալ :
 Աւ ձեռն 'ի մաճի գործոյն զյետնոյն հետազօտեալ , և
 կերպ 'ի յառաջ գիմեալ՝ ոտք 'ի վերջ կոյս յետահա-
 րեալ : Աւ գիտութեամբ էիցն՝ 'ի չէիցն միշտ խարե-
 ցեալ , և 'ի մտացն մարտ՝ 'ի փոքրունցն յաղթահա-
 րեալ , և 'ի թառանչ սրտին՝ հագաղին դուռն հրդե-
 հեալ , և խոնաւ զօրութիւն քմացն ամենայն ուրեք սո-
 չորեալ : Աւ անարեւ միգով յամենայն մասանց պար-
 փակեալ , և լայնութիւն ակնհարութեանն ամենեւին 'ի
 սպառ ամիսօքեալ , և ամբերելեացն տոյժ 'ի զգալին
 տպաւորեալ , և եղևութիւն կորստեանն 'ի յուշ անդ ե-
 կեալ : Աւ դատակնիք հատուցմանն 'ի դիւանի մտացն
 զրեցեալ , և բարերարին ակն 'ի ցասումն իմն երեւե-
 ցեալ , և լոյսն բնութեամբ՝ զանկուածոյ հողոյս զայ-
 րացեալ , և ահաւորութիւն էին ընդ փոքրկութիւն բը-
 նութեանն ընդհարեալ : Աւ միշտ որոտմամբ բանից
 բանաւոր մոխրոյս բարկացեալ , և իրաւանցն վիմօք զար-
 ժանիս մահու կոշկոճեալ , և որ իմն է տաղանդ՝ յա-
 նառակս աստէն կորուսեալ , և պատուական իրին ըս-
 տացուած իբրեւ անարդ յերկրի թաղեալ : Աւ տաժան-
 մանցն արդասիք ծուլութեանն մթով ծածկեալ , և իբ-
 րեւ զ'ի բաց բարձեալ նշմարան ճրագի չերեւեալ , և
 պատասխանարան լեզուիս յիրաւանցն օտար կարկեցեալ ,
 և անհամբոյր շրթանցս դրութիւն օրինաւոր դատմամբ
 պապանձեալ : Աւ յուզմունք մտացս 'ի զանազան մա-
 սունս ցնդեալ , և զկալն 'ի վերայ օգտին ոչ ինչ զի-
 տացեալ , և 'ի կշռութիւն բարւոյն ընտրութեան յի-
 մար երեւեալ , և ընթացք ելիցն նհանջմամբ չարին
 խափանեալ : Աւ վառարան իւզոյն աճիւնոփն հնոցի լը.

ցեալ , և անուանս զիր 'ի կենաց մատենէն եղծեալ , և
 կշտամբանք ընդ երանութեան անդ արձանացեալ :
 Գ . Աթէ զինուոր տեսանեմ , մահու ակն ունիմ .
 եթէ պատգամաւոր , խստութեան . եթէ մատենագետ ,
 մուրհակի կորստեան : Աթէ օրինաւոր , անիծից . եթէ
 աւետարանական , փոշոյ ոտիցն թօթափելոյ . եթէ բա-
 րեկրօն , յանդիմանութեան . եթէ ապոտում , կսկծման :
 Աթէ ջրոփն ընտրութեան փորձիմ , խորակիմ . եթէ
 գեղ ինչ դատման ձգեմ , սատակիմ : Աթէ բերս նկա-
 տեմ բարութեան , 'ի կարծեաց չարեացս փախնում . ե-
 թէ ձեռն համբարձեալ , կորանամ . եթէ փոքր ինչ
 խրտուիլ , սարսեմ . եթէ սակաւ մի թնդիւն , ընդոս-
 տիմ : Աթէ 'ի խրախճանս ըմպելեաց հրաւիրիմ , զո-
 ղամ . եթէ մեծիդ յանդիման լինիմ , սարսափեմ . ե-
 թէ 'ի հարցումն բանի կոչիմ , կարկիմ . եթէ իրա-
 ւամբք քննիմ , համբանամ : Արդ այսքան ամենաթշուա-
 և ողորմալին տարակուսանացս 'ի վերայ միմանց բար-
 դելոց , որք զստորեւ զգայականաց սրտիս գոյութեան 'ի
 նեղբուստ անտուստ անբժշկական ցաւօք՝ աներեւակի նե-
 տիւք խոցոտեալ անարտաբերելի մշտակիր յարամնաց
 հանապազամուխ բեւեռեալ աստուստ ընդ հոգւոյս , լը-
 ցեալ շարաւով կրկին հարուածով , վտանգ սատակման
 մահու գուշակեն : Թարախ մթերից պատեալ զերկա-
 թով գաղանեացս ծածուկք ազգեն ինձ տագնապս , վէ-
 րրս պահեալս անխնամարկելիս ընդ ես շնչոյս տուրեւա-
 ութեան : Գորոց նեղութեանց չարաչար ճնշեալ ա-
 ղաղակ ձայնիս , խառնեալ արտասուօք՝ կողկողալին
 թախծանօք հողոյ , բարեգործիդ հնարաւորութեան
 յերկրաստեղծիցս նահատակաց ընդ իմ մաղթողաց , վեր-
 ջին հեծութեամբս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց
 ամենեքումբք նուիրողօք՝ զաղերսանս ըզձիցս 'ի ստորնայ-
 նոցս աստի յերկինս առաքեմ : Հնորհեա , տէր , անգոր-

լուծիւն կենաց հագստեան ողորմիլի վաստակելիցոյ 'ի յընդունայն երկրագործութիւնս, համայնդ յամենայնում, ամենայնիւ ստացեալ քեզ փառս :

Բ Ա Ն Ի Դ .

Վ Երբորն յո-էլո-ձ իրին հեթո-լեան նորն հսկողն սո- նայն աղբիւս հարլեանայ Բանի . 'ի խորոյ սրբից խոս Ընդ Լորո-ձոյ :

Ա . Եւ արդ որոյ խնդրոց արժանաւոր վարկանելով զիս մատչիմ աղերսել . արքայութեանն յորմէ վրիպեցայ, եթէ փառացդ վայելութեան յորմէ զրկեցայ, թէ կենացդ անմահականաց յորմէ հերքեցայ, թէ ընդ հը- բեշտակնս պարակցութեան յորմէ տրոհեցայ, թէ ընդ արդարնս մասնակցութեան յորոց ճեղքեցայ : Թէ ուր որթոյն կենդանոյ յորմէ քանցեցայ, թէ ոստ անկոյն բերկրութեան յորմէ զօսացայ, թէ ծաղիկ փառացն շը- նորհի յորմէ թափեցայ, թէ պանձանացն ժառանգաւոր յորմէ կորացայ, թէ հայրենի ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ : Եթէ զգետոնի լուսոյ պարծիմ յորմէ մեր- կացայ, եթէ 'ի ստացօղ դարձին յուսացայց յորմէ խորթացայ, եթէ 'ի լուսոյն իղձս դիմեցից յորմէ մեկ- նեցայ, եթէ Զիսուսի յոսկերան յօգիմ յորմէ մերժե- ցայ, եթէ 'ի թեւս նորա մերձիմ յորմէ օտարացայ : Եթէ յապաւէնն ապաստանեցայց յորմէ խեթացայ, եթէ 'ի փրկութեանն նորդութիւն յորմէ մահացայ, ե- թէ 'ի զպատութեանն զուարթութիւն յորմէ ես լայ : Եթէ 'ի կանոնն կենացն ուխտի յորմէ փոխեցայ, եթէ 'ի սահմանն հաստադրական յորմէ սահեցայ, եթէ յանշարժ վիմին պնդութիւն յորմէ սասանեցայ . եթէ 'ի շարս գումարտակին յորմէ հոսեցայ, եթէ 'ի քաղաքն անդրանկայ շինիմ յորմէ գերեցայ : Եթէ հանապազօր-

դեան հացին աղթեմ զոր ոչ վաստակեցայ, եթէ փո- խադրութիւն երկանցն խնդրեմ յոր ոչ քրանեցայ, թէ պարգեւօքն պակեցայց յոր չհանդիսացայ : Թէ արձան ինձ կենաց զրեցից յորմէ ջնջեցայ, թէ զերախտեանցդ ձիւր յիշեցից զոր միշտ մոռացայ :

Բ . Ահա հատաւ և կամ խղեցաւ լար կենաց յու- սոյն, տիրեցայ 'ի բորտութեանցն դարշութեանէ համայն ակտացեալ, ամենայնիւ սպառեալ զմարմինս ապակա- նութիւնն շրջապատեալ մեռոց Աստուծոյ : Իոյզն պալար փայլունակ ազեղ լնացեալ, մնացուած ինչ պահեալ նախուռեակ երկղիմ կերպին, որ զկրկին անմաքրութիւնն նշանակէ : Պարժանացն նշող ամենեւին ինձ շիջաւ, փրկութիւնն մատնեցաւ, բարին ստուերացաւ, եր կե- նացն բնաւին փակեցաւ, միթարութիւնն բարձաւ, դա- տաստանին ատեան մերձեցաւ : Թոյք մահուն ինձ ար- ծարծեցաւ, սպանեալն կրկին ինձ կենդանացաւ, լաս- տին դադարք վիժօք խցաւ, շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելու- թիւն ստուերացաւ : Հանձարն առաջնորդական խափա- նեցաւ, կշտամբանացն փուշ բազմացաւ, անօրէնութեն ուղէչ ծաղկեցաւ, բոց գեհնին ինձ բորբոքեցաւ : Օա- ոայութեանն լուծ սաստկացաւ, ստրկութեանն կապ զօ- րացաւ . ունօղն յարկին կառուցման ահա անկաւ, բարձրութեանն վտահարան կործանեցաւ, ընտանու- թեանն միաւորութիւն անջրպետեցաւ, սրբութեանն սի- րող հոգին Աստուծոյ տրամեցաւ :

Գ . Եւ քանզի զվերջինն համբուրեցի դառնութիւն , տանջանս խէթս տխրութիւնս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս, տարակոյսս անյուսադրելիս, աւօթանս անպարտրելիս, խայտառականս անվերարկելիս, պատկա- ոանս անհամարձակելիս : Փախուստս անդառնալիս, հա- լածանս անմարդասիրելիս, երկայն ուղեւորութեան ա-

պաճեռն անթողալու թիւնս : Իսկ դու փրկութիւն դո-
րութիւն և օգնութիւն , ողորմութիւն լուսաւորութիւն
քաւութիւն և անմահութիւն , Տէր Զեռուս Բրիտոս ,
Որդի Աստուծոյ կենդանոյ , արարիչ երկնի և երկրի ,
որ ընձեռես ջուր պապելոյցն 'ի ծարաւուս վայրս անա-
պատի : Օրհնեալ բարեգութ , հզօր մարդասէր , երկայ-
նամիտ խնամակալ , հնարաւոր այցելու , պաշտպան ան-
նախանձ , պահապան յաղթող , կեանք անկորուստ ,
միջնորդ երկնային , լիութիւն աննուազ , երանութիւն
տօնելի : Չեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քօ աջոյ՝ ըն-
կալ և մատո՞ քաւեալ և սրբեալ զիս զամենապարտս :
Բանդ կենդանի , առ հաւասարապատիւ քօ Հոգի , զի
քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի : Եւ 'ի ձեռն քօ
իւրոմն կամօք մաքուր նուիրեալ , զօրեղն ինքնու-
թեամբ զիս Հօր ընծայեալ , անդէն առ նմին նովմբ
միշտ 'ի բեզ շնչոս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ 'ի
բեզ միանալ անբաժանելի : Վ ասն որոյ քեզ ընդ Հօր
քում Հոգւովդ սրբով երրեակ անձնաւորութեանդ 'ի
միում՝ բնութեան և 'ի մի Աստուածութեան փառք , և
'ի ստեղծականաց էից գօհաբանութիւն յաւիտեանս
յաւիտենից . ամէն :

Բ Ե Ն Ի Ե .

Վ Էրսոյն յաւելում իբն հեծումբեան Կարն Ըսկոլե աս-
նոյն աղբիւր ճողբեանոց բանի 'ի խորոց սրբոց Խօսք Ընդ
Աստուծոյ :

Ե . Բայց քանզի 'ի վերայ այսբանեաց գերութեանց
ամենաթշուառ վտանգաւորիս մի զմիով էլ և իւր առ-
նելոյ . զոր զկերպարանս անցիցն 'ի մասնէ վերաձառեալ-
քրդ նախազրեցին . ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝
այլ ոչ զեղիութիւն աղէտիս :

Բ . Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոս բեբ-
մունք յայժ նմանագոյն . յորում կահալօք բազմօք ան-
թիւ դիմեցմանց տատանեալ հօղիս 'ի յայսմ աշխար-
հի մարմնոյ շինուածով իբր 'ի նաւակի : Օղոր Աստիա
մարդարէ զյանկարծադէպ կատարածն որ 'ի սյարսկա-
կանն հինից՝ Արուսաղէսի և Սամարիայ կործանմանն ,
նմանութեամբ այսր օրինակի կերպաւորեցոյց . որ և առ
իմն հոգեւորական խորտակումն զուգաձայնել՝ ոչ է սը-
խալական : Բանզի մինչդեռ չուէի ես յանհոգութեան
անտարակոյսն վտահոգութեամբ , դոյզն կասկած արկածից
'ի միտ բերելով առ խորոց փոքր միջոցին , որ 'ի մէջ
հանգստեանն և աշխատութեանն , իբր այն թէ հասեալ
իցեմ , ձմեռն յամարանի բքաբեր հոգմով ժամանեալ
երեքալեանն դիմակցութեամբ , ամբոխեաց զհանդար-
տութիւնն : Ուստի նաև 'ի բախմանէ վայրենի ալեացն
խորտակեցաւ : Այնոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ ,
կայմն ամբարձման 'ի կայից իւրոց խեցաւ , առագաստին
թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ , շինուա-
ծոյն շուք անզարդեցաւ : Առասանք ձգողականացն խզե-
ցաւ , տեսարան գլխոյն դիտակի խոնարհեցաւ , ապաւան-
դակին պարան կտրեցաւ , ապաւինութիւն խարսխին
լուծաւ : Եւ զք ստուարք ամոլեցն կցորդութեան բա-
ժանեցան , սամիր ուղղչացն հետոց դալարեցան , լաստ
հիմանն հաստարանի ընկզմեցաւ , ղեկացն կառուցմունք
անդէն սուզան : Չուոցն յարմարութիւնք պակասեցան ,
ողնափայտին պատսպարան իսկոյն բեկաւ , կապարանք
զստին հաստուածոյ յօշատեցաւ , զօգք ամփոփման ծո-
ցոյն կազմածոյ անարգեցան , խեղ շրթանցն եղերաց
խախտեալ ոստեաւ : Պաղպաղունք բաղմականացն ան-
կեալ բարձաւ , վանդակապատին վայելութիւն յատակե-
ցաւ , զահաւորակին հանգստարանն շփոթեցաւ : Սած-
մունք տախտակաշարք 'ի միաբանութեանց միմեանց ան-

Հատեցան, Հեղուք պնդման բեւեռացն քարշեցան : Ար-
գասիք իրին յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ :
Վառուղիդն հանդէպ նաւին դեղերեալ ողբայ, ձեռն 'ի
ծնօտի եղեալ՝ արտասուաց գետս իջուցանէ : Վշմարք
սակաւ մնացուածոցն 'ի ծայրից ծփմանց ազգելոյ ծո-
վուն, իբր խողխողեալ բանաւոր, ողորմագին թախծա-
նօք հեծէ : Վասն զի թէ դբարի նաւապետն երկնաւո-
րօքն զօրօք յաշխարհիս ծովու առ 'ի զխորտակեալս իմ
տաւչան իմանալի գոյութեանս առցէ աշխարել բանիս
յարմարութիւն, ոչ ինչ վրիպեցէ 'ի ստուգութենէ :
Քանզի արդարեւ ելաց բարեգութն տէր, յառակ մարդ-
կութեանս զթաղեալ ազգակիցն, ելաց առ նմին և զԼ-
րուսաղէմ՝ մոլեալ և զՅուդաս մոլեգնեալ, յորոց եր-
կուցն կորեաւ վտահութիւն յօրինակ նմանութեան ա-
ղարտեալ նաւի : Իսկ միւսն հասեալ յառակս անդնդոց՝
առասան յուսոյն ձեռամբ ունողին յանքոյթն արտաբե-
րեաց խաղաղութիւն :

Գ. Արդ իցէ թէ յաւելից հայել զբաղմախորտա-
կելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ : Իցէ արդեւք
տեսանել զփշուեալս նաւ ողբայի հոգւոյս ողջացեալ :
Իցէ արդեւք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝
վերստին կցեալ : Իցէ արդեւք տեսանել զյոբնաթա-
խիծ սիրտ վշտացելոյս բերկրեցեալ : Արդ իցէ՝ ակն ու-
նել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան բնութեանս
կրկին հանդերձեալ : Իցէ արդեւք թէ տեսից զբակ-
տեալ տաղաւար թշուառացելուս միւսանգամ կանգնե-
ցեալ : Իցէ արդեւք յուսալի նայել զաարամբժեալ գե-
րիս ազատեալ : Այլաբէն գուցէ՝ ակն ունել զանկեալս
'ի շնորհէդ լուսոյ գարձեալ կազուրեալ : Արդեւք
տեսից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան
յողորմութիւն ինձ երեւեցեալ : Աթէ տեսից երբէք
զամենաախուր կերպարան հոգւոյս իմոյ ծպտեցեալ :

Արդեւք լուսոյ ընդ ձայնի գուժիս աւետեաց համբաւ-
ինձ առաքեցեալ : Արդեւք տեսից զբիւրակործան փառե-
ցեալս անօթ կազմեցեալ : Իցէ թէ տեսցեն պատու-
հանք աչացս իմաստից զմուրհակ պարտուցս իմոց պա-
տառեալ : Աթէ յայտնեցի՞ն օրն իմ անձկութեան շնոր-
հին քաւութեան բարուք ինձ ծագեալ : Արդեւք մտից
'ի խրախճանութիւն խորանին լուսոյ քեւ առաջնոր-
դեալ : Իցէ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ
Ազգեկիելի, ցամաքեալս 'ի կենդանութեանց, եկաւորու-
թեամբ ազգողական շնչոյս զօրացեալ : Իցէ թէ յաւե-
լից հայել 'ի տաճար սուրբ քո, աղաղակաւն մարգա-
րէին 'ի պորտոյ կիտին, հերքեալս 'ի լուսոյ որ կամ ա-
ռաջի քո ամաչեցեալ : Աթէ լինիցի՞ խաւարանունդս
մթացելոյ ծագման առաւօտ : Աթէ հասցէ՞ տեսանել
զտաղնապեալս մշտաստոյց յեղանակս գարնանն մօտ :
Աթէ տեսից զցօղ անձրեւոյն կանաչացուցանողն հո-
գւոց ինձ արօտ : Աթէ իցէ՞ արդեւք նկատել զգազա-
նաբեկ հէրքելի ոչխարս վերստին կամաց գթութեան
քո հօտ :

Գ. Այլ քանզի ըստ բանին Յօբայ շուրջ պատեալ
քն չարեացն հնարք ընդ որ ոչ կարացից անցանել : Իսկ
եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց ցուցցի
գթութեան քոյ դուռն բացցի, ճառագայթ փառաց քոց
ծաւալեցի, խնամք ձեռին քոյ յայտնեցի : Արեգակա-
յորդ կենաց օր տարածեցի, առաւօտիդ լողձալի տեսիլ
մերկասցի, առատութիւն քաղցրութեան քոյ աղբերաս-
ցի, վտակ արարչիդ կողից հոսեցի, ծորումն անապակ
սիրոյ քոյ հեղցի, ծագումն աւետեաց շնորհի քոյ երե-
ւեցի, պարգեւիդ քոյ ծառ ծաղկեցի : Մասունք օրհ-
նեալ մարմնոյդ բաշխեցի, համառօտեալն ակնկալու-
թիւն հանդիպեցի, հատուածեալ ձայն ողջունի քոյ,
տէր, լուիցի, հեռացեալդ խաղաղութիւն մերձեցի :

Յայտոսիկ յաւէա սահմանաւ երանակահաւ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ, ազաւինեալ 'ի Հոգիոք բոսուրբ, որ ընդ Հօր քում պաշտի ձայնի քաղցրութիւնդ քեզ փառասարեալ 'ի լոյս անմատոյց : Որով կեանք և երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս . յաւանդ անկորուստ ընդ իս պահելով առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի, 'ի ձիր անեղծութեան անուամբք անձառելեաւ ահաւորութեան հզօրի սրբոյ միայնոյ և անքննելի տէրութեան երրեակ անձնաւորութեանդ : Որ եսդ յիսկութեան յէութեան և յարակալութիւն բարձրութեան, քաղցրութեամբ ողորմութեամբ և մարդասիրութեամբ պսակեալ հանդերձեալ և թաղաւորեալ : Այո, առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կարող ես, զթած : Այլ քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի և 'ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի, յաւիտեանս . ամէն :

Բ Ը Ն Ի Օ .

Վերսորին յաւելաւ ինչն հեծուլէան նորն հոգիւնս
նոյն սուրբ ճաղլանոց բանի . 'ի խորոյ սրբոյ խօսք ընդ
Աստուծոյ :

Ը . Այլ արդ ստուգապէս և իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն և զբանիցն յարմարութիւն հանդերձեն, 'ի նոյն զիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մորմօքեալ ճմլեցուցանեն զաղէաս կարեացն սրտին ըղձից՝ առ արտասուացն բղմուննս : Ուստի և բազմեալ իմ 'ի գլուխս պարուական խմբից դասու այր երախանաց՝ որք զլաւեացն յեղանակեն բանաստեղծութիւն, և ես ընդ նոսին նոյին հեծութեամբ աւաղական ձայնարկութեամբ զանձինս տարածանեմ զվշտակրութիւն : Որ ոչ բնաւին մեռեալ

աշխարհի, և ոչ իսկապէս կենդանի Աստուծոյ, ոչ ջերմասիկ և ոչ ցուրա յատուկ, ըստ առակի աւետարանչին գրեալ 'ի յայտնութեանն : Արիցս ատելի երրեակ տէրութեանն և ամենատես արարչութեանն : Այլ այս են պատկանեալ թախծականացն կերպագրութիւնք, կրկին ողորմելի այսու երեւեցեալ՝ որ 'ի մի զիժ սահմանեալ կապուցանեն զթշուառութեանցն զօրինակ, այսպիսի կըցորդութեամբ շաղկապեալ :

Բ . Պարտուցն ժխանալ տաղանդաց ճեպով մեծաւ 'ի տուծի, ես ասլիկար մատնեալ անարժան գործուքս յիրաւի . վատնիչ արբունի զանձուց կրկնաբատ և անթափելի, պատասխանատու մեծին ըմբռնեալ անհրաժարելի, բերք քանքարոյ խնդիր, ես չունիմ կշիռ մի ունկի : Անբարեխօս կապեալ 'ի պահեստ դառն արգելանի, հեծունն և վաստակ ցաւոց ճաշակեալ յանըշող բանաի, անապաւէն տանջեալ անթոշակ կամ ողորմելի . այլ յեղանակ ինձ ողբակնաց աստուստ կընքեցի, փոխադրեցի սովին բարբառով կոծ կակըծելի, կարողարեցի շքարեթութեամբ 'ի նոյն պայմանի, անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի : Աղբատութեան հընոց յամենուստ մասանց մըրրկի, անպատրաստ թըշուառ վտանդեալ սրտիւ 'ի զրաւի, տարակուսեալ հողով ապաշնորհ այր 'ի վերպակի, անխնամելի հայցմամբ դատաստան յինէն պահանջի : Անդաց և մահու զինուք զպայարան գաղտնեացս խոցի, անիրկելի մատնեալ բռնութեան չարեացս գերի, սուր սուսերաւ սաստից զոյութիւն բնութեանս յօշոտի : Յիշատակաւ բեմին աստըստին 'ի դատաստանի, անձաղելի մոայլ չարատես աչացս երեւի, անձեռնիկալ կապեալ եղիւլիս 'ի տարակուսի, ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի : Յայժ անարեւ և անվերարկու 'ի Տարտարոսի, անապաւէն մե

լար մորմոքեալ 'ի հուր գեհենի , անյայտնելի կորուստ կործանեալ 'ի մեղաց վեհի : Ահա զոր ունիմս արծաթ անսխիտան ոչ երբեք յարդի , և ոչ ընդունի և կամ համբարի 'ի գանձ տէրունի , հայցուած պղտոր և ձեռքն անմաքուր աննուիրելի : Այլ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ յոյս առեալ դարձի , զդէմս 'ի յերկիր եղեալ պաղատիմ՝ Մօրբդ Յիսուսի , բարեխօսեա՛ մաղթեա քաւութիւն ինձ մեղաւորի , դո՛ւ զօրաւոր փրկիանակ կենաց , խկուհի երկնի , քեզ օրհնութիւնք ձայնից և բուրմունք խնկոց 'ի յերկրի , և անուշից իւրոց մատուցումքն յամենայնի :

Գ . Այլ յասացեալ ուղտոցս հիւսուած այլ մասն յաւելի , բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի , զկորընտեան խորս չափելով զորքանն երբեք ոչ գրտի , մասնաւորօք բանիւք 'ի հանդէս նորին ջանացի , զմտացս արագեալ զթեւս յերեւոյթ իրին ոչ հասի , զուշին պարտութիւն յանվթարելեացն բաժակ բարկութեան 'ի ձեռն իմ՝ առի , զտարտամութիւն տաքակուսանացն իբր ճաշակումս մահու արբի , Այս այժմ զյանցիցն յաճախութիւն ողորմելի ձայնիւ յերգ արկի , աներեւոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անզովանալի , անտեսական իմն քրայս հաղցաց սաստիկ եռացմամբ անշիջանելի , սըլաքս նետից պատկանեալ դեղովք 'ի շտեմարան խորութեան սրտի , խիթք ցաւոց խոցոտման մահու 'ի դնացս երակաց գոյութեան լերդի , կիթք երկանց անճարակ ճեպոյ 'ի պտտուած աղեացս անեղանելի , անզօրելի՛ դեղոց ջերմութիւն 'ի յերկեամանց մասունս երակի , անհնարաւոր դառնութիւն մաղձի 'ի նախագիւտն իմոյս կոկորդի : Աւաղս ձայնից լեքույանողաց 'ի փողս շնչոյս խոշորս հրնչի , բաղմահատուած էութիւն բնութեանս ներհակք միմեանց 'ի սլատերաղմի , երկչտութեամբ կարծեաց վարանեալ ամե-

նայնիւ կայ 'ի վտանդի , հարադատայ դաւաճանութիւն անհաշտելի՛ 'ի կոտորածի , ո՛չ մեռեալ և ոչ կենդանի թաղեալ 'ի մեղաց գարշութեան տրղմի : Ասակածաւոր պատժապարտութեամբ վերակնարկելով քեզ բարերարի , յանակընկալս կենաց վեհէ արտաբերել 'ի լոյս անձկալի :

Գ . Այն ինքն որ զայս բան տպաւորեաց ընդ երջանակացն սրակեցի , ակնարկելով քո ողորմութեան անարատիցն հաղորդեացի , վասն զինման Աստուծոյ Բանիդ բարեգործեալ քե կենդանասցի , օրհնութիւն զովեալ քո շրթանց 'ի զուտի բաշխողի այսր մատենի , հաստատեցի՛ ըղձականութիւն Սողոմոնեան բանիս առակի , նրկարագրեա՛ հոգւով քո , բարձրեալ , 'ի նորոգումն անեղձանելի . զի դո՛ւ միայն ես երկայնամիտ ներող , քեզ փառք յամենայնի :

Բ Ա Ն Ի Ն .

Վ Երբքն յաւելումս իրնն հեծուլեան Կարն հանդի ասոյն աղերս ճողլանոց Էանի . 'ի խոսոյ սրտն խուս լնդ Աստուծոյ :

Լ . Այլ քանդի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերրնձայիւոց զգրութիւն թուոցս յարմարեցի կական և հեծութիւն , հառաչանք կողկողադիմք , դառնութեան լալումն և արտասուաց երգ : Վարձեալ ըսկրոյց զճառ պաղատանացս խոստովանօրէն զըջակա նաբար զգաղտնածածուկն յայանաբարբառ . զի անգրագարձութեամբ սկզբմամբն և վերջաւորօքն բառիւք , զնոյն համաձեւութիւն 'ի մի թախանձ նմին մաղթանաց հեղեկեցոյցն խնարհութեան աստանօր եղից :

Բ . Սեղայ մեծի՛գ բարերարութեան անարգս մեղայ . մեղայ ծաղմանդ ճառագայթից խաւարս մեղայ . մե-

ղայ շնորհացդ անբաւ երախտեաց արգարեւ մեղայ . մեղայ սիրոյդ վերնում զթուօթեան յոյսնապէս մեղայ . մեղայ ստացողիդ յոչեութենէ ստուգապէս մեղայ . մեղայ զերունակ գոյոյդ զրգանաց անբաւս մեղայ . մեղայ աննըւաղ լուսոյդ վայելման նենգողս մեղայ . մեղայ ճաշակման անձառօգ կենաց բաղումս մեղայ . մեղայ անհաս պարգեւացդ ձրից հանսպազ մեղայ . մեղայ գովեալ մարմնոյդ Մատուծոյ մահու շափ մեղայ . մեղայ պաշտելի արեան արարչիդ իսկապէս մեղայ : Ահա արգարեւ օրհնեալ է հատուած բանի յուսադրական սրտի այսր մեղայի : Սոյն սա պատուելի աւանդ , անմոռաց պատուէր , հայրենեայն ատր , նախահարցն օրէն : Համայնից թողակ , անհերքելի բան , զօրաւոր պատասխանի , կենդանութեան կամուրջ , ախորժելի վերնոյն , սիրելի սրբոց , անկզկելի կաց : Հրաշալի բարբառ , անշրջիլ պատճառ , բաղձալի աղբրս , փափաքելի սեղան , սրտաբեկ հնչումն , անհնարից ճարակ , կարծրութեան վանիչ , աստուածապաշտից սահման , հեթանոսաց զիրք , վաղնջուց կանոն , քրիստոսէից հարգատ : Արարչութեանն յաղթող , անջրպետ հզօր , խորոց ահաւոր , արուեստ բարձրութեան , խորութիւն անշափ , հիացման տեսիլ , խորհուրդ կնքեալ : Ի՞նչ որ չիք ումք անցանել , եթէ ոչ անըմբունելի մտաց արագման զսա ծանիցէ : Չայն բարեպատեհ հրաշաւորակն , որ ոչ յիշատակեցաւ 'ի վերջին դատախիւք դասուն լըքելոյ . զուցէ առ նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ , յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ , զսահմանն յաւիտենական քակտեսցէ : Օարդ փառաց մեծութեան , որով նոյն ինքն աստուածութիւնն պսակեալ բարգաւաճի : Բանզի ո՞վ որ զիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութեան , և ոչ առժամայն պրծեալ 'ի պատժոց անարատ զաւա :

Իսկ եթէ Աքար զարմեան , և Սաւուղ կիսեան , և Յուդա սիմոնեան , ասելով զսոյն ոչ արդարացան , և ես վկայեմ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի . զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր , ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն : Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զվրտութեան հարազատս :

Գ . Մեղայ երախտեացդ մոռացութեան վերստին մեղայ . մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ յիմարս մեղայ . մեղայ առ կեանսդ գրժողութեան իսկ և իսկ մեղայ . մեղայ բանիդ ապախտ առնելոյ չարաչար մեղայ . մեղայ 'ի յօր սատակման ինձէն ստիպեալ վատթարս մեղայ . մեղայ պարտականս անկենդան մահուն ձաղելիս մեղայ . մեղայ անպատկառս քո բարձրութեան տաղտիալիս մեղայ : Վերջին ինձ կրկին աշխարհօրէնոր՝ զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երեւեցաւ , զի անդարձս վարատեցայ , զի որդիս թշնամի գրեցայ , զի 'ի բարձաեցն երկնից ընկեցայ , զի փուշս վարուց դիզի : Եւ եւս առ սմին ողբք աղաղակի , զի անձառք զանձն անարգեցի , զի բազին կորուսչին գտայ : Այլ իմն կըսկիծ դժնդակ սրտի , զի զիս ունին առ որ չեմ , զարտաքնայարդար բաժակս անմաքուր զըռեալ որմնս զարչունակ , զսին պարծանօք պաճուճեալս , զլոյսս 'ի մայլ շրջեալ , զգերանակիր ակնս թշուառացեալ , զջահս փառաց շիջեալ : Օամենայնիւս յամենայնի ամենայն իրօք փեսասկարս , առ տնօրինականս տէրունականս , առ յայտնութիւնսն աստուածայինս , առ երեւմունսն արարչագիրս , առ խոնարհութիւնսն սարսափելիս , առ այն զոր տեսի աչօք իսկ իմովր : Առ որ մեծ է պատասխանատուութիւնս քան առ համօրէն աւետարանին զարմանս հիացմունս , հոգս հալողականս , անդաճմունս անհնարաւորս , թուականութիւնս մտաց

անբարդելիս : Այնուհետև անկատարս , իջնունս անհաս-
տատս , յուսահատութիւնս յարմարականս , յանդի-
մանութիւնս պատշաճականս , ձաղանս պատեհագոյնս ,
նզովս իրաւացիս , անէծս արժանահատոյցս : Արդ այ-
ստիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք , և ինքնահա-
րուած տանջանաւորութիւն :

Գ. Աւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս
թողուլ . և զխայթուածս մահու բժշկել , տէր ողոր-
մութեանց , Աստուած բողբոց , Քրիստոս թագաւոր
բարձրեալ Հօր Որդի , ստեղծիչ գթած բարերար , օրհ-
նեալ առատ հարուստ , ահաւոր հզօր ողորմած : Տեսուչ
ձեռնեալ հաստիչ , ապրեցուցիչ դարմանիչ կեցուցիչ ,
երկայնամիտ անոխակալ ապաւէն , բժիշկ զովեալ երկ-
նաւոր , անձառ լոյս կեանք , յարութիւն նորոգութիւն
քաւութիւն : Աթէ հայեցես մարդասիրութեամբ , ըստ
որում քոյդ են սովորութիւնք , նայեցեալ 'ի քեզ կող-
կողիմ և ես . եթէ լուիցես , հառաչեմ . եթէ ունին մա-
տուցանիցես , պաղատիմ : եթէ անսայցես , աղերսեմ .
եթէ ներեսցես , աղաչեմ . եթէ առ իս դառնայցես ,
զոչեմ : Ապա եթէ անտես առնիցես , կործանիմ . իսկ
եթէ առ ոտն հարկանիցես , լամ . եթէ զողբագահն ոչ
ընծայեսցես , մեռանիմ : Ապա եթէ ահարկու դէմս ցու-
ցանիցես , սատակիմ . իսկ եթէ սաստեսցես , գողամ .
եթէ խեթիւ տեսանես , սոսկամ . ապա եթէ սաստկա-
նաս , սարսափեմ : Աթէ հալածես , հեծեմ . իսկ եթէ
ընդ վայր հարկանիցես , հերքիմ . եթէ զողբոց վհատու-
թիւնս ոչ առցես , տագնապիմ . եթէ խտտանաս , փախ-
նում . ապա եթէ սպառնաս , ընկճիմ : Իսկ եթէ քըն-
նես , քարկոծիմ . ապա եթէ ուժգինս ակնարկես , սու-
զանիմ . եթէ ոչ անխայեսցես , մերժիմ : Աթէ կոչես-
ցես , խիթամ . իսկ եթէ աչս յառեսցես , ամաչեմ . ե-
թէ ձայն տայես , երկնչիմ : Օրբարեացն պարգեւ մատ-

նեալ , զերանութիւնն թողեալ , զշնորհն թեալ , զուխտն
ցրեալ , զլաւանդն կենաց մոռացեալ , զհամարձակու-
թեանն վստահութիւն կորուսեալ , զստեղծիչդ էիցս
բարկացուցեալ , զանձառութիւն շնորհին ընդոտնեալ
զպատուոյն պատկեր այլայլեալ : Իսկ եթէ առ այս
խեղդ մահու հեծութեան ցաւոյ մարգասիրեալ՝ առ իս
ժամանեցուցես , տէր Յիսուս Քրիստոս , զազդեալն
զիր ընանիլ 'ի յիս , եթէ բժշկութիւն դադարեցուցանէ
զմեզս մեծամեծս : Արով ամենառատ քաղցրութեամբ
պատուաստեալ 'ի քեզ քոյդ կերպարան լուսոյ նկա-
րեալ յոզի՝ վերստին գտեալ պնդեցայց , քաւեալ և
ստեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմահից կենացն ան-
ախտականաց : Աւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով
փառք յաւիտեանս . ամէն :

Ի ԱՆ ԻՆ .

Պ Էրոսին յաւիտեան իրկն հեծուլէան Դորին հսկողն առ-
նայն առէրս հողեանոց բանի . 'ի ետրոյ սրտից խոսք ընդ
Աստուծոյ :

Ա. Աւ արդ զժրս յայտնեցից , և յաղագս ոյց նը-
շանակեցից , և վասն որպիսեանց ճառեցից , և զօրքան
ծածկեալս մերկացուցից , և կամ վասն որոց խոստովա-
նեցայց : Օներկայիցն՝ զոր արդէն ունիմ , թէ զան-
ցելոցն՝ զոր մթերեցի . զապագայիցն՝ յորոց կասկածեմ ,
թէ զբազմասահ շարժութեանցն՝ յորոց զլորեցայ :
Օփոքրն ինձ համարեալ՝ որ է Աստուծոյ մեծ գրեցեալ ,
թէ զանկերպագրելին չիշատակելն . զնուազն՝ որ է ա-
ռաւել , թէ զթեթեալոյնսն՝ որ են ծանոնք . զհոգե-
կանանցն կրից կորուսչաց , թէ զմարմնականաց ախտից
սպանողաց : Օառ դրունս հեշտականանցն , թէ զձայ-
րակոտոր քնասակարութեանց . զաներեւութիցն , թէ

դաեսականացն . զառ ձեռն հպաւորութիւն , թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն : Օլայնակա՞նն դիւրին խածմունս , թէ գերկարաւորն նետաձգութիւն . զխորութեանն զանչափութիւն , թէ զամենաձախն յայտնատեսիլ . զյոքնապղծիւնս պոռնկութիւն , թէ զառողջութեանն անբժշկութիւն : Օպարարո՞ւմն չարին մարմնովս , թէ զտովին բարւոյն հոգւովս . զննամո՞լի հանդիսանալ յոչ ակորթելիսն Աստուծոյ , թէ զբռնաբատութեանն տուժամբ ձղին 'ի նոյն մոլեգնութիւն . զառ 'ի մահն մեղաց , թէ զընդունայնութեանն կարծեաց :

Բ . Արգարեւ որպէս կամաւ խելագար գերծեալ 'ի ձորձոյ , զառականացս տեսիլ յանդիմանեցի , զընդդէմնս գործեալ իմաստնոյն , որ թէ հանձարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց : Օտարացեալս 'ի կրօնից , հեռացեալս 'ի կարգաց , 'ի սրբութեան անսուրբ , 'ի կուսութեան անմարդր , յարգարութեան ամբարիշտ , 'ի բարեպաշտութեան փաստապարտ : Բերանովս մերձ առ ստացօղն և հեռի երիկամամբք , շրթամբքս պատուամտոյց , ըստ մարդարէին , այլ ոչ եթէ սրտիւս : Եւ եթէ պարտ է զըստմնելիսն ասել աստանօր , չար քան զտանջանսն յանդգնութիւն , իբր զուր իմն պաշտօնատարս Աստուծոյ . 'ի միտս անկայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս : Զանամ և ոչ ինչ օգտիմ , պնդիմ և ոչ հասանեմ , փութամ և ոչ ժամանեմ , անձկամ և ոչ տեսանեմ , փափաքեմ և ոչ հանդիպիմ , կարօսիմ և ոչ պատահիմ : Ունիմ զամենայն երկրի , և եմ պատգամաւոր աղօթմանուէր ամենայն աշխարհի : Այլ թող զբազումս զայստեսիկ , բարերար , և մի՛ ունիցիս . զիւրինք են քեզ զոտիւն եղծանել , քան ինձ տաժանաւորս աջով նկարել : Վասն այնորիկ զրեցի առանց խնայելոյ , զն դու առատապէս ջնջեսցես , օրհնեալ . որ վասն մեր մեղաւորացս եր-

կայնամիտ անուանեցար , ըստ մաղթանաց բանի հեծութեան սրտի Եզրի երջանկի . յոյժ նեղեալ անձրն և ձանձրացեալ ոգի բանին յիշատակաւ , որ զոյն պատմէ : Յամենայն կրից մահացուցանողաց վտանգեալ , անկեալ 'ի վիհ գարշութեան մեղաց անդնդականաց ապականութեանց . քանզի չհաւատամ , թէ լսես իսկ ինձ , ըստ Յորայ ձայնին : Արդ ես ինձէն ինքնագործ անձնադատ գերի՛ կամաւորապէս մատն եղեալ բնութեանս , արդելի փակեցի կնքեցի առ յինէն յամենայն մասանց զկենայն հնար , զի 'ի փոկութիւն մեղօք կապելոյս կրկին մեծացիս դովեալ :

Գ . Եւ քանզի 'ի մարդարէէն բարւոք խրատեալ փորձ պտցուք , մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ : Առէք ընդ ձեզ բանս , ասէ Ովսէէ , և դարձարո՞ւք առ տէր Աստուած ձեր , և ասացէ՛ք ցնա , կարօղ ես թողուլ զմեղս . զի ընդունիցիք զսարիս , և վայելեսցեն 'ի բարութեան անձինք ձեր : Ահա Աստուած խօսեցաւ , և ո՞վ է որ ոչ լուիցէ . նոյն ինքն վկայեաց , և ո՞վ է որ ոչ հաւատացէ : Արդ այսօրիկ վճիռ պաշտելի , նուիրեալ պայման , սահման նոյնագոյ , կենաց աւետիս , կէտ տէրունի , դուռն բարութեան , սփոփանաց հրաւեր , ճշգրիտ պատկեր , անսողիւտ դանձ , անմոռաց յիշատակ : Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ , աստուտ վկայեմ՝ սմին ընդ մարդարէին , կարօղ ես յամենայնի թո՛ղլ զմեղանս բազմարեղունս . և եւս զօրացցիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս : Յամենայնի իշխես , ամենայնի բաւես , ամենայն ուրեք հասանես , ամենից բռնութեանց յաղթես , և զամենայն կարծրութիւն փշրես . զամենայն ընդդիմահար վանես , զամենայն խտտութիւն վատնես : Օլամենայն արացեալ ընդոտնես , զամենայն դառինս անուշես , զա-

մենայն դժուարամտքելիս քաղցրացուցանեն , զամենայն զպարաս շնորհես , զամենայն յանցանս թողուս : Կարողես , զօրաւոր հզօր հնարաւոր ամենարուեստ , զամենեցուն զմեղս ընկղմել և չքացուցանել բառնալ 'ի միջոյ , իբր զճաճանչ փորու կայծական սահմանեալ 'ի չափ ոչէից՝ անկեալ ընկղուզեալ կորուսեալ 'ի տիեզերատարածն ծովու :

Դ . Արդ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի , ողորմեան վասն խաչի և չարչարանաց մահու Որդւոյ քոյ , Հայր գթութեան : Սկիզբն առաքողն ողբերգութեան ձայնի այսմ արտօսածին նուագի , որ զայս դեղ փրկութեան կենաց մեղ յարմարեցոյց , եղիցի բժշկեալ յանուն քո հզօր : Որ հետս ելից խոստովանութեան մեղ նկատեցոյց այսու պայմանաւ պատշաճականաւ , լիցի անարատ յիւրոցն պարտեաց : Որ զհպարտութեանն թեւս հարթել մեղ վարդապետեաց 'ի սոյն կանոնի կենաց պատգամի , եղիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց վերջնոց և միջնոց : Լըրորդութեամբ բարեդործեալ , 'ի նորոգութիւն լուսաւորութեան . ընդ որում և մեք գրեսցուք երջանիկ գտեալ ընդ սմին :

Ընդհանրապէս զիսկայ այս նոսր աղօթից , եւ զիստարաստ ջերմաստաճնապէս տեստարարութեանց Աստուծոյ նորոգել :

Ե . Արդ այբանեացս անբաւից հրաշից հանդերձիչ , Հայր ամենաստեղծ , անունդ ահաւոր , ձայն սարսափելի , կոչումն ընտանի , բան համբուրելի , աղղումն սքանչելի , հրաման սոսկալի : Երկուսն անքննելի , զոյութիւն անճառելի , իսկութիւն անբաւելի , զօրութիւն անզննելի , կամք ամենաբարի , տէրութիւն անսահմանելի , մեծութիւն անչափելի , բարձրութիւն անրովանդակելի , որբանութիւն անկշռելի , առաւելութիւն անհասա-

նելի , պաաճառ Որդւոյ հայրութեամբ , այլ ոչ նախադրութեամբ : Բեւ և 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ , սաստեան տաղնապօղ և դիւական տենդիս ջերմութեան , որ սարդեալ մուծաւ ընդ մեղաց . զի փախիցէ 'ի մարդոյս՝ զարհուրեալ 'ի սխարլի և յանբաւելի արեանդ վտանգէ գառինդ երկնաւորի , որով սրկեալ միանգամ 'ի մշտնջենաւորս համայն մաքրեցար :

Յ . Եւ արդ յայսց պատկառելի խոնարհութենէ աւարչակերաս խորհրդոյ , ամաչեսցէ Սատանայ 'ի գործօ չարեաց իւրոցն հրեշտակաց : Տանջեսցի և հալածեսցի , հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ բնակութեան յարտաքին խաւարն : Եւ ջնջեալ մաքրեան զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց , և զհառաչումն ձայնիս հեծութեան 'ի սրտից մերոց : Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն քստմնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից , որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին , ցաւեսցի չարին : Եւ 'ի կողահերձ սայրասուր սլաքէ ուժգին բախմանէ , որով զվէրն մեծ ընկալաւ , 'ի սպառ սատակեսցի սկզբնարար մահուն : Եւ զի խոնարհեցոյց զգովեալն գլուխ յաւանդել զոգին 'ի ծոց քո , բարձրեալ , ապստամբութիւն անբարի բարուցըն Բելիարայ 'ի կոր կործանեսցի , ամենայնիւ հերքեալ 'ի կորուստ : Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն իսկութիւն յորովայնի երկրի , այսու ամբարձեալն հրպարտութիւն կարծեալ դոռողին 'ի յատակս մահու դժոխոց մթին ստուերին յառեալ դիտեսցէ . և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական , որով մահացաւ զիմամարտութիւն թիւնից վիշապին կենարարն կրիւք ամենազօրին : Վասն զի 'ի փառս քո , Հայր ողորմութեան , իբր 'ի դովեստ Որդւոյ քոյ Հողովդ սրբով զայս խոստովանիմ : Բանդի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեանն ունի զմիւսմէն տու մի խորհրդականն խորութեան , այլ

զանսկիզբն Բանդ անձնաւոր ընդ անժամանակդ Հօր փառաւորեմք : Եւ քեզ միայնոյ սուրբ Երրորդութեանդ , Հաւասարապատիւ աէրութեանդ , Համարուն անբաժին ինքնութեանդ՝ օրհնաբանութիւն զօհոյթիւն զօրեղութիւն և անձառ վայելչութիւն մեծութեան բարեվիճակ հարթութեան , զուգակշիռ հաւասարութեան յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ Ի Յ .

Վ Երսիսն յաւելոյս իբլին Հեծոյ-Լեւան Կարին Հսկողն ասոսի աղէրս հողլեանայ Բանի . Ի Խորոյ սրբից Խօսք ընդ Լսոյս-ձայ :

Լ . Եւ արդ զու միայն սկիզբն բարեաց , զթուութիւն անձառ , Որդի բարձրեալ միոյդ Աստուծոյ , որ զողջոյն զօրն թողութեան ցուցեր փրկարան , և ոչ կորըստեան դատապարտարան , յեղանակեալ ինձ զաւուրն չար առ մեծ աւետիս ակնկալութեան : Բժիշկ ակտայեղոյս , հովիւ մորորեալ ոչխարիս , տէր ապաւինեալ ծառայիս , գինի անապակ մեծ տրտմեցելոյս , սպեղանեաց դեղ վիրաւորեցելոյս , ազատութիւն մեղօք զբաւելոյս , օրհնութիւն բարեաց մերժելոյս , կնիք շնորհաց խոտելոյս , օծումն կոչման կապտելոյս : Կանգնումն վերստին կործանելոյս , պատսպարան հզօր զլորեցելոյս , օժանդակ վեհ դարթադղեցելոյս , դուռն բարձրութեան տարակուսելոյս , սանդուխք երանութեան եղկելոյս , ճանապարհ շաղպաց մողորելոյս , թագաւոր ներօղ պարտելոյս , քաղցր յուսադրութիւն լեելոյս : Չեռնկալ կենաց հերքելոյս , մեծդ միայն և ամենառատ , որ զլիութիւն բարեաց սահմանեալ հեղուս անչափ յաճախութեամբ քան զոր ինդրեմք և իմանամք , ըստ Պաւղոսի զօհաբանութեանն : Քանզի իննուց յըսնից և թուոց երկից և չորեակ տա-

սանց՝ Ի վաղորդայնէ տունջեանն առ մուտս արեւուն , անդուստ առ նմին . յաւէտ կարկառամբ իսկ և իսկ Ի սոյն անարդել սրտիւ , Ի վեր է քան զաղերսանաց ալկընկալութիւն մարդկան , բարեգործել միմանց շնորհատրութիւն : Իսկ առ իմն թշուառութեան և անարգութեան զքոյգ եղեալ փառս , ամենակարօղ զօրութիւն ահեղ , բորրից Աստուած , տէր Քրիստոս , որովք սահմանեցի կշռութեամբ չափոյ հաստօղից ընդ հոլոյս հաւասարութիւն կցորդեալ : Քանզի մնաս յայտասիկ անբաւ և անհետազօտելի , ամենեւին բարի անման բարկութեան խաւարի : Աւստի յոյժ նուաղ են քում մեծութեան աստեղացն թիւք , զորս գոյացուցեալ յոչէից յորջորջմամբ անուանց կնքեցեր , և կամ հիւթ երկրի Ի յօդս հեղեալ , զօր Ի չգոյից հաստեալ տարածումն յատակի կառուցեր , քան ինձ նախադրեալ համարգ սակաւութեան , որովք քեզ նմանիլ վարդապետեցեր :

Բ . Ահա ծածկեցաւ և ընկղմեցաւ Ի քոյգ լոյս կամաց երկայնամտութեան՝ հանուրց չարութիւն , եբք դայցն մտայլ Ի տապ արեւու , և որպէս աստուստ իսկ կիրք բնութեանց զհասարակաց բարուց ցուցանէ : Քանզի ով որ Ի մարդկանէ մեղաւ , և ոչ զըջացաւ . ով որ զաղբացաւ , և ոչ ամաչեաց . ով որ դարչեցաւ , և ոչ պատկառեաց . ով որ սխալեաց , և ոչ ապաշուեաց : Ով որ կործանեցաւ , և ոչ հեծեծեաց . ով որ գայլթադղեցաւ , և ոչ ստորջացաւ . ով որ պատրեցաւ , և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ . ով որ պարտեցաւ , և ոչ յողւոց ելաւ . ով որ ճաշակեաց լեղի , և ոչ դառնացաւ : Ով որ անկաւ Ի բարձրութենէ , և ոչ ընդոստեաւ . ով որ կորոյս մեծութիւն , և ոչ աշխարեաց . ով որ զրկեցաւ յերանութենէ , և ոչ ելաց . ով որ կապտեցաւ Ի շնորհէ փառաց , և ոչ ողբաց : Ով որ

գտաւ ինքեան վեասակար, և ոչ ստգտաւ . ո՛վ որ մեր-
 ժեցաւ յերեսացն Աստուծոյ, և ո՛չ հառաչեաց . ո՛վ որ
 լուաւ զԱստուծոյ սպառնալիսն, և ոչ սոսկացաւ . ո՛վ
 որ ընդ մի չարեացն՝ հազարս շաւաղեաց . ո՛վ որ մեր-
 կացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ : Ո՛վ որ
 անօրինեցաւ, և ոչ քարամբք զմիտն կոծեաց . ո՛վ որ
 ետես զտրուելն յիւրում մեծութեան, և ոչ զկծեցաւ .
 ո՛վ որ կատարեաց չարիտ, և ոչ զինքն իսկ նզովեաց .
 ո՛վ որ ախտացաւ, և ոչ զանձն գտրովեաց : Ո՛վ որ
 յամօթալեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին ձաղեաց .
 ո՛վ որ ՚ի պատկառելիսն հպեցաւ, և ոչ զօրն իւր ա-
 նիծեաց . ո՛վ որ զգործեցեալսն յիշեաց, և ոչ տապա-
 ցաւ : Ո՛վ որ զգաղտնիսն մտաբերեաց, և ոչ խորովե-
 ցաւ . ո՛վ որ զծածուկն նկատեաց, և ոչ մահ կորու-
 տեան խնդրեաց . ո՛վ որ զաներեւոյթսն կերպաւորեաց,
 և ոչ կրկին յերկիր կորացաւ . ո՛վ որ ընդ մեղացն
 հեշտութեան բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց : Ո՛վ որ
 զվեասակարսն բնութեանն, և ոչ պապակեցաւ . ո՛վ որ
 զկամաւ ներգործեալսն, և ոչ սատակման ինքեան աղօ-
 թեաց . ո՛վ որ զանձառելիսն, և ոչ խռովեցաւ, ո՛վ որ
 զանկրելիսն էութեանն, և ոչ թախծեցաւ : Ո՛վ որ
 զմեծամեծան, և ոչ մաշեցաւ . ո՛վ որ զամբծութեանն
 ապականարարսն, և ոչ տոչորեցաւ . ո՛վ որ զտարազը-
 րութեանն արստձառ յանցմունս, և ոչ տաղնապեցաւ :
 Ո՛վ որ զերեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկու-
 թեան վերնոյն գանձն պարտ վարկաւ . ո՛վ որ զմի ՚ի
 կարեւորացն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ զինոք մա-
 հու խոցեցաւ . ո՛վ որ զխայտառականացն, և ոչ վայս
 վհատութեան ընդ հեծութիւնս ձայնին հիւսեաց : Ո՛վ
 որ յարբայակիսն գահայիցն սնանկացաւ, և ոչ կարկա-
 մեալ ՚ի վայր գլորեցաւ . ո՛վ որ ընդ պսակին պերճու-
 թեան հող ՚ի գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ

յողի մահացաւ . ո՛վ որ ընդ պայծառ պատմուճանին
 քրձազգած եղեալ, և ոչ տիրեցաւ : Ո՛վ որ զկեանս
 իւր կորոյս, և ոչ արեան արտասուս երկեաց . ո՛վ որ
 ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ոչ նուաղե-
 ցաւ . ո՛վ որ ՚ի վերայ սգոյ սիրելոյ ոչ թառամեցաւ :
 Ահա այս կերպարանք ճշգրտագոյնք պարտաւորիս յան-
 դիմանութեան, տխուր դէմ, քաղեալ ճաճանչ, ցամա-
 քեալ խոնաւութիւն, երիթացեալ շուրթն, անշքեալ
 տիպ, տրամեցեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկնեալ պա-
 քանոց : Եւ զի թէ որ զխելութիւնն իսկ նշանակեցէ,
 ոչ անօրինէ . անամբարտաւան միտ, անհպարտ սիրտ,
 անինդրող պարգեւի թշուառ, անաղերսալի պապեալ,
 ինքնակշտամբելի՛ դեգերեալ, իրաւամբծ սովեալ, ար-
 դարալուկ քաղցեալ . պատշաճազատ հարուածեալ,
 ինքնավկայ մահապարտեալ, արժանապէս հանեալ,
 անձնանէծ եղկելի : Եւ զայս թարգմանեալ ցուցանէ
 արդարադործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ
 մաքսաւորն բարեհամբաւեալ :

Գ . Եւ արգ, եթէ զչարիսն՝ հնարաւորութիւն բան-
 սարկուին գտողին զմեզ զայթակղեալս, զիւրսն ՚ի մեզ
 սերմանիս առ օրն համարեցի, զեարդ ոչ զբարիսն
 տնկեալս ՚ի մեզ հողոյ արութիւնս ՚ի խնամակալու-
 թենէ կամաց կեցուցչիդ օն և օն գրեցես, սէր բարե-
 դութ, հզօր և յաղթող, քաւիչ մեղուցեւոյց, կարող
 յամենայնի առ ամենայն փրկութիւն : Եթէ զանդունդս
 առ երկինս փոխես, և կամ զխաւար մթութեան ՚ի լոյս
 հաստատես, եթէ զգառնութիւն լեղոյ ՚ի մանանայի
 քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սաստկութեան
 վշտաց ՚ի պարս դասու բերկրութեան հարսանեաց կար-
 գես, դիրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ : Եւ եւս
 քան զսոսին բաւես առ նոսին տիրեալ համայնից ահա-
 տորապէս . և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս . ա-
 մէն :

Բ Ա Ն 1

Վ Է բարին ցաւելաւ իբն հեծաւ Էեան Կարին Ըսկոյի աս-
նոյն ասիւրի Կարլեանոյ Էանի . ՚ի Եսայի սրբից Եսայ ընդ
Ասորի-ձոյ :

Ը . Եւ արդ ճշմարտեցի բան քո , ողորմած բոլո-
րից Ասորւած , ներող և օրհնեալ , ՚ի բազմագթելին
գարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեղաւորին ,
թէ և առ յետին իսկ շունչն իցէ ընտրութիւն , և կամ
՚ի մէջ չարութեանն փոխադրութիւն : Մանաւանդ զի
դժնեայ կցորդս այս անձնիշխանական՝ միշտ մարտիկ ,
խաբօղ շողջօրթ , յարեալ ՚ի ստութիւն , ըստ առա-
կողին արածօղ հողմոց , դժուարունելի հաստողին
փախօղ , գերեալ որսողին մոլեկան մարմնոյս , ներհակ
անկակից , յոգնապատճառեան ամենավարան , զոր քո է
գիտել զքանեացն յաճախութիւն : Եւ զկնի մեղանացն ,
ողորմագինս իմն ողբարկութիւնս վհատականս տաժանա-
կոծս բազմաւաղելիս , քո առաջի , տէր , զթարկութիւնս
դրեալս արտասուօք , թառանչս թշուառութեանց կար-
գելոց անբաւս չար վտանգից մեղսատագնապ պատկա-
ռեցելոյն :

Բ . Եւ զի մի կրկնաբանութիւնս ՚ի շատիստութիւն
կրթեսցի , առաւել քան զսոյն այսու ողբալի . քանզի ոչ
երբէք համարձակի խնդրել իւր զարքայութիւն , այլ
գտանջանացն թեթեւութիւն : Ոչ ընդ կենդանեացն ՚ի
լոյս , քան թէ ընդ գերեզմանականացն զգայական շն-
չոյն ՚ի խաւար . ոչ ընդ ամբարձեալսն , այլ ընդ բե-
կեալսն և ընդ խորտակեալսն : Ի հանգստեան իւրում
վաստակեալ , ՚ի խրախութեան ինքեան տրամեցեալ . զի
մօք ժպտեալ , և մտօք խոցեալ . կերպ ՚ի ծաղր , և աչք
՚ի յողբումն . երեսք զսիրտիանս ձեւացուցանէ , և ար-

տասուրն զգաոնութիւն սրտին ճշմարտէ : Բնականաբ
երկու յերկոսին ձեռին , մինն արեամբ և միւսն կա-
թամբ . երկու բուրանոցք կայծակնաւորք , մինն խնկով
և միւսն ձենձերիւ . սկաւառակք կրկին կրաւորականք
համոց , մինն քաղցու և միւսն դառնութեամբ . բաժակք
զոյգ առ երկուս բերմունս , մինն արտօսք և միւսն ծը-
ծումք . աաշտք կրեցեալք ՚ի ծայրս մատանց , մինն զինի
և միւսն լեղի : Գրունք սեսանեղեաց ներհակաց , մինն ՚ի
լաց և միւսն ՚ի վրիպումն . խանութք հարոցականաց հա-
կառակութեանց , մինն արծարծէ և միւսն շիջուցանէ .
հայեցուածք զիմաց երկուց , մինն զոյղն ողբանօք և
միւսն անանխայելի բարկութեամբ : Համբարձումն երկակի
բազկաց , ոմն ՚ի հարուածս և ոմն ՚ի մերժումն , զեմք
կրկնակի կերպից , մինն տխրեալ և միւսն ցասուցեալ .
կշտամբանք ընդ միոյ երկու , մինն աստեացս և միւսն
ապաւնեացն : Ապաւինութիւնք կարծողականք , մինն
գոնէ և միւսն թերեւս . ՚ի մի բերան երկակի բարբառ ,
մինն եղկութիւն և միւսն խոզողութիւն : Արկուս աղդ-
մունս ՚ի միում սրտի , մինն կեղակարծ յուսոյ և միւսն
ճշդրիտ կորստեան : Ամպ լըթագոյն ահագնատեսիլ կըր-
կին տեղացմանց , մինն նետս և միւսն քարինս . որո-
տումն ահեղ երկոցունց բերմանց , մինն կարկուտ և
միւսն հրացան : Յայդ ցաւագին երկուց վտանգից , մինն
լալոյ և միւսն մահու . առաւօտ սոյոյ երկուց բողբ-
մանց , մինն սասաից և միւսն սպառնալեաց . արեգակունք
երկու ՚ի յերկուց ծայրից , մինն խաւարի և միւսն կիզ-
ման :

Գ . Եթէ հարուածոց աջ կառուցանի , ինքեան վար-
կանի . և թէ ձեռն սլարգեւածիւր , ոչ իւր ակն ունի :
Ի պարծանս ուրուք կորանայ , յամբարձումն գլխոյ ընկ-
ձի , ՚ի չարեացն յիշատակ հեծէ , ՚ի ճառս մաբրոց
պատկառէ , ՚ի պատմութիւնս հանգերձելոյն երելի :

Եթէ օրհնի յումբէ յայտնի 'ի ծածուկ զանձն անի-
 ծանէ . եթէ գովեստ յումբէ լէ , պարսաւանօք զինքն
 կշտամբէ . եթէ դսրովեսցի սաստկապէս , ինքեամբ ինք-
 եան վկայէ . եթէ ձաղեսցի ուժգին , սակաւ հատուցումն
 առաւել պարտուցն գրեսցէ : Եթէ ըղձուճն մահու ին-
 քեան լսիցէ , այո սսէ , և դարձեալ կրկնէ . թէ որո-
 գայթ մահու ձայթեսցէ յերկնէ : հազըւ զդէմնն համ-
 բառնայցէ : Կիւրոց իրաւանցն մատեան խըփեալ , ըզ-
 պատասխանութեանն յոյս թուցեալ , զհամարձակութեն
 ընթացս փակեալ : Եւ եթէ ոչ էր անփրկանաւոր կո-
 ըուստ գերելոյն , զիւրովին երթալ ոչ ինչ դանդաղէր :
 Արդարեւ վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ 'ի
 վերայ երկուց ճանապարհաց , ըստ հոգեկից բանի Ի-
 մաստնոյն :

Դ. Եւ արդ զհարդ ոչ ողորմեսցիս , բարեգութ ,
 այսբանեացս ձայնարկութեանց կողկողագինս հեծեծա-
 նաց , որ անուամբս այսօւ մեծացար , թէ ողորմած եմ
 ես տէր : Ահա առ չարութիւն գերոյս բարութիւն քո ,
 առ մահապարտիս դառնութիւն քաղցրութիւն քո , առ
 կորուսելոյս յայտնութիւն ճառագայթ քո , առ յան-
 դընելոյս մոլութիւն ողորմութիւն քո : Առ խակու-
 թիւն փեսասակարիս հեզութիւն քո , առ կործանե-
 լոյս այցելութիւն աջ քո , առ ընկղմելոյս վերբերութիւն
 ձեռն քո , առ բժշկութիւն անողջանալի խոցուածոյս մա-
 տըն քո : Առ պակուցելոյս պաշտպանութիւն ողի քո ,
 առ ապախտաւորիս իմ վտահոյսութիւն երկայնատութիւն
 քո , առ օծումն ամենադժնէիս զօրութիւն քո , առ մե-
 զաւորիս քաութիւն հրաման քո : Առ փախուցելոյս ա-
 պաւնութիւն ոտն քո , առ սրացելոյս պատսպարութիւն
 քազուկ քո , առ վրիպելոյս առաջնորդութիւն լոյս քո ,
 առ տարակուսելոյս հնարաւորութիւն հանձար քո , առ
 անիծելոյս կրկին ստացումն օրհնութիւն քո : Առ

վհասելոյս քաջալերութիւն խրախոյս քո , առ վըշտագ-
 նելոյս մխիթարութիւն բաժակ քո , առ նեղելոյս ըն-
 դարձակութիւն կամք քո , առ ատեցելոյս կոչումն սէր
 քո , առ հաստուճն սասանեցելոյս բան քո : Առ հո-
 գւով վիրաւորելոյս կաթուած արեան քո , առ աներեւոյթ
 մթերս ցաւոցս ակնարկութիւն քո , առ յուսահատելոյս
 անդրէն ընտրութիւն իշխանութիւն քո , առ պատուա-
 սումն կտրեցելոյս , կցորդութիւն քո : Առ խաւարաւ
 մահու ծածկելոյս նշոյլ կենաց քոց , առ խոռվեցելոյս իմ
 հանդարտութիւն խաղաղութիւն քո , առ վայրագութիւն
 օտարացելոյս ողջոյն քո , առ մոլորելոյս դարձաւորու-
 թիւն ձայն քո : Օ՛ի դու տիրես ամենայնի գթութեամբ ,
 և չիք 'ի քեզ մասն ինչ խաւարի . և ոչ է բարու-
 թիւն առանց քո . և քեզ վայելէ փառք յաւիտեանս .
 ամէն :

ԲԱՆ ԼԱ .

Վ իրապէս յաւիտեան իբլին Գեթու-Լեւան նարին Հսկայի ա-
 նոյն տղերս հաղլեանաց բանի . 'ի խորոյ սրբից իսոս ընդ
 Աստուծոյ :

Ե. Եւ արդ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս
 զաղէտ տագնապի հեծութեան ձայնիս մեծ հառաչա-
 նացս անսփոփելի իմոյս վտանդի . զի դու ողորմած ըս-
 կըզբնահայրդ խոստովանութեան անյայտ ծածկութից ,
 Որդի Աստուծոյ կենդանւոյ , տէր Ախուս Քրիստոս ,
 քաղցրութեամբ նայեսցիս քաւել : Արդարեւ կարօղ
 ես , ճշմարտապէս բաւական ես . եթէ կամիս , հնարա-
 ւոր ես . կամիս առաւելապէս , որպէս և կարես : Հա-
 ըրստանաս մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առնու-
 ըն , բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն քան 'ի ժողո-
 վելն , յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն քան 'ի ճըշ-

դեհն , կուտին քեզ համբարք 'ի տարածանէն քան 'ի շտեմարաննէն : Հաւատամ այսմ ամենայնի՛ զտանել քեւ եր փրկութեան , հաւատամ անարգս ընդ պատուականին , յուսամ ընդ Արքահամու և ընդ Աննայի . զի մինն բանից քո հաւատաց և միւսն քահանայայե տին բարբառոյ անսաց : Այսն որոյ և ոմն 'ի խորին ձերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ , գատանցեալն և զամուրն արդանդ Ստոյի՛ անդաստան պողածին արգեան օրհնութեան բազում ժողովրդոյ՝ մարգարէից սրբոց և լազաւորաց ընտրելոց հայել յուսացաւ : Իսկ միւսն զանհանգերձելի երկիր որովայնին սենեկի եւթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց , որ է լիւմի անբաւութեան զքնան նշանակելոյ զեութիւն , Ատուածութեանն յարակայութեան սահման անհեաղօտելի , և աւազանին նորածին որդւոց անհաս յորդութիւն : Այս լիւ պանծալի , որում ոչ է կէտ կցորդի և ոչ սպառուած վախճանի , այլ կոյս ոմն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յուէտ անձառ վիճակաւ համայն յախտնիւ , զժուարթարգմանելի մերոց իմաստից :

Բ . Արդ համարեա՞ յարգարութիւն անյուսալի փրկութեան հողոյս զամենավարան ձայն կողկողանաց սրտիս հեծութեան , ընդ նախագրելոցն երջանկաց եղեալ և դասեալ զայս զաւանութիւն փոքր հաւատոց իմոյս ինդրուածոց : Օ՛ի կեցից և ես առ նոքօք բերկրեալ ընդ նոսին , բուռն հարեալ քան զիմոց գործոց զբոյր շնորհաց : Մանաւանդ զի կրկին բարձունք են և փառաւորք և քան զչափ կշռութեան բանի գերագոյնք , ի մումն խոտլութեան հաշտարանք և հզօրապէս քաւարանք , և կարծեաց թերութեան մտաց սլացեալք : Բնդ արեան քո ահաւորի և ըստ մարմնոյ ծնողք քո խնկելի . պարք առաքելոցն , դասք մարգարէիցն , գունդք մարտիրոսացն՝ ձիարեալքն հետեակ սպառազէն արիււ-

թեամբ մերկամարտիկն մորցութեամբ : Գումարք միանձանց , բոյք բանականաց ընտրելոց . ժողովք բարեկրօնից , հոյք հոգեղինաց յերկէ երկնաւորաց , զինուրութիւնք վերնականաց ընդ մեզ կցորդելոց : Աւանդք երախարեաց , մատուցմունք զուարակաց , լուցմունք զամբարաց , բուրմունք խնկոց իւղոց հանդերձանօք , յաղթանակք փրկական նշանաց , կառուցմունք խորանաց աստուածարնակաց , ձեռք քահանայից շնորհիւ կատարելոց : Առ շարժումն անձին յիշատակ Աստուծոյ , առ փոփոխումն գարշապարի , առ կարկառումն աջոյ և ամբարձումն բազկի , առ բարիս գոհութիւն , և առ գթել աղաչանք , առ բանս ընտանիս , առ խօսս հասարակաց , առ ձայնս բնաւորականս , առ գործոց յաջողուածս , առ առաքինութեան ջերմութիւնս , որ 'ի տունջեան և 'ի գիշերի՛ ընթացմունս օգտակարաց հոգեւորաց՝ քեւ առաջնորդեալք . 'ի նիրհել և 'ի զարթուել , 'ի պատերազմի ազգաց , 'ի մարտս դիւաց , 'ի հակառակութիւնս հերձուածողաց , առ փոքունս , առ մեծամեծս , առ ձրկումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց , և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան , եթէ հեշտականս եթէ տատամնելիս : Այսն ոմանց աղօթս՝ մեալ 'ի նոսին , և յաղազս ոմանց՝ զի գերծ արացես սքանչելապէս հնարիւք անձառիւք . հաւատացեալ յամենեցունց , թէ բաւական ես յամենայնի , կաթնաբոյժ հասակաց , տիոց պատանեաց , մտաց վայրենեաց , ստամբակաց գոռօզաց : Մինչ զի առ թատերս տեսարանաց , և առ կոյտս խոնձաղանձ բազմութեանց , և կամ առ կաբաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ :

Գ . Արդ դու ստացար զամենեսեան , և քո են ամենեքեան , և ողորմեսցին ամենիցուն , միայն բարեգութ . զի թէ և մեղիցեն , քո են . վասն զի 'ի քում համարի են . բանգի գիտեն զգօրութիւն քո , ըստ առակողին

ժողովանաց : Որում և ես կցորդիմ թշուառս բանիս
 վկայեալ սորին յանցաւորապէս . յանդգնիմ ասել , թէ
 որ կարգայ գեղ զովեստիւ , ծանուցեալ գեղ թէ ի-
 ցես , թէ և եւթեամբք իցէ վարակեալ կրկնապատիկ
 պատժաւորութեամբ , առ այս օրինակ կիրթ ձեռնար-
 կութեան , զիւրդ ոչ քո իցէ : Յորս է տեսանել 'ի մէջ
 արջնատես ազոռառեց' սպիտականիշ երամն ազաւեսաց ,
 'ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից' որոջս հանդար-
 տաբարս , 'ի թիւս շանց գազանականաց գառնս նուի-
 բելիս : Հեղութիւն 'ի խստութեան , կատարելութիւն 'ի
 թերութեան , խոնարհութիւն յամպարհաւաճութեան ,
 ճշմարտութիւն 'ի ստութեան , միամտութիւն 'ի մանկու-
 թեան : Անբժութիւն յայլամտութեան , բարաւրութիւն
 'ի չարութեան , պարկեշտութիւն 'ի լիտութեան : Ողոր-
 մութիւն յանդթութեան , ապաշաւանք յանյուսութեան ,
 քաղցրութիւն 'ի բարկութեան : Հաշտութիւն 'ի թրշ-
 նամութեան , անոխութիւն 'ի խաժանողութեան , քա-
 շալերութիւն 'ի ըկութեան , օրհնութիւն 'ի նետաձը-
 գութեան : Յոր ոչ բաւականացայ երբէք դատել ճրշ-
 քրտապէս , թէ ով յերկրածնաց աստի կանխեսցէ
 ժառանգել գեղ , որ միայն անաշառաբար կշտամբես
 իրաւամբք զարդարութիւն՝ առ ամպարիշտ մաքուրն և առ
 պողոնիկ զըջացեալն : Առ ամենեսին բարեգործ , միայն
 թաղաւոր , օրհնեալ 'ի բարձունս և յամենայն յախ-
 տեանս . ամէն :

Բ Ա Ն Ի Բ .

Ո՛րքսն յաւիտեան իրկն հիժոյ-լիւտն նսրին հսկողն առ-
 նոյն աղերս ճողլանաց բանի . 'ի խորոյ սրբից ետու ընդ
 Աստուծոյ :

Լ . Եւ արգ ես յետեալս 'ի նախագրութեանց ար-
 ժանաւորաց գրեալ ինձէն ընդ պարտաւորսն պատժոց ,
 հայցեմ զօղորմութիւն ընդ ամենեցուն ժողովանաց .
 քնդ նկունս և անհամարձակս , ընդ տկարսն և փո-
 քրկունս , ընդ ընկեցիկն և արհամարհեալս , ընդ
 տարագրեալսն և առ քեզ գարձեալս , ընդ երկուսցեալ-
 սրն և ճշմարտեալս , ընդ կործանեալսն և յարուցեալս ,
 ընդ ընկձիւկսն և հաստատեալս , ընդ զորեալսն և կանգ-
 նեցեալս : Բնդ մերժեալսն և ընկալեալս , ընդ ասեցեալ-
 սրն և կոչեցեալս , ընդ ապշեալսն և զգաստացեալս ,
 ընդ անառակեալսն և զսպեալս : Բնդ հեռացեալսն և
 մերձեցեալս , ընդ հեղբեալսն և սիրեցեալս , ընդ պատ-
 կառեալսն և զուարթացեալս , ընդ ամաչեցեալսն և խըն-
 դամտեալս : Արգ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ
 զմեղսն Երուսաղէմի , ըստ մարգարէին հրամանառու-
 թեանն որ առ ժողովուրդն նախնի , և կամ՝ տանն Յա-
 կոբու զանօրէնութիւնս նորա , այլ իմոյս ժամանեցից
 յայսնութեան : Բանզի աւաղ ընդ աղէտս մահու յա-
 բելով ըստ մարգարէին , յանդիմանեցից զիս ինքն ինձէն
 իմովս ձայնիւ ըստ սաղմնսողին . որպէս զի յանձնառա-
 կան յայսմ համայնապատում խոստովանութենէ ոչ
 կարօտացեալ կրկնակին , միանդամայն 'ի սպառ սրբեցայց
 օրհնեալ հրամանաւ Ելիզ :

Բ . Եւ արգ կրկնելով ծունր բարերարիկ քաղցրու-
 թեան , տարածեալ զանձն իմ առաջի , զ'ի մահ գլոր-

մանն ցուցից կերպարան : Ար 'ի հող խոնարհեալ մա-
 ծայ ընդ երկրի , և ընդ անցաւորս այս կենցաղ կորըս-
 տեան՝ անասնական զեանաքարշուխեան սողնոյ սահեց-
 մամբ՝ կամբ բեւեոնոյ : Այլ 'ի քեզ , տէր , յեցեալ իբր
 'ի հաստարան կենաց զաւաղան 'ի յարմատոցն Վաւթի
 ընծիւղեալ մարմնով անձառ շողկարմամբ յանեղ՝
 Աստուածութիւնդ , կանգնեցայց անդրէն կիսայար
 պատկառեալ 'ի քոյդ երախտեաց 'ի վայր կորացեալ
 դիմօք : Աք 'ի բարձունս յառեալ ողորմագին տեսու-
 թեամբ 'ի քեզ , մերձդ 'ի հեծութիւն , բնաւին ողոր-
 մութիւն , բողբոջին քաղցրութիւն , զլիճ լուսոյս ար-
 տասուօք թեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերըն-
 ծայեցից : Ա՛ր , ամենառատ , աննուազ երկայնմտու-
 թեամբ քո դառնացուցչիս , միայն դու 'ի յամենայնի
 սահման փրկութեան , Աստուած բողբոջ , անձառ մե-
 ծութիւն , անբովանդակելի բնութիւն , անքննելի իս-
 կութիւն , հզօր զօրութիւն , կարօղ բարերարութիւն :
 Անպակաս լուծիւն , անձառ ժառանգութիւն , վայել-
 չական վիճակ , առատ պատրաստութիւն , անստուեր ի-
 մաստութիւն , տենչալի տուրք , անձկալի ձիր , բաղձալի
 բերկրութիւն : Անտխուր հանգիստ , անտարակոյս զիւտ ,
 անկապուտ կեանք , անծախելի ստացուած , անփոխա-
 նորդելի բարձրութիւն , ամենարուեստ բժիշկ , անսասա-
 նելի հաստատութիւն : Վարձուցիչ մողորելոց , գտիչ
 կորուսելոց , յոյս ապաւինելոց , լոյս խաւարելոց , քա-
 լիչ մեղուցելոց , ծածկարանդ փախուցելոց , անդորրիչ
 խոտվեցելոց : Վրկութիւնդ մահացելոց , արձակիչդ կա-
 պելոց , ազատիչդ մատնելոց , պատսպարանդ սահեցելոց ,
 վշտակիցդ զայթազղելոց , երկայնմտութիւն տարակուսե-
 լոց : Ալուսոյ տեսակ , ցնծութեան ցոյցք , օրհնութեան
 անձրեւ , հօգի երեսաց , զօրութիւն դիմաց , հովանի
 զխոյ , շարժարան շրթանց , աղղումն բանի , կառավար

անձին , բարձունս բազկի , ձգումն ձեռին : Աշրտանակալդ
 սրտի , ընտանի անուն , մերձաւոր ձայն , կցորդութիւն
 հարազատ , ինամածութիւն հայրենի , խոստովանեալ
 անուն , պաշտեցիալ պատկեր : Անպարագիր տիպ , եր-
 կրրպագեալ սէրութիւն , բարեբանեալ յիշատակ , խըն-
 դութեան մուտք , անվրէպ շաւիղ , փառաց դուռն ,
 ճշմարտութեան ձանապարհ , երկնաձեմ սանդուղք : Աւ-
 սյլ բազմութիւն բանից գովեստից անհամար կարգաց
 և տանց անբաւից , զոր ոչ բերէ բերան երկրածին , և ոչ
 տանի զործի մարմնեղէն , և ոչ կշտն իղձք հոգեղէնք :

Գ . Առ քեզ հայի ամենայն ակն տեսողն , Աստուա-
 ծըդ ամենայնի . նայեա 'ի պաղատանս հառաչման ձայնի
 քոյց ծառայից , և եթէ յաղախնաց որ աղաչեսցէ : Աւ-
 բնկալ զցօղ ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս
 ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութեան քոյ , Վրիս-
 տոս , և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
 զառ քեզ դարձն և զբաւանութիւն , և համբուրիւ
 շրթանցս առ ճաշակ փրկութեան կենացդ հաղորդու-
 թեան՝ համաշնչապէս զանբակ միութիւն : Աւ զնոյն
 գթութիւն նորին ողորմութեամբ ընկալեալ 'ի քէն ,
 բարերար , զբաւանեացես զմեծ պարգեւ ընդ փղբու
 հաւատոցս : Աւ 'ի ձեռն գթութեան սիրոյ քոյ առ քո
 անձկալի անունդ խոստովանեալ ծառայիս , դարձցին
 ձմերուկք հողմին խոստութեան 'ի յօդ հանդարտութեան ,
 և մրկին սաստկութիւն 'ի սիբ ախորժութեան , և կար-
 ծիք երկիւղին 'ի մեծ վտահաւութիւն , և պատահաս
 պատժոցն յերանութեան պատահումն , և վտանգք թախ-
 ծանացն 'ի հոգեւոր խրախճանութիւն : Աւ ալէկոծու-
 թեան 'ի հոգեւոր խրախճանութիւն : Աւ ալէկոծու-
 թիւն ծփանացն 'ի խոր խաղալութիւն , և զեկացն թե-
 ւարկմունք յանբոյթ նաւահանգիստն , և բերք բեռանցս
 մեղաց փոխարկեացի 'ի թողակ շնորհաց : Աւ յայսբա-
 նեացս ամենից բիրտոց բարութեանցս 'ի քէն եղելոց՝

մծացի անուն հղորիդ խնկեալ և խոստովանեալ , ա-
մաչեսցէ բանսարկուն շարեաց՝ հերքեալ և հալածեցեալ ,
ունայնացին մուրհակք մեղացս : Խզեցին հաղբքն ,
որոշեցին որոգայթքն , կապտեցին կապանքն , վանեցի
վիհն , վերացին ֆեսաքն , պարսեցին պատրանքն , ջը-
րեցին մեղքն , պատառեցին պարախքն , խորտակեցի
լուծն , քակտեցին քեղեքն : Եւ ընդ մնայլ միժուլթեան
չարեացն յանցանաց և դիւացն բանակաց պաշարողաց՝
արև փառաց քոց ժամանեսցէ կեցուցանել փրկել և
լուսաւորել , յաջմէ և յահեկէ , 'ի դիմաց և 'ի թի-
կանց : Եւ եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ պարնայնոյ
ընդ ակնկալութեան սպասողացն քումդ էրեւման : Օր
դու ես բարերար առ ամենեին , և հնարաւոր են քեզ
ամենայնք . և ամենեցուն զկեանք կամիս և զփրկութիւնն
բաղձաս :

Դ . Ո՛վ ամենապարզև ձեռն Յիսուսի Քրիստոսի ,
և առ իս դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ սրբ-
բոյ բնակեալ միացեալ , և ոչ հեռացեալ յանձկու-
թեան սրտէ սիրոյ սենեկիս : Եւ անեղծական քո նկա-
րադիր՝ նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւետ
կոչմանս՝ ընդ իս սահեսցի , միջնորդեալ ընդ քեզ 'ի
մատեան յաւիտեան կտակաւդ կենաց Հոգւոյդ աւե-
տեաց երկնից յօրինողիդ : Եւ քեզ միայնոյ պատճա-
ռիդ , և միոյդ 'ի միոյ պատճառէ , և ունողիդ զպատ-
ճառ միոյ , երբեակ անձնաւորութեան և միոյ Աստուա-
ծութեանդ վայելեն փառք յերկնաւորացն վեհից , 'ի
սրբոցն դասուց , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲԱՆ ԻԳ .

Ո՛վ Երուսաղիմ յաւելուած ինչն Եթովպեան շարքն անկողն ա-
նայն աղբիւս հալածանաց բանէ : 'ի իպոյց սրբոյ խոսն լիպ
Լուսնոյ :

Ը . Երդ զյարմարութիւն պաշտաման բանիս 'ի խալ-
րեաց հոգւոյս քեզ նուիրելոյ , օրհնեալ բարեգութ , կը-
ցորդիլով ընդ խնկազգեստիցն զուգամանապէս խառ-
նեցես 'ի յանուշութիւն կազմութեան իւղոյն Սարիա-
մու կնոջ բարեպաշտի : Յոր հաւասարեալ նորնութեամբ
ընդ երջանիկ պոռնկացն 'ի քէն ընկալիլոցն յաւետա-
հրաշ յարպանօք , պարարեսցիս մեծապէս իմոյս բանիւ
նուաստիւ , ընկալեալ յանհաս և 'ի բարերանեալդ զը-
լուի բարձրելոյդ , անկշտամբելի 'ի բամբասանաց սաղ-
մոսին , մի օճցէ զտերեւ ոստոց զագաթան եւլ մեղա-
ւորին : Ը . Եւ արացես զօրանալ կրկին յաճախութեամբ
բուրման խոստովանութեան այսր մատենի 'ի բազումս
ազգեալ , համասփիռ ամենատարած և աշխարհայիր
տանն տեսակաւ , ըստ օրինակի համեմատութեան նո-
ցայն յիշատակի : Քանզի դու նոյն տէր զգաստացու-
ցիչ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց , որոց ա-
ռակեալ զմարդարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ
պատկերի յեղանակեցիր , անտուստ առ սոսին անձառ
ներգործութեամբ 'ի յիս վերաբերեալ զճայրագոյն շնոր-
հին կատարումն : Ընդ անանական գարւոյն կերակրոյ՝
զբաղմահամբար պտուղ ցորենոյդ կենացդ հացի , ընդ
ապտիանացու արծաթոյն՝ զարքունականդ պատկեր , ընդ
յիմարաբար թմբութեան զինւոյն՝ զբաժակդ արեան ա-
րարչիդ , ընդ իւղոյն առելոյ 'ի յայրատ կնոջէն հնոյ
ժողովրդեանն՝ զօժումն շնորհին՝ առ իս դարձելոյ , ընդ
զերծման զլեաշտիք կտաւոյն՝ զանապականութեան վե-

բարեկուն : Այսպիսիքանքն արձնու թեանք՝ զթուրչս քարե-
մասնութեան , օրինինն և ասետարանան՝ Հանգերձ քործ-
նական ատպինութեամբն , ընդ ունկանն գնդի վայել-
չականն զարդու՝ զանստուեր յիշատակ տերունականդ
ձայնի , ընդ քայոս պերճութեան լանջացն՝ զուրնասա-
ւաք սուանդս ուղղութե թոյինակրօն լծող քաղցրութի :

Բ . Բայց զի՞ է յայտոսիկ ինձ պարծել , և ոչ վե-
րբստին 'ի սոյն պատկառել : Այլ յայլ օրինակ փո-
խեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան , որ
ինչ ինձ է յարմարաւոր , ամենայնիւ հատուցից զպատիժ
պարտուցս իմոց մեղանաց , 'ի մարգարէիցն տառից բե-
րեալ համարօտս՝ 'ի սոյն յարկ մուծից աստիկ դատա-
խաղ : Ընդ ողբոց նոցին լծակցեալ , քան թէ ընդ
բերկրումն նոցա պարիլ . յորս հառաչանս , ձայնս հե-
ծութեան , բողոքս բարկութեան , նախատինս խորտակ-
ման , լալումն կարեւոր : Այլ մեծիդ Աստուծոյ զթու-
թիւն ամենաժաման՝ կանուի ազդեցաւ յիմ յուսա-
տրութիւն , առ որս զիջևունս , խոստովանութիւնս աւե-
տիս , պարզեւս , լուսոյ երեւմունս , խրախոյս աստուա-
ծայինս , փառաց ժառանգութիւնս , հրաշից յայտնու-
թիւնս , սքանչելեաց տեսութիւնս : Յորոց ումա՞ք յոյս
ընձեռեն , և ոմանք վհատութիւնս բազումս մատուցա-
նեն . յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակե-
ցայ : Օ՛ի եթէ զգեստ Աստուծոյ զվարագուրին պրտ-
բուակ ասաց Ազեկիէլ , յորում արար ժողովուրդն կու-
ռըս կարկատունս , որով պոռնկել ասէ 'ի նոսա , իսկ
որքան պատիժ անմաքրութեանս եղիցի զԱստուած զգե-
ցողիս ներքոյ և արտաքոյ : Օ՛արմանամ , թէ զնորդ
ոչ կիզում . հիանամ , թէ իբր ոչ այրիմ . աիշիմ ,
թէ որպէս չյափշտակիմ՝ տանջեալ , լքեալ , չարչարեալ ,
ջաղիտեալ մանրեալ խորտակեալ , կտրեալ բաժանեալ
'ի յօրինակէ ժանեաց կորուսչին , ըստ գրոյն : Այլ այս

միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի փրկութեան
յուսոյ , զի քրիստոսեան ասետարանն կեանս է ամենե-
ւին , 'ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ :
Որով առ մեղանսն դարձն , առ պարտիսն շնորհն , առ
եղծումն նորոգութիւնն , առ անօրէնութիւնն քաւութիւ-
նըն , առ վէրն բժշկութիւնն , առ վտանդն անդորրու-
թիւնն , առ պատիժն ներումնն , առ պատերազմն հան-
դարտանախ : Առ հուրն անձրեւն , առ պատուհասն
պարգիւն , առ ակնկալութիւն սատակմանն ձիրն , առ
գործարան մահուն կենացն ազատութիւն :

Գ . Եւ զի՞նչ է ինձ զայսքանեաց յիշմանց 'ի թիւ
արկանել , և ոչ զանձառնելիս աստանօր դասել : Յի-
շատակաւ Հօրն բարձրելոյ՝ յՈրդին կցորդութիւն , յա-
նուն միածնին՝ առ Հայրն ընտանութիւն , սոցին ակնար-
կութեամբ՝ ընդ Հոգւոյն հաղորդութիւն . խաչին փր-
կանք , բանին սփոփութիւն , բարեոք վարձ կամացս առ
կռութիւն գիտողին , աւազանն կենդանարար՝ հաշտուեն
միջնորդութիւն : Եւ այք ամենայնք անթիւք բարիք 'ի
բարերարէն բարդեցեալք , ազատք 'ի հարկէ , արձակք
'ի լծոյ , իշխանականք և ոչ իշխեցեալք : Այսոքիկ են ,
որ ինձ 'ի մեջ դառնութեանս մահու՝ կեանս անտարա-
կոյս ասետարանն . քանզի եթէ ոչ զայստիկ ունէի ,
կանխաւ արդեւ կորուսեալ էի իսկ և իսկ ըստ բանի
Արդողին : Ոչ փոքրկութեամբ Որդւոյ զՀայր փառաւո-
րեմ , ոչ նուաստութեամբ Հոգւոյ զՈրդի նախադասեմ .
համափառ ունիմ զերեսեան՝ և նոյն արարչութեամբ :
Քանզի և 'ի դէմն Հոգւոյն սրբոյ՝ այս են աղաչանք ,
նախընծայ սկզբան պատարագին՝ յորում դառնդ երկ-
նաւոր զենանի , զայս աղօթեցի :

Այսինքն , որ նախ ևս զպատարագն Տարուցոյն :

Գ . Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բռնորոց , յօրինող երեւութից և աներեւութից , փրկող և հաստատող , խնամող և խաղաղարար , Հօր հղօր Հոգի . հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ : Մատչիմք մեծաւ գորութեամբ սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զոյս պատարագ քում անդնին զօրութեանս , իբր աթոռակցի փառակցի և արարչակցի հայրենի անկասկուտ պատուոյդ , և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ Ամենաուէր՝ զքեզ առաքչի , փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի : Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երբեմն անձնաւորութիւն միասնական Աստուածութեանդ , յորոց մի և դու ճանաչիս անհաս : Բեւ և ՚ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շռուաիդք՝ տեսանօք անուանակոչեալք , զանցեալսն և զդարցան , զեղեալսն և քոչ գոյացեալսն անստուերարար բարբառով բանի վերապատմեցին : Ադի Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի , որ ՚ի գնախ քո ՚ի վերայ ջրոցն , անպարագիր զօրութիւն , ահեղ շքարկութեամբ տածողականաւ՝ թեւապարփակ պաշտպանողօրէն զթասիրեալ ՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր : Էր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մաժուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր , կարօղ տիրապէս , զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բռնորոց գոյից ամենայն էից յանէից : Բեւ ստեղծանին ՚ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ ՚ի քէն յայնմ ժամանակի , որ է օր վերջին այսմ կենցաղի , և օր առաջին երկրին կենդանեաց : Բեզ հնազանդեցաւ

միութեամբ կամացն որպէս Հօրն իւրում ազգակիցն քո , էակիցն Հօր անդրանիկն Արդի մերովս կերպիւ : Օքեզ աւետարանեաց ճշմարիտ Աստուած հաւասար և համապոյ Հօր իւր հղօրի , և զառ ՚ի քեզ հայհոյութիւնն անբաւելի քարոզեաց , և իբր զաստուածամարտիցն զբո հետեւոյն չարաբանական բերանս կարկեաց : Եւ զիւրն շնորհեաց արդարն և անարատն գտիչն ամենայնի , որ վասն մեզաց մերոց մատնեցաւ , և յարեալ վասն զմեզ արդարացուցանելոյ : Ամա փառք ՚ի ձեռն քո , և քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Դարչեալ իբնեայն ՚ի նոյն կարգ բանի , մինչև յարաւուրելուն լասոյ հարշապէս յայսինայն աղբեալ , տեւորանել ձերոյն զերին խաղաղութիւն :

Ե . Աղաչեմք և աղերսեմք արտօսարալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ անեղծ և անստեղծ անժամանակ Հոգւոյդ գթածի , որ բարեխօսդ ես վասն մեր յանձուռնչ հեծութիւնս առ ողորմածդ Հայր : Ար զսուրբան պահես , և զմեղուցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ Հօր : Արդ ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց , որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան . և մի շեջին առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլունք ՚ի տեսականացս աչաց իմաստից . վասն զի զքեզ ուսաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից , և ընտիր վարուց ինկելոց : Եւ քանզի մինդ Աշրորգութենէդ պատարապի , և միւսդ ընդունի՛ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ , իսկ դու՛ ընկալցիս զմեր պաղատանս , և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուակաւնրս ամենապատրաստութեամբ ՚ի վայելումն ճաշակման երկնաւոր դառինդ : Առանց պատժոց դատապարտու-

Թեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կե-
 նաց նորոյ փրկութեան : Եւ Հաբեցելի 'ի հրոյս յայսմա-
 նէ գայթազղութիւնս մեր , որպէս մարգարէին կենդա-
 նախարոյն կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման :
 Օ՛ի յամենայնի քոյդ քարոզեցելի զթութիւն , որպէս
 Որդուիդ Աստուծոյ՝ Հօր քաղցրութիւն . որ զանառակ
 որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն , և ըզ-
 պոռնիկան յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արգա-
 րոցն երանութեան : Այո , այո և ես մի եմ 'ի նոցանէ .
 և զիս ընկալ ընդ նոսին իբր մարգասիրութեան կարօտեալ
 մեծի , շնորհօք քո ապրեալ , զարեամբ Քրիստոսի ստա-
 ցեալս : Օ՛ի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո
 Աստուածութիւնդ ընդ Հօր փառաւորեալ Համապա-
 տուարար 'ի մի կամս և 'ի մի իշխանութիւն գովութե-
 զի քո է զթութիւն և կարողութիւն և մարգասիրութի .
 զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Ի ԵՆ ԼԳ .

Վ Իբրոսին յաւելած իրկն հեծու-է-է-ան նորին հոկոյն ա-
 նոյն առէրս Տաղէ-անայ Բանի . 'ի խորոյ սրբոյ խօսս ընդ
 Աստուծոյ :

Ե . Արդ առ այսօրիկ թշուառացեալ շնչոս իմոյ
 իզձք , և առ քեզ դաւանութիւնք յարմարականք , որ
 բովանդակես բանիւ զամենայն , Աստուած , զոր 'ի նախ-
 նին ճառեալ և յերկրորդումս ցուցից : Իսկ յանդիմա-
 նութիւնս զրարանականս՝ 'ի կոյսս բազմութեան ազ-
 դաց , և թարգմանութիւնս ժողովրդոց , զայս արգահա-
 տութիւնս մաղթողականս նուիրեցի , զոր ներքնաշա-
 րեալքդ սահմանադրին զոհարանութիւնք :

Ի Հանրախորհրտս խօսեց արքեի Բանս Տաղէ-անայ , որով
 Հոգիի Աստուծոյ Հաշտեալ Հասանէ յօ՛ւ
 նախնայ-Ենի :

Բ . Ազատ զանփոփոխելի տերութիւնդ ամենազօր
 Հօգույդ հօրի , առաքեալ զցօղ քաղցրութեան քոյ , և
 բարեգործեալ 'ի յանձին և յիշխանական ազգման զգայ-
 ութեան զամենակից շնորհս բազմապարգեւ քո ողոր-
 մութեան : Եւ հերկեալ զբանական անգաստան մարմնե-
 զէն կարծրացեալ սրտիս , յընդունակութիւն արգասեաց
 հոգեւոր սերմանդ : Քու՛մ ամենիմաստ էութեանդ խոս-
 տովանիմք զամենայն պարգեւս 'ի մեզ ծաղկեալ և ա-
 ճեցեալ : Որ ձեռնադրես առաքեալս , յոյցանես մար-
 գարէս , ուսուցանես վարդապետս , բարբառեցուցանես
 համբոս , և բանաս զփակեալ ականջս խլից : Որպէս
 ազգակիցն քո էակիցն Հօր անդրանիկն Որդի քոյին
 գործակցութեամբ ներգործելով զայս ամենայն , քարո-
 ղեաց զքեզ Աստուած հաւասարակից իսկութեդ Հօր :
 Շնորհեալ և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ
 զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ , հետե-
 ւել արագաթուիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպա-
 րէզս քոյինաշունչ կտակարանաց : Եւ 'ի մատչել իմ
 'ի զլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժամանեացէ
 առ իս զթութիւն քո , խօսելով յիս վարժանն և զպի-
 տանիսն և զհաճոյսն քո 'ի ժամանակի , 'ի փառս և
 'ի գովեստ Աստուածութեանդ քո , և 'ի լուծիւն շի-
 նութեան կաթողիկէ եկեղեցւոյ : Արկառեալ 'ի վերայ
 իմ զամենամերձ աջ քո , և զօրացո՛ղ զիս շնորհօք զթու-
 թեանդ քո . փարատեալ 'ի մտաց իմոց զմեզ մթութեան
 մոռացութեան , ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց ,
 աւբառնալ ուշիւ իմաստիցս՝ 'ի կենդաղոս երկրէ 'ի
 բարձունս : Աւտաւորեալ 'ի յիս վերստին զձագումն

անասուեր հրաշից գիտութեան Աստուածութեանց քոյ , հզօր , արժանի լինել առնել և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածատէր լսողաց : Եւ քեզ ամենայն փառք յամենայնի ընդ Հօր ամենակալի և ընդ Արդւոյդ միաձնի և բարերարի , այժմ և յանվանիձան յաւիտեանս . ամէն :

Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ սուրբ Արրորգութեանն՝ զայս վարդապետեցի , զոր շաւիղ կարգից վերանկարէ :

Արրորգութեան անայլալուծի նորոգ սրբաբանութեան
արդեալ յԱստուծոյ , յոր ինչ 'ի Անկեայն սուր
ճանեցաւ հաւատ :

Գ . Խոստովանիմք և դաւանեմք , պաշտեմք և երկրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ Արրորգութեանն , Աստուածութիւն անձառ , միշտ բարի , նոյնագոյ հաւասարապատիւ , անհաս իմաստից թեւոց սլացման , 'ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութիւն , զերազանց գոյով սահմանի անպարզիբ բացարձակութեամբ : Յառաջ քան զհիմն յաւիտեանցս անտարրափակ էունց ստեղծականացս կարգաց , օրհնաբանութեամբ անթարգմանելեալ ամենահարուստ մեծութիւն յաւէտ պսակեալ : Հաստիչ ժամանակաց և որ 'ի ժամանակին են կերպաւորեալք , ինքն պատճառ հանդերձիչ և յարմարապէս յօրինիչ տեսականաց և աներեւութից : Ոչ անուամբ չափեալ և ոչ յորջորջմամբ նշանակեալ , ոչ որակութեամբ նմանեալ և ոչ քանակութեամբ կրշոնցեալ , ոչ օրինակաւ ձեւացեալ և ոչ որպիսութեամբ ծանուցեալ : Ոչ 'ի թերութենէ տարածեալ , և ոչ 'ի լրմանէ ամփոփեալ , ոչ ուրեք երբեքի զբաւեալ և ոչ 'ի տեղում վայրի երեւեալ :

Գ . Հայր զթութեանց՝ ունօղ ամենայնի , և Աստուած հանուրց որ յերկնի և որ յերկրի , բաց 'ի Բանէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի . ստեղծիչ և տօւիչ շնչոց ամենից , բաց 'ի Հօղոյն իսկակցէ որով զհամայնն կազմեաց :

Ե . Մինն յերջանկափառ համագօր ահաւորութենէ երիցն անձնաւորութեանց խոնարհեալ 'ի վերուստ անտուստ 'ի ստորինս : Որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթոռոյ , և անկարօտ զիմացն ծնողին սիրոյ , մտեալ 'ի սենեակ կուսին արգանդի պարզաբար , և ելեալ անտի յօղաւորաբար մարմին էապէս անորոշելի , անթերի մարդկութիւն և անպակաս Աստուածութեամբն : Մի Արգի Հօրն միայնոյ , և միաձին անդրանիկ աստուածամայր տիրածին Կուսին , արարիչն յեղականումն մարդ ելով ճշմարիտ սկզբնածին : Ահա ոչ զկնի եղեւոց երկրաստեղծիցս նմանութեան , այլ նոր և քնաղ , թագաւորաց վեհափառ , որ ոչ ցուցաւ 'ի դարս , և ոչ դոյսցաւ 'ի ժամանակաւ , անդրանիկ բառ սազմոտողն , քան զամենայն թագաւորս երկրի : Անպակաս խառնութեամբ կերպացեալ զմերս 'ի մարմնի , ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ , և ոսկւոյ ընդ հրոյ , և կամ յայտնապէս իսկ ասել լուսոյ ընդ օդոյ , ոչ փոփոխեալ և ոչ սնջատեալ : Աոյն ինքն եկեալ կամաւորութեամբ 'ի խաչն մահու , իբր զգառն անարատ 'ի սպանդ վարեցաւ , և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութեամբ զարարածոց իւրոց փրկութիւն : Չարչարեալ իսկութեամբ կենդանեօք՝ եղաւ 'ի շիրմի անորոշելի յաստուածութենէն . ետօրեայ թաղմամբն 'ի դժոխս՝ սանդարամետականացն վհատելոցն բանտարդելիցն քարոզեալ ցուցաւ նորոգումն և լոյս : Եւ աւարտեալ զանօրինականացն զվերկանաւորն զտնտեսութիւն , աստուածապէս վերակենցաղեաց , և կառա-

վարեալ 'ի թեւս հոգմոց' ելեալ 'ի քրոյւքէս ամպով ան-
քրննութեան ծածկեցաւ : Համբարձեալ զեր 'ի վերոյ
ամենայն երկնի , նստաւ ճոխութեամբ յաթոռն իւրական
սկզբնածառանդ Հօրն հաւասարութեան , յորմէ և բը-
նաւ իսկ ոչ մեկուսացաւ , անկորուստ առեցելոյն և ան-
նուազ սեպհականօքն : Արով և եկեցեք 'ի դատաստան
'ի հատուցումն , քննել զծածկեալն կշուութեամբ չափոյ
արդար իրաւանց . որում սպասեմք և յոր ազօթեմք ,
հաւատացեալք յամենայնի՝ ամենայնիւ ամենակալ տէ-
րութեան նորա : Ար արդարեւ մինն է միայն 'ի միայ-
նոյն' 'ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկրպագեալ :

Չ . Բարբերանեմք միշտ և օրհնեմք ընդ Արդւոյ և
ընդ Հօր և զՀօղի եութեան նոցին ամենազօր ճշմա-
րիտ կատարեալ և սուրբ , որ յանէից գոյացոյց զբոլոր
եղեալքս ամենայն : Ինքնագործ հովիշեան երկուցն ևս
ընդ նմին անեղծ և անասման թագաւորութեան . որ
ինչ Պատճառն առաջին և Բանն ահաւոր նորին ինք-
նութեան , նոյն ինքն և Հօղին բարձրացեալ : Բարի
ինքնակալ , ամենից բաշխիչ զՀօրն պարգեւս 'ի զովեստ
անուան փառաց միածնին : Ար ազգեաց յօրէնսն , շքն-
չեաց 'ի մարդարէսն , փչմամբ ազգակցին տպաւորեցաւ
յառաքեալն , կերպիւ աղաւնոյ ցուցաւ 'ի Յորդանան
'ի մեծութիւն փառաց եկեղոյն : Վայլեաց 'ի զիրս աւան-
դակնաց , արար հանձարեղս , զօրացոյց իմաստունս ,
լցոյց վարդապետս , օծ արքայութիւնս , օժանդակեաց
թագաւորս , ետ վերակացուս , հրամանատրեաց փրկու-
թիւնս , շնորհեաց ձիրս , հանդերձաւորեաց քաւութիս ,
զմկրտեալսս 'ի մահն Բրիստոսի՝ 'ի բնակութիւն իւր
մաքրազարդեաց : Չոր Հայր և Արգի , զնոյն և Հօղին
ներգործեաց , և ինքն է Աստուած խնկեալ տիրապէս
ամենայն յամենայնի :

Ե . Բանդի ոչ նախաթուելոյն յԵրրորդութեանն որ

մեծ ինչ քան զմուսն , և կամ 'ի զինի անուանին
նուաստագոյն առ նմանն , և կամ 'ի մինն ասելով խառ-
նակութիւն զոլ զիմացն , և կամ յերիցն տրոհումն ու-
րոյնութիւն ել կամացն : Բանդի անմեծար Հայր ամե-
նայնիւ , եթէ ոչ զ Բանն ունիցի ինքեան զօրութիւն .
որպէս ոչ զոլով ընդ նմա Հօղւոյն՝ անհազագ ոմն և
անկենդան և առ ամենայն հրաման նուազեալ : Իսկ
Բանն՝ եթէ ոչ անուամբ Հօրն ծանիցի , որբ ոմն և
կամ քեալ և կամ 'ի մահացուէ ումննէ ոչէի : Արպէս
և Հօղին՝ եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեցի , ապա-
շուք ոմն թափառեալ՝ իբր զընչ ինչ անդասելն : Այլ
եթէ որ հակաճառական բանիւ յաւակնի կապտել ըզ-
Հայր 'ի յիւրմէ Բանէն , որ թէ էր երբեմն յորժամ
և չէր , և անբանութեանն բաւբասանօք պատուել վար-
կանի զվեհին մեծութիւն , և կամ ստրկութիւն տացէ
բղոնողին՝ ոչ բնաւորաբար զոլով հօղեւոր , որով այլ
իմն զոյութիւն օտար մուծանել և կամ ամբոխումն
ինչ այլայլեակն յանարատ պատիւ միութեան սուրբ Ար-
րորդութեանն , զայնպիսիսն քարամբք պարսից հաւատոյ
բանից , իբր զըմնգակ դեւս զիմամարտիկս զազանակա-
նըս , հերքեալ 'ի միջոյ 'ի բաց հալածեմք . եղեալ 'ի
նոզվս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ՝ նոցին զկե-
նացն մուտ եկեղեցականս գաւթի : Ուստի զսուրբ Ար-
րորդութիւնն փառաւորելով 'ի նոյն տէրութիւն միակը-
ցորդ հաւասարութեան , զուգաձայն սրբաբանութեամբ ,
հանդունատիպ հարթութեամբ : Օրհնեալ և փառաւո-
րեալ յերկնի և յերկրի , 'ի ժողովս անդրանկացն , և
յազգս երկրածնացս բանականաց , յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն :

Բ . Արդ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւո-
րելոց յայսմ մատենի՝ ամենալուր ականջաց մեծիդ Աս-
տուծոյ ընծայեցուցի . սովիմբ սպառազինեալ , և ապա
Ը* 14

մտի 'ի հանդէսն : Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս , որ մինչեւ ստեղծեալ էր քօ զամենայնս՝ նախ քան զինեւն երկնի փառաբանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօք , դու քեզէն 'ի քումբ լրութեան փառաւորեալ իսկ էիր : Այլ զի բզմերժեալս զիս յարդեսցես , անձառ քաղցրութիւն , ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ : Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենաց կանոնիդ աւել , Ազոնայի տէր , և զհրամայեալ պատուերդ ոչ առնել . որ ինձէն իսկ զիս զոսկեղէն տախտակս խօսունք՝ նուիրեալ քումբ պատգամի , զգրեալս մատամբդ Աստուծոյ եղծի , որ և խորտակեւն է իրաւացի , Աւ ես տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ : Այլ արդ քանզի բազմօք պաղատեցայ զբաւակօք խանդաղատանօք , որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի , լուր բարեգութ , ըստ սմին բանի այնմ՝ ամենայնի : Աղիցի և այս աղերսս բարբառոյ հայցման աղօթից յօգեալ ընդ նոսին . թերեւս 'ի մաքրոց և 'ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարջուց իւղով զանդելոց 'ի սեղան փառացդ քոց մատիցէ :

Թ . Այլ դու , բարերար և յամենայնի մարդասէր , Քրիստոսդ մի , Աստուծոյ միոյ , հօր և ամենակալ , որ յաղթես զթութեամբ ինամոց քաղցրութեանդ քո , ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոց գոյակցաց , առ որս յաւէտ է ամբողջութիւն և բիւրամասնեայ հակառակութիւն , այլ և հրեշտակացն անախտականութեան : Այս և եւս քան զայս՝ սրբասնելոցն աւարատութեան . յորոց մի էր և Հեղիաս , որոյ ցոյցք խտտութեանն 'ի Քրիստէ լերինն նշանակեցաւ յերիս օրինակս , 'ի շարժումն մեծ , 'ի հողմն ուժգին , 'ի հուրն կիզանողական : Իսկ քոյդ հեղութիւն երկայմտութեան՝ 'ի հանդարտութիւն մեղմութեան օգոյն քաղցրութեան .

քանզի կամաց ողորմութեանց դու միայն ես , ըստ գրեյելումն . Վասն զի թէ և հաճոյք զտան մերասերքս առաքինութեամբն յեղանակեալ յայլ նմանութիւն վերնային , սակայն երկրածինք են և նորա , ընտրեալք 'ի մարդկանէ : Իսկ դու ոչ ունիս չարանալ իսկութեամբ բարիդ , յամենայնի օրհնեալդ , ամենեւին փրկութիւնդ , ամենայնիւ հանդիստդ , համայնից անպորրութիւնդ , համօրէն խիտացելոց դեղ առողջութեան , աղբիւր ջրոյ կենդանոյ ըստ Արեմիայ : Դարձ առ իս և ողորմեալինձ , որ այնքան ծարաւես պաքիս , անկարօտդ Աստուած , իմում փրկութեան : Մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչպետար՝ անեղծական յարակայութեամբ մշանջենաւոր պազատան օրհնեալդ քո զթութեան 'ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լեելոյս հաշտութեան մաղթել , ողորմեալ Արուսաղէմի : Որ է լուսաւոր խորհուրդ յայց երանելոյ մեծիդ յայանութեան առ հրեշտակականն թափուր տեղի ոտորանկելոյ 'ի ձեռն մարդկան՝ քո կրցորդութեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինականս Արուսաղէմի :

Ժ . Արդարեւ լուար բարեգութ , անսացեր թապաւոր , ունկնդրեցեր կենք և յոյս , 'ի միտ առեր երկնաւոր , յարգեցեր հօր , նկատեցեր ծածկապէտ , տեսեր ինամակալ , կարեկցեցեր անպատում : Խոնարհեցար միշտ բարձրեալ , նուաստացար ահաւոր , յայանեցար անձառ , ամիոփեցար անտահման , քանակեցար անքնին : Մածար ճառագայթ , մարդացար անմարմին , շօշափեցար անքանակ , կերպաւորեցար անորակ , լցեր իսկապէս զաղաչողացն բաղձանս : Դու իսկ եղեր թըշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն բարի բարբիսօս , միջնորդ կենդանի , պատարագ անմահ , սպանդ ան-

վախճան , նուէր մաքրութեան , ողջակէզ անծախ , բա-
ժակ անսպառ : Ահա ողորմած , մարգասէր , օրհնեալ
միշտ կատարեցես առ մեղուցեղոյս զբարեբաստութիւն
կամաց քոյ կենդանատուաց , զովեալ երկայնամիտ : Աւ-
քեզ վայելէ փառք յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն 1 Ե .

Վ Էրսոյն յաւելլած կրկն հեծոյթեան Դարն հսկող աս-
նոյն սղէրս Տաղլանոց Էանի . 'ի խորոց սրբից Խօսք Ընդ
Աստուծոյ :

Ա . Եւ արդ , տէր զօրութեանց , մեծութիւն ահեղ ,
անտարակոյս տեսաւորութիւն , կամք ամենընդարձակ ,
առատութիւն անսպակաս : Ո՛վ որ զօրեցէ տօնել հան-
դիսիւ սրբերդութեամբ՝ 'ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումբ
բարութեան , որ ցանկ դեղերիս պատրաստել պատճառս
հնարից իմում փրկութեան : Աւ զոր մեծն է գրեցից
պատմել յապառնիսն : Քանզի ոչ անուանեցար հրեշ-
տակասէր , և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր ,
այլ և զերկինս զամբարօք նոցին զմատանց քոյ գործ ,
ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա . այլ առեր 'ի պատիւ
մեծաց զովեստից առաջին դասեալ զմարդասիրութիւնն :
Վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անձառ 'ի
խորհուրդս սոսկալիս . զերկնային դասս լուսակերպիցն
կոչեցեր սղասաւորս և զլուսորս յատուկ մատակարա-
րութեանց : Իսկ զստորնային ծնունդս մահկանացուաց
սիրական և աստուածական պաշտելի անուամբք սեր-
ձացուցեր : Անցեալ վերստին ըստ սահման կշռութեան
չափոյ , լայնեցեր քեզ կտակս գրոց ճառից անբաւից
զանապակ ծորմանն ծայրագունին վերնում բարութեն ,
Աւս և 'ի մարդանալդ քո միգ յէութենէն , ոմանց
վասն ինքեանց և կիսոց վասն այլոց զեղեր առատու-

թեամբ զտուրս կենաց , արուեստս բազմնրինակս , ըս-
քանչելիս աստուածադործս , նշանս ճշմարտատեսիլս :
Որպէս զի թէ անդամալուծին սակասեղոյն 'ի հաւատո-
ցըն՝ հօդաբարձացն առաջարկութեամբ զցոյցս յուսոյն՝
զթացեալ ողորմեցար , և որչափ զօրեցէ առաւել բան
քօ ամենակար առ ախտալից մարմնոյս մաքրութիւն ա-
ղաղակողիս հառաչման : Քանզի արդարեւ մեծ են չափք
հրաշից , բան զանմաքրեալս հոգի՝ սուրբ հաստել , ըզ-
լուացեալս սրտիւր անտիրելի աղտոյ ներգործել : Աս
զի և երկրորդս առաւելութեամբ յաւազանին շնորհ
յաճախեալ՝ զփառսն հայրենի բարձրացուցանէ :

Բ . Դու ես տէր , որ սրբես զմեզ , որպէս ընտրե-
ցիլոյն քօ նախատպաւորեցիր Մովսէսի . դու ես որ 'ի
մեզս և յանօրէնութիւնս վերակայու եղեր տոհմին Յա-
կոբայ , մինչ յեփիպտացւոցն երկրի ընդ խաւարն հե-
թանոսաց ընտանենային : Դու ես , որ օրէնսդէտ առ-
նես զմեղաւորսն 'ի ճանապարհի , ըստ բանի երգողին
Դաւթայ . դու ես , որ փոխադրես դարեղէն սրտից
կարծրութիւն 'ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան
բանի ընդունելութեան : Դու ես , որ բաւես ընձեռել
սիրտ այլ , և ճանապարհ մի՛ երկնել 'ի քէն զբովան-
դակ կենացն սահման : Դու ես , որ տաս զերկիւզ քօ
'ի միտս խստութեան՝ առ քեզ ուշ ունել հաւատովք ,
ըստ մարգարէիցն ձայնի :

Գ . Չօրհնեալ քօ շրթանց զաշխարհաստեղծ բե-
րանոյդ զաստուածեղէն անձրեւացդ զկեցուցանող կա-
թուած՝ մատո՛ լսելեացս դրանց բացարան , որով զօձին
խորամանկութիւն բանսարկուին թիւնից բարձցես և բը-
ժըշկեցես : Ամենակալդ ձեռօք զլուսակնացս շարժո-
ղական գործի ըմբոնեալ՝ ազգեա՛ զօրութիւն ձայնի , որ
տաս բնաւից ընտրութիւն բանի : Չի՛ դատտարակեալ
զպատշաճահանն՝ մի՛ յանդգնաբար խօսելով իբր զնախ-

նին՝ քայց 'ի յուսոյդ, և անբանութեան մտանեցայց վանեալ յորսողէն: Եւսաւորեա վերստին զնաւարեցեալ հոգւոյս աչս կենդանաբաշխ աջոյդ կարկամամբ, զի մի համարձակութեանն շիջեալ լատեր շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ գրուանին ստորածածկեցայց: Բարձ զանօրէնութիւնս իմ, տէր, և ընկեա՛ 'ի խորս ծովու. որ է փոքր առակ մեծութեան քումդ անբաւութեան, ըստ մարդարէին, զիմս ընկղմել չարութիւն: Կանդնեա կործանեալս անձին նշան վստահութեան, զի մի յուսահատութեանն կոթող կառուցեալ զծածկեցելոցն բողբոսէ: Բաց, հզօր և գթած, զբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն մշակութեան կորուսչին սերմանց՝ մանկաղաւ կամացդ հուպ առ արմատ խուզեալ հնձեցես: Դէմ եդեալ հետեւել առ քեզ, բողբոսիցդ Լստուած, պետրոսեան օրինակութեամբն, 'ի կենցաղին ծովու մեղանացս պէաց ընկղուզայ. մատո՞ ժամանեա՞ զաջդ կեցոցիչ յօգնականութիւն ինձ սասանեցելոս: Բնդ քանանուհւոյն ձայնի 'ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս ասպականասպաս կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի 'ի բազմազեղդ քօ սեղանոյ մասնաւորեսցես: Ըրա՞ փրկութիւն նիւթոյ խորանիս որդւոյս դառնութեան, որ եկիր խնդրել և կեցուցանել զես ըզկորուսեալս: Օ՛ի քօ է մեծութիւն, յաղթութիւն և զօրութիւն, և զու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն, և քեզ վայելէ փառք և երկրորդագութիւն յաւիտեանս:

Բ Ա Ն Լ Օ .

Վ Էրստին յաւելլում ինչն հեծուլեան Դարին հսկողն առ
 նոյն ողբիս հաղլեանոց բանի . 'ի խորոց սրտից խօսս ընդ
 Լստուածոյ :

Լ. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ և զերազանցութեամբ միշտ առաւելեալ փրկանաւորդ արգասիք շնորհաց առ պարտուցս իմոց առաւելութիւն, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն: Օ՛ափդ ամփոփիչ ամենից հոգւոց զոյից արարիչ՝ 'ի զործարանի մահուն նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարձակութիւն իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես: Օ՛ընթացողական լծակցութիւն երկոցունց ոտիցդ կեցուցողաց՝ յանարգութեանս սրտաճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագութիւն թշուառացելոյս գրաւականեսցես զթածաբար:

Բ. Ոչ դօսանալ ձեռաց կոփողացն հրամայեցեր օրհնեալ դագաթանդ, որ զթղենւոյն տունկ առժամայն չորացուցեր, զի և զառ իս ներելոյդ օրինակ կանխաւաւետարանեսցես: Ոչ դանողացն ապիրատութեան ըզխոստովանեալդ Լստուած՝ սպառնացար, որ զարուսեալն մթացուցեր, զի մահացելոյս անձին բարութիւն հանդստեամբ հանդերձ գործեսցես: Ոչ զհայհոյացն հնարաւոր չարաբանութիւն կապտեցեր, որ զըւանին պատկեր երանգու արեան դունեսցեր, զի զանհամարձակ լեզուս 'ի դովեսա քեզ զօրացուցես: Ոչ նախատողացն մոլեղնութեան սաստեցեր, որ զտարերս սասանեցեր, զի զթշուառացեալս զլուս գթութեանդ օժմամբ իւղեսցես: Ոչ 'ի մոլորեցուցիչն կարգալ զքեզ աստուածասպանիցն՝ զօղուած ծնօտիցն բաժանեցեր քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրութիւն վիմացն հերձեր, զի

գանունակս բարեաց հոգին՝ ՚ի բերմանէ ընդունայնու-
 թեան ողորմութեամբ հանդարտեցուցես : Աչ զպահա-
 պանացն սուրս ընդերաց իւրեանց մատուցեր , որ զօր-
 վայն օձին սահեցման հոգոյ մատնեցեր , զի զտառա-
 պեալս մարմնոյ ոսկերս իբր ՚ի գանձարանի պահեալ ,
 կենաց յարութեան արժանացուցես : Աչ ՚ի կնքելն ըզ-
 շիրմին փականս կենդանակիր քո գերեզմանին՝ անդրէն
 յորայսեալս զնոսին յանդունդս երկրի սուգեցեր , զի
 ՚ի տապանակի անձինս զնշխար լուսոյդ հանգուցես : Աչ
 ՚ի համբաւելն զքեզ կորուսեալ , և իբր զերկրաւոր
 մարմին գողացեալ , համայնաջինջ և ամենասպառ զսեր-
 մին ծննդոցն կրճատեցեր , զի զկս զանարժանս յիշա-
 տակի ընտրութեան բարեաց՝ անկորուստ և անփնասելի
 ընդ փրկեցելոցն հաղորդեցես : Աչ յարձաթոյն կրկնա-
 կապէն կաշառաձգութիւն , որ ՚ի գանձարանէ Հօր
 քում նուիրանաց քեզ զբաւ մատնութեան և անար-
 գութեան մասնաւորեցին՝ զուրացողացն մոլեգնելոց , ըստ
 հին հարուածոց հանոյն Մովսէս՝ ՚ի յարձան քարի
 յեղանակեցեր , զի զկս զվրիպեալս ՚ի հաստատութեանց
 և ընդ իշխանութեամբ մահու փաճառեալս՝ արեամբ քո
 փրկեալ , ՚ի հաստատուն վիմիդ կառուցես : Օրհնեալ
 կրկին , օրհնեալ վերստին , յամենայնի միշտ օրհնաբա-
 նեալ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ա Ն 1. Է .

Վ Երբքն յաւելած իրկն հեծուլէան Դարն հսկողն ու-
 նոյն աղբւս հաղթանաց Բանի . ՚ի խորոց սրբեց խոսք Ը՛ր
 Լսոսածոյ :

Լ . Երբ այդ զուամբտակ վերագասեցեալ բարեշը-
 նորհուրեան քոյդ պարգեւաց առ իմս երախտիս , ո՛վ
 ամենագութ բարերար զովեալ և ամենաղօր . Ռ.է և

սակաւք շարագրեցան աստանօր եղեալ , այլ արքայա-
 գունք են և իշխանակալք ինքնակալուէց , որդիք զօրուէց ,
 ծնունդք վիհից , մեծափառք , լուսանորոգք և հրաշագա-
 տիւք : Յաղթողական վերամբարձուիք դրօշիւք հոշակեալք
 ըստ զլսոց զլսոց պատկապաճոյճ՝ դեղադարդելոց , բե-
 ռեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանու-
 ղաց , համբոյրս հեզս երջանիկս և խաղաղականս աս-
 տուածային հարազատութեանց այնոցիկ նահանգաց ,
 զորոց մարգարէն մաղթեաց ասելով , զարթո՛ տէր զօ-
 րութիւնս քո , և եկ կեցուցանել զմեզ : Որք յոյժ զօ-
 րեն հալածել զմեղս , և զանյուսութեանն կարկուտ հա-
 լել և փախուցանել . քան թէ նախամարտիկն զննու-
 րութիւն երկնային պարուն՝ զգիշերավարն խաւարասէր
 սկզբնաներհակ բարւոյն Լստուծոյ : Վանզի և զենան
 այսքանեացս ձրից որ ՚ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ
 տկարիս , թշնամոցս և ապախտաւոր ծառայիս , անձառ-
 է ասել : Իսկ եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել ,
 զսակաւս ՚ի բազմացն քան թէ զհսկութիւնս համանգա-
 մայնիցն : Ըստ այսոսիկ գառաջին նիւթն յիշելով յորմէ
 հաստեցան , իբր զտկար ոք նկուն ՚ի զօրութենէ մեծէ
 հերքեալ պարտեսցի :

Բ . Ը. Ը. Թէպէտ և այսպէս զրեցի , և դարձեալ
 զնոյնն վկայեմ առ թերի խակութիւնս հողոյս՝ և կատա-
 րելութիւն հաստողիդ , և առ բարիսն իմ չարժանու-
 թիւն , սակայն ամենալոյս աննախանձ և բազմազեղուն
 զովեալ արարչութեանդ զօրեղութեան՝ վանեալ են
 կարծրութիւնք արտաբերութեան սրտի բանսարկուին :
 Որ քարին առակաւ՝ յուսահատն վհատութեան , սպառ-
 մամբ խոպանացման աղբերացս երկուց , որ ՚ի զգայա-
 կանս Լքեմայ լղկել պատրաստեաց անկօղն , զի ուռ-
 գեալ ծաղկեսցի նովալ՝ որ յիս բարեգործութեան կեն-
 սատունին դրախտ : Ըհա մի ցամաքութեամբ արտա-

սուացս՝ աղանդահնար պատրանօք շարաշար խորամանկեացէ վերստին հանել ՚ի փափկութենէ նախնում վե՛նակին : Իսկ յորժամ կացցէ Աստուած համբարձեալ հրաշիւք արուեստից ՚ի մէջ Աստուածոց հաշտարանացն խաղաղութեամբ , բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ , առ որ ամենայն մնասկարութիւնք խարզախութեանց և կարճնութիւնք սրտնեղութեանց իբր ընդ վիմեղէն լերին պնդութեան բախեցեալ ցնդին : Զորոյ օրինակաւ սակաւու հեղեալ , և կամ հոգոյ խորտակմամբ փշրեալ :

Գ . Արդ շեւ իմ կշտամբանքս ըստ ձայնին Յորայ , ՚ի մարդկանէ իցեն , այլ յամենատես աչաց վերին հրամանիդ . մտեալ ընդ խղճիս տաղնապ երկիւղես , սոսկամ սասանեալ յամենայն կարծեաց : Ապաւինիմ և արդ անձամբ բեկելով ՚ի յոյսդ հաստատութեան կենդանի անեղծ . զի ողորմութեամբ նայեցեալ ՚ի յիս իբր ՚ի պարտաւոր կորստեան պատժոց , առաջի բարերարութեան երկնայնոյդ յանդիման եղեալ ապաձեռն անթօշակութեամբ , զբոյգ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ : Որ ոչ մտնացմամբ զբաղեալ նիրհես , և ոչ թարթափմամբ աչաց ընդմիջեալ զհեծութիւն կրից անտեսես : Վերացն յինէն , աղաչեմ զքեզ , խաչիւզ լուսոյ զեեղդ վտանգիս . հոգարկութեամբ սրտմութեանդ՝ զտարակուսելի տիրութիւնս , փշանիւթ պսական՝ զբողոջ մեղացս : Զարկուածով դանին՝ զհարուած մահուս , ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս , թշնամանօք թքոյն՝ զանդոսնելի դարշութիւնս , լեղւոյն ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութիւն : Ահա քո են այս ամենայն բարութիւնք անբովանդակելիք՝ Աստուծոյ միոյ միածին Որդի : Առ ոչ բովք զչարութիւնս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարգամ բարձր աղաղակաւ իմանալեացս պա-

շատանօք : Տես ՚ի խոստովանութիւն զղջման պարտութեան ամաչեցելոյս , և տուր ողորմութիւն որդւոյս սատակման մահուն անմահի : Օյի ՚ի բազմութեան իմոցս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աճեցմամբ առաւելութեամբ՝ քո ողորմութիւնդ արեւտարանեցի , հոչակեալ հնչմամբ ահաւորութեան յերկնի և յերկրի : Եւ քեզ ընդ Հօր Հօգւովք սրբով փառք յաւիտեանս . ամէն :

ԲԱՆ ԼԲ .

Վերստին յաւելած իբլին հիծողութեան նարին հսկող ասնայն աղբիւր ճարձանայ բանի . ՚ի խորոյ սրտից խոս լնդ Աստուծոյ :

Ը . Բայց արդ որպէս երբեմն յայլ ընթերցուածի որ ՚ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն զխաւարային ծնունդս զխաւորացն օրինացն մարմնականացն անգամոց զրեցի , յորոց տիրեցայ ժստանդս մահու : Կոյնպէս և յայսմ սահման ընտրութեան բանի՝ զուսածնելոցն զազատարարն օրէնս Հողւոյն կենաց որ ՚ի տէր Յիսուս՝ յիշատակեցից նուազս յօրունց , իբր յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ :

Բ . Բանդի են արդարեւ կայսերականք ոմանք ՚ի բարձրութեանն գահի բազմաք , թոշական շնորհաց քեալք և հարստացեալք : Թագաւորն և սիրեցեալք իւր , արքայն և պատուաւորք իւր , պսակեալն և իշխանականք իւր , բարեհոչակեալն և հնչմունք իւր : Յաղթողականն և փողք իւր , զօրաւորն և մարտիկք իւր , գովեցեալն և փառք իւր , փեսայն և պարաւորք իւր , դշտոյն և օրիորդք իւր , փեսաւէրն և հանդերձանք իւր : Ազատութիւնն և շնորհք իւր , այցելութիւնն և ձեռն իւր , խոստումն և քաւութիւն իւր , պահպանութիւնն և աջ իւր : Պարգեւն և զարդ իւր , նշանն կենաց և ամրութիւնն իւր :

կնիքն և նկարագիր իւր : Ամպն և հովանի իւր , ա-
րուեստն և հրաշք իւր , հողին և անեղծութիւն իւր ,
բանն և կատարած իւր , ուխտագրութիւնն և լրումն
իւր , զօրութիւնն և հրամանք իւր : Առաջարանն և ըս-
քանչելիք իւր , մանանայն և ապականութիւն իւր , վէմն
կենդանի և վտակք իւր : Սիւնն հրոյ և ճառագայթ
իւր , որոտումն և ազգմունք իւր , յոյսն վերին և փր-
կութիւն իւր , ծառն օրհնութեան և պտուղք իւր , բա-
րունակն և բարութիւնք իւր : Այլ զի մի զբնական ասե-
լով յամենայնէն վրիպեցայց , իբր յարեգակնէ այլայ-
լեալ աչաց տկարուի , 'ի շաան ասել լոեցից և 'ի սա-
կան ժամանեցից , բաւականացեալ ամենապիկար կարիւ :

Գ. Բայց աւանդ յաւետ աստանօր թշուառացելով
Եկեղեցի անձինս , քանզի կարգ բանիս բերէ ինձ խառ-
նել ընդ ձայն աւետեացս բողոք գութիս : Այսան զի
ընդ այսոսիկ աւրնթեր սորին գայ արգարութիւնն և
կշիռքն , վճիռն և հատուցմունքն , քննութիւնն և լոյսն ,
յանդիմանութիւնն և զամբարքն , մերկութիւնն և պատ-
կառանքն , յայտնութիւնն և ամօթն , ամբիժն և վաս-
տակքն , թիւրեալն և պատիժքն :

Դ. Դարձեալ վերստին աշխար կրկին եղկելոյս ,
քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին
բարկութեամբ մանգաղն առ հունձն , դատաւորն առ
ատեանն , հզօրն առ բեմն : Ապառնացեալն առ կորուս-
տին , բազուկն առ գատաստանն , գաւազան խրատուն
առ հարուածն , սպառաղիսութիւնն առ նախանձն , հո-
վիւն առ ընտրութիւնն : Բանզի բանն զօր խօսեցար
ընդ իս , նա դատի զգատապարտեալս 'ի վերջնումն ա-
ւոր հատուցմանն : Այլ կանխեալ բարեգութ , նախ-
ընծայ քաղցրութեամբ առ նուաղ հեծութիւն վարանա-
կան երկիւղիս , և զօրութիւն ընձեռեալ ձեռամբօր օրհ-
նութեան 'ի յետին տապնապիս առաջինդ քո օգնութիւ

միթարել բժշկել բաւել և կենագործել : Այլ բեղ
փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից : ամէն :

Բ Ա Ն Լ Թ .

Վերստին յաւելում ինչն հեծութեան նորին հոգիս
նորն ողբիս հարկանայ բանի 'ի խորոյ սրտից խոս լնե
Աստուծոյ :

Ա. Եւ քանզի զկերպարանն առաջին լի 'ի մասա-
կարին թելադրութեան իմովս ծուլութեամբ կորուսեալ
'ի սպառ , ցուցից արդ այժմուս զհնոյն յիս անսակ :
Ողորմելի հեծութեամբ թախծեալ 'ի հոգի , անաչառ
խայտառականօք հրապարակաւ 'ի յեկեղեցիս բազմութե
ազգաց վերապատմեցից բարձր ձայնիւ , բարբառով մե-
ծաւ աղաղակելով :

Բ. Մատեանս շնչական բարդեալ 'ի յինքեան ներ-
քոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս , ըստ տուժա-
րի տեսեանն Ազեկիելի , քաղաքս անպատուար և ան-
մահարձան , յարկս ունայն 'ի գոնափակաց ամբութեանց :
Այս տեսակաւ այլ ոչ համեղութեամբ , ջուրս ալտաղ-
տին անախորժելի ծարաւեաց արբան , գետինս անօ-
գուտ հերկագործութեան , սահմանս լեալ հեղեղալայրս
կնիւնոյ , խոպանացեալ և տատակարբեր անդաստանս ,
աստուածախնամ երկիրս անձնաւոր՝ որ բանսարկուին
պատրանաց մշակեցայ : Ազընծիւղ փայտս սղողակ-
րոյս , հատանելի ծառս ունայնաբոյս , կրկնամեռ խօ-
սուն տունկս անյոյս , ամենաշէջ ճրագարանս անլոյս :
Արդ վերստին առ սոյն բերելով զայս նմանութիւն ա-
ւաղականաց , բազմօք կրկնեցից . որ ամօթոյն դառն
պատուհաս սրահեալ կայ հիքոյս , կրճուումն տատանաց և
անկետ լարումն աչաց եղկելոյս : Հայրական ցատումն

անսպուծելի՝ դառնութեան որդւոյս , ապականութիւնն
աննորոգելի՝ մեղուցեալ մարմնոյս , նոր կշտամբութիւն
գառողիս չարեաց՝ անտայեալ հոգւոյս : Տարտամ տաղ-
նապի տարակուսանաց՝ ելից գերելոյս , զոր երկնային
դօրքն մատուցանեն թշուառացելոյս , ՚ի խրճոնս որո-
մանցն վկայելով՝ վտանգեցելոյս , ՚ի ձայն ահարկու գան-
բրժչութիւնն աղգել լքելոյս : Ահա արդարեւ երգս
կատակերգութեան ջնարահար պուռնկի , յածեալ և
կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ողորմելիս և զլծեցու-
ցիչս , ըստ առակաւոր բանին (Եսայեայ) որ ՚ի պատգա-
մին Տիբուսի : Զի թէ նա զգլխուածն փոքր անցից
ապառնեացն ՚ի մօտոյ ինն տպաւորեալ , բողբէր գի-
մակս գեմակս կերպից կերպից աւաղականաց , ըստ կօ-
ծողացն կաքաւելոյ , իսկ առ իս որչափս և որպիսին
ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս : Որ դալտեանն տեա-
ռըն սպասեալ առանց վրիպանաց , մնացի անպատրաստ
և անհանդերձելի : Արդ եթէ զդատաստանացն ահա-
ւորութիւն կրկնեցից , բազմացուցից ինձ աշխար . ապա
եթէ զփորձն իսկութեամբ ցուցից . յաճախէ ինձ եր-
կուղ : Իսկ եթէ զկերպարանացն տեսիլ զրեցից , առա-
ւելուն ինձ հատուցմունք , զի կանխաւ նկատեալ զսոյնս՝
և ոչ անագան ապաշաւեցի : Այլ ինայեալ յիս , զթած
մարդասէր հզօր , բարերար ամենապարզեւ Քրիստոս
թագաւոր , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Խ

Ո՛րքոք ին յաւելուած իրկին Էթու-լեւան Դոքրին Էսիպիս աս-
նոյն աղբիս հողլեանաց բանի . ՚ի խորոց սրբից իսոս ընդ
Ասորի-ձոյ :

Ը . Ամենակալ Աստուած բարերար , ստեղծիչ բո-
լորից , ընդ հառաչանաց ձայնիս վտանգի , և յերկուղէ

տագնապի ապադայիցն կարծեաց , փրկեալ կարող զօ-
րութեամբ զերծեալ ՚ի պարտեաց : Քանզի բաւական
ես յամենայնի առ ամենայն հնարս զօրանալ անբաւ մե-
ծութեամբ և իմաստութեամբ անսահմանելեալ :

Բ . Այլ քանզի ուշիւ մտացս տեսեալ ՚ի հեռուստ
զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ , նկատեմ ին-
ձէն աստանօր կանխաւ զտիւն լուսոյ սրբոցն յուսոյ ,
զօրն խաւարի պատժապարտիս պատուհասի : Ուստի ոչ
զօրէ որ յէիցս առ պատսպարան փախստեան . ոչ ան-
դունդք խորոց , ոչ գեհք վհից , ոչ բարձրութիւնք լե-
րանց ոչ անձաւք քարանց , ոչ կարծրութիւնք արձա-
նաց : Ոչ ծիրպք ծակաց , ոչ փապարք փոսից , ոչ սորք
հեղեղաց , ոչ բաւիղք խորշից , ոչ շտեմարանք յար-
կաց , ոչ ծածկութիւնք սենեկաց : Ոչ եմակք հովտաց ,
ոչ ծործորք դժուարաց , ոչ վերադրութիւնք բլրոց , ոչ
արձակմունք շնչոց : Ոչ անբաւութիւնք ծովուց , ոչ
սահանք յորձանաց , ոչ հեռաւորութիւնք եղերաց , ոչ
ողբմունք ձայնից , ոչ հեղեղք արտասուաց : Ոչ տա-
սանմունք մատանց , ոչ համբարձմունք ձեռաց , ոչ
պաղատանք շրթանց :

Գ . Այսոյիկ սաստկութեանց մասանց անձողտարե-
լեաց դու ես , տէր Քրիստոս , հնարք և դադարք դիւ-
րութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս
հոգւոյ : Արդ հայեալ ՚ի յանդերձ վտանգիցս շրջա-
դրութիւն , միայնդ քաղցր առ ամենեսեան : Խղեալ սու-
սերաւ յաղթական կենաղէն խաչիդ զցանցս վարմիս , որ
յամենայն կայից պաշարեն ՚ի մահ զդերիս , և հան ՚ի
յանդորր զստ սասանեալ թիւր ընթացուիս : Բժշկեալ
զհրատապ ջերմնական սոչորումն մղձկեալ սրտիս . մեր-
ժեալ զգիւլային չարահնարութեանս շուկ՝ քո պարտա-
ւորիս , հալածեալ զուսահատ անձկութեան հոգւոյս
մթութիւնս չարի կենակցիս : Յրուեալ զժխամած թանձ-

ըրուծին բոնութեան մեղացս երևոյթ մտելոյս : 'ի յիս ; կորո՞ զզգալի թխատիպ կրիցս ապականութեանս կա-
 ռիս : Արորդեա՞ զպատկեր լուսոյ պաշտեցեալ փառաց
 մեծութեան անուան հզորիդ յողիս . զօրացո՞ զշնորհիդ
 փայլումն 'ի զեղ զիմացս և 'ի կերպարան տեսութեան
 մտացս հողեղինիս : Արմար յերիւմամբ կացո՞ յարգս
 բեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուրգարդ մաքրութի
 զտեսլ զմալս մեղաւորիս , աստուածային կենդանի
 անեղծ երկնաւոր լուսով քո ծածկեալ յօրինակս երիս :
 Օ՛ի դու միայն ես օրհնեալ ընդ Հօր 'ի զովեստ Հօ-
 դոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ ԱՆ ԽԵ .

Վ Երաբին յաւելլամ իրին Գեթսեման ասորն Հսկողն աս-
 նայն աղէբս հաղթանաց Բանի . 'ի խորոյ սրտից Խոս ընդ
 Արարչոյ :

Ա . Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամ-
 նայնի , Հօրդ ահաւորի անրնին ծնունդ , որ տկարա-
 նայ առ 'ի քէն և ոչ ինչ : Ար 'ի ծագել անստուեր
 նշուրից ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք , հալա-
 ծին դեք , ջնջին յանցանք , խզին կապանք , խորտա-
 կին շղթայք , կենդանածնին մահացեալք , բժշկին հա-
 բուածք , ողջանան վերք , բառնին ապականութիւնք , տե-
 ղն տան տիրութիւնք , նահանջին հեծութիւնք : Քիտե-
 նու խաւարն , մեկնի մէդն , մերժ մատախողն , փարա-
 տի մալոյն , սպառի աղջամուղջն , վերանայ մութն , գը-
 նայ զիշերն , տարագրի տաղնասն , չքանան չարիքն ,
 հալածին յուսահատութիւնքն , և թագաւորէ ձեռն քո
 ամենակար , քաւիչդ ամենայնի :

Բ . Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ողիս , այլ
 կիցուցանել . թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ու-

ղորմութեամբդ . զի դու միայն ես յերկնի անճառ , և
 յերկրի անգնին , 'ի տարր գոյի , և յեզրս ծագաց աշ-
 խարհի , սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լըր-
 մամբ , օրհնեալ 'ի բարձունս , և քեզ ընդ Հօր և
 Հօգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ ԽԲ .

Վ Երաբին յաւելլամ իրին Գեթսեման ասորն Հսկողն աս-
 նայն աղէբս հաղթանաց Բանի . 'ի խորոյ սրտից Խոս ընդ
 Արարչոյ :

Ա . Տէր Աստուած գթութեան , փրկութեան և ու-
 ղորմութեան , քաւութեան և նորոգութեան , բժշկութե-
 և առողջութեան , լուսաւորութեան և կենդանութեան ,
 յարութեան և անմահութեան : Այնչա՞ զիս յորժամ
 գայցես արքայութեամբ քո , ահաւոր հզօր բարերար և
 ամենաստեղծ , կենդանի զովեալ ամենակատար , մերձ 'ի
 հեծութիւն համայն եղելոց : Ընդ խաչեցելոյն ընդ քեզ
 պաղատիմ , որ ոչ ըմբռնեալ վասն քո և ոչ կապե-
 ցեալ , ոչ կախեալ և ոչ բեւեռեալ , ոչ կռփեալ յա-
 նուն մեծիդ և ոչ անարգեալ , ոչ լկեալ և ոչ նշկահալ :
 Աչ խորտակեալ և ոչ մահացեալ , և արքայութեանն
 արդարոց մասին անձկալիաց լուսոյ արժանի ցուցեալ ,
 իրաւամբ ուխտի երգմնականաւ ամենիւն ազգեալ զան-
 փոփոխութիւն բարեացն տուելոց , փառաւորեցեր առ
 յոյս փրկութեան 'ի սպառ քելոյս :

Բ . Օրհնեալ , օրհնեալ , և դարձեալ օրհնեալ ,
 և զիս ընկալեալ նովին հաւատովք կանգնեա՞ 'ի կործան-
 մանէս , բարերար : Բժշկեա՞ 'ի հիւանդութեանցս ախ-
 տից , ողորմած . յեղբրաց մահուս դարձո՞ զիս 'ի կեա-
 նըս , կենդանութիւն . քո եմ և ես , կեցո՞ ընդ նմին ,
 ապաւինութիւն : Անձամբ մեռելոյս կենդանական շնչ
 Ը* 16

ընծայեցա, յարութիւն կեանք անմահութիւն, անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, աջ ամենազօր, ձեռն ամենիշխան, մասն ամենաձեռն: Կամեաց տէր, և փրկեցայց, ակնարկեա՛ մրայն գթութեամբ՝ և արդարացայց, ասա՛ բանիւ՝ և վաղվադակի անարատ գտայց, մոռացիր գթիւս չարեացն՝ և անդրստին համարձակեցայց, առատաձեռնեա՛ և արգէն՝ ՚ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն:

Բ Ը Ն Խ Գ .

Վ Էրոսին յաւելաւ ինչն Եթովպեան շարին Հսկողն աստուծոյն աղէրս Տաղլեանաց Բանի . ՚ի խորոյ սրբոյ խօս ընդ Երոսոյ :

Մ . Բժշկական կրթականութեան ամենափորձ հնարաւորութեամբ պատճառ կենաց անխտականաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր, տէր Յիսուս Քրիստոս . Մատուած ամենեցուն, իմանալեաց և տեսականաց : Մհաղու ՚ի յիս ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն նոր կրօնորդութեան . առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միութեան, լուսաւորեցայց կրկին ողջացեալ շնչով և մարմնով, ամենայնիւ կարօղ և անվանելի :

Բ . Որ ոչ կարօտանաս սպեղանեաց առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վերաց, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգութե, ոչ փոփոխ մատուցանելոյ : Ոչ հատման, ոչ խորման, ոչ սրագործութեան, ըստ երկրաւորս դեղատուութեան . առ որս միշտ է վրիպութիւն և ամենասխալ տարակուսութիւն : ՄԵՄ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց, ամենայն ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ զրեալ է, ամենայն ինչ դերին է, հա-

մանն հնարաւոր է : Իմաստն զլուսաւորեալ է, խոստումն լցեալ է, կամին կատարեալ է, քո կոտակն աւետարան է, քո վճիռն ազատութիւն է, քո մատեանն շնորհ է : Ոչ փակեալ ես ընդ օրինօք, ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արդելեալ ընդ նուազութեամբ, ոչ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ, ոչ պարագրեալ ընդ փոքրկութեամբ, ոչ չափեալ ես ընդ սահմանաւ : Ոչ վրիպեալ ՚ի բարկութենէ, ոչ այլայլեալ ինչ ՚ի ցամանէ, ոչ սխալեալ ՚ի խստութենէ, ոչ ամբոխեալ ՚ի խռովութենէ, ոչ զորդեալ յանգիտութենէ : Ոչ փոփոխեալ յողորմութենէ, ոչ պակասեալ ՚ի բարձրութենէ, ոչ քեալ յայցելութենէ, ոչ տկարացեալ ՚ի փրկութենէ : Դու սկիզբն և լուսն ամենայնի, և ՚ի քէն է ամենայն . և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս . ամէն :

Բ Ը Ն Խ Գ .

Վ Էրոսին յաւելաւ ինչն Եթովպեան շարին Հսկողն աստուծոյն աղէրս Տաղլեանաց Բանի . ՚ի խորոյ սրբոյ խօս ընդ Երոսոյ :

Մ . Աստուած անսահման, ծնունդ Աստուծոյ հաբաղատ անթարգմանելի, արարիչ բնաւին եղելոց, Քրիստոս թագաւոր, լոյս ՚ի խաւարի սրտից մթացելոց . ընդ մեզ լրմամբ և ընդ առաջիդ իսկութեամբ, մերայնոխ զքայլեսոց ծանուցանող հրաշսպէս : Հայր քո օրհնեալ երկնաւոր անձառ՝ որ առաքեացդ զքեզ ՚ի վերուստ, ում փառակիցդ ես արարչութեամբ . այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարազրեալ զերուոյս, մինչև զքեզ իսկ մատնեաց մարգկան : Իսկ դու կարօղ դողով ՚ի վեր քան զվիշտս, զոնտեսութեանն աւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցելումս զմահուն

ճաշակել բաժակ՝ անթերի մարդկութեամբ և անպակաս Ղստուածութեամբ : Եւ Հոգիդ սուրբ կենդանարար՝ որպէս քո և Հօր քոյ իսկակից , և համապատիւ էութեամբ ծնողիդ և ծնիցելոյդ : Մի Երբորդութիւն կատարեալ 'ի դիմաց երկից անսրոշելի հատուածոց , անըսկիզբն և անժամանակ , բնաւին բարերար , համայն կենդանարար , բոլորից խողաղարար , ստեղծիչ գոյից և յօրինիչ ամենից , անբակութեամբ և միով բնութեամբ փառաւորեալ :

Բ . Իսկ եթէ Հայրն զթած երկնաւոր հզօր մին յէութենէ , վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ յանկնին ծոցոյն , ոչ անխայեալ յՈրդիդ 'ի համապատիւ և 'ի սիրելիդ , այլ կամաւ նուիրեաց մահու չարչարողացն զինու , ըստ մարգարէութեանն Օգբարիայ : Վ ասն զի զարթնուլ սրոյն 'ի վերայ հովտին , և հարկանիլ նոյն ինքն հօտապետին , և ցրուիլ ոչխարացն հօտին , որպէս օրինակն նուրբ նախագրին և ուխտագրութիւն խորանին , և նուիրումն արեան սպանդին , և առակ խորհրդոյ արրահամեան պատարագին , զփրկութիւն թշուառացելոս 'ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր : Եւ արդ հիմ տրտմիս , անձն իմ կործանեալ , ոչ յաստուածուստ հնարաւորութեց . այլ 'ի քումդ ինքնագործ հակամտութեանց , կամ ընդէր զիս խռովես՝ յուսահատութեամբ սատանայականաւ զմիսս հարեալ . յուսա յՂստուած , խոստովան լեր նմա , և նա հոգայ վասն քո , ըստ դաւթեան սաղմուսին և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի :

Գ . Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստողին 'ի վեր է քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և երկրականաց . և եթէ բերս կրկնեսցի , ոչ լինի չափեալ . քանզի անբովանդակելոյն և բարերարելն է անձառելի : Եւ զի ոմն օրհնեալ զոմն օրհնարանեալ յերրորդա-

կան համադոյութենէն առաքեաց . իսկ նա 'ի հաճութի կամաց առաքչին մեռաւ . և միւսն ահաւոր 'ի յերկուցն հաւանութիւն՝ մեծաջան բաղձանօք մաղթէ : Իսկ համաբարեոյ միակամութեանն ցուցակ՝ առ 'ի զնոյն բարի ներդործել , որպէս հողին կենդանւոյն և բանն բանականին , պայծառութիւն փառացն և կերպարան էութեն : Ըս կեանսն փոյթ , առ ողորմութիւնն սթափ , առ ձեւընկալութիւնն պատրաստ , առ փրկութիւնն կազմ , առ առատութիւնն յորդ , առ յաճախութիւնն զեղուն , առ անբաւութիւնն լի , առ աննուազութիւնն փարթամ , առ երկայմտութիւնն ճոխ , առ անհասութիւն բարձրեալ : Մի Երբորդութիւն կատարեալ 'ի յանձանց երկից , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ ԽԵ .

Վ Երբորդ յաւիտեանս կրկն հեծուլ էստի Կարկն հսկողն առնոյն ողբիս հողմանաց բանի . 'ի խորոյ սրբից իսոս լեւր Երբորդոյ :

Ը . Եւ արդ յոյս բարեաց անկեալ 'ի սրտի , անձն իմ կործանեալ , և գօտեաւ հաւատոց անդեալ զերկկամանցդ երկակի մասունս զկրկնապղտոր խորհրդոցդ զքանկականիդ գործարան , խոստովան լեր բարերարին Ղստուծոյ : Օմտացդ իբրեւ զգործոց , զխորհրդոցդ իբրեւ զլրութեանց , զանտեսիցն իբրեւ զյայտանցելոց , զսրտից ծածկութից իբրեւ զաւրբառումն ձայնից , զակնարկութեանցդ իբրեւ զարդիւնականաց մեղանաց , զազդել շրթանցդ իբրեւ 'ի զուլի ելելոց չարի : Օտտիցդ հետոց իբրեւ զպատուիրանան Ղստուծոյ վազողաց , զձեռացդ ձգումն առ ցասումն իբրեւ 'ի հեղումն արեան գործողի , զձիծաղելն բնաւին իբրեւ զկամաւորականաւ ձեռումն չնորհի : ՕԵրգմականն , որ թէ 'ի հանդէպս

թէ 'ի տարադէպս , իբր զգործակցութիւն խարողին : Օւմբարտուանութիւնն իբր զՏին կործանիչ նախասեղծին բարձրութեան , զսրաին նեղութիւն իբրեւ զԹերութիւն հաւատոց , զմեղութիւնն իբրեւ զպարտութիւն գորաւորին պնդութեան : Օտրտունջն առ վտանգս կըրիցն՝ իբր զուրացութիւն ուխտին ո՞ր առ տէրն , զպարասանութիւնն իբր զթոռն իմն անդթութեանն , զամբարհաւաճութիւնն իբր ոչէիւք առ վեհսն զոռոզուին , զհպարտութիւնն իբր զկամակոր հարազատ գտողին չարեաց : Օակամայիցն ընդ կամաւորացն , զբռնացելոցն ընդ հաւանականացն , զեկամոխիցն ընդ բնաւորականացն , զանօրէնութիւնն ընդ ասպատուածութեանն . զփոքունն ընդ սասակագունիցն , զնուագունն ընդ յուլիցն : Օանձառիցն իմոց իբր զճառելեաց գիտողին , զանգրելոց վաստուցն իբր զնկարելոց տեսողին 'ի յարձան մագնետիս վիմի , զթեթեւագունիցն առ խտիր մտաց իբր զստուար ծանրութիւն բեռանց : Օխնդիր չափոյ ծածկելոցն իբր զճշգոյ պահանջումն սատերն սակի 'ի բերանոյ կիտին կորիւնի չորեքդրամեան կշռութիւն , զանգնպականացն գործոց իբր 'ի յականջս Մստուծոյ արագ ծամանելոց : Օայտսիկ յաճախեա՛ կուտեա՛ կըրկին յանձնառութեամբ , վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ զէկոցն իբր զեղելոց , ընծայեալ Մստուծոյ զպարտութիւն վանեցեալ անձինդ : Օի ընկալցիս 'ի փոխատուէն զշնորհօք թողութիւն պարտուց մեղաւորին , զոր տէրն արգարացոյց և հրաշափառապէս հոչակեաց , ամենապատիկ ներքողիւ կրկնեալ զգովեստ զղջմանն քան զպարսաւանս մեղացն :

Բ . Բարգեա և զիղեա՛ անձինդ մեղապարտի բամբասանս յօքունս զքոյսն խոհերս բաղմամաննայս , անձն իմ՝ կշտամբեալ , յօքնախթանդ բանիւ : Օչարութիւնն , զանօրէնութիւնն , զվրիպութիւնն , զառ 'ի մարտին հան

պիսէ փախուստ , զպարտութիւնն , զմոլեգնութիւնն , զամպարշտութիւնն , զպպշութիւնն , զթմբբութիւնն , զբունն արթնական : Օառ 'ի յընթացսն զնիհհումնն , զխորհուրդն օտարտոյ , զբանիցն նանրութիւն , զզալութեանն հաճութիւն , զյամենալն 'ի նմին , զփափազելն Մստուծոյ ատկեացն : Օաներկիւզութիւնն , զանսաստութիւնն , զանհարթութիւնն , զթերութիւնն , զլուծութիւնն , զճշգրութիւնն , զանկապ արձակումնն : Օծիծաղականն , զվրնջողականն , զկատակերգականն , զգայթաղականն , զպատրողականսրն : Օանդէպ քաջութիւնն , զանյարմար մարտն , զառանց օրինի արիութիւնն , զխեղզումնս հոգւոյն , զտատանողականն զերկշտութիւնս , զբաղմաստեղնեան , ճիւղն զրահետականս : Օանպատկառ փարաբմունն զգժտութիւնն , զգժգմնութիւնն , զանդատ ատելութիւնն զմարմալմունն զիւրբմբունողականս , զփոքունցն զանկըշտութիւնս , զխոստմանցն դրժաղութիւնս , զուխտիցն մոռացութիւնս : Օնմանեացն այլակերպութիւն , զկեղծեացն քօղարկութիւն , զփառամոլութեանն մորոտութի , զլօնիցն յաւակնութիւն : Օպիրատութիւնն , զնքնախարտութիւնն , զնախապահիցն տեսչութիւն , զհատուցանելն եղեոնականացն , զնոցինն զանշահ աղճատանն , զվայրապար բերմունն , զընթացակցութիւնն խորամանկութեան բանսարկուին : Օբանին սերմնակաթութիւն , զվաճառումն կենացն ընդ գնոց սատակմանն , զկորուստ աւանդիցն , զհայրենեացն ծախս , զկապարանն ձգողական զիկոյլ լծոյ երնջոց անխզել ըմբրոնմամբ զանօրէնութիւնս : Օյարաթաթաւ տղամբընակութիւնս , զբումն լաւացն , զընթաղրութիւնս անկարծիցն , զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական : Օնորոգ մտացն , զօտար խորհրդոցն , զանկալուն կամացն , զհալման հագագին , զէութիւն շնչոյն , զեւն

քան զսահման կանոնացն զրուժեան : Օչխանականին զամենասփիռ բացարձակութի, և զոր չէ ճառելի և կամ գրելի կամ պատմելի և կամ յերեսս դիմաց բերելի :

Գ. Եւ արդ զհարդ բժշկեսցիս , անձն իմ եղկելի , 'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ , բարձեալ թողեալ այր մի տարապիր անողջանալի , ըստ մարդարէին : Քան զի մի 'ի վերադրելոցդ բաւականապէս զօրէ սատակման , թող թէ այսքան դասք սպանողաց դժնէից դահճաց շուրջ պաշարողաց : Մանաւանդ զի ոչ այսու եւ եթ նմանադրութեամբ կշռի տարացոյց տարժանեցելոյս : Եւ զոր օրինակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց' 'ի ստորին մասունս ծայրից տանոցն զօրհասական թոյնս բերելոց , և յաման մաշկեղէն արկեալ ամիտիէ զելցն շաւիղ կապարանին շրջափակութեամբ , ցուցանի արտաքուստ բարիօք , իսկ 'ի ներքուստ համբարք չարի և պահեստ կորստեան և կոյտ կսկծման և գործօնեայք սատակման և մշակք մահու : Եւրդ այս սոքիկ են ամբարեայքն քո անօրէնութեան տաժանեաց թշուառաբիրտն թողալք , անձն իմ պարտական , կրկին սատակման : Եր կամաւորաբար ընկալար 'ի քեզ , զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն յաղարակի պշխարհիս : ո՛վ այր անմաքուր , ամպարիշտ և ծոյլ , բնաւին ատեցեալ , սիրողդ մտացդ ախորժամբ զլցեալսն ամենայն անառակութեամբ : Եւ զոր Եւաքեալ ցուցանէ զթիւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց , աստուստ սկսեալ մինչեւ 'ի կատար կանոնի այնր պայմանի , և որ հասեալ հն , ասէ , յԵստուծոյ իրաւանցն վերայ , եթէ որք զայսպիսիսն գործեն և կամ կամակից են , արժանի են մահու : Եւրդ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան սատակման 'ի մահ դատապարտութեան : Եւլ անխայեա՛ յիս ողորմութեամբ , բարեգութ կենդանի հզօր կամարար , կարող հնարաւոր օրհնեալ յաւիտեանս , ամէն :

Ի Ա՛Ն ԽՕ՛ :

Վ Երսոսին յաւելած իրեն Գեթա-Ելեան նարն հսկողն ասնայն աղերս հարկանաց Բանի . 'ի խորոց սրբից խօսք ընդ Աստուծոյ :

Ը . Արդ վրիպեալս ես յաւելտ ամենապատիւ , միշտ դժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ , արածօղս զերամակս զազիրս վայրագասունս խոզից արօտականաց զարշուժեան մեղաց նախատ վարձկանութեանց , հովիւս տաժողական զհօրանս ուղոցն ամայաբնակաց 'ի վրանս հովուացն , ըստ Արդոյն երդոց առ իս առակին . որ ոչ իսկ ծանեայ զիս երբէք գիտել , թէ յով և յոյր պատկիր և վասն ոյր գոյացայ :

Բ . Ահա 'ի յոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց , ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար . իբր 'ի թոխս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց յաշխարհն հայրենական հայել : Ո՛վ յիմար , զեմրդ քեզէն կորացար յերկիր , զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս , ընդ ցիւս անապատականս համարեցար : Իբր զճրագ բազմաբերանեան 'ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ զլեոյդ բոլորութիւն , զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի օտարացիս զԱստուած տեսանել , և զմնացականացն իմաստասիրել : Բանականութեն յարգանօք կրկին ճոխացար , զի զլազլթանակ բարեմասնութեանն որ առ քեզ եղեն՝ անարդել լեզուով խօսեսցիս : Չեոխնդ հաստմամբ յարմարութեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն տնօրինել զտնտեսութիւն , իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն Աստուծոյ՝ Աստուած կոչեցար : Արից հարիւրոց և ասանց վեցից յօդիւք շաղկապեցար , յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն և պատշաճական մասունս չափոց ազդո՛

զականաց հինգ զգայութեանց , զի մի և երեւելիք նիւթականութիւն քումդ տեսութեան՝ մտացդ դիտման անդատ եղիցի : Օր ումանք ստուարք են և զօրաւորք , և այլք փոքունք են և պիտանիք , կէսք կարծրակերտք և ազդողականք են և զողորականք և պատուականագոյնք . դարձեալ կարեւորք և պատկառելիք : Իսկ թարգմանութիւնք սոցին տեսութեան՝ ՚ի քեզ են նկարեալ իբր յարձանի անջնջականի , անձն իմ եղիելի : Որպէս զե և տարր ժամանակաց և շարունակ հետեւման աւուրցնաւ սո պսակ ամին , իբր կանոնաւ իւրք սահմանեալ մասամբք՝ անսխալ և անայլայլելի պահեսցի :

Գ . Դարձեալ այլ օրինակ հոգեւորական , որ սիրոյն յօղուած շողկապէ ՚ի մի առ եկեղեցի , քեւ խորհրդածի : Իբր զե առանց բնաւից զուգամասնուե կապակցել լծով հաւանականաւ զվեհն ընդ փոքուն , ֆիասեալ է հաստուածոյն անարատութիւն յանուն Քրիստոսի ժողովելոյն : Որպէս ՚ի հատումն և ՚ի նուազութիւն միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոցս ՚ի մարմնի , կրճատեալ իմն է յօրինուած կազմութեան մարդոյ քումդ սենեկի զգայականի , և շրջեալ է ընտանութիւն պատկերին յանարդ փոփոխութիւն : Եւ արդ այսպիսեօք , և եւս բազմօք անզուգական հրաշակերտութեամբ եղական պատկեր (ստուծոյ) կշտամբեալ ՚ի սպառ , ոգի իմ գերի : Եւ թէպէտ յառաջին նմանութենէն կողուտեալ գտար՝ պատուիրանին յանցաւորութեամբ ՚ի դրախտին կենաց , այլ աւաղանին լուսազարդ շնորհին զհոգեւոյն փչումն առեալ , և նմանութիւն ես կերպարանին : Եւ արդ ընդէր կորուսեր զփառան երկնաւորս , իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր յԱզին դարաստանի : Ինդէր փակեցեր քեզն քեզ զերկին , և զվերելիցն դուռն աղեսցեր : Ինդէր խառնեցեր ընդ ջրոյն մարբութեան զախտ արտասուեացդ տարձանութեան :

Ինդէր զլուացեալ զձորձ վերարկուին գարշելն դորձովք զազրացուցեր : Էլիմ զեղեալ հանգերձին մեղաց պատմուածան անառակ վարուք քեզ արկեր : Ինդէր ըզտանողացդ ոտից սրբութիւն՝ ճանապարհաւն ժանդից աղտեղեր : Ինդէր կրկնեցեր իրաւագատին զուխտազանցութիւն հին պատուիրանին : Ինդէր մերժեցար ՚ի պտղոյն շնորհաց , իբր զԱդամ ՚ի ծառոյն կենաց : Ինդէր նենգեցեր քեզն քո կամաւ զանստուեր յուսոյն յարակայութիւն : Ինդէր պատկառանք անհամարձակելք քոյն դիմացդ նպաստեցեր : Ինդէր զինեցար ընդդէմ քո ներհակ , ով ընդունարան խելագարութեան : Ինդէր որսացար ՚ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետն զստահութեան : Ինդէր կարթիւ պատրանաց ածար , հաղորդդ մարմնոյ կենդանարարին : Եւ վերստին յուսացեալ ՚ի նա կարգաւ նմա՝ ապակնեղոյս քաւիչ , նորողիչ փրկիչ կեցուցիչ և կենդանարար , ողորմած խնամող մարդասէր և անոխակալ բազմագութ , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ի Ս Է :

Վ Իրաւին յաւելումն կրկն հեծումն անկն հսկողն անոյն աղերս հազմանայ բանի . ՚ի խորոց սրբից խոս ընդ Լաստոնայ :

Լ . Եւ արդ զինչ գոյ ասել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ , բայց եթէ համրանալ և հողի բերան եղեալ լուել ՚ի սրտի , ըստ մարգարէութեանն խրատու , ահա ՚ի բարւոյն կարկառեալ ՚ի յոյս : Իսկ եթէ զփականս շարժողութեան շրթանցս բացից բռնադատեցից խօսել կամեցեալ , դարձեալ զնոյն ձայն կրկնական եղերերգութեան լալեաց բազմութեան իւթ մտացս յառաջադրէ :

Այլ բարձ բանիւ քոյգ ողորմութեան զժանսութիւնն ապահանարար, որպէս զի գատեալ 'ի հիւժմանց ակտից' ստողութեանն պատրաստեցայց : Հնարաւորեա՛մ, գթութեանցդ Հայր, մեծ խոցուածոյս զօրեղ սպեղանիս, կարեւոր կործանմանս՝ բարի այցելութիւնս : Օ՛ի քո եմ, տէր ոգեսէր, թէ և առ մի նուազ բեւըս մեղիցեմ, բայց ոչ զրեցայց համայն մեղուցեալ, տուիչ կենաց իմոց բարերար, 'ի շնորհ պարգեւաց կենաց քոց ապաւինեալ : Օ՛ի ճանաչելդ զբեղ բովանդակ արգարութիէ, և գիտել զգօրութիւնդ քո՝ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ իսկ զրեաց իմաստունն : Այւ դարձեալ տիրելդ քո, ասէ, ամենեցուն՝ խնայել տայ քեզ յամենայն : Այւ դարձեալ՝ մօտ է քեզ յորժամ և կամիս կարող գտանել :

Բ . Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ . քանզի ոչ այլ ոք բազմամեզ որբան զնա ինձ զուգաշաւիղ : Արբեմն որդի, ապա ատելի . երբեմն միջնորդ խաղաղութեան Աստուծոյ ժողովրդեանն, և յետոյ խտրոց որոշման բազում խռովութեան . երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ . զերկնաւորին պաշտօն ընդոտանեալ, և զօտարին անուն ծանուցեալ : Անպատճառ օցտօղ, անկարօտ զըկող, անսովելի դող, զրգեալ տրտնջող, փափկացեալ փախտական, սեղանանենդ սարտուցեալ : Անպատասխանի վնասապարտ, քաղցրանոց հայհոյիչ, զաւակ հայրատեաց, կտակարանացն մատնիչ : Մովսէսի չարախօս, մոռացող երախտեացն, իմաստուն սխալական, ամենագէտ յանցաւոր, ամօթապարտ զըջացեալ : Տարակուսեալ աշխատող, աղաչաւոր կոսալաշտեալ : Յամբային դարձաւոր, կաղակարծ ընկալեալ, կասկածաւոր հաշտութիւն, յապայս յիշատակ, յերկբայս փրկութի, չաւատալի զիւս : Ի մասնէ մնայուած, խարդաւանեալ

զերի, կիսակտուր պրծեալ, կամաւոր անձնամասն, տըմարդի յըլիացեալ, բազմավրէպ հանձարեղ : Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ ամենայն ուրեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ և փոքր գովեստ՝ էբր 'ի վերայ ինքնագրաւ կորստականի, երգիծանութիւն խտոնեալ ընդ աշխար : Բան նորա թելադիր բարդաւաճութեան ամենայն հասակի, և խոտորումն նուրին 'ի շրթունս բնաւից թառանջ թախծութեան ողորմելիս իմն ազդեալ :

Գ . Օարմանամ վհատիմ տարակուսեալ ապշութիւն . զի թէ նա այնքան զթեաց, ինձ զինչ պատահեցէ : Օ՛խարզ անկաւ ամբարձեալն, զիմորդ սասանեցաւ հաստատեալն, զիմորդ կործանեցաւ կառուցեալն : Իբր օտարացաւ ծանուցեալն, զիմորդ զակատեցաւ զաւակն ընտրութեան, զիմորդ սրացաւ մերձաւորն, զիմորդ աղօտացաւ փայլեցեալն, զիմորդ պատանդեցաւ ազատեալն : Օ՛խարզ անօրինեցաւ ուսուցիչն, զիմորդ նուաղեցաւ հոշակեալն, զիմորդ անարգեցաւ փառաւորն, զիմորդ փոքրիկացաւ մեծատունն : Օ՛խարզ ամպարշտեցաւ բարեպաշտն, զիմորդ ամբարհաւաճեցաւ ընտրօղն, զիմորդ ունայնացաւ պատարունն, զիմորդ կտրեաց զուխտն որ ընդ բարձրելոյն : Պատկառեմ ասել, թէ և ընդ սանդարամետականին կապեցաւ . զի կայր նորա և կոոց . ուստի՞ սէրն ընդ պատկերաց . վասն էր կամքն ընդ խտրանաց : Օ՛խարզ ոչ յիշեցաւ յանդիմանութիւնն Սամուելի առ Սաուլ եղեալ . հմայք ասէ, մեղք են, և ցաւս և աշխատութիւն ամէ թերափ 'ի վերայ : Օ՛խարզ ոչ հայրենի յանդիմանութիւնն . կուռք ասէ, հեթանոսաց դեւք և անշունչք են, և նման նոցա լիցին պաշտօնեայք նոցա : Տէր միայն ամէր զնոսա, Մովսէս նախադրեալ յառաջաձայն ձաղանօք սաստիկս իմն ամբաստանէ, ոչ էր ընդ նոսա ասէ, Աստուածս օտարութիս,

զոր ոչ ճանաչէին հարք նոցա : Ո՛ւր է մահամտոյց
այլազնեայ արձանն Քրիստոսայ , ո՛ր տղերն և անպան-
ձախն սիդոնացւոց իգական ամենանզով ձուլածոյն :
Ո՛ւր կանացի կերպին անգրեկին խայտառակութիւն զա-
ղիւր տեսակին , որով ամօթոյ մարդարեքն զանասորէն
դիմեցումն անխորաբար յանուն չարութեան անձուժկալ
դիւին անաստուածաբար ձօնեալ մոլէին : Տորա զէութի
բարեբաստութեանն որ գնախնին որոսց 'ի կորուսա .
յաղթեաց մեծութիւնն իմաստիցն առաւելութեան , գե-
րեաց գոռոզութիւնն , յիմարեցոյց փափկութիւնն , վա-
նեաց արծաթն ծառայեցուցիչ : Յոգի դատեցաւ զայրն
տօնելի հին զէնն կործանողին , 'ի զրկացն Աստուծոյ
հանեալ 'ի յոտս ստամբակին զթեցոյց : Մեռոյց մեղ-
կութիւնն , թմրեցոյց ծուրութիւնն , արբեցոյց շուայ-
տութիւնն : Ո՛վ դիւրապատիր մարմին երկրածին , ո-
րմէք ձայնարկութեամբք զբեզ աւաղեցից . քանզի ոչ
տիրապէս առ նա հանդիպի ընդգիմաբանութիւնս , այլ
ամենից սխալողաց՝ կամու վրիպելոց : Վասն զի նովաւ
է իմանալ , թէ անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ ,
եթէ ոչ Աստուծով դատեալ ընտրեսցի : Ար զի թէ
առ այս պայմանի յիմար որ իցէ , և 'ի հաստչին կամն
յուսասցի , ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ :

Դ. Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի Սողո-
մոն զբարձին իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կըշ-
տամբութեամբ , իբր մեռեալ իսկապէս համայն աշխար-
հիս անձնասիրութեան . զոր եթէ զիսին որ նկատեսցէ ,
Ունայնութեամբքն է իմանալի : Այլ և 'ի մատեանս
քահանայիցն և 'ի զիրս Աքիայ սիլոնացւոյ , յորում
զիոյթն իւրում ընթացիցն արտասուելիս իմն յեղանա-
կէ : Օտր ջան , անօգուտ վաստակ , անմիտ հետեւումն ,
անշահ արշաւանք , անկայուն երկք , օտարին իմաստք ,
ոչընչից հորմք , բամբասակի բերք : Անյարմար վարկածք ,

մնտի սերմանիք , աւաղափուլ շինուածք , ապականացու-
ստացուածք , քամահանաց տաժանմունք , ինքնամարտ
կոխ , ընդ ոգւոյ իւրում դատ : Ընդունայնամիտք քեր-
արն , վնասակար փափաք , կորստական շաւիղ , վրիպակ
ճանապարհ , կործանական կրթութիւն , մարբապատիր
վարժութիւն , հանապաղատախալ տեսութիւն , ակնայայ-
բատ պշտութիւն , պոռնիկակերտ կերպարան , ակտաբոր-
բոք նիւթ : Գժնէտեսիլ գոյն , յոքնափսուր վեղ ,
յորտամեղձ ծուխ , շոգի ցնդելի , վաճառ մերձ 'ի յառ ,
տաղաւար քակտելի , ընդ վայր աղաղակ , անպատճա-
ռաւոր ծաղր : Արհամարհելի ասպարէզ , անձնավաճառ
զիր , սատակչական եք , անաստուած մտածմունք , սը-
տայօղ ճառ , զայրացուցանող զոյցք , եպերանաց խըձ-
բիծ , խեղագարութեան խնդիր : Ամօթանայ ցոյցք , խալ-
տատականաց յայտնութիւնք , առակ ապանեացն , ա-
պաշաւանաց զործ , ըմպահանաց պատմութիւն , հեղ-
դացելոց օրինակ : Խորխորատ ծածուկ , որս խաւարային ,
մահազուշակ վիհ , անյատակելի անդունդք , ուղեկցութի
սպանողաց , յիմարութեան բարբառջմունք , դարանակա-
լաց վայր : Խարխուլ յարկ , շինուած սասանեալ , կա-
մուրջ խախտեցեալ , երեւոյթ փախչելի , խաբող շողո-
քորթ , անոպայ մատնիչ , ընդդէմ բարձրելոյն հակա-
ռակութիւն : Օայս ամենայն մասունս բանից խոստովա-
նական կանոնադրութիւն 'ի սիրտս բնաւից նախասերմա-
նեաց Դողովորս կանոնադիր դարձելոց զըջման . որպէս
զի մի պարծեսցի որ 'ի մարդկանէ բամբասաւորօք զին-
ւորեալ 'նեփաք՝ զանձն և զընկերն խոցոտելով : Քան-
զի կոտալարիշտ է քողով ծածկեալն , որ զկերպարանն
միայն ունի , և զոչ ակործելիս ստեղծչին կատարէ :

Ե. Եւ արդ նա՛ որ ոչ այնքան մեղաւ սրբան զըշ-
ջացաւ , մի 'ի սպառ պախարակեսցի . այլ յիշեսցի այրն
այն 'ի բարի , իբրև զհիմն յուսադրութեան 'ի տէրունի
ը* 18

ոտան դիմելոց, յորժամ հոգւոյն էջ յայցելութիւն Աստուածութեամբն անբաժանելիաւ՝ կենսագործել զանդ խոստովանեալսն. զոր մեռեալքն ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս : Բնդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեանն ոչ ժամանելաւ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ : Ենց զնուազդ իմ բանադրութիւն 'ի յերջանկին հանձարեղութիւն. նիւթեցին ներկայիս հայցմունք 'ի բարգաւաճին յարգաւորութիւն. 'ի գերաշնարան արքային աղերս, այցելութիւն խնդրոցս դիցի քո ընտրեցեալ վեհ արքայորդոյն, զոր միածնիդ օրինակեցեր, յարեանն կցորդութենէ զքո փառակիցդ ճաշակեցաք : Տնոր փրկութիւն քոյոյ ծառային, ամենահար զօրեղ ահաւոր, 'ի ստեղծողիդ փառս աճեցուցեալ զանբաւելի մեղացն ջնջումն : Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրութեամբ զԱստուածութիւնդ քո քարոզեալ 'ի մատեան լուսազարդ կտակի, եկեղեցւոյ ընծայեաց 'հետս բարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ, Հայր : Քանզի ոչ հեռի յողորմուէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կաթուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից. որ զձեպ զզմանն փոքր ինչ կասեաց :

Օ. Արդ 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բարեմասնութիւնք, զգթութիւն քո ողջունեսցես. որով զկոշկոճեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարաձողութեամբ, երանութեան վերարժանացո՞ : Որ յոքնահոսան արտասուաց ելիւք զմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սաստկակակիծն ապաշաւանօք, հօրն կրիցն գերազանցեաց ողորմելի ոգւոյն հեծութեամբ. զոր 'ի յաչաց Բանիդ քո արտօսք՝ առ որ մերովս 'ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտդ նե-

րողութեամբ միացուցեալ խառնեսցես, գթած : Եւ զան յարմարն առ նա կարծեցեալ զաղճոսին բարեբանուի, 'ի փառս էակցի Արդւոյդ կնքելով՝ նովաւ կեցուցես զնա քաղցրութեամբ ընդ աղքատս ժողովրդոց : Օայս պուեստիկոս ոմն բարեշնորհ արգահաաէր ընդ Սողոմոնի, ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութեամբ՝ իւր կենդանօք նովաւ ընդ նմին վասն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ տընտեսէ : Քանզի և Աւստացւոյն 'ի նմանէ ստեղծեալն բազմահրաշաւորն մարգարէաճառն պատմագրութիւն Աստուածութեանն արգարացուցիչ՝ զՍողոմոնն ողորմեալ կարգէ. որ զի անպարսաւ է աղօթելն, քան չարաբանելն վասն նորին :

Լ. Օր և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել գոչումն : Օի թէ կորուցես զմեզ դատեալ ըստ գործոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչես. իսկ եթէ գտցես, այնքան բարձրանաս, որքան մեծութեանդ քում վայելէ. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւ՝ սղորմածութեամբ, քան նախաճրջութեամբ 'ի ինամս գթութեան՝ չճրի և ամենառատ պարգևօք սիրոյ, մտիթարել յաւէտ զարտմեալս համաշաւիլ տալնապաւ տապոյ տոչորման անբժշկականի : Չեռն եղեալ փրկութեան նորոգեսցես վերստին, քաւեալ և պատսպարեալ 'ի մեղսակործանս խորտակմանէ : Եւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ և սկզբնաւորիդ սկզբանց՝ սուրբ Երբորդութեան և միում Աստուածութեանդ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն :

մարմնոյս տաղաւարաւ յարդարեա՛ն անդրէն վերօտին յան-
 արատութիւն մաքուր սրբութեան նախնի լինելութեն :
 Օ՛ր բազմասցի առաւել աճեցուն եղեալ յաճախ տը-
 չութիւն անսահմանելի քոյզ սքանչելեաց նորոգ ներ-
 կայիս , քան զանցելոյ Հնոցն ստուերականաց : Եւ ընդ
 ճառելոյս զ[Թիւս մեղացս՝ որքան մտացս [Թիւս ընթանայ
 զանբերելնս յիշատակել , արդարացայց յանուն քո ,
 հզօր : Եւ 'ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ , և գու-
 թողցես զամպարչտութի բազում մեղանաց խոստովանե-
 լոյս , հզօր ծածկատես ամենափրկիչ , զի մի ծայրագոյն
 լուծեամբ աւետեացս , զարձեալ նախնումն կարօտա-
 ցայց՝ երանելով սաղմոսին զչնորհօք փրկեալնս մկրտու-
 թեամբն : Եւ փշովք մեղաց յոգի խոցոտեալ , ձեռն
 քո մխեսցի յիս առաւելապէս այժմէն վերստին , ծանրս
 առնելով զբեռն պարտեացս քան զքաղցրութիւն պար-
 գեւացդ . այլ ազատեա՛ն զիս օրհնաբանեալ Հոգւովդ
 սրբով , աղաչեմ զբեղ , տէր ամենայնի , յօրինաց մե-
 ղացն և մահու : Քա՛ն լիցի , թէ անկցի ընդ տկարութի
 սահմանաւ՝ ճշմարտութեանդ ծագումն , իբրև զգրոյն օ-
 բինակ : Քանզի ուր քաւութիւն է թագաւորեալ՝ վտա-
 րեալ են մեղք , և 'ի խրախոյս կենդանի բանիդ՝ ոչ է
 յուսահատութիւն , և ամբարձեալ քոյցոյզ շնորհաց՝ հա-
 լածեալ են պարախքն , և մերձ գոլով ձեռինդ Մտու-
 ծոյ՝ ոչ զոյ անհնարութիւն , այլ ամենեւին լուսաւո-
 թութիւն , բովանդակապէս զօրութիւն , անպարտելի կա-
 րողութիւն : Քո է փրկութիւն , կենդանութիւն , ողոր-
 մութիւն , միանդամայն և քաղցրութիւն , արբայութիւն ,
 անեղծութիւն և յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ծ .

Վ Երբքն յաւելած կրկն Հեծալեան Նորն Հսկող ա-
 նոյն աղիքս հաղթանայ Բանի . 'ի խորոյ սրտեց խոս ընդ
 Մասածոյ :

Ե . Այլ արդ , քանզի որպէս ոչ է առանց Քրիս-
 տոսի Մտուծոյ ողուց փրկութիւն , և ոչ առանց տես-
 ման աչաց առ լոյս զուարճութիւն , և կամ առանց ա-
 բուսեկին նշուից արեւու երբէք քաղցրութիւն , այսպէս
 և ոչ առանց խոստովանութեան ծածկութից և ըստղը-
 տանայ անձին՝ քաւութիւն : Օ՛ր զինչ օգուտ քնզ է
 մաքրութիւնդ , եթէ ընդ փարխեցւոյն դատեսցիս . և
 կամ զինչ փնասեսցեն զիս պարտիքս , եթէ ընդ մաք-
 սաւորին դովեցայց . և կամ ո՛ւր ասի պարսաւեալ մար-
 դարէն Յովէլ՝ երիցս կրկնելով զանձինն եղկութիւն .
 և կամ զի զուցէ սրբոյն դատաստան առ 'ի յիշատակ
 աւուրն մեծի , և կամ իբր արգելք անմարուր իմասցի
 շրթամբք Եսայի՝ հեռին 'ի գործոց տանն Խորայելի :
 Եւ զհարց Մտուած պարտաւոր պաշտի ադամեան
 մարմնովն՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ Հայր
 աղօթել , և կամ յորս թարգմանի առած առակին , թէ
 սիրտ իմաստնոյն 'ի տան սղոյ , և սիրտ անմտին 'ի տան
 ուրախութեան : Օ՛ր որ զսխալին Ղգամայ անձին իւ-
 բում ոչ գրեսցէ , և զմեղս ամէնից ինքեան ոչ համա-
 բեսցի , իբր երջանիկն արբայից զհարցն , կորոյս զերն
 արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ բնութեանս :
 Եւ ոչ բերկրի սիրտ առ զուարթութիւն երեսաց աւե-
 տեօք յուսոյն ըստ ասացելոյն , եթէ ոչ յԱռաքելոյն
 Քնի ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ Մտուծոյ տրտմեսցի :
 Բ . Արդ ըղձալի է ինձ յաւեա սստանօր խրատն
 հին նորոգ ընկալեալ հոգեւոր հանձարեղին , զոր տէրն

իսկ երկրորդեաց , երթալ նստել ոչ յառաջին բարձին
 հպարտից ընդ ամպարշտացն նանրախորհուրդ ժողովե-
 լոց , ուստի Դատիթ և Երեմիա ուխտիւ կանոնի սահ-
 ման հաստատեալ հրաժարեցուցին : Այլ ընդ զդա-
 ցեայն սրտիւ սրտկառեայն մեղօք՝ և ՚ի դատաստանաց
 մեծին պակուցեալ ահիւ հատուցմանն , յեանոյն հա-
 ւասարեալ աստէն ՚ի յերկրի կամաւ խոնարհութեան ,
 ուստի բարձրեան Աստուած պարարեալ բերկրի . որով
 ընդ նախագասեալն ՚ի բազմականն երանութեան հա-
 մարձակեցայց , թէ ես և թէ նա հեռեւեալ սովիմք :
 Առ որ գերծեալ ՚ի բամբասանաց բանի մարգարէին ,
 որ ՚ի վէսս ոմանս ակնարկի . մի յիս , ասէ մերձեանար .
 մաքուր եմ , և ո՛վ զիս տեսանիցէ : Այլ զանկշիոն
 խոնարհութիւն երջանկին Դաւթի ինձ նպաստ առեալ
 ասել ընդ նմին , ես իբրեւ զանասուն համարեցայ հեր-
 քեալ ՚ի զգոյութենէ . և հասին չարիք ինձ շուրջանա-
 կի : Եւ նեխեցան և փտեցան վէրք իմ՝ ՚ի յանդգամիս
 անբժշկութիւն , և զայլոց ոմանց ընարելոց ՚ի յԱսորես-
 տանի՝ զկամաւորն կշտամբութիւն մեղապարտութեան
 տնձանցն անարատից : Ի՛նչ որս և զԵզրի մեծի քա-
 հանայի գասեխ՝ ես ինձէն ստեալ բարբառիմ , թէ և
 ոչ զերեսս բաւական իցիմ համբառնալ ՚ի վեր աս
 քեզ , Աստուած :

Գ . Արդ ես ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զինս
 խառնեալ ընդ նոցին պարտիս , և ՚ի նոցայոցն գառ իս
 դատութիւն կրկին առաւելեալ , նոքօք հեծեծեցից . թէ-
 պէտ և չէ ինչ պիտոյ զարշուծեան դունոյ՝ գարձեալ
 ազեղութիւն : Ահա արդ մեղայ , զի անստութեամբ
 դործեցի զոչ հաճոյն քո բազմօք սխալեալ յանցաւո-
 րութեամբք : Կայեա՛ յիս , գթած , որպէս երբեմն յու-
 րացութեանն ըմբռնեալ Պետրոս , զի յոյժ ունայնացայ :
 Եւսաւորեա՛ ինձ զողորմութեանդ քո ճառագայթ , ա-

մենեւին բարեբարութիւն . զի ընկալեալ զօրհնութիւն
 քո , տէր , արգարացայց կեցից և մաքուր եղէց յանըս-
 տեղծիցն քո իմոց լիլողաց : Չունիմ համարձակութիւն
 զմեղապարտ ձեռինս հաստուած աս քեզ տարածանել ,
 մինչեւ մատուցես զօրհնեալդ քո զաջ ՚ի նորգութիւն
 դատապարտելոյս : Արդ յաղթեալ վերստին իմումս յա-
 մառութեան քոյին հեղութեամբդ աս իս ժամանեալ
 մարդասիրապէս . և զամենայն յամենայնի ամենայնիս
 քո կարողութեամբդ՝ զառաջին չարիսն միջնովն և վերջ-
 նականօքն թո՛ղ ինձ , հնարաւոր անհասից Բրիստոս
 թաղաւոր լուսոյն արգարոց :

Գ . Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ , զի
 վնասակար եմ բարեգործիդ մահու հարուածոց . աս
 կնիքն , աս շնորհն , աս փշումն , աս պարգեւն , աս
 աւանդն , աս ձիրն : Առ անունն , աս օրգէկրութիւնն ,
 աս պատիւն արքայական , աս պատկերն , աս դուշմն ,
 աս օծումն , աս ճոխութիւնն : Առ համարձակութիւնն ,
 աս ընտանութիւնն , աս կեանսն , աս լոյսն , աս երա-
 նութիւնն , աս յոյսն , աս փառսն : Առ անխոնարհելի
 բարձրութիւնն , աս պսակն անկապտելի , աս խոստմունսն
 ծածկեցելոցն , որ քեւ , տէր Բրիստոս , բազմօք աւե-
 տարանեցաւ ինձ յամառելոյս իժիս և քարբիս՝ ունկնակից
 և լսելափակ անլուր ակննջացս : Որ միշտ յառաւելութե
 քունդ բարութե յոքնսպատիկ յաւէտ քան զսոյն չարիքն
 իմ յաճախեալ , ՚ի սպառ կործանեցին , մերժեալ ՚ի կենաց
 ընդ մահ կապեցին , ծառայ կարգեալ ապականութեան :
 Եւ արդ դու միայն իրաւակշիւ և ճշմարտագառ բարեբար ,
 օրհնեալդ ՚ի զթութե , մեղայ քեզ անօրինեցայ անիրա-
 ւեցայ . վասն որոյ և եղժայ զեղժայ յանցեայ ամպա-
 ըլշտեցայ : Եւ ոչ լուայ խոստովանեալ և երկրպա-
 վեալ զովեալ քո բանիդ , որ դու իսկ երեւեցար ան-
 ճառելեալ քո սիրովդ , զոր Կրիստոս իսկ մեծ է , և նշա-

նակերն սարսափելի : Քեզ արդարութիւն և փառս և մշտնջնանւոր գովութիւն , և ինձ պատկառեցելոյս 'ի քէն , խնամակալ , քաւութիւն և ողորմութիւն և բժրշկութիւն , օգնութիւն և պահպանութիւն սրտի և ոգւոյ . բարեբանեալդ յամենայնի յաւիտեանս . ամէն :

Բ Լ Ն Ն Ծ Ը .

Վ Էրսաբն յա-էր-ած իբլին Հիծո-լե-եան նաբն Հակոբ աս-նայն աղբիւս Տարլ-անայ Բանի . 'ի խորոյ սրտից խոս- ընդ Լսոսո-ծոյ :

Ը . Եւ արդ առ երկրածին որ պաղատեցայ այս մահացու ամենապատիր , եթէ ընդունայն է աղաղակերն . առ մահկանացու բանական , եթէ սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն : Ը ա մարդ որ եղծական , եթէ ընդ տկարութեան բանին և նանիր է զօրութիւնն . առ իշխանս երկրսւոր գահից , եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն . առ եղսայր որ հարազատ , եթէ կարօտ է կամւորն առ անձինն անդորութիւն : Ը ա հայրն իմ երկրաւոր , եթէ պակասեալ են ինամականքն ընդ աւուրց նուազութեանն . առ մայրն իմ որ երկնեաց , եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն . առ թագաւորութիւնս աշխարհի արգելք , որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն քան զկենադործելն : Ը յ առ քեզ , բարերար Լստուած օրհնեալ 'ի բարձունս , որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի , որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել :

Բ . Որ եթէ փախնումք 'ի քէն , դու զկնի ընթանաս . եթէ տկարանամք , զօրացուցանես . եթէ վրիպիմք , շաւիղ դիրութեան ուղղես : Եթէ պատկառիմք , քաջալերես , եթէ ախտանամք յանձն և 'ի մարմին , բը-

ժրշկես . եթէ դարչանամք մեղք , մաքրես . եթէ ստեմք , քո ճշմարտութեամբք արդարացուցանես : Եթէ յանդունդս ներքինս սուղեալ դրոխիմք , յերկինս ցուցանես . եթէ 'ի կամաց մերոց ոչ դառնամք , դու դարձուցանես : Եթէ մեղանշեմք , ողբաս . եթէ արդարանամք , ժպտիս . եթէ օտարանամք , սպաս . եթէ մերձեանամք , տօնես . եթէ տամք , ընդունիս . եթէ յամրանամք , երկայնամտես : Եթէ մեք ժխտեմք , դու առատապէս շնորհեալ ընձեռես . եթէ լքանիմք , տրամիս . եթէ աբիանամք , խնդաս :

Գ . Որպէս հարիւրերորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշաւորական զվհասեղոյս զսիրտ սփոփէ , և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեան հանդէս . որ յաղթական է դիւաց և տարախոյս բանսարկունի : Որ իբր զխաչին տէրունի նշան բարեբախտ պանծալի սքանչելափառ , անխոնարհելի բարձրութեամբ լուսոյ և անչեղափառ , անխոնարհելի բարձրութեամբ կանգնեալ է ախոյեան անվանական և անշարժական ամենայնիւ յաւիտեանական ընդ դէմ անբարի բարուց բռնութեանն (Նեղիարայ) : Որ ունի յինքեան գանձս հոգեւոր օգտից դիտողաց մտաց ընծայեալս զպարտումն մահու և զլուծումն մեղաց , և յոյս կրկինս յերկուս յաւիտեանս , և զնորոգումն խոստման անեղծութեան արդարոյն , կանոնս բարեհրաւերս և կենդանատուրս դրեալս հոգւովն Լստուծոյ : Որպէս ամենայն իսկ երգ սաղմոսացն մաքուր սրտից է տեսանելի կտակ կենաց մարդկան նկարեալ :

Դ . Օ ի թէ 'ի նախնուսն տկար կերպարանն զայս աւետիս և վստահութիւն ընդդոգեալ ունէր՝ կործանման մահու նախաժաման մեծ աւետագիր և կեանս երկնակրօնս վերակենցաղս միշտ անձառելիս : Եւ այն՝ ջենջական գիրն և յեղանակաւոր օրինակն , և պաշտօնն դատապարտիչ վհատութեան յանցաւորացն , և խափանելի

կտակն երկրային , և տկար հաշտարարութիւն միջնորդացն , և թերութիւն բանից մաղթողացն : Ար զի թէ Մանասէի փրկութիւնն խոստովանելի է , անտուտա վեկայեալ յետ այնքանեաց մեղանաց անբժշկականաց : որ արեամբն արդարոց ելից զնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք հայրենի , ըստ մարգարէագիր անսուտ պատմութեանն : Ար և զմեծն իսկ տեսանողաց բազմերախտիս ձեռնկալութեան խնամողորէնն պաշտպանութեան նախնակերտ յարկին տեսչութեան , մանկավարժ ինքեան և նախնի , մերենայիւ մահու սղոցեաց , ՚ի յերկուս մասունս խզեալ դժնդակ տանջանօք մաշեաց : իբր խորհրդով ապստամբութեան զյուսոյն փրկանակ կտրեալ : Առ որով զչար յաւերածն մոլեղնական՝ զբէական վերնամարտութիւնն ՚ի բարձրեալն յանդրդութիւն : Քանզի ոչ պատկառեաց երբէք զստեղծողին պատիւ և զանուն յիւրաբնակ խորանէն մերժել : Հալածեալ զԱստուծոյ Հօգին , Ռիւիարայ զանձն դաւանեաց : Քանզի զնոյն տաճար տիրական ինկարկութե հաստօղին սահման՝ հոչակաւորն երկրի տեսարան՝ զսարսափելին ազանց սրբարան , ուր տեսիք հրեշտակականք և աստուածային հրամանք յաղթողականք լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ երեւէին , զայն վար երկնանրման ահաւոր սքանչելատես՝ Քեւանայ ումմն քառագիմակի նախանձարկու պատկերի աւերածոյն անապատի պաշտօնետեղ՝ զարշիւ և դիւաճենձեր գոհարան պատրաստեալ կազմեայ : Օրկեալ զարքայն երկնաւոր ՚ի յարքայականն կայից , զամենահարուստն՝ ունայն ՚ի ըստացուածոց իւրոց , զտանուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ : Ռէեղզբուղայ ձեղուն նկարեալ , և զանունն ահեղ վտարանդի արարեալ : գերի տարեալ զաւանդ գովելուն , ողբալի զողորմածին մասն նուազեցուցեալ : Ազուեսուն փոքու ապարանք զսրահն

լուսոյ կարդեալ , և բնաւից ունօղին և ոչ զլիւսոյն տաղաւար յիւրայոցն եղեալ : Հատեալ զցանկ հզօրին , բախտից հմայից զսեղանն մեծախորհուրդ արեանն սրարկման երեւեցուցեալ : Վայնեալ հետս բազումն ընթացելոց ՚ի դայթակղութիւն , հովիւ կորստեան հօտին սատակման , մուրրութեան բուռն վարդապետ : Այն՝ զիսութեամբ կրօնիցն օրինաց , հայր ունելով զմեծն Ազեկիա զնմանակիցն Ղաւթի :

Այնքան ստացեալ դամուսն չարեաց , որ և զԱստուծոյ պատիւն՝ որ զարքայութեանն փառս ընծայեաց նմա , հայհոյեալ և թշնամանեալ , և զաղօթկերացն բազմութիւն սուսերաւ մահու խողխողեալ : Անտանի դաւաճան , մերձաւոր վտանիչ , հարազատ սատակիչ , կցորդակից սպանող : Առ Աստուած ոչ գոյր դառնալ , զի ուրացեալ էր զնա . զԱբրահամ ոչ էր յիշել , զի խորթացեալ էր ՚ի նմանէ . իսահակաւ ոչ էր աղօթել , զի նզովեալ էր ՚ի նմանէ . իսրայելիւ ոչ էր պարծել , զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն շնորհի . զդաւթեան երգ ոչ էր նուագել , զի կշտամբել էր նորին : Ի քաւարանն ոչ էր մերձենալ , զի պղծեալ էր զնա . ՚ի տապանակն աստուածագիծ ոչ էր ապաւինել , զի ընդ գարշութեան ձուլածուին էր փոխանակեալ . առ Սովսէս ոչ էր կարդալ , զի անբաւելի էր պարտիքն որ առ նա . առ Ահարոն ոչ գոյր աղաչել , զի քնստապարտ էր առ նա . առ մերձաւոր մարդարէիցն գունդ ոչ էր դիմել , զի սպանող էր նոցա : Այլ նորա քաւութիւն մեղաց , և արքայութիւն թագաւորութեան վերստին պարգեւեալ սուաւ : Օրի քեզ , բարերար , բազմացուցես կարգեսցես գովեստս անձառս և անլուծիս ՚ի յազգս տոհմից և ՚ի դարս ժամանակաց , և զբուռն յուսոյն մտից անփակելի պահեսցես ՚ի փառս քոյդ բարձրութեան և ՚ի փրկութիւն դատապարտելոյս :

անմահութեանց պարգեւաց տուիչ Քրիստոս , գովեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ե Ն Օ Ի .

Վ Էրորին յաւելլած իրին հեծո՛ւլեան նորին հոկոյն տո՛նոյն տղէքո հողէտոսոյ բանի . 'ի երրոյ սրբոյ խոս՛ լնոյ Լորո՛ծոյ :

Ը . Օրհնեալ տիրաբար 'ի բունդ էութեան , անսահմանելի և անփոխադրելի իսկապէս բարի , պաշտօն խնկելի և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի , երկայն յուսոյ ամենապարաստ տեսութիւն , զթած ողորմած : Որ ոչ պահես ոխս բազմութեան ամաց մեղանաց քթթել մի ական , որ հրաշաւորս զարմանալիս գեր քան զամենայն ազինս նախնեացն՝ անսահման առաւելութեամբ կրկին ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութեանս նորումս : Եւ զանդուտ զմուտ լուսարանի պատուհանին անձկութիւն նշուլիցն աղօտականաց , չափով գիտութեանցն ըստ Սողոմոնի , և իւր իսկ նմին և ինձ ընդ նորին բացեր ընդարձակեցեր թշուառացելումս զառագաստն անջրպետարան ելիցն ողորմութեան ձրի պարգեւացն աստուածականաց : Օր ընդ մէջ իմն մասնաւորք աւետաւոր յիշատակաց և 'ի հնումն զայսր տպաւորութիւն օրինակաւ նկարադրէր , զգարձարուքն առ իս և էս դառնամ առ ձեզ . և յորժամ դարձցիս և հառաչեսցես , յայնժամ կեցցես : Եւ զի և զաղջամըղջին սեւութիւն գունդն փոխարկել 'ի ձեան պայծառուի , և զարանցն արեամբ ներկելոցն յեղանակել 'ի պատահումն գեղման , ըստ Եսայեայ և Օսեայի , և 'ի մէջ բարկութեանն զարձեալ զոյգ զողորմութիւն : Բանդի անպատանալ քաղաքացն Խորայէլի և զարձեալ բնա

կիլ , և ճանապարհացն ամալի լինել 'ի չգոյէ մարդկան և անդրէն հետեւիլ , և քանիլ 'ի սովոն ոգուլ և դարձեալ զօրանալ ձեռամբ , և գնալ Լստուծոյ 'ի տեղի իւր զայրացմամբ և դառնալ ողորմութեամբ : Բստ ներողութեան զերն , և 'ի մէջ սաստիցն սպառնալեացն կրկին պաշտպանութիւն , և 'ի սրտին խռովութեան յուզումն խնամոց գթութեան :

Բ . Ը . յս մարգարէիցն ձայն խնկելի , որ զօրհնեալք քո գալստեան զազատարարդ հրաման կանխաւ ազդէին : Եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկանել վասն անբաւութեան , փոքունք են և նուազունք օրինակք և նմանութիւնք , հինք և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն և խաչիդ փրկադործութիւն : Որ յամենայն վայրի կառուցեր զեկորանն վկայութեան արեան քո ուխտի , որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան ըզդատակնիք մահուն Հաբելի գաղթմանակ բարեաց քունդ հանդիսի , կեանս կրկինս և անմահականս շնորհաց , մրկրտութեան , յարութեան , նորողութեան , առ քեզ ընտանութեան , ընդ Հոգւոյդ սրբոյ միութեան , քաւութեան , ազատութեան , լուսաւորութեան , մշտնջենաւոր մաքրութեան , իսկապէս երանութեան , ընդ վերնայնոցն կցորդութեան անկապուտ փառաց , 'ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք : Եւ զոր ահաւորն է սսել , կարգեմ աստանօր յիշատակ եղեալ մեծիդ երախտաց , Լստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին , և ընդ հաստօղիդ միանալ տէրութիւն եկիր հայրենիդ քո հարստութեամբ , արարեր և կատարեցեր գլուստն յերկարաձգութիւն , որ առ քեզ պահեալ անհամառօտելի , քաւիչ ամենայնի : Եւ քեզ

փառք ընդ Հօր քում 'ի գոյեստ բարեբանութեան
Հոգւոյդ քո սրբոյ , յաւիտեանս յաւիանից . ամէն .

Բ Ա Ն Ծ Պ .

Վ Էրստին յա-էլ-ած իրկն հեծո-վեան Կարկն Հսկող
նայն աղբիւս հողմանայ Բանի . 'ի խորոյ սրբոյ խօս- լնայ
Աստուծոյ :

Ա . Տէր տէր զօրութեանց , բոլորից գոյից թաղա-
ւոր , օրհնաբանեալ ողորմութիւն , Աստուած ամենե-
ցուն . որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձա-
կութեան . ամենայն անբաւութեանց դու ես որբանու-
թիւն : Մինչ զի կարծրն քեզ հոսանուտ է , և լոյծն
քեզ պնդակաղմ , և չիք քո իր անհնարաւորական ,
յաղթող զօրութիւն ահեղ : Հուրն ցօղ իմն է զօվա-
կան , և անձրեւն բոց կիզանողական : Օքարն բաւես
ցուցանել կերպարան ազգման , և զբանականն , դնես
անխօս և անշունչ արձան : Օպարտաւորն ողորբեալ
պատուական առնես , և զկարծեցեալն մաքուր՝ իրաւամբք
քննեալ դատիս : Օմատուցեալն 'ի մահ բերկրութեամբ
բարեաց արձակես , և զամաչեցեալն զուարթ տեսութիւն
օծեալ դարձուցանես : Կանգնես զմատնեալն հաղբից
զլորման , և զսասանեալն 'ի վստահութիւն վիժիդ հաս-
տատես : Օախտացեալն բազմահառաչ երջանիկ կար-
դես , և զյառաջատեալն դարձեալ անդրէն 'ի յետս նա-
հանջես : Այլ յորժամ սպառին առ 'ի մէջ բարիքն ,
զառաւել զարմանալիսն յայնժամ ներգործես : Քանզի
վասն քո զիտես թողուլ զմեզս և ջնջել զանօրէնութիւնս,
և բաւիչ լինել անիրաւութեանց և զմեզս մեր ոչ յի-
շատակել , ըստ Ասայեայ և Արեմիայ :

Բ . Այլ առ շնորհ նորոգ փրկութեանս բազմօք գո-
հաբանութեամբ հետեւեալ , 'ի յաճախութիւն անբաւիցն

լուեալ առ սմին իսկոյն կարկեցայ : Քանզի կրկնեալ
դըւսոյդ անսպառ բարիսդ , որ 'ի քէն առ իմ՝ յամառս
թշուառութիւն , բոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից ,
յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս զքառ ողբեր-
գութեան այսր մատենի , լցից թախծութեամբք և հե-
ծեծանօք : Այլ առեալ խառնեցից 'ի տուօղիդ հաճու-
թիւն ընդ ցաւոցն զգեզն , ընդ վհատութեանն զխրա-
խոյսն , ընդ յուսահատութեանն՝ զյշառակից անուան
հաստօղիդ : Ընդ տխրութեանս զսփոփանսդ , ընդ ի-
մունս դառնութեան՝ զքայցրութիւն կենարարիդ , ընդ
պատիժ օրինին՝ զշնորհն , ընդ պարաս անիծիցն՝ զազա-
տարար օրհնութիւնդ , ընդ մարմնոյ մահուն՝ զամենայ-
նիւ նորոգութիւնդ :

Գ . Հաւատամ հզօրիդ բանի , ուստի վկայեմ . լնր
լուութեան սրտիս , տէր Յիսուս , որ հնչումն է առ
քեզ մեծութեան ձայնի երկար զօջեղոյ : Ար մարմնակից
և պատկերակից մեր ելեալ , և քահանայապետուպէս ան-
օրինակից զօրինակին խորտակեալ զուծ : Ընդ զենման
մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ
անմահապէս միշտ մատուցանիս , և աննուազարար քա-
ւութիւն շնորհես , ոչ սակաւամեղիցն միայն , այլ և
որոց հատեալ է ակնկալութիւն առ ելս կենաց : Օի
նրբան զօրէ մարմնոց անդամոց առ մեզս կենդանութիւն ,
թէ և բիւրոյց ամաց ունիցի յերկարաձգութիւն , յոր-
ժամ Աստուածդ բոլորեցուն վասն սորին կամաւ և յօ-
ժարութեամբ զենումն ընկալեալ , մահու համբերես
բաշխեալ 'ի քաւութիւն : Օի ոչ եթէ մաքրութեանդ
աղբեր պարտական զոյ մահու յօր ըստ օրէ կատարի-
լնն , այլ կամօք քովք՝ Հոգւոյդ զործակցութեամբ՝ 'ի
հաճութիւն Հօր և 'ի մեր հաշտութիւն ցանկ մատու-
ցանիս : Իսկ եթէ ամենիցդ Աստուած անքնին՝ իմօվս
վասն իմ՝ առ իմ փրկութիւն , 'ի դէմս իմ , իբր թէ
Ը* 20

ընդ քոյր էութեան եւ իցեմ մարմնով պարունակողիդ կցորդ միացեալ : Եւ դու , բարերար , յազգս իմ 'ի յիմն կերպի փութանակեալ ընդ իմում պարտեաց , և մահ ընկալեալ անպարտդ զմահապարտիս փասուց պատուհաս , և 'ի յիմ անուն յանցաւորապէս , որպէս թէ կամաւ ընդ քեզ եւ կրիցեմ , բազումս մեռեալ և մնաս կենդանի : Ոչ ուրացողացն ձեռօք , այլ դաւանողացն հաւատովք աստուածապէս նորիբեալ և 'ի մատունս անհատս բաշխեալ :

Դ . Ըսէր ոմն ողորմաւոր չհաւատալիացն պաշտօնատար . մեծ ինձ և անկշոեի առ սմին դասէր անյարմարողիր անձին յուսադիր : Հաւատամ զվառս և զերջանկութի , քան թէ մարտիրոսութեամբ իսկ թո՛ղ թէ ուղղութեամբ իմս թշուառութեան յանցաւոր մարմինս վախճան ընդունել : Իսկ զանձառութիւն խորհրդոյս այսու դիտեցի . դաւանէր իսկոյն , որ զի և մարտոցն անձինք սոռնց նուիրման այսր յիշատակի չեւ են իսկապէս կատարեալք 'ի սպառ , եթէ ոչ ընդ այս հրաշակերտութի մեծութեան հողում խառնեցցին : Ապա թէ մղաւորիս մասին կրկին մատուցար բաժին ասելով յուսայր , իբրեւ այն թէ ես ինքն եղեր ճշմարտիւ , զբաւեալ զիմն դաժանութիւն ընդ քում համեղութեան , պատարագեալ քոյինանիւթ զանգուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ : Ըստու ամենայնիւ 'ի վերնատանն նախանուէր բարեշնորհութեան՝ անհնարաւոր ախտիցն ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց 'ի քաւութիւն : Ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ , յուսոյս օրինակ յարգաւորութեամբ զրել զիս 'ի փոռս , այսմ փրկանօք հաւատալի երեւեցուցանէր , քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ , որչափ աստուածականիդ առ մարդ զօրութիւն , և տիրական աստուածախառն մարմնոյն կամաւորական նուիրումս

առ անասնական սպանդին մատուցումս : Եւ անմահն առ մահիանացուս , լոյսն ահաւոր առ սոուերայինս , յաւիտեականն քան զանցաւորս , բարձրեան քան զերկրաւորս , անտեղծն քան զեղականս , բարին իսկութեմ քան զթիւրեալս բնութեամբ : Մանաւանդ զի իւր է կամեղն և իւր կենազործելն , օրհնութեանն առիթ քան զանիծիցս պատճառ :

Ե . Արդ անը խոցելոյս 'ի սիրտ և յոյի , աղաչեմ զթած , զառ 'ի յերկնուսա ընծայեալ զգեղդ կենաց , մատիբ քաղցրութեամբ առ ախտացեալս մեղօք , քաւեա 'ի պարտեաց , ամենակատար բաւականութիւն : Իսկ առ 'ի յինէն այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի , որ զի հաստիչդ ամենից 'ի սուրբս բնակես . և ըստ տարազու սերմանն և հնձելն է իրաւացի , ըստ ճշմարիտ բանին Պաւղոսի , և աչացաւացն 'ի տապ արեւու ոչ է զօրութիւն : Ըսլ դու , բարերար հաստիչ յոչէից , յարգես յաւեա իսկապէս համայն և զգաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն : Եւ ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի , այլ յաղթես՝ մանաւանդ թէ իւր զես զկապ կանոնի , և դու միայն մնաս պայման աւետեաց համօրէն յանցաւորաց տարակուսելոյ : Եւ քեզ ընդ Հօր՝ Հողումդ սրբով փառք և իշխանութիւն յազիտեանս , ամէն :

Ի ԱՆ ԵՂԻ .

Ս Երսոյն յաւելումս իւրն հիծո-լեւան Դարն հուրն առ նոյն աղբիւս հաղթանաց Բանի . 'ի երսոյ սրբից խոս ընդ Աստուծոյ :

Ը . Եւ արդ յամենայնի առ ամենայն ակնկալութի , քո է ողորմութիւն , սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից Յիսուս . քո է բարերարութիւն , կեանք

և անմահութիւն : Դարձ առ իս դժուրութեամբ , և հան-
դերձեցես դառնալ առ քեզ ինձ կրկին բերկրութեամբ .
զի առանց քոց կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփո-
խեալ : Եւ եթէ ոչ կամք քո գլխացին , ոչ զօրեմ
փրկիլ մահու պարտականս . և եթէ ոչ կառավարդ
յարդարեցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՛ որ
առ քեզ բերէ , վիճ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ :

Բ . Ըհա ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս ,
ոչ պանծամ դսրովեալս , ոչ խրոխտանամ լբեալս , ոչ
մեծաբանեմ պապանձեալս , ոչ ըմբոստանամ ձաղեալս ,
ոչ երջանկանամ եղկելիս , ոչ արդարանամ ամսպարիշտս :
Օ՛ի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար առանց սանձա-
կալի , և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղ չի ,
և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի , և ոչ
երկուորեակք լծոյն 'ի ճահ ճեմեցին առանց եղողի :
Ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ , ոչ աստեղք ցնդին
և կամ գումարին առանց ժամանակին , ոչ արեգակն
փոխաբերեալ ուր շրջանակի առանց տարրական օդոյ ,
և ոչ ես նորօք հանդերձ առանց բարեղործիդ հրամա-
նաց ակնարկութեան : Օ՛ի դու միայն ես սուրիչ կե-
նաց բանականաց և խնամիչ կարգաց հողովման արարա-
ծոյ , և 'ի քէն է ինձ փրկութիւն , ըստ սաղմոսողին . և
դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման յա-
կանջս լսելութեան ամենայն հասակի , Եկայք 'ի հան-
դիսս իմ՛ բնաւին աշխատեալք , և ես մաքրեցից զձեզ
'ի պարտեաց : Իսկ զինչ օգուտ 'ի լուացմանէն , եթէ
կրկնակի գազրացայ . և կամ որ օգուտ 'ի ճաշակմանէն ,
եթէ գեհնենին մատնեցայ : Եւ կամ զեւրդ յԱբրա-
համ պարծեցայ խորթացեալս 'ի գործոց նորին , որ-
դիս գարշութեան հօր ամովրհացւոյ , և մօր քետացւոյ
կամ քանանացւոյ , ըստ մարգարէին որ առ իս յան-
կաւոր ձայնի : Ճառանդս մերժելի եթովպացի և ոչ սե-

նեկին Սաուայի , ըստ տեսնողին առ իս առածի . եղ-
բարս Համրնի և կամ Գոմորայ , համբախս անլուաց
և անաղէլի՛ խակակութ պորտոյն խակութեան Սողայ և
Ողիբայ , ըստ Եզեկիէլի կրկնանախատն կշտամբութիւն :

Գ . Եւ քանզի 'ի ծուփս բազմալտանդս արեսանջ
հողմոյ սաստկապէս զըռեալ՝ ուժգին ըլկանօք 'ի սպառ
տապնապմամբ 'ի ծովին փոխեալ ընկեցեալ 'ի վտակն
վայրենական ողողիչ : Ըռ որս զմատունս ձեռացս այսր
անդր տարաբերեալ , իբր 'ի հոսանայ բանութեց պար-
նանազայր դետոց , արտաձգեալ յակամայ ընթացս ու
ղորմաղին գլորման , ջրակուլ ողեսպառ պլտորարբութիւն ,
դամանահոտ սխախտն մամուրմատ խառնախոխ մահա-
բեր երկամբք վանեալ , ըստ որոց յուղխիցն հեղեղիցին
հեղձուցեալ : Ըյուտ առակաւ և ես եղկելիս՝ խօսին և
ոչ իմանամ , գոչեն և ոչ ինչ լսեմ , բարբառին և ոչ
զարթնանամ : Հնչեն և ոչ փոխադրիմ , փողեն և ոչ
գումարիմ , վերաուրիմ և ոչ ևս զգամ , կուցն գարշութե
նմանեալ թափուր յազգմանէ բարեաց իմաստից : Ըր-
դարեւ շար սուաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ
ճշմարտութիւնս , ատելի և մեղազբելի և ատենին Քրիս-
տոսի արժանապէս մատնելի :

Դ . Եւ քանզի անգառնալի ուղեոյն յիշատակ աս-
տեացս պարտեաց զայս կտակ թողի որոց ընթեռնուն ,
իմովս բանիւ առ Ըստուած կարգալ հանապազորդութիւն ,
այս կացցէ սահման յանձնառական խոստովանութեամբ
մշանջենաւոր ձայնարկու առաջի քո , ամենակալ : Օ՛որ
գիրդ ընդ մարմնոյս և բանդ ընդ հոգւոյս զանսահմանե-
լիդ միշտ թախանձեցէ , իբր յանեղծական մաղթողէ
ընկալեալ ազերս 'ի յիմոյս ձայնէ , բարեգութ մարդա-
սէր , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ծ Ն .

Վ Էրարին յաւելլած իրին Գեթո-Լեւոն Դարին Կոյոյի աւ-
նայն ուղերս հաղլանայ Լեւոն . Ի խորոց սրբոց ետաւ ըն-
Լսոսո-ձոյ :

Ը . Եւ վասն զի սրացեալ ուղոյս թեւօք 'ի թիւս
անբաւից ծննդոց մարդկան՝ եզի 'ի կշիռս իմանալեացս
մտաց , ոչ գտի համեմատ զոք ինձ պարտաւոր : Եւ առ
այս զգաւթեան սաղմոսին զբանն 'ի յերգ ինձ առի
դառն կշտամբութեան գաւազանաւոր դործալար . ո՛ր
յարիցէ ընդ իս 'ի չարիս հաւասարել յանօրէնութիւնս :
Եւ քանզի այս ըստ սմին մասին կնքեցաւ և ճշմարտե-
ցաւ առ այս մահու , և ես վկայեմ կրկին հաստատեալ :
Ը . Եւ այս և իրաւունս գրեմ ինձ միայնոյ զեղծանիլ 'ի
սպառ , քան իմովս բանիւ բազմաց տարադրիլ . թերեւս
սովիմք առ այսու արդեք և ինձ չնորհեսցես , չնորհո-
ղիս զպարտիս իմոցն :

Բ . Եւ արգ զինչ քեզ աղերս հաճոյական 'ի յայսմ՝
և 'ի սոյն , և ծուխ անուշից բնգունելի խնկոց մատու-
ցից , գովեալ թաղաւոր երկնաւոր Քրիստոս , եթէ ոչ
զառ 'ի յինէն անիծեալսն օրհնել մաղթեմ , զկապեալսն
արձակել , ազատել զգատապարտեալսն , բարեդործել
զնզովեալսն : Պատկել զթշնամանեալսն , սփոփել զսրտամե-
ցեալսն , դարմանել զխորտակեալսն , խնամել զսարտու-
ցեալսն , պատսպարել զնենդեալսն , զվիրաւորեալսն 'ի
մարմին՝ յողի բժշկել : Եթէ օրհնութեան բանիւ առ
ոք մատուցայ , լուիցես . իսկ եթէ անիծիք՝ մի հայեսցիս
ընդունել , զթած : Եւ տառապեալս ամենաթշուառ 'ի
վերջին սպասաւորութեան մաղթանայ այսր մատենի՝ 'ի
բովանդակ մտաց չնորհեսցի իմոցն՝ փակեալ առ 'ի քէն
գանիծիցն դժնդակ լըձիցն չարաշուք ձայն : Եւ գժնէից

նենգութեան խոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրաւ հաշտութե-
արգահաւեցի , վասն որոց և ծուխ պաղատանայ կրկ-
նեցի . որչափ դու ինձ ահա յայց ելեալ առաւել ողոր-
մեսցիս ըստ քոյդ մեծութեան , գովեալ խնամակալ ,
կեանքդ մահացուիս , հօրդ տկարիս , ամենակարգ վա-
բանելոյս , իմաստութեանդ աղբեր՝ յիմարիս և թմբրե-
ցելոյս : Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրեւ գողոզակ
մթային ոչ ընդելական 'ի հաղբս մահու անղղայապէս :
Չիմացայ զխորուստն , չգիտացի զորոգայթն , չտեսի
զամբոնող որսոյն ծածուկ մեքենայս . չկարծեցի զխաբուսն
կերպարանայ կեղծաւոր վարմին , չնկատեցի զգայթագ-
ղութիւնն շուրջանակի , չջաշափեցի զպատանդիչ զճանց-
արկ կարմին : Դամանեցին ինձ չարիք , և ես ոչ կա-
րացի ճանաչել , ըստ սաղմոսողին :

Գ . Քանզի և որդէս իմաստակի ումմն արտաքնոյ
բարեք թուեցաւ , չար ասել զմահ առ չմանալոյն պատ-
ճառի , և ես վկայեմ իմովս բանիւ : Քանզի իբր զան-
զոյս պաճարս անտանոց մեռանիմք և ոչ զարհուրիմք ,
կորնչիմք և ոչ հիւանամք , թաղեցեալ լինիմք և ոչ խո-
նարհիմք , տարազրիմք և ոչ տաղնապիմք : Եղծանիմք
և ոչ զղջանամք , մաշիմք և ոչ մտառեմք , սրակասիմք
և ոչ պատրաստիմք , դնամք և ոչ զգուշանամք , գե-
րիմք և ոչ ես զգամք : Իսկ հանդիստ ասել երջանկին
Յորայ զվախճան մարդոյ , և ես խոտտովանիմ զսոյն
ընդ սրբոյն , եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեանն մա-
հացու գործոց ըստանձնեալ : Մանաւանդ զի որոգայթն
զազունի և հնարադիրն աներեւակի , տարր ժամանակիս
յանէից , անցեալն անյայտ և ապառնին կարծողական ,
ես անհամբեր և բնութիւն թերահաւատ , ոտք անհաս-
տաք և միտք ցնդեալք , կիրք հարկաւորք և բարք ան-
ժուժկաք : Մարմին մեղսամակարդ և յօժարութիւն եր-
կրասէր , գիմամարտութիւն անկակից և խառնութիւն

ներհակական , բնակութիւն կաւելէն և անձրեւը ուժ-
գնակիք , կարիք անթուեղիք և պատահարք ամենազրաւը ,
միտք չարախնամք և տենչմունք բարխտեալոց : Աեանք
առօրեայր և զմրաղք սակաւաւորք , խարմունք յիմարուն
և խաղաղիք տղայականք , աշխատութիւնք ընդունայնք և
վայելմունք երազականք : Համբարք ոչնչից և պահեստք
հողմոց , նմանութիւնք ստուերաց և կերպարանք ծիծա-
ղելիք : Քանզի իբրեւ հին եհաս պատուիրանն ըստ
պաւլոսեան բանին , անպատրաստ գտեալ զիս ինքեան ,
մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեանցն ,
և ես մահացայ կենայն և կենդանացայ կորստեանն :

Գ . Գողացան օտարք , չարին զուժարք զստացուածս
որտիս իմաստից , ըստ զբոյն կանխաբանութեան . որով
եկն եհաս իսկոյն աստանօր իմաստութեան ինձ նուա-
զանալ , ըստ առակողին , և առաւելու և ոչ բարեոյ
ցանկութիւն : Ոչ յառեցի զակն ողբոյս 'ի զուլնն իմ
կենաց Քրիստոս , որով ընդ ուղիզն հետեւեցայց :
Քանզի կամելով ուժգինս ընթանալ ընկլայ սաստիկ-
պէս . յանչպին ձգտիլ իմոյն ոչ հասի , 'ի մեծագոյնն
ամբառնալ աստուստ զլորեցայ , յերկնային ուղբոյն՝ ան-
դընդոց մասնեցայ , 'ի զզուշանալն առաւել՝ յաւէտ վը-
նասեցայ , յանարասն պահել մանր խորտակեցայ : Ար-
ծելով ընդ ահեակն մրցիլ յաջն զթեցի , 'ի զերկրորդն
խուզել՝ զնախնին կորուսի , 'ի ինդիր սակաւուն՝ 'ի
կարեւորացն զրկեցայ , 'ի յուխտին պահել դաշինն դըր-
ժեցի : Ըստ սովորութեանն կտրիլ կորուսիչս զտի , 'ի փո-
քունցն փախուցեալ մեծամեծացն մասնեցայ , զոր ես
ինքն ինձէն ստեղծեալ չարաչար դատախազ անձին կար-
գեցի : Յորոց փրկել զմատնեալ գրիս դու միայն զօ-
րեսցես , կենաց մատուցեալ զընծայեալս մահու զհո-
գիս : Եւ զու միայն , տէր Յիսուս , ճանաչես բարե-
բար անսահման փառօք ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ օրհ-
նեալ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ա Ն Ծ Օ .

Վ Երաբին յաւելուած ինչին հեծուլեան նարին հոկոյն տ-
նոյն աղբիս հաղթանայ Բանի . 'ի խորոց սրբոց խօսք ընդ
Լ'սպիւ-ձոյ :

Ա . Իսկ զառիթոն մահու գիպուածս դժոխարմատ
ծառոյս դառնութեան պտուղը , ընտանիք թշնամիք ,
հարազատք հակառակք , և որդիք դաւաճանողք , ստո-
րագրեցելովք մասամբք նշանակեցից՝ գրեալ յանուանէ ,
որ են այսորիկ :

Բ . Սիրոս նանրախորհուրդ , բերանս չարախօս , ակնս
յայրատատես , ականջս վրիպալուր , ձեռնս մահաձիգ ,
երիկամունքս անփորձ : Ոտնս մոլորաշաւիղ , ընթացքս
աներկիւղ , հետք խոտորնակ , շունչք ծխախառն , գնացք
խաւարային , գոյութիւն լերդի վիմական : Խորհուրդ
ծորեալ , կամք անկայուն , չար անփոփոխ , բարեմաս-
նութիւն սասանեալ , անձն տարազիր , աւանդ վաճա-
ռեալ : Գաղան վիրաւոր , թուուն նետահար , փախստա-
կան քարավէժ , ըմբռնեցեալ վնասապարտ , աւազակ ծո-
վակուր : Եւ ինուոր նենգաւոր , մարտիկ անպատրաստ ,
սպառազէն անժուժկալ , մշակ հեղձացեալ : Ընթական
անխրախոյս , բեմական ստորնաբարձ , քահանայ անկըն-
դուկ , օրինական անուէր , զպիր կշտամբեալ , իմաս-
տակ խելագար , ճարտասան անձոռնի : Արեւ անպատ-
կառ , դէմք անամօթ , երեսք լարչեալ , գոյն անհամբոյր ,
տիպ տմարդի , դեղ ծանակեալ : Խորտիկ խանգարեալ ,
ճաշակ դարչեցեալ , այգի դաղձնաւոր , որթ որդնահար ,
պարտեզ փշաբեր , հասկ ուռձահալ , մեղր 'ի մկանց
ճարակեալ , անպատուար անկեալ : Մնապարծ յուսա-
հատ , անհամոզելի նզով , անհաշտական բաժանեալ ,
ունայնաբան շաղկիրատ , պաճարամիտ դոռող , անանօ-
ր* 21

րէն ապիրատ , դժոխային ազահ , աներասան յանդունգն :
 Մոլեղնութիւն անաստուած , ձեռնաձգութիւն սպանող ,
 տատակացան երկրագործ , երջանկութիւն եղկելի , մե-
 ծութիւն վատթարեալ , վայելչութիւն անչքեալ : Վարու-
 ղութիւն տկարացեալ , բարձրութիւն խոնարհեալ , փա-
 ռաւորութիւն ընդոտնեալ , պատուիրանազանցութի յա-
 րակայ , սխալանք ինքնակամ : Մատակարար կամակոր ,
 խորհրդակից նենգաւոր , բարեկամ հատուածեալ , հա-
 զարապետ գողափոտ , մերձաւոր կծծի , բաշխող ժլատ ,
 վերատեսուչ կարկամ : Ոյի անախտակիր , իղձք անսէր ,
 բարք ատեցող , աղիք անգլխականք , գնացք անխոհեմ ,
 աներեւոյթք վնասեալք , ծածուկք անիծեալք , դիպուածք
 թշնամանեալք : Վաճառական վատնիչ , շահարար շուայ-
 տեալ , պաշտօնեայ արբեցող , գանձուց ոստիկան երկ-
 միտ , պատգամաւոր բանսարկու , դոնապան քնէած ,
 աղքատ հպարտ , մեծատուն ժխտող : Վիւանապետ ան-
 օրէն , պահապան մատնիչ , բնակակից չարախօս , սուր-
 հանդակ անժաման , թղթաբեր պարտաւոր , առաքեալ
 խոռվարար , միջնորդ անիմաստ : Արքայ արտալած , թա-
 գաւոր թարմատար , կայսր ոգէկործան , իշխան տիրա-
 գաւ , զօրավար զրկող , դատաւոր ակնառու , ռամիկ
 ինքնագործ : Վախատողի ծաղր , սիրելի աշխար , բա-
 նագրի դսրով , յանդիմանչի դատախազութիւն : Վանդի
 և 'ի վեհագունիցդ կոչմանց էր ուրեք արդեւք զի էի ,
 իսկ 'ի վատթարականացդ մասանց եկն երբեմն եհաս
 զի եղէ : Արդ այսքան վնասակարութիւնք խարդախութեց
 յաճախագունից , յորոց յոմանց խաբեցայ իբրեւ զյի-
 մար , և յոմանց տիրեցայ իբր զտկար՝ կամաւ մատնեալ
 զիս ինքն մահու :

Պ . Արդ զորս 'ի վերագրելոցդ մասանց քեզ ատե-
 լեաց և իմ կորուսչաց 'ի սպաս պաշտաման քեզ ընծայ-
 եցից , զորպիսին ապականութեամբ պարսպրեալս ամե-

նասուրբդ քո մեծութեան հանդէպ կացուցից , և կամ
 որքանեօք երկայնատութեամբք համբերեսցես այսքանեաց
 պարտուց : Ո՛րքան ներես , որպէս լուսցես , զիւրդ իսկ
 անսայցես , իբր ոչ մատնեսցես հարուածոց դանից զար-
 ժանիս սատակման մահու : Արդ այսոցիկ աննշլ մը-
 թութեանց հոգւոց խաւարի՝ ողորմութեամբ լուսոյ քոյ
 պատահեսցես բժշկել քաւել և կենագործել , զօրեղու-
 թիւն անվթարելի . և քեզ փառք յամենայնի . ամէն :

Բ Ա Ն Ծ Ի :

Վերստին յաւելուած իրին հեծուլեան արին հսկողն ու-
 նոյն ողիւրտ հողեանոց բանի . 'ի իւրոց սրբոց խոսք ընդ
 Աստուծոյ :

Ը . Քրիստոս Աստուած անուն ահաւոր , մեծութե-
 տեսակ , անընին բարձրութեան պատկեր , անսահման
 զօրութիւն , կերպարան փրկութեան լուսոյ , պաշտպան
 կենաց : Վրոն արքայութեան վերնում հանգստեանն ,
 ճանապարհ հանդարտութեան , ազաւինութիւն նորոգ և
 անտիրական երանութեան , ամենակալ ինքնիշխանութիւն
 բոլոր էականութեան , օրհնութեան կոչումն՝ աւետեաց
 ձայն , բերկրութեան բարբառ , անմահութեան դեղ ,
 Որդի անձառ Աստուծոյ միոյ : Որ ինձ անհնարին է ,
 քեզ դիւրին է . որ ինձ անհասն է , քեզ սահմանեալ
 է . որ ինձ անանցն է , քեզ հպաւոր է . որ եղկելոյս
 ինձ ծածկեցեալն է , քումդ երանութեան մերձաւոր է :
 Որ ինձ անկարելին է , քեզ կատարեալ է . որ ինձ ան-
 կըշտելին է , քումդ անձառութեան չափեալ է : Որ ինձ
 յուսահատութեանն է , քեզ սփոփանաց է . որ ինձ ան-
 բըժշկականն է , քեզ անվտանգելի է . որ ինձ հեծութեան
 է , քեզ խնդութեան է . որ ինձ ծանունք են , քեզ
 թեթեւագոյնք են . որ ինձ եղծեալն է , քումդ զօրեղու-

թեան գրեցեալ է . որ ինձ կորուսեալն է , քեզ ըմբռնեալ է : Որ ինձ անճառն է , քեզ համարեալ է . որ ինձ մոայն է , քեզ ճառագայթ է . որ ինձ անթիւն է , օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է . որ ինձ սուկալին է , քեզ հեշտալի է : Որ ինձ փախչելին է , քեզ վանելի է . որ ինձ անմատոյցն է , քեզ դերահերքելի է . որ ինձ մահաբերն է , քումդ էականութեան զօրութեան ընդ ոչ զոյսն համարեալ է :

Բ . Այլ դու , ողորմած Աստուած բորբից տէր Յիսուս Քրիստոս , և այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ զթասցիս , վասն անուան փառաց մեծութեան Հօր քոյ օրհնելոյ , վասն կամաց զթուութեան Հոգւոյդ քոյ սրբոյ : Տես 'ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութիւնս , և 'ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութիւն : 'Այեա՛ 'ի բնութեանս ամենապատաղ խակութիւն , և պարզեա՛ բժշկութիւն վերացս և հնարաւորութի կորստեանս , զերծումն բազմամասնեայ մահուս և շաւիղ կենաց ապականելոյս , նորոգութիւն եղծմանս և մուտք յուսոյ ամպարշտելոյս : Աթէ ես զաննմանն ինձ կամս ցուցի , որչափ առաւել դու զբնաւորականսդ քո զբնտանի բարերարութիւնսդ : Աթէ 'ի փշոց պտուղ ընծայեցաւ քաղցրութեան , որչափ առաւել 'ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան : Աթէ ես իմոց ատելեաց ողորմութիւն մաղթեցի , դու քոյոյս զեմրդ ոչ կրկին մատուցես , հզօր յաննուաղդ առատութենէդ :

Գ . Արդ տես 'ի քոյդ մեծութիւն , բարձրեալ , նայեցեալ 'ի յիմն փոքրկութիւն . ընկալ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացս , որ զբնան համայն տեսանես . և որպէս զձ իմին զթել ոչ գրեցեր , և զաւաղոյս փոքու սասանել մի համարեցցիս : Աւ իբրեւ ըզ 'Դաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն , և առ իմ ձայնիս հեծութիւն զնոյն գոր-

ծեոցես , երկայնմութիւն : Որ սոսա ամենցունս առատապէս անաչառութեամբ որպէս յաղթող բարի բազմամաստ , և ոչ նախատես զյեանեալ ստրուկս որպէս ողորմած և ամենաստեղծ . ստացիր վերստին , և մի կորուսաներ զբուծեալս արեամբ քո , դթած : Օ՛ր քո է փրկութիւն , և 'ի քէս է քաւութիւն , և քեզ վայելէ փառք յամենայնի յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ծ Ր :

Վ Երբ որ յաւելումն ինչն հեծոյ-լեան նորին հոկոյե սոսոյն ողբիս մող-լեանոց բանի 'ի խորոց սրտից խօս ընդ Աստուծոյ :

Ա . Օրհնեալ տէր Յիսուս ընդ Հօր , 'ի կամս հաճութեան Հոգւոյդ քո սրբոյ . և օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան . օրհնեալ միայն Որդի օրհնելոյ . չիք իմ թագաւոր իշխեցող շնչոյս բաց 'ի քէն , Քրիստոս : Այս է օրհնութիւն Յակոբայ , ասէ Ասայի , յորժամ բարձից զմեզս նորա :

Բ . Արդ ողորմեաց ինձ , տէր բարեգութ , ըստ նախնիդ քո սովորութեան , և օրհնեա՛ զանօթս քո բանական , ըստ ձայնին Դաւթի և ըստ Ա՛ոփսէսի . զի բանիւդ քո փրկութեան ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն : Աստուածապէս ինձ հրաշագործեա՛ , ողորմած արբայ երկնաւոր , որպէս անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահաճացն խշտիս , ժողովելոցն 'ի սրահին Բեթհեղբայ : Յորոց մի էր և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօգիցն լուծմամբ , որում ոչ անխայեցեր զբժշկութեանն ձեռնտուութիւն , իբր դիտելով զանբոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան դառն զիշերին տիրամարտութեան՝ երախտաւորիդ մեծիդ և բարեբարիդ :

Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբուրելի դատողացն զքեզ 'ի խաչին : Եւ դու այնպիսոյ անյարիր ջատուկ մահու ծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անձառ բարութիւն, սիրալի մարդասիրութիւն, սարսափելի ներողութիւն, սոսկալի երկայնմտութիւն, անբաւելի քաղցրութիւն, փառատրելի հեզութիւն : Որ միշտ յաղթիս 'ի զթուլթենէ և ոչ թշնամանիս, պարտիս յողորմութենէ և ոչ պարսաւիս, բռնադատիս 'ի մարդասիրութենէ և ոչ անպոռնիս, հարկիս 'ի բարութենէ, և ոչ հայհոյիս, ստիպիս 'ի սիրոյ և ոչ քամբասիս : Պաղատիս դարձին իմ առ քեզ և ոչ ձանձրանաս, արագես զկնի ապերասանիս և ոչ թանիս, ձայնես չտողիս և ոչ սրտմտիս, փութաս մեղկեղոյս և ոչ խափանիս : Եւ չարս ես բարի, առ ամենապարտս ես ներող, առ մեղաւորս ես քաւիչ, առ խաւարեալս ես լոյս, առ մահացեալս ես կեանք :

Գ. Եւ յս են զիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս անձառս և զարմանալիս : Եւսմ և ինձ թշուառացեղումն, օրհնեալ ամենապարգեւ, արի առ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետեւեալ ժամանեալ յանդորր հանդիստ անաշխատ կենաց : Խզեսցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի զերիզպանդեայ մահազրիստս պարփակութիւն դժոխազնեայ կապանացս, և լիյժ ինձ զհանգոյցս խեղդողականս ողեպահանջ սաստկութեանս, առաքելով զարժանաւորս մահու յաղատութիւնն վերին անանց բերկրութեանն, կենսաբեր և աստուածային քո բանիւդ : Մի տակաւ տակաւ ազգեսցես, և մի օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի ստուար ծանրութիւն բեռանցս մեղացս տիրեսցէ թիկանցս ազգերաց, և կոր-

ծանեալ զիս կորացուցէ հայել 'ի դժոխս, և ուժգնակի գոռոզ բռնութեամբ անպարապ հոգեւորական զինուն արարեալ՝ մահու ծառայեցուցէ : Եւ օգնեալ ինձ, բարի վշտակից, հեծութեան կարեացս մահու երկանց, առեալ յինէն զփայտ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին : Որով կառուցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեանն, պնդապէս հաւատով յուսոյն կարծրութեան ընդ քեզ բեւեռել անսայթաքելի : Եւ քեզ ընդ չօր չօգուովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտե սնս . ամէն :

Բ ԱՆ Ծ Թ .

Վ Երբեք յաւիտե իրեն հեծուլէն նստել անսայթաքելիս տղիս հողմանայ Բանի . Ի խորոյ սրբեց խոսս ընդ Եսայի-ժոյ :

Ե. Հաւատամ և վկայեմ մտաց զիտութեամբ 'ի քէն ազգեսցեալ ոգւոյս՝ իմաստիւ ուշիւս տեումն, զեղձալի են քեզ, բարերար, աղաչանք մեղաւորաց քան զինդուածս արդարոց : Օր մինն զպարտութիւն անձինն յայտնեալ շնորհիդ քո սպասէ . առ որ ծանուցեալ զընութեանս չափ, և մեծ կշտամբիչ աստէն համբարձեալ ինքնոգոր մարտակից նմին իսկ ինքեան և դառն դարովիչ և ծածկատես դատախազ : Իսկ միւսն յարդիւնս բարեացն իւրոց նայելով, յանձին հարեալ ձեռն վտահութեան, մոռանայ զսահման ընութեանն, և պարգեւաց քան ողորմութեան դիտեալ ակն ունի : Վասն որոյ առ մինն անթիւ են ստեղծուածք ճառից, որ զողորմութեանցդ քո փողով բարբառոյ ազդէ . իսկ առ միւսն լռեալ են քոյդ, անքնին ահաւոր և ամենախնամ, ամաչեմ ասել թէ և երկրաւորիս զործոց պատմութիւն դքոյդ յառաջեալ : Եւրդ արի տէր, և մի զօրացի քան

զբոյր՝ աջ հողեղինի . մի կշռեսցին ողորմութիւնք քո ընդ ջանից մարդկան :

Բ . Եւ արդ առողջքն անդամօք անկարօտք են բը-
ժըղիւթեան , և տեսանողականքն աչօք չունին պէտս ա-
ռաջնորդի , և փարթամքն ընչիւք ոչ դեզերին առ դուրս
լիոցն , և ամենայնիւ . յղիացեալքն ոչ սպասեն փշրանաց
սեղանոյ հացի , և սուրբքն վարուք ապէնիազ են ողոր-
մութեան : Եւ արդ ինձ գթասցիս ողորմել , բարձրեալ
երկնաւոր հզօր , ամենատխուր վարանեցելոյս : Վանզի
թէ էի իբրեւ զՅօբ , ասէի զանձն իմ իբրեւ զնա ար-
դար և անարատ . թէ էի իբրեւ զՍովսէս , ասէի վըս-
տահութեամբ զնորայն , ծանիցէ տէր զայնոսիկ որ
իւրն են : Եթէ էի իբրեւ զՎաւիթ , ասէի՝ արարի զի-
րաւունս և զարդարութիւն , և դարձեալ զմեծն քսն
զընութիւն մարմնոյ , զմեղս թէ տեսանէի ՚ի սրտի ի-
մում մի լուիցէ ինձ տէր : Թէ էի իբրեւ զԼըղիա , ա-
պէի զանձն իմ այր Աստուծոյ . թէ էի իբրեւ զԼըբե-
միա , դբոյք ճշմարտութիւն յանձն օրինակէի . թէ էի
իբրեւ զԼըգեկիա , պարծէի զբարւոքն և զիրաւացին՝ զը-
նացի առաջի քո արդարութեամբ : Թէ էի իբրեւ զՊաւ-
ղոս , ասէի զիս բնակարան ազգարան և ընդունարան
Աստուծոյ Բանին : Եւ ես անօրէնս ՚ի մէջ գիտութե
օրինացն , ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել
յարգանօք բանից իբրեւ զնոսս , և զբնաւին չարս որ-
պէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշատակել , այլ
և ոչ զամենուստ գոյից զբարեհոյակեալ անունդ հզօր՝
ամպարչտեալս լեզուաւ գովել : Իսկ դու առ ամենայն
հնարս զօրաւոր՝ մատոն ինձ ոգի փրկութեան , աջ պաշտ-
պանութեան , ձեռն այցելութեան , հրաման բարութե ,
լոյս ողորմութեան , բան նորոգութեան , պատճառ քա-
ւութեան , զաւազան կենաց օգնութեան : Օ ի դու ես
յոյս ապաւինուե , տէր Յիսուս Վրիստոս , օրհնեալ ընդ
հօր հոգովդ սրբով յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ա Ն Կ .

Ս Երաբն յաւելուած իրեն գեթուլեան նորն հակոյն ա-
նոյն աղէրս հարկանոց բանի . ՚ի խորոյ սրտից իսոյ ընդ
Արարածոյ :

Ը . Եւ արդ որպէս զի ոչ վայելէ օրհնարանութի
ի բերան մեղաւորի՝ ՚ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ
ուսայ , զիտրդ յաւելից կրկնել գնոյն զովութիւն աղա-
չաւորս բազմապատկառ , որ հանապազ ընդունիմ ա-
նէծս ՚ի սաղմոսիս բարեբաստութեան : Օ ի իբր երգե-
ցից ինձ վտանգս և արձանացուցից նախատինս , և ՚ի
մերկութեանս զրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից .
Օ իտրդ ընդ Գաւթի համարձակեցայց ասել , թէ զա-
տամունս մեղաւորաց փշրեսցես . զիտրդ դարձեալ , թէ
մի անօրէնք բնակեսցեն առաջի սչաց քոց . զիտրդ , թէ
դատ արա ինձ տէր ըստ արդարութեան քո , ըստ ան-
բժութեան իմոյ որ յիս . Օ իտրդ , թէ կատարեսցին
չարիք ՚ի վեոայ մեղաւորաց . զիտրդ , թէ խորտակեսցին
բազուկք մեղաւորի և չարի , և զայն որ զկնի : Օ իտրդ ,
թէ տեղասցէ ՚ի վերայ մեղաւորաց որողայթ հուր և ծը-
ծումբ . զիտրդ , թէ սատակէ տէր զըրթունս նենգաւորս
և զլեզուս մեծաբանս . զիտրդ , թէ փորձեցեր զտիրս
իմ և ոչ գտեր անիրաւութիւն : Օ իտրդ զաջորդն
սմին , թէ ես պահեցի զձանապարհս խիստս . զիտրդ
զեւան , թէ ես արդարութեամբ երեւեցայց երեսայ քոց .
զիտրդ , թէ և ես եղէց անրիծ ընդ նմա : Օ իտրդ ըն-
միւնս , թէ հատուցէ ինձ տէր ըստ արդարութեան ի-
մում և ըստ սրբութեան ձեռաց իմոց . զիտրդ անձամբ
ինձէն զատութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյն ,
թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ : Օ իտրդ ՚ի մէջ
նանրութեան , զամպարչտացն աթոռս բամբասեցից .

զիւրդ գերջանկին պարծանս թշուառացելուն կերպա-
 ւորեցից , թէ դատ արա ինձ , տէր , զի ես յանբժու թե
 իմում գնացի : Օ իւրդ օտարս 'ի բարեաց գիտողիդ
 գաղտնեաց արգահատեցից , թէ մի համարիր ընդ ամ-
 պարիշտս զանձն իմ . զիւրդ ես ինքն գողով զայլս անի-
 ծեցից , թէ սուր նոցա , տէր , զգործս նոցա , և 'ի
 կարգ բանիցն համարձակեցայց :

Բ . Վանդի թէ զյետինս բանիցն առաջնուքն աստա-
 նօր եղից , կրկին ծանրանոն ինձ ցաւք և յաճախեցեն
 գառնութիւնք : Բայց 'ի շեղջեցելոցն արտասուաց դոյզն
 մի չափեալ , բաւականացայց հանապազորդեան յանդի-
 մանութեամբ սաղմոսարանին ընտանի ձայնին , որ ըզ-
 պարտաւորեալս միշտ կշամբէ : Ըստ որս և սպառուած
 քառասներորդի իններորդի հատուածի բանի յանդիմա-
 նողի զիս գարշեցուցեալ , հանապազ խայտահակէ . իը-
 ցեալ զբերանս 'ի փառաբանութենէ , եղկելի զանձն իմ
 ցուցանէ . աստուածային ձայնին դատախազեալ , յա-
 կընկալութենէ կենաց քանէ , միանդամայն և վիրդս մա-
 հու ինձ՝ իբր 'ի պատշէ առաքէ : Վանդի թէ չար է ա-
 նէծս առնուլ յօտարէ , ապա անձամբ զանձն անիծանել
 կրկին չարաչար . իսկ եթէ չառնուլ նախատինք 'ի մեր-
 ձաւորաց օրէնք են , ապա 'ի տեսողէն հայել զայսոսիկ ,
 կրից արեան սաժանմունք , վիշաք աղէտից և խէթք մը-
 աաց , Բայց թէ առ խոնարհութեան անձին իւրում
 մատնեցի , ջնեալ և կշամբեալ անիծիւք 'ի լեզուէ
 իւրմէ , 'ի խոստովանեալ և յամենիշխան շրթանց բերա-
 նոյ վերնոյն օրհնեցի : Օ ի ճշգրտեալ թարգմանեաց
 զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ քանելով . սահ-
 մանան սիրոյ զպարտեացն արմատ կրճատեաց , ոչ տի-
 բեալ 'ի խորգաւանաց չարաբանողաց . ոչխար հօտին
 Վրիստոսի գտաւ բժշկեալ՝ զիմելով 'ի յաղն բուժիչ
 աղեացն արկածից , Բայց եւս անբաւական բարոյից է՝

ասուն կենդանեաց 'ի մէջ դաւարոց ծաղկածին վայրից
 կենաձիր բանից թմբուլութեամբ մտաց 'ի յարօսս մա-
 հու ճարակել :

Գ . Եւ արդ քանզի իմ է առակս վերջին կշամբո-
 զական , և առ իս ակնարկէ զգիպուածոցն չար պատահ-
 մունս , որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիզա-
 նողականս հրոյ տոջորման , հոսեալ 'ի յերկնուստ ըզ-
 դոյիւ գաղաթանս իմաստարանի բազմակիս : Վանդի
 զիւրդ 'ի յարդիւնս ինձ օգտից սաղմոսն եկեացէ , յոր-
 ժամ անպտուղ 'ի բազմերգութենէն լինիցիմ , ոչ նուա-
 գել հողուլ , ըստ թելագրելոյն Պաւղոսի : Օ իւրդ ընդ
 մարգարէին եւս զտէրունին խառնեցից մեծս մեղաւորաց՝
 նկունս պիտանեաց , ասել ընդ սրբօսն , թէ 'ի բաց կա-
 ցէք յինէն ամենեքին , որ գործէք զանօրէնութիւն :
 Օ իւրդ ոչ ունելով 'ի բազմացն պատուիրանաց կատա-
 րեալ՝ շնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջանկին , որ
 նախ ինքն արար զոր մեղ կանոնեաց , թէ քանզի ծա-
 ոայս քո պահեցի զայս . և որ զհետն դան ասացեալ-
 քնն : Օ իւրդ թափուրս 'ի լրութենէ իմաստից կենաց
 ընդ երկիւղածս տեսոն օրհնեցից . զիւրդ ընդ մեծին
 մաղթանաց զիմս յօգեցից , թէ զմին խնդրեցի 'ի տեսա-
 նէ՝ զտեսիլ վայելչութեան նորա և զհրամանատրութիւն
 տաճարի նորա : Օ իւրդ 'ի հրաժարելին ինձ ձեռնամը-
 խեցից , յորժամ լսեմ , թէ ուղղոյ վայել է օրհնութի-
 զիւրդ չթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով ըզ-
 կնի յողովից առեալն , թէ երեսք տեսոն 'ի վերայ չա-
 րագործաց սատակել զիշատակս նոցա յերկրէ . զիւրդ
 զմիւսն դարձեալ , թէ չարք վաղվաղակի սատակեցին :
 Օ իւրդ զկերպարանացն իմ նմանութիւն , թէ բազուկք
 ամպարշտաց խորտակեցին . զիւրդ սատակման ինձ
 պաղատեցայց , թէ ահա մեղաւորք կորիցեն , զիւրդ ըզ-
 քազմայածեան լեզուս 'ի յօրհնեալն բան միեցից , թէ

ասացի պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուա իմով, Օխարդ փշովք մեղաց հեղձեալս զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութեան իմում ընկալար. զիարդ ես մեղաւոր կրկին պատժաւոր զճանպուհակեցսն դարովեցից ապրել 'ի նոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենդաւորէ փրկեալ զիս, Աստուած :

Դ. Օխարդ իբր ոչ կուպաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ Դաւթի, մի թէ մոռացեալ իցէ մեր զանուն Աստուծոյ, կամ ձըգեալ զձեռս 'ի մաղթանս օտար Աստուածոց : Քանզի որ 'ի մեզս դարշութեան խոնարհեցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն յաւսնականացն ախտարծարծիցն սրունկապատիր պատկերացն կերպարան՝ Աստարտայ և Քամովայ և Մեղքոմայ արուարձանի և Թարսհասայ թարմատարի, ընդ զաղոտեացն կանացեաց՝ իշանդամիցն պատկառանք անվերարկու ծանակութիւնք : Իբր ոչ պատկառեցից սովմբ ասել ընդ նահատակին, որ զայս դիմադրաւութիւն առ բարին ունէր միշտ, թէ վասն քո մեռանիմբ զօրհանապազ, և որ 'ի կարգին է սորին սաղմոս : Իբր յիմարս յարս և վատթարս ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեցէ զեմաստութիւն և սիրտս զճանձար : Իբր մարդելոյզ կերպարանաւոր զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից, Իբր զկրկին երկրորդեալսն մեծանունն բարութիս, թէ հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց : Օխարդ ունօղս անբաւից մեղաց զարդարոյն առեալ կարգացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք. առանց մեղաց ընթացայ և ուզիզ եղէ : Օխարդ զիս ինքն մատնեցից կորստեան յասին զայս բան, թէ մի ողորմիր դործողացն զանօրէնութիւն : Օխարդ, թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց Աստուծոյ : Օխարդ զրգեալս ապականացու փափկութեամբ՝

տահմանեցից զանմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ. և զազգակիցս նորին ընդ նոյն, թէ ես 'ի նեղել նոցա քործ զգեհուի, և իբրեւ ըզսպաւոր և զսրտում խոնարհ առնէի : Որպէս հանդարտեցից զնմանայն իմ պատրժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեանն Աստուծոյ ոչ սպանեցի, և արբցն 'ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի : Իբր և զեւսն առ սմին, թէ զամենայն եղջերս մեղաւորաց փշրեցես : Օխարդ զայերախտութիւնն Զակորայ 'ի ճառ առեալ հենգնեցից, որ ընդ ստուերին զճըշմարտութիւն ընկալեալ, մոռացայ ընդ նոսին նոցին թրութիւն զերախտին Քրիստոսի աստուածայնութիւնն արուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զօրավարութիւնն Սովսէսի ցպոյն սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր աէրունական անտեսութեանն : Օխարդ զյարուցելոցն 'ի վերայ դիւաց զաղէտս ցուցից, իբր նոքա զօտարացելից խուժագուժ ազգացն ասելով, թէ արկին զգիակունս բարեացն որ 'ի մեզ՝ կուր փնասակարացն թօշոց, այս է՝ այսոցն օգայնոց : Որպէս զանկեալ զսերմն բանին 'ի ճանապարհին, և զմաբանեալ զկամս ընդ շարին՝ սուրբ անուանեցից. իբր և զնմանակիցն առ 'ի նոյն շաւիղ շարին պատերազմի գուպար դաղտնամարտ մտացս օցտելոց, զոր ես զօրացուցի գործակցեալ հնարից բանսարկուին : Եւ ոչ ունիմ աղերսել, թէ մի լուր և մի դարեր, Աստուած. և խոնարհեցան 'ի վերայ սրբոց քոց և ասացին, զոր 'ի կարգէ սաղմոսիս է աղօթել : Քանզի յոյժ պատեհալոյն է առնուլ զայստիկ 'ի վերայ բռնութեան մոլեկան դիւաց միշտ ճակատելոց առ ներկայիս խոզութիւն, և ընդ նոսին նոցին մշակաց :

Ե. Զորոց դու, Տէր Քրիստոս Որդի բարձրեալ մեծիդ Աստուծոյ, պահեցես և ամրացուցես երկնային զօրուդ շրջափակութեամբ՝ յամենայն ընթացից խաբողին՝

Տողմնց խաչիւ պլուսոյ զմեզ պաշտպանեալ . որ զի թէ
 և գտցին յիս անօրէնութիւնք բազմօրինակք , այլ ոչ
 հայհոյութիւնք : Որ ոչ հանդեպար 'ի կորուստ նմանեացն
 իմոց ամպարշտելոց , այլ ամենադորով թախանձամբ
 ընդ եղծման ջրօղոզն զազրագործաց կրկին վշտացար ,
 տաղտկալի զմահու նոցա զիպուածն քեզ գրեցեր , ա-
 սելով զզարմանալիսն լսողաց բան , ածեալ զմտաւ ոչ
 ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան :
 Եւ միսթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմաք-
 րից և պարտաւորաց սատակման . որ երբեմն առակաւ
 զգմենւոյն զանխայելն 'ի կործանելիսն ցուցեր , ողորմած .
 և առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վտանգեալ ընդ
 յամրանալ անձրեւին առ ուրացողացն դարման : Ըն-
 ճառելիս ցուցեր բարութեան տեսակս յիշատակաց սո-
 նելիս' 'ի վերջին աւուրս . քեւ 'ի ձեան Ըռաքելոցն քոյ'
 ողջոյն հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղց-
 րաճաշակս հրամայեցեր : Ըհա և յիս ցօղեա , կենդա-
 նի , զհայրենի զթութեանցդ զսէր , զի և ես փրկեցայց
 քաւեալ ամենառատ քո այցելութեամբդ : Եւ քեզ ընդ
 հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս . ամէն :

Բ Ը Ն Կ Ը .

Վ Էրստին յաւելուած իրեն հեծու-լեւան Կարին հսկողն առ-
 նոյն տղերս հաղլեանոց Բանի . 'ի խորոյ սրբոյն խօսք լինող
 Ըստուծոյ :

Ը . Եւ ընդէր է ինձ բնաւն որ 'ի սաղմոսին այն-
 պիտեաց բանիցն 'ի կիր արկանել , որ 'ի նախատինս
 միանգամայն և 'ի նզովս ինձ յարակային , հանապազ
 երդիլ իմովս տաւօք : Քանզի զիւրդ արգելք զշուք
 երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից' ասելով
 ընդ նմին , թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ :

Օ իւրդ զկարդադրութիւնս տանցն 'ի յայմանէ զկնի
 թուելոցն զարհուրեցուցաց ընդակից կայից կանոնաց ու-
 րինաւորին՝ զինուորին և թագաւորին և մարմնական հրա-
 մանատուին , որք և երկնայնոցն են համբուրելիք ասելով ,
 ոչ յուսահատ եղէց 'ի կենաց պատմօջ աւետեացս և նու-
 րոյս աշակիրտ անմասն յամենուստ բարեկարգութեանց :
 Օ իւրդ ըստ իրաւախորհ արդարոյն , ընդ դէմ մեղա-
 ւորացն մահու զինեցայց առակաւ առաւօտին 'ի սկիզան
 արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ , որ և ոչ
 զանդամ մարմնոյս զանեալ խրատեցի : Օ իւրդ մաս-
 նակցեալ մեծին արութեան՝ սատակիցից 'ի քաղաքի
 տեանն զանօրինեալսն , որ և ոչ զուսեալ բիծս հոգ-
 ւոյս իմոյ մեռուցի : Օ իւրդ սանցից զբողին չեւ յայա-
 նեցելոցն , թէ զմոխիր որպէս հաց կերայ : Օ իւրդ
 որ ոչ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի սղաոր ընդ
 յստակ արտօսք աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին , թէ
 զըմպելիս իմ արտասուօք խառնեցի , և արտասուօք ի-
 մովք զանկողինս իմ թացի : Օ իւր ինձ գրեցից մեղօք
 մահացեալս , յորժամ սիրօն Ըստուծոյ 'ի բողբ սրաէ
 զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի , թէ մեղաք մեք
 ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք , և որ 'ի վախ-
 ճանն յանդի սաղմոս իրաւամբք առ իս , քան առ իս-
 րայէլ : Որովք յարցեցայց դասիլ ընդ բարինն , յոր-
 ժամ մարդկային հնարից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ
 յիս դտաւ , 'ի գարշութենէ կերակրոց 'ի մահ սովե-
 ցեալք և յաճախութենէ ճգանց 'ի հոգւոց նուաղեալք ,
 ըստ խտրութեան ինքնօրէն կրօնից հրէից և հեթանո-
 սաց : Օ իւրդ արդարութիւն իմ մնայ յաւիտեանս ,
 զոր ոչ բնաւ իսկ կատարեցի :

Բ . Եւ զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանիս , 'ի
 համառօտել զսոյն փութացայց : Օ ինչ ունիմ ասել
 'ի տեղե բանիցն՝ զոր աստուածաշունչ ձայնն նուագեաց

օրհնորդոյն Ղաւթի, թէ բողոքով սրտիւ իմով խնդրեցի զքեզ : Օ՛խարդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յամենայն ճանապարհէ չարեաց արդիւ զօտս իմ : Ի՛բր ընդ եգեայս և զայն մատուցից, թէ ՚ի օրտի իմում թաքուցի զբանս քո, որպէս զի մի մեղաց քեզ : Ա՛րպէս զունայնութեանցս իբր զլրութեանց ճառեցից ընդ պարս մաքրոց, թէ ՚ի պատուիրանաց քոց իմացեալ, ատեցի զամենայն ճանապարհ չարաց : Օ՛խարդ զհեղոյն ճշմարտութիւն իմում ստութեանս մշտնջենական երգմնահարութիւն կարգեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երգուայ զոր հաստատեցի պահել զգատաստանս արդարութեան քոյ : Օ՛խարդ ինձ հրեշտակ մահադոյժ անհրաժեշտ վճռի՛ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն : Օ՛խարդ չարս խկապէս՝ զբարեացն զրեցից, որք ՚ի տեառնէ առնուն զնոյն հատուցունմ՝ զայս տուն յեղեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից : Օ՛խարդ զհամառօտն փոխատրութիւն անաչառութեան՝ վրիպեցիցս ինձ սահմանեցից, թէ զթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանորէնութիւն : Օ՛խարդ զաստուածարդեստին պանծանս ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել ըզնորայնս, թէ տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ և ոչ ըզբօսան աչք իմ : և որ յետ սորին պատմին ասացեալքն, Օ՛խարդ զանձառն քան զմարմին բան՝ ՚ի ցոյցս առից քաջալրութեան վհատելոց ես գանձ գեհնին, ասել ընդ օծեալն Աստուծոյ հոգւովն, թէ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենդութիւն ՚ի լեզուի իմում, ՚ի ըսկզմաւորն նախաձայնեալ ռազմոսին մինչեւ ՚ի լրումն աւարտման բանիս : Օ՛խարդ գասակցութեան դժնէից մարդոց համարան այրս մահու և որդիս սատակման բարբառիմ զբարեշնորհին, ոչ ահա զառեղիս քո, տէր, ատեցի, և զմնացուածն սորին կարգի : Օ՛խարդ մեծան

վատահութեամբ տօնելի վեհին, անձն իմ և դու, աշխար աշխարհի, զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պսակելոյն, թէ փորձեալ զիս, տէր, և տես, թէ իցեն անօրէնութիւնք ՚ի ձեռս իմ, և ըզյաւելուածն որ զհետ սորին : Օ՛խարդ ես զոլով՝ և յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոյն յԱստուած ձայնակցեալ, պահեալ զիս, տէր, ՚ի ձեռաց մեղաւորի և ՚ի մարդոյ չարէ : Օ՛խարդ համբարձայց ընդ փառաւրեալն մաղթել Աստուծոյ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց : Օ՛խարդ իբր հանդիսացեալ ընդ ճգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով՝ զուաւելեալն քան զօրինակ արեքս աղօթից, թէ ինձ սպասեցեն արգարք քո մինչեւ հատուցես ինձ :

Գ. Բարեբանեալ է և այս իմաստ հոգեւոր և տէրունի զործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց, յոր ժամ զամենայն արհամարհիցէ և զսկզբնապատճառն եղելոց միայն ընտրիցէ ասելով, թէ երանի ժողովրդեան, որոյ տէր Աստուած է նոցա : Եւ թէ և այս բարձրութիւնը հիւսիս և զգուշական համարձակութիւն լցեալ երանութիւն, թէ սուրբք քո օրհնեցեն զքեզ : Եւ զայս ընտանութիւն մերձաւորական հոգեւոր հաղորդութեան՝ յԱստուած յուսալ և ՚ի նոյն արձանանալ բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր : Եւ զկարգ բանին կատարէ, մինչեւ զողջալին և զուարճալին ազգեսցէ, թէ պահէ տէր զամենեսեան, որ սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ տէր : Ի զլուիս լրման զրոց նուազարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վերջին հատուցման արգարոց և մեղաւորաց : Օ՛ուրակցորդ ես միմեանց և զինի երկեցեալքս, զի թէ ընդունի զհեզ տէր և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր, ապա ինձ սքան

եղևութիւնք կան առաջի օրսկ եթէ հաճի տէր ընդ ժողովուրդ սուրբ, և բարձր ատնէ գհեղս 'ի փրկութեան, ապա հերքեսս 'ի բարեմանութեանց ես ուր հաստատեցայց: Իսկ եթէ օրհնելի է Աստուած 'ի սուրբս նորա սիրապէս, ապա օտարս ես 'ի մարտութեանց ընդ ծրա դասեցայց օրսկ եթէ 'ի կանխիրդիցն մերձ այսր եզից յիշատակարան ինձ կշտամբութեան, թէ սիւեցեք զտէր սուրբք նորա, զի սուղութիւն խնդրէ տէր' և կրկին հատուցանէ ամբարտաւանիցն, ապա յորում զընդի ես դտայց գերեալս 'ի դաղտնեաց գտօղին շարեաց օրանդի զոր օրինակ տատանին տաղնապաւ տիրել սընկոց եղևին ծառոց շարժեաք 'ի հողմոց ուժղին բսխելոց հօսեալք 'ի խմարհ, այնպէս ջանայաւ ջարդել զընթացից իմոց վերարձակութեան քաջաբեր ուղէշօ՝ զյարգարեալս ձեռամբ անեղ մշակիդ: Օրո հաստատեցես արմատացուցեալ վերստին դարձեալ նոր պրազաւորութեամբ անապականաւ, յանդաստան կենաց խրեամոց քոց կամացդ, ամենապարգիւ թագաւոր Վրիստաս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԸՆ ՎԲ.

Վերստին յաւիտեանս կրկին հիշողութեան նորին հասնի օրոցն արդեոս հարկանոց բանի. 'ի խորոց սրբայ խոս ընդ Աստուծոյ:

Բ. Այլ արդ ընդէր ոչ 'ի վերադրեցեալն սաղմոս նախաճառական և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից օրանդի զինչ վայելումն իցէ 'ի կերակրոյն, և թէ անդգայեալ ցատուք ուտիցեմ. և կամ զըր շահ սաղմոսն ունիցի, և թէ ոչ 'ի միտ առնուցում: Վանդի նըզովեմ զիս ինքն 'ի նոսին' և ոչ իմանամ, լուսացեալ լինիմ և ոչ պայծառանամ, արեւու ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղր ճաշակեմ' և ոչ քաղցրանամ, օրանդի ընանիմ և ոչ բժշկիմ, միշտ կանխեմ 'ի նոյն և դատարկ երեւիմ, հանապաղ ձաղիմ և ոչ երբեք խրատեմ, ողբիմ դարձեալ և ոչ զյաստանամ:

Բ. Առգրեւ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ետմաշիմ 'ի նոսին, ըստ մարգարէին որ 'ի դիմաց պարտաւորացն բանի, և տէրունական առակին հին տկոցն և նոր գինուոյն: Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միտսին, ըստ Աստուծոյ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի: Վանդի ասեմ զսպրնսն, թէ հատուցանէ այնոցիկ' որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կողորդեմ սմին զընթացուածն, թէ օր տեսան 'ի վերայ հարստից և ամբարտաւանից: Ասեմ, թէ օտար եզին մեղաւորք 'ի մերէ, և որ ինչ կարգ օրին գուցանէ. յարեմ առ ամեն, թէ կործանեցին անօրէնք երկրի, և ամպարիշտն բարձրի յերկրէ, և անկուսք մարտիցին 'ի նմանէ: Այլք ինձ կարգայեք առ ձայն, թէ զոր օրինակ վառի եղէցն 'ի կայծականց հրոյ, այնդէս արեւոյն մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն: Այլք' առ սաղմոսն, թէ արկիցես 'ի վերայ նոցա կայծակունս հոյ: Այնպիս պատեցէք 'ի բանս աստուածեան վճարն մարգարէին տղգեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սակ կերիցէ զնեզ: Առձեցարուք առ սաղմոսն, թէ մահ հիւսեցէ զնոսս: Այլն արտասուս ողորհ հօտալումք ընդ հեղութիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեսն ընդ Խորայեի և ինձ ասացէ բանի սաղմոսն, թէ ժողովուրդք իմ ոչ լուսաւ ձայնի իմում. աւաղ կարգայեք թշուստայելոսս, յորժամ այլ մարգարէ գոյն փոյգէ, վայ նոցս զի վաղեցին զինեւ: Բարեաւ փողեցէ 'ի սիրտ մշկեալ նոր ազարակի, յորժամ տեսանոլն Աստուծոյ ամաչեցուցեալ զիս կշտամբեցէ ընդ սպարասան տանն Յակոբայ, անէք բարհամարհոսք, զարմացարուք և եղձարուք:

Բ. Առգրեւ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ետմաշիմ 'ի նոսին, ըստ մարգարէին որ 'ի դիմաց պարտաւորացն բանի, և տէրունական առակին հին տկոցն և նոր գինուոյն: Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միտսին, ըստ Աստուծոյ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի: Վանդի ասեմ զսպրնսն, թէ հատուցանէ այնոցիկ' որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կողորդեմ սմին զընթացուածն, թէ օր տեսան 'ի վերայ հարստից և ամբարտաւանից: Ասեմ, թէ օտար եզին մեղաւորք 'ի մերէ, և որ ինչ կարգ օրին գուցանէ. յարեմ առ ամեն, թէ կործանեցին անօրէնք երկրի, և ամպարիշտն բարձրի յերկրէ, և անկուսք մարտիցին 'ի նմանէ: Այլք ինձ կարգայեք առ ձայն, թէ զոր օրինակ վառի եղէցն 'ի կայծականց հրոյ, այնդէս արեւոյն մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն: Այլք' առ սաղմոսն, թէ արկիցես 'ի վերայ նոցա կայծակունս հոյ: Այնպիս պատեցէք 'ի բանս աստուածեան վճարն մարգարէին տղգեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սակ կերիցէ զնեզ: Առձեցարուք առ սաղմոսն, թէ մահ հիւսեցէ զնոսս: Այլն արտասուս ողորհ հօտալումք ընդ հեղութիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեսն ընդ Խորայեի և ինձ ասացէ բանի սաղմոսն, թէ ժողովուրդք իմ ոչ լուսաւ ձայնի իմում. աւաղ կարգայեք թշուստայելոսս, յորժամ այլ մարգարէ գոյն փոյգէ, վայ նոցս զի վաղեցին զինեւ: Բարեաւ փողեցէ 'ի սիրտ մշկեալ նոր ազարակի, յորժամ տեսանոլն Աստուծոյ ամաչեցուցեալ զիս կշտամբեցէ ընդ սպարասան տանն Յակոբայ, անէք բարհամարհոսք, զարմացարուք և եղձարուք:

Գ. Այլ դարձուցես և ամփոփեսցես զբարձրացեալ զտուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց 'ի սարտուցելոյս յերեսաց մեծիդ, և խնամովք աջողդ բարեբաշխութեան առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարզեւատրեսցես քո աղաչողին: Աւ քեզ փառք յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի խոնարհ, 'ի սահմանս բոլոր ազանց և յամենայն յաւիտեանս. ամէն:

Բ Ա Ն Կ Գ .

Մ Երբին յաւելումս իրկն հեծումն անորն (Լս) սիս ասանայն տղերս հարկնայ Բան: Ի խորոյ որոնց Եստ ընդ Աստուծոյ:

Բ. Բարերար և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ միայն թագաւոր, ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբանեալ աէր ամենայնի, Որդի Աստուծոյ կենդանոյ. անպատճառդ միշտ իմում կորստեան, որ ամենեին անփորձ ես 'ի չարեաց, որ ոչ կամիս զմահ մեղաւորի: Որ փրկութիւն են 'ի քոց կամաց ընծայեցեալ, որ դարձուցանես զմերիկ մեղաց 'ի յօդ քաւութեան, որ զհուր բարկութեան յանձրեւ փոխարկես: Որ զյետնեալ զկինն 'ի բարձաց' կրկնակի գոյիւ նահանջեր երկեակ բնութիւն 'ի նոյն արձանի, ոչ իսկապէս ընդ անպարտն, և ոչ համայն ընդ պատժաւորսն: Որ զլուծութիւն ծովուն սահանաց իբր զկարկառս քարանց կառուցեալ յեղանակեցեր: Որ զկարծրանիւթ վէմն անապատին 'ի վեժակս վտակաց հոսեալ բղխեցեր: Որ զՅորդանանու ջրոյն սրաշարժ վայրեկութիւն՝ հրաշաւոր անդրադարձուք՝ 'ի յետնորդս հեթանոսաց լուսչումն աւազանին 'ի թիկունս առաքեցեր: Որ զպատուաստեալ պարիսպն Արիֆովի, յօրինակ կործանման բռնութեանն Սատանայի՝ իբր զթեթեւութիւն յարդի ցնդեցեր: Որ զՊասակար

Ջուր նորին 'ի յառակ այլայլութեան առ 'ի բարին փոխարկութեան՝ քանանացւոյն փրկութեան խորհրդական աղին համեմալ անուշեցեր: Որ զՄեռային դառնութիւն իբր զմտաց անհաւանութիւն, կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ պիտանի արարեր: Որ զսոսեան 'ի դետոյն 'ի դժգորութիւն անսահմանդ քո հրամանի անորակիդ գունակութեան՝ 'ի նոր երանգ բոսորային մածեր աւրին 'ի ցամաքի: Որ զանկենդան ցուպ դաւազանին, 'ի կերպառութիւն առ 'ի զքոյդ մերովս նկարագրիլ, այլ և յօտարազնիցն ընտրութիւն, 'ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապի նմանեալ ցուցեր: Որ զերջանիկ ձեռն աջոյն Մովսիսի, 'ի ցոյցս տեսութեան ապագայիցս հրաշք մարդեղութեանդ քո, բարձրեալ, և քեւ աստաւոր մարմնոյս մարուր լինելոյ անփոփոխ փոխաարութեամբ՝ կրկին գուշակեցեր: Որ յայսբանեացս շրջադրութիւն բարեխնամապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց կորստականաց նշանակեցեր, օրհնեալ ամենագութ:

Բ. Որ բուսուցանես յերկրէ դալարի զմեռեալն յանշունչականէն, որ զանշարժն իբր զնթագող կառախարես: Որ յանարգ արգանդէ կոչես քեզ պատկերակիցս, որ տաս պատանեկաց տղօրիս ըմբռնելիս, որ յայտս մաքուրըս հերս ընծայես, որ զսաղարթ սեւութեան վարսից 'ի ձեան կերպարան զարմանագործես, ցուցեալ թէ առ ամենայն սահման հեռաւորական յաղթող ես, հզօր: Որ փոփոխես զըթունս բնաւորականս, ըստ բանին (Յորայ, 'ի կամս հաւատարիմս: Որ սասանես զերկիր և զսիւնս նորին 'ի հիմանց, նշանակեալ հաստուածին գոյիւ՝ թէ դու միայն մնաս անկորնչելի: Որ հողովես զտարերս իբրեւ զանցաւորս, և դարձեալ 'ի նոյնն կապես իբրեւ զարակայս, յայտ արարեալ՝ թէ և առ մեղաց բազմութիւն գիւրապէս ունել կամ թողուլ՝ դոյնպէս զօրաւոր իցես:

Ար գարուսեկին անգղայ էութիւն իրր երասանաւ իմն
 դաստիարակես, երեւեցուցեալ այն ի ի կեցոյցի. թէ
 զանութեանս չար գիմեցումն յորժամ և կամիս հանդարտ
 աննիցես: Ար զանբարբառ բոլորակ տանին կարգես ու
 նայես և պատարունս. յուստորեայ զպատճառն առ ա
 լետիս անսողայ՝ թէ ՚ի նուագութեան բարեաց զգար
 ատարս մարմին գու ածես ՚ի լսութիւն առաջնաստեղծ
 հարստութեանն: Ար զպատկերս անխօս ասանդայ իր
 զգասակս գոյզն հօտց տրոհես և ժողովես, յոյս իմն
 կենաց առ այս խորհրդարեւեալ, բաղցրահայեաց ան
 սութիւն, թէ և անաղաչատրաց լիզուաց կարողպպես
 բաւես ողորմել: Ար ՚ի մջ մահու և կենաց շախզ
 վտասհոյութեան ուղղես ՚ի ծովու, վկայութիւն եղեալ
 հաւաստի, թէ և յանկատարան վայրի քն պաշտ
 պանինք անդայթաղելի: Ար իրր զՋուր կամտայից ՚ի
 հրոյեռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ բանիւ
 կամաց քոյ խափուցանես: Ար հայիս յերկիր և առ
 տանես զսա, զի անբանին գտատորս զգաստացուցա
 նես: Ար իրր զակաս մի անձուկ նախ ՚ի մերայ շար
 ժութեան արեայ՝ զանրաւ թանրութիւնս գեանորս զզոր
 դես, որով ծանուցեալ ինիս ամենից հաստատածոյ՝ թէ
 իցես աներկբայից: Ար ՚ի բան քո զօրեց հիմնուցեալ
 ունիս զամենայն: Ար սերմանես զարատշուցեալ մար
 մինս յերկրի, և զնոյն անկորուստ պահեալ կրկին կեն
 զանածնես: Ար ապականաչուս աւանդեալ անեղծս ստա
 նաս: Ար ընդ մահացու նիւթոյս՝ գոշտարդ կենաց խառ
 նես: Ար հրամանաւ ակարկութեան ՚ի խուն վարկենի
 կազմեցե՛ր՝ պատրաստ կոչուցիք զանգարցութիւն ամենից
 եղանակաց: Վո է զօրութիւն և կարողութիւն, որ շրջա
 նակիս զժամանակս ամաց հոլովման ատուրց յոյս նմանութի
 բարեպաանհ սեսողու: Ար կարգաս զանմուտնչան իրրե
 զկենդանիս: Ար ազդես միայն, և նոքա ընթանան: Ար

միայն հենուս անկանես անձառ արուեստիւ հնարագիտուե
 մէջ և առաւօտ: Ար յիտ նախակաող յօրի ուածոյն ա
 ռաջնաստեղծ լին ութեանն, արարեր զփառատրեանս
 մեծամեծս հրաշակեղաբիցն հանդիսից, բաս զրոյն եջան
 կութեան կանխահիպոն զարեացման, այս իմն գոյսցուի
 սօնիկի անտակի անեղծ աշխարհագործութեան ևս քն
 զայն ՚ի մարգանադ բո, որոց ոչ գոյ թիւ:

Ք. Ար ահա զմեան մեր քեզ կրեցիք, որ զարդա
 րութիւնն քո մեզ շնորհեցիք, որ ընդ քեզ կրեցիք ըզ
 հաշտութեան մերում՝ փրկանակ: Ար ոչ երբէք քանիս
 յողորմութեանէ, զորձ՝ զամպարշաբար ՚ի պաշտօն բա
 րի երկիւղի. զթ՝բեալս ՚ի զգաստութիւն արթնութե
 սրաի. զանմարտս ՚ի սրբութիւն պայծառութեան կեր
 պարանի. զտողմորիծս յանրութիւն հանգաբաակն
 սուրբ պատկերի: Օրեկեալս յողջութիւն, որ ՚ի զիպմանց
 ոչ խորակի. զայցիաս ՚ի խնդութիւն զուարթութեան
 անտխրի. զյուսահաստեսս ՚ի սէր միատրիչ անբակե
 լի. զամաշիցեալս ՚ի վտասհոյութիւն հաստատութեան ան
 շարժի: Օխաւարեալս ՚ի լոյս երանութեան անմկնե
 լի. զմահու գերեալս ՚ի կեանս որ ընդ եղծմամբ ոչ
 անկանի: Օի փառատրեացի անուն քո, իխուս, իոս
 սովանեալ յամենայնի ընդ Հօր և ընդ Հօգուոյ սրբոյ
 ՚ի բարձունս երկի և ՚ի ստորես երկրի և ՚ի քնակլչս
 նոցա, յախտեանս յախտենից. ամէն:

ԲՆՆ ԿԳ.

Վերջումն յաւելուած ինչն հեծուելուն նորուն ևսկտի առ
 նոյն արեւոս հաղթանայ Բանի. ՚ի ետրոց սրբից իտա ընդ
 Ըստոուծոյ:

Ը. Եւ արդ առ անայն բան յամենայնի ուղիղ
 ես, Ըստուած, իրաւամբք դատիս, արդարութեամբ

կշռես , ճշմարտութեամբ չափես , օրհնութեամբ հետեւիս , բարւոք ընթանաս : Ստուգութիւն սիրես , յստակութիւն կամես , լուսաւորութիւն համբուրես , փորձիւ յանդիմանես , երկայնմտութեամբ քննես : Այլ ունիս նենգութիւն և ոչ գոռոզութիւն , այլ ամենեւին հեղուութիւն , հանդարտութիւն և ողորմութիւն :

Բ . Ըրգարայար վերին իմաստութիւն անաղայլական Հօրդ հանձարոյ՝ կրկին վկայեալ անդեղ զովեստիւ յորդերեցելոյն շնորհօք , ըստ բանին սրբութեան՝ որ աւելաարանան կենաց ՚ի քէն ընկալաք . որ ոչ ՚ի կոծելն ողբացի , և ոչ ՚ի փողէն կաքաւեցի : Ասացեր անօրինիս՝ թէ մի անօրինիր , և ես ՚ի նոյն չարիս պնդեցայ . մեղաւորիս՝ թէ մի ամբառնար եղջեր ՚ի բարձունս , և ես զընդդէմն քեզ զործեցի : Եւ ոչ զգացի երբէք զառածեալս , թէ ՚ի ձեռին քո են եղջերք արքայութեան հըպարտից ամբարձելոց , խոնարհեցուցանել և բարձրացուցանել , ըստ Ամբակումայ , Դաւթի և Օլաբարիայ : Օրհնութիւն ինձ կամեցար , ողորմած , և ես անիծեալս մեծ ատարազութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մասն , սիրելի բարկութիւն և ոչ բարութիւն , շօշափեցի ըստ գրոյն զխաւար և ոչ զլոյս , կենդանի ձայնիդ քո , զըթած , աղառումս պատասխանեցի : Օրորնն անուհս սացեր բանիւ Ասայեայ , և զհուրն անշէջ և զկշտամբութիւնն անվախձան և զտեղին յաւիտենից և զօրինակ նմին սոսկալի , և ես ոչ իմացայ ըստ սաղմոսողին և ոչ մտածեցի , այլ ՚ի մտայլ մտաւորական կուրութեան զընայի : Յուցեր մարգարէիւն , թէ զօրհնութիւն ստացի որ զօրէնս քնէ , և ես համառօտել զնոյն փութայայ , Արձան հոգեւոր վիժի զրեալ մատամբ քո , Տէր Հիսուս Քրիստոս , զԴաւիթ իւրովքն բանիւք կանգնեցեր , ասելովն ինքեան ընտրութեամբն առ սոյն , թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ յաւիտեան . անդրադարձուք

բանին միջնորդեալ զկրկին հասաստութիւնն , թէ և յաւիտեանս յաւիտենից : Ընդ որս և զտրին նմանիս պարծանաց առ իմն խրախոյս , և ոչ զկծեցայ . ճեպեցայ ՚ի տօնս Բահաղու և ոչ Աստուծոյ , ՚ի յերկուս հետս երկմտութեան կրկին կաղացի կասեալ ՚ի բարեաց , ըստ երգիծանելոյն Հեղեոս : Անիմ՝ զՄովսէս իւրովքն օրինակօք եկեալ ՚ի մեռելոց , և զտառս մարգարէիցն զրեալ ՚ի յողի , և զմատեանս Առաքելոցն ընդ մտացս մտան յարուցեալ ՚ի թաղմանէ անթիւ ննջեցելովք : Եւ անհաւատագոյն քան զՏնայեսին եղապրակցութիւնս այնր միծատան , որ է առակ իմն յարմարական , նմանեալ զգայականացն մասանց անողորմիցն յղփացելոց , մնացի իբրեւ զսալ դարբնաց անընդոստ յամառեալ քարայեալ սրտիւ , որպէս օրինակն է Բելիարայ , և ոչ ապաշխարեցի :

Գ . Այլ ազգեալ վերստին առ սոյն կերպարան լըքեալ կրկին ողորմութիւն , բարի ահաւոր մարգասէր , ինամակալ կենդանի սուրբ լուսաւոր և անվախձան թաղաւոր , զօրութեամբ պանծալի խաչիդ խորհրդոյ , ՚ի կարծրացեալս մեղօք անբեր անգաստան երկամանցս յիմարութեան և անպտուղ սրտիս լըութեան : Օի առեալ նպաստ օժանդակութեան ՚ի զթութեանէ կամաց ամենակալիդ , որոտացէ բղխեացէ հոգիս , ընծայեալ աչաց վշտագնեցելոյս վտակս արտասուաց արբուցանողաց ինձ ՚ի փրկութիւն և ՚ի մաքրութիւն , և քեզ ՚ի հաճութիւն ընդունելութեան , ամենապարգեւ տէրդ բոլորից , փառաւորեալդ յաւիտենից . ամէն .

Բ Ը Ն Կ Ն .

Վ Ե ր ս ու ղ ի ն յ ա ՝ Ե լ յ ա ՝ Թ ի ղ ի ն Կ Ե ծ ա ՝ Ե ր Ե ա ն Կ ար ղ ի ն Ը ն ի պ ղ ի ու
ն ոյ ն ու ղ ի ն ճ ա ղ ի ն ա ն ա յ Ե ա ն ի . Ի Ե ու ղ ի ն ս ր ղ ի ն ի ս ա ս Ը ն ու
Ը ս ու ղ ի ն ծ ա յ :

Ը . Եւ արդ ես նախնիս ամպարշտաց , զլուխս մե-
ղաւորաց , պետս անիրաւաց , առաջինս պարտաւորաց ,
պատկերս յանցաւորաց , ատտիկեցիս ըստ վատթարութե՛
այլ ոչ ըստ բարեբաստութեան : Ը հա զանձառիցն իմոց
ճառեցի , զպատկառելին խայտառակեցի , զզաղտնիսն
հրապարակեցի , զծածուկսն յայտնեցի , զվաբուցեալսն
ցուցի , զամփոփեալսն տարածեցի : Օ դառնութեա մաղձ
ժայթքեցի , զգործակցութիւն չարին մատնեցի , զամբա-
բեալ թարախ վիրիս քամեցի , զխորս պարտեաց իմոց
ծանուցի : Օ պատրուակն կեղծեաց առի , զքօղ տգեղուե
վերայուցի , զամօթալեացն զգեստ մերկացուցի , զգարշե-
լիսն յտնդիմանեցի , զմրուրն մահու փսխեցի , զպալարս
հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Վրիստոսի բայի :
Հանձինս վտանգ ոչ անխայեցի , մարմնոյս սիրոյ ոչ աչա-
ռեցի , զարմատն հնութեան տեսիլ արարի , բնութեանս
կարեաց ոչ ողորմեցայ : Օ միաբանութեանն կապ խղեցի ,
զզղեակ սրտիս քանդեցի , ընդ կամայս որսոյ իբր ընդ
գարանակալի մահու կոռեցայ , զպահեստ անյայտիցն
արտաքս հանի : Օ մթերիցն դանձ՝ մեծին գուշակեցի ,
զգթատախազն դատաւորին հանդէպ կացուցի , զպառ-
նեացն զիորձ այժմէն իսկ գտի : Օ դաշն կործանողին
կարեցի , զուխտն խաբողին ցրուեցի , զկատարած մար-
տին յաղթութեան ՚ի քեզ , տէր Հիսուս , ապաստանե-
ցի , զպատերազմին խուճբ զրգոցի , զգիմազբութիւն
դիմեցմանն՝ Բանիդ Ը ստուծոյ յուսացայ , զխաւարասի-
բացն փաղանդ լուսեղինացն զինուց սապրեցի :

Բ . Եւ արդ , ստեղծիչդ ամենայն եղելոց Վրիստոս
Որդի բարձրեալդ Ը ստուծոյ , զաստէն դարովեալս յայս-
պիսեաց բանից և զհարուածեալս յայսքանեաց գանից՝
մի կշտամբեցես կրկնակի դատել ՚ի մեծի աւուրն : Ը-
հա , հզօր անքնին անձառ բարերար թագաւոր անմահ ,
առ այս կերպ պատկառանաց ինքնապարսաւս խոնարհու-
թեան , որ ինձէն զանձն մեծաւ ձաղանօք յոգի դատե-
ցի , լից նուագօք այսր մատենի անարգանօք ամօթոյ ըզ-
դէմն Սատանայի , և զերեսս կերպի պատկառեցելոյս
նշանաւ խաչիդ զօրայոյ : Միացի կնիքդ լուսոյ ՚ի գեղ
տեսակիս , ամրութեանդ նշան հաստատեցի ՚ի տիպ դի-
տակիս , երեակ կենացդ փայտի ձեւացի ՚ի պատկեր այ-
տիս , արուեստդ հրաշից ՚ի ճակատիս շուք նշանակեցի :
Մի այլայլեցի յինէն գրոշմդ լուսապաճոյճ՝ մի բարձցի
՚ի տեսանելեացս բբաց ճաճանչդ օրհնութեան , մի մեր-
ժեցի ՚ի զլսոյս առհաւատչեայդ վստահութեան , մի
սասանեցի ՚ի բերանոյս ամրութե սեմոց՝ փառք տեառ-
նագրութեանդ : Սահպանակդ երկրպագելի ՚ի զգայարան
սրտիս միացի , չորիցս նիւթոց իմոյս գոյութեան քառա-
թեւիդ նշոյլ աղգեցէ : Չեոինս կարկառման փրկչիդ
իշխանութիւն օժանդակեցէ , մատուցման հաստուածոյ
մատինս՝ խորհրդարանդ համարձակութեան բարեգործես-
ցէ : Ի մեկնելս իմում մի հեռացի սրբութիւնդ , մի
բքցի պատիւս ՚ի պատիւն պարտաւորիս , մի մերժեցի
՚ի յոգւոյս անդաւաճանելիդ փրկութիւն : Մի Ը նչեցիք
գիծք կենդանատուիդ ՚ի քո գրեցեալս շնչոյ , մի եղձցի
նկարումն արեան զօրութեան ՚ի տիրատիպ խորանէս :
Ընդ իս բնակեցէ յիմում գերեզմանին : Ի ծորել մար-
մնոյս թշուառի՝ օժումն շնորհիդ առ իս պահեցի , ՚ի
նորոգութեանն աւուր սզվաւ հանդիպեցայց փառաց փե-
սայիդ : Ի քոյոց այտի ծանուցայց , քոյովքդ վաստակօք
պճնեցայց , երախտօք մեծիդ յարգեցայց , աւագանին

զգեստիւ պերճացայց քաւեալ ողորմութեամբ : Մատո՛ , բարեգութ , զվերարիուդ անապականութե տաժանեցեալս մեղօք մարմնոյս , մի՛ յարիցէ ընդ քոյս՝ բանսարկուին . հնացուցիչ հոգւոյս վասնեսցի , խաւարաբնակացն պաւտիրք մի՛ ընդ իս վերերեւեցին : Օրհնեսցի անուամբ քո , գթած , վիհն իմ հանգստեան , ողորմութեամբ քո լցցի գուբն իմ գերութեան , ընդարձակեսցի քեւ ինձ տեղին թշուառութեան : Անդորր եղիցի , խնամող , ինձ բանդն բարկութեան , սնուցէ զիս առ յաճումն արգանդն մթութեան , յուսով քո շտեմարանեսցէ զիս յարկն այն անձկութեան : Չեռամբ քո պահեցայց ՚ի խշտին տարտամութեան , թեւօք քո ընկալայց ՚ի տունն տագնապի , դու գովեալ , ընդ իս ՚ի սենեակն վտանգի : Աւաղս ինձ աստանօր ՚ի թիւս հազարաց , զի որ երբեմն էի վերնային և այժմ՝ անդնդային , երբեմն տօնելի և այժմ՝ աշխարելի :

Գ . Այլ և արդ կրկին դու օրհնեալ ՚ի բոլորից գոյից յերկնայնոց և ՚ի ստորնայնոց և ՚ի սանդարամեւաւկանաց մեռելոց , անպարտականդ այս տարազրուածք : Աս վրիպեցայ , ես օտարացայ , ես յիմարեցայ , պարտեցայ և խոտան գտայ . ես թայ , կամեցայ և կործանեցայ : Աս մոլորեցայ , ես մատնեցայ , ես մերժեցայ , ես խորթացայ , գերեցայ , և գայթազղեցայ . ես նոգովեցայ , ես թշուառացայ , արբեցայ և վատթարացայ : Աս ընկլուզայ , ես խաբեցայ , ես անօրինեցայ , ես ապականեցայ , մահացայ և ՚ի սպառ եղձայ : Չիք քո առ այս ինչ մասն չարի , որ ես միայն անխոփոխ բարի : Արդ կամբ քո յիս , և խաւարն ինձ ճառագայթ . ճրագ յուսոյ քո անդ , և զիշերն վաղորդայն . մարմնոյ քո հաղորդեալ , և յամօթոյն կարծեաց ապրեալ : Իսկ ես ոչ զրեմ զանձն իմ կենդանի վասն անփախչելի վախճանին : Դարձեալ զի ոչ վարկանիմ կորուսեալ վասն աներկեւան նորող .

մանն . որ և փակեալ համարիմ ինձ զերս կենացդ վասն անբաւելեացն պարտեաց : Դարձեալ բացեալ ինձ զդըրախտն՝ վասն փրկութեանն աւետեաց . քանզի ոչ այնքան վհատութեանն գոյժ տազնապէ . որչափ փրկութեդ քաջալերեալ ձեռն կարկառէ : Արդ տուր տէր , տուր ողորմութիւն , առ ամենայն ձայն զօհաբանեալ , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ Կ.Օ .

Վ Էրրոյն յաւելոմ իրլի Էթոլեան նորն հսկողն տնոյն աղերս հողմանոց բանի . ՚ի խորոյ սրտից իտոս լնդ Ասործոյ :

Ա . Արդ որ որ և առցէ զայս դեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտականի պաղատել սովաւ , եթէ ՚ի մեղաւորաց իցէ մատուցեալն , եղէց և ես իմով բանիւ կցորդեալ նմա . իսկ եթէ յարգարոց գուցէ յառաջեալն , գտայց և ես սովմբ ընդ նմին ողորմեալ նոփաւ : Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութիւնն , և ես ինձէն վկայեմ այսմիկ : Բայց յիշեսցէ նա զՍողոմոն և զբանս նորա զհոգեշունչս , թէ ո՛վ որ վստահացի սիրտ սուրբ ունել , և կամ ո՛վ պարծեսցի մաբուր լինել ՚ի մեղաց . և զի ոչ յարեաւ մարդ երկրածին ազատեալ ՚ի պատասխանեաց , և ոչ ընտիր ինքնարշաւ վաղիւքն , և ոչ թէ և ՚ի թըռիչս ամբարձման թեւոց բերիցի : Առ որ զգոյշ լինիցի կրկին երկուցեալ ՚ի վնմին իսկ հաստատութեան՝ ուսեալ ՚ի Պաւղոսէ , գուցէ անկեալ ՚ի յերկիր՝ սահմանողի այսմ կանոնի իրաւագատի կրեալ նմանեցի : Այլ առցէ զայս կշտամբութիւն մաբուրն նիւթ սցակաց , առ ՚ի ջիջանել անընտրողբար յանձեռնհասն բարձրութենէ . պատժապարտն առիթ ազատութեան , որով ամբարձեալ

'ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ պարեցի յուսով : Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի՝ արձան փորագրեալ ամենեւին անեղծանելի , որ փոխանակ իմոյ եղիւրոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծութեան լալոյ առանց լռելոյ միշտ աղաղակէ : Իկցի և ոսկերացս քակտեցելոց 'ի հողապատեան շիրիմ վերարկուին՝ անմը ոունչ ձայնիւ զայս խոստովանել . հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անաղբելեաւ ծածկա տեսիդ զոտն պաղատել :

Բ . Տէր զթութեանց , աղբեր ողորմութեանց , պարգեւք բարութեանց , Որդի բարձրելոյ տէր Հիսուս Վրբիստոս , ողորմեա՛ խնայեա՛ մարգասիրեա՛ . նայեա՛ 'ի վտանգս , ակնարկեա՛ 'ի բեկութիւնս , խոնարհեաց 'ի թշուառութիւնս , տես 'ի տարակոյս անձեռնհաս տագնապիս , հասիր հաղորդել կորստականս կարեաց : Շօշափեա՛ բժշկապէս զամենաթշուառ ակտաւորութիւնս , ունկն մատուցես քաղցրութեամբ ողորմողին հեծուես : Եւր 'ի խորոցն անբնոց մահուն զերեզմանի անմոլն չելի հառաչմանս , մոցէ՛ յականջս ամենալուր լսելեացդ ձայն պաղատանաց վատնեալ անգամոցս : Եւ վասն զի զբաւական կենդանութեանս անապական է , անփոփոխ լիցի և սիրոյդ քո զթութիւն . կցորդ ընր հեզութեամբ տաժանաւորս տկարութեան : Մեռեալ պատկերիս մի ոխս պահեսցես , ընդ անշունչ կերպարանիս մի 'ի դատ քննութեան մոցես , մահու տանջեցելոյս մի հարուածս յաւելցես : Բնդ բեկեալ խեցեղէն անօթոյս մի ուժգընութեամբ մարտիցես , վճռաւ կոչկոծելոյս մի բարկութի կրկնեցես , կործանեալ շինուածոյս մի պատուհաս մատուցես : Շանս սպանեցոյ մի քարինս արձակեցես , լուոյս չախչախելոյ մի սաստիկս որոտացես , հողոյս ան պատուելոյ մի իբր ամբարհաւաճի ուժգինս մոնչեցես : Օմոխիրս մերժելի մի 'ի դատ ընտրութեան կոչեցես ,

զփոշիս ցնդելի մի իբր զքո դիմամարտ գտցես , զտիղմս տաղտկալի մի իբր զոտիս վարկանիցիս : Օգարչութիւնս անդոսելի մի իբր զբռնամարտիկ վանեցես , զխէթս 'ի բաց ընկենլի մի նիւթ գեհնին պահեսցես , զայսքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս մի վերստին յանկմանեցես :

Գ . Եյս ամենաթշուառ և խաւարարգել շիրմին են ահա սրտաբեկ և յոքնաթախիծ արդահատութիւնք . հաստատեցէ օրհնեալդ քո բան անփոփոխական լինել , ըստ սրտի արգահատելոյս : Վրանդի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ , մեռեալ եմ անհասիդ . սրպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիւ հրամանի ա նեղձ եմ հաւատովքս : Եւրդ աղաչեմ զքեզ , տէր Հիսուս Վրբիստոս , հայեաց յիս ողորմութեամբ , և մի թողացուցես լինել տնակից ինձ Բելիարայ . և զմահա զեկոյց տապանին ազգումն անկենդանաւորն թնդման թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հառաչման լալեաց քեզ հաշտեցուցայ՝ յարգեցես լսել , միայն՝ բարեգործ , հոգեսէր հօր մարգասէր . և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ 'ի խաւարին : Մնացեն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մասունք . զի իբր զաւանդ գանձու զիս պահեալ 'ի քեզ , կենաց նորոգման ընծայեցուցեն : Օճառք անվատնելի զինուց ինձ պատկանեցին , ընդ իս յարակայեալ քարինք պարսից հոգեւոր հնարից՝ զգարին հալածել զգուռնդ : Մարտըն որ առ իս քեւ , տէր , վանեցի . զի եթէ յարիցէ 'ի վերայ իմ պատերազմել , տեսեալ զքաղաքն ունայն 'ի ջրաց և զազգողականացն գործի ապաձայն , զքեզ , տէր , ունիմ մշտնջենաւոր և աննիրհելի պահապան :

Դ . Օ՛ի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ բան զօրն կատարածի , և անշաւիդ արդիւնս ինձ պատաստեցէ , առաքեմ զաղօթմն տէրունականս նմին գան

մահու : Աթէ 'ի վայր զիս հնարի կործանել , զճնրա-
 դրութիւն արարչին . եթէ 'ի մոխիր երկրի թաւալել ձե-
 ոքն բերիցէ , երեսացն Աստուծոյ 'ի նոյն մածուցումն
 զնա հերքեսցէ : Աթէ վաստակս ինձ ցաւոց հիւթես-
 ցէ , քրտունքն յուռթի արեամբն զանգեալ փրկչին աշ-
 խարհի զնա խուսեցէ . եթէ յընթացից բարեաց զունչս
 իմ պատանդեսցէ , կապանք ամենաստեղծին զիս արձա-
 կեսցէ : Աթէ յուրացութիւն սարգեւաց լուսոյն բունա-
 դատեսցէ , հայհոյութեանն համբերութիւն յաստուա-
 ծամարտիցն զնոսին ընդ նոյն կարգեսցէ : Աթէ հարուա-
 ծըս նետից գաղտաձիգ զինուց ինձ արձակեսցէ , կարթ
 հնարից աղեղան փառաց Հօրն կապարձից նմին պատա-
 հեսցէ : Աթէ քողով լուսոյ խաւարականի մտանել ընդ
 աչս անամօթեսցի , կոփումն զլսոյն ձորձով պատեցեալ
 լումանն ամենից զնա տանջեսցէ : Աթէ մոլեսցի զվստա-
 հութիւն ձեռինս կապել , եղէդն մատուցեալ 'ի յաջ
 գոյացուցչին զնա չարչարեալ ըմբերանեսցէ . եթէ ձա-
 զանօք այգանման զիս կատակեսցէ , տանենն ծաղու ա-
 մենաղօրին զնա հենդնեսցէ : Աթէ բժժանօք ինչ յուռթից
 կախարգել խորամանկեսցէ , ապասին դիմաց հզօրին
 Աստուծոյ զնա սաստկապէս ամաչեցուցէ : Աթէ 'ի
 մուտս զիշերային մթութեան խաւարաւ խարէութեան
 լինեալ մարտիցէ , 'ի ճառագայթից լուսոյ երեւման քո ,
 տէր , խայտառակեսցի . եթէ 'ի միջօրեական տապոյ փոր-
 ձութեանցն արեգակնակեզ վասնիչ խորշակին՝ զիս 'ի
 յարմատոց խախտել կարծիցէ , 'ի զօրութենէ նշանիդ
 լուսոյ խեալ գօսասցի : Աթէ 'ի փչմանն շնորհէ ունայն
 զիս առնել հնարաւորեսցի , թուքն զոր ընկալաւ տէրն
 քրովէից ընդ մեղաւորիս՝ զնա պատկառեցուցէ : Աթէ
 ժանկք խածողք ինձ ցուցանիցէ , լուռութիւն երկնաւորին
 բերանոյ զնա պապանձեցուցէ . եթէ խածմունս աղուա-
 կանս հոգւոյս ազդեսցէ , բեւեռացն հարմունք հաստ-

զին բնաւից զնա կսկըծեցուցէ : Աթէ յընթացս անի-
 բաւութեանց խորհրդոց զիս մոլորեցուցէ , սեւեռք ոտից
 անհասանելոյն զնա կապեսցէ . եթէ հրապոյրս ինձ
 դժնեայս արբուցէ , քացական ընդ լեղոյն խառնեալ 'ի
 յարբումն բարերարին՝ զնա դառնացուցէ : Աթէ առա-
 ջին ճաշակմամբ փայտին զիս գտցէ , սասկալի խորհրդով
 խաշին ըմբունեալ 'ի սպառ պարտաւորեսցի . եթէ ընդ-
 վզել ընդդէմ՝ հնազանդութեան տեառն հրամանի զանձն
 իմ ուսուցէ , ըբրումն պարանոցի անասճմանելոյն զնա
 կործանեսցէ : Աթէ 'ի մահ սատակման զիս վանեալ
 վիրաւորեսցէ , ստուար տէգ զինու մխելն 'ի կող ըս-
 տեղձչին Արամայ զնա հերձեսցէ . եթէ երկամբք վըշ-
 տաց գժոխականաց զիս պարփակեսցէ , պատանացն կը-
 տաւէից ունօղիդ զնա ըմբունեսցէ : Աթէ յատակս մա-
 հու հայել զիս խարդախեսցէ , բնակել կենդանւոյդ 'ի
 վէմն մահու զնա մեռուցէ . եթէ խնդասցէ ընդ մարդ-
 կօրէնս իմ գայթաղութիւն , կրկին կորասցի կարկամեալ
 կամաւ , յորժամ անմահն Աստուած յարուցեալ փա-
 ոօք ընդ իւր նորոգեաց զենաւ մահացեալս : Աթէ
 ընդ լուծանել փորք կապանաց հազարամէից բերկրես-
 ցի , դողասցի կրկնեալ վերստին իսկոյն ընդ վերջին շըղ-
 թայս անզերծ տագնասպին ըմբունման սաստկազունի յան-
 վախճան տանջանարանին : Աթէ ընդ առաջին հարուա-
 ծըն դժուարեսցի , գոյժ կորստեան յետնում սատակ-
 մանն անշէջ գեհնին , որ պատրաստեալն է նորա և
 նորին հրեշտակաց , նմա պատմեսցի , որ յաւուրն մեծի
 մեծին ատենի :

Ն . Իսկ ինձ ապաւինելոս 'ի քեզ , տէր Հիսուս ,
 միայն թագաւոր ինքնակալ զօրեղ , արարիչ երկնի և
 երկրի և ամենայն զարդուն որ 'ի նմա , որ գալստեանդ
 քոյ ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յու-
 սամ . 'ի յոտս քո անկանիմ , և զգարչապարիդ հետս
 ք 25

Համբուրեմ : Օպարտութիւնս խոստովանիմ և զմեղանս
 Հրապարակեմ , կշտամբանաց քարամբք կոծիմ և Հա-
 ուշանօք սրտիս տապանամ , 'ի խէթ խղճիս խոցոտիմ
 և բոցով շնչոյս ճենճերիմ : Ըյի ցօղով արտասուեացս
 այրիմ և երկամանց աղբամբք կիզանիմ , յուսակտուր
 օգով ցամաքիմ և դառնաշունչ հողմով շիջանիմ : Թա-
 խանձանաց բանիւս երերիմ և կողկողալին հեծութեամբ
 դողամ , տաժանելի կրիւք տուայտիմ , և տազնապաւ
 հոգւոյս տատանիմ , 'ի կոծ մրրկաց ծփիմ և 'ի բախ-
 մանէ ալեաց սասանիմ : Ի լուութենէ Համբաւոյն սար-
 սեմ և յիշատակաւ ահին կորնչիմ , կերպարանօք ատե-
 նին Հալիմ և սպառնալեօք մծիդ մեռանիմ : Ըւր բազ-
 մազութ , քաւիչ մարդասէր և երկայնամիտ , քաղցրութի
 անձառ , օր բարի և տիւ տենչալի : Քանզի կարող ես
 յամենայնի և առ ելս շնչոյս իմոյ փրկութեան մծի . և
 քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Կ Ի .

Ս Երբորին յաւելուած իրին հեծութեան նորին հովոյն ա-
 նոյն աղբիւս հաղթանաց բանի . 'ի խորոյ սրբից խօսք ընդ
 Ըստիւ-ծոյ :

Ը . Բայց քանզի յոյժ արդար է բան իրաւանցն
 Քրիստոսի Ըստուծոյ առ իս՝ քան առ սկզբնահայրն
 շարեաց Սատանայ . զի վասն նորա յայն սակս յայանե-
 ցաւ՝ զի լուծցէ զգործս նորին . և վասն իմ՝ զի զհնա-
 ցեալ պատկերս նորոգեսցէ : Ըոեալ զկերպարանիս բո-
 լոր էութիւն կերպին իսկութեան մծին Ըստուծոյ՝ միա-
 ցոյց ինքեան անշուշտ խառնութեամբ : Վորա ոչ են
 շնորհեալ 'ի բազմացն , և ինձ զսուլանդակն եհեղ ա-
 ուստութեամբ . վասն նորա ոչ երբէք շարշարեալ , և
 վասն իմ հանապազ պատարագի : Վա անհաղորդ է

կենացն , և ես միշտ վայելեմ 'ի փրկութեանն . նա վա-
 նեալ է խաչին , և ես զօրացեալ նշանաւն . նա հեր-
 քեալ 'ի լուսոյն , և ես միացեալ ընդ փառացն : Վո-
 րա ոչ խոստացաւ հանդիստ և յերկրի , և ինձ զերկինս
 սեպհականեայ . զնորայն կտրեայ զառհասաւտչեայ , և
 զինն առանց խղելոյ յարակայեայ : Օնա յերամակս
 խոզիցն արդել , և յիս ինքն զօրացաւ : զնա կարճաց
 օրինակեայ , և զիս ճառագայթ նշանակեայ . զնա սող-
 նոց նմանեցոյց , զիս իւրովն անուամբ կնքեայ :

Բ . Իսկ ես զերախտիսն Ըստուծոյ լքի զայսքանեայ
 բարեայ արարողի , և շարին զկնի միտեցայ՝ Հայել ընդ
 նմին յատակս դժոխոց : Ըհա անարժանս բարեայ ,
 անձինս երախտեայ , անընդունակս սիրոյ , տոռամբք
 մեղայ ձգեալս , յերիկամունս խորոց խոցեալս , քանցեալ
 ծառս արմաւենւոյ , դինիս յեղաշրջեալ , ցորեանս հե-
 դեղեալ , մուրհակս ջրեալ , վճիոս պատառեալ , կնիքս
 այլակիրպեալ : Վանութիւնս փոխեալ , արկանելիքս
 կիզեալ , ըմպանակս կորուսեալ , նաւս ընկղմեալ , մար-
 գարիսս մանրեալ , ակնս պատուական սուզեալ : Տունիս
 գօսացեալ , նեցուկս խորտակեալ , փայտս ամենելին փր-
 տեալ , մանրագորս աղաւաղեալ , յարկս տապալեալ ,
 խորանս խարխալեալ : Բոյսս արմատաքի խեալ , ձէթս
 հեղեալ 'ի գոհհն աղբեաց , կաթնս հոսեալ 'ի կոյտս
 մսխորոց , այրս մահու 'ի յարեանց դնդից : Քանզի միշտ
 խրատեալ ընդ Երուսաղէմի առակաւ Բարեբառնի 'ի մար-
 գարէիցն ձայնից , անձն իմ ողբալի , և ոչ ինչ խրատե-
 ցեալ : Ըր աստէն անգոսնեալ եմ և անդէն խայտառ-
 կեալ , աստ դարովեալ և անդ կշտամբեալ , աստ ձաղեալ
 և անդ նախատեալ , աստ թշնամանեալ և անդ յանդիմա-
 նեալ , աստուստ ապշեալ և անդանօր լքեալ : Ըստ հե-
 ծումն և անդ հառաչանք , աստ կարծիս և անդ կատա-
 րած , աստ խէթ և անդ հատուցումն , աստ արկածք և

անդ հանդէսք դատաստանի : Ուր ոչ է բան իրաւանց
և ոչ ձայն պաղատանաց, ոչ թիւք աւուրց և ոչ ելք
ժամանակաց, ոչ ուղտ յուսոյ և ոչ դրունք ողորմուեց,
ոչ աջ պաշտպանութեան և ոչ ձեռն այցելութեան :

Գ. Մ. Ղ. դու ապաւինութիւն, դու ինքն փրկութիւն,
դու այցելութիւն, դու և քաւութիւն, դու երանութի,
քեւ բժշկութիւն, քո ողորմութի, միայն հըօր կենդանի
անձառ, աէր Յիսուս Վրիստոս բարերար Մտուած .
օրհնեալ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, ընդ Հո-
գոյդ քո սրբոյ յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի
իսկութեան մեծիդ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ը՛Ն Կ Ը .

Վ) Երբ որ յաւելած ինչն հեծո-լեւան Դարն հսկողն
նոյն աղ-բոս Եսայի-անոց Բանի . 'ի խորոց սրբից խոտ ընդ
Մարտիայ :

Ը . Եւ արդ 'ի յիշատակ ահարկութեան վերագրե-
ցելոցդ՝ որք յաստուածուստ են սպառնալիք ինձ ժա-
մանեցեալք, զիմորդ դադարեցայց 'ի նորոք ողբերգուեց,
և կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս :
Օ՛ր եթէ զտրեքվտակեան առաջս գետոյդ յորդահոսան
ծաւալմանդ, որ զԼոդեմ և զերկիր առ հասարակ ոռո-
գանեն՝ լիսպէս բաւականութեամբ բաշխեալ ամենայնի,
և զօղնումն ելից իւրեանց առ աչս իմ եղեալ, զանձինս
մեղաց սաստկութեան զըոց զովացուցանել ոչ բաւակա-
նասցին : Եւ կամ մարգարէին սրբոյ ըզձականութիւն
կրկին ինձ լցցի զլուխ շուրց բազմութիւն, և ճրագա-
րան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկ-
ման ոգւոյս չափել զվտանգ ոչ ձեռնարկեսցեն : Եւ ոչ
եղբրականք շայլից համօրէն բանահիւսից կանանց լալա-
կանաց 'ի սիրտ և յոգի վերադրելոց՝ զաղէտ վտանգիս
'ի յերգ արկանել և կամ 'ի նուազս ձայնից բերել :

Բ . Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ Յորայ
կամ Երեմիայ . քանզի տօնելի է օրն նոցա, զորոց մի
'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի . ա-
պա ուրեմն զիս նկատեալ եղեալ զոչ արժանիս լուսոյ
և կամ միոյ մասնաւոր բարոյ, զհանդիպումն աւուրն
անիծին՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու
դրացիս, մշակս մեղաց և արբանեակս անօրէնութեանց :
Որ ոչ կայի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր,
Մտուած բարերար . ոչ գնացի 'ի քո պաաուիրանն
կենդանական անմահացուցիչ, ոչ վաստակեցի 'ի հունձս
արմտեացն, որով 'ի մուսս ձեանն աւուրցն խոռութե
կերակրել պատրաստեցայց : Ոչ կառուցի ամրութիւն
որմնց և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի շնչմանէ
մրկաց օղոց պահեցայց . ոչ համբարեցի նշխարս պա-
շարաց 'ի յուղին անկզրական, որով զտաղնապ սովոյն
իմ բժշկեցից : Ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօ-
թից, որով առաջի քո կալ համարձակեցայց . ոչ կաղ-
մացի թոշակ փրկութեան վարուց մաքրութեան, որ գնո-
րոցութիւն ինձ երաշխաւորէ : Ոչ ետու զընտրութեան
հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի իմոյ մասնչին, զի 'ի
դատաւորին ձեռանէ աստէն իսկ փրծայց . ոչ լրութե
ձեռին օրհնութեան մատեայ յանդիման, որով օրէնսդը-
րին մասնակից գտայց սրբեցեալ : Ոչ զիմաց ետու
զգուշութիւն և ոչ թիկանց պատասպարութիւն, ոչ աջոյս
իմ զինուորութիւն և ոչ ահեկիս պարածածկութիւն,
որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց : Օ՛րիվարս
ոչ զգեցուցի զբահիւք, և ոչ զմարտիկս սպառազինութե,
որով զձականս յարգարեցից : Օ՛կանուխն ոչ կատե-
ցի պտուղ, և անաղանին ոչ ժամանեցի, և ահա տա-
րակուսիմ ունայն 'ի բարեաց : Մաքրութեան ծաղիկ
ոչ ունիմ և ոչ եւզ ողորմութեան, և զիշերոյն մոռալ
աննշալ . 'ի նիւհումն մահու ննջեալ եմ, և տաղնապ

կոչողին փողոյ ստիպէ : Օգարդ հարսանեացն կրկին մերկացայ , և զձէթ վարուցն վերստին լքի , և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի :

Գ . Եւ արդ զեօրդ առից միթարութիւն այսքանեաց վշտաց , և կամ ընդ որքանեաց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից , և կամ ո՞ր արդեւք զգարչապարս ոսին կառուցից , և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից , և զի՞նչ անդորրութի՞ ծփանայս նկատեցից , և կամ յո՞ր ըզձական զիւրութի՞ ձեռն համբարձից : Օրի եթէ 'ի ձեղուն բարձրութեան երկին , անտի անձրեւեաց հուրն Սողոմայ , որպէս ասացեալ է . իսկ եթէ յատակ խորութեան երկրի , քա եբայ զկոկորդն ըմբոնողական և եկուլ զՊաղան բանալիքն Երիւրոնի : Եթէ յանդգնեցայց փախչել յուռուղէն , զուցէ կալցի զիս վիշտսն ահաղին : Եթէ ընդ զազանս ինչ թափառեցայց , արագունք են ինդրել ըզվրէժ ստացողին առաւել առ իս՝ քան երբեմն զԼՂիսէին առ մատաղ մանկունս բեթեղացիս քրմորդիս : Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն , այն եղև եգիսլտացւոյն խաւար շօշափելի : Եթէ 'ի թուշունս բարձանց , նոքա են կոչեցեալք 'ի սպանդն զոհին բոսորայ զիականցն : Եթէ 'ի տկարսն խիզախեցից , վասնիմ 'ի սիծակացն , և զի՞ սլիտոյ են ինձ առիւծունք : Եթէ յարջոյն պատառողաց ապրեցայց , մծիխքն արեան ծաբաւիք ինձ պատահեցեն : Եթէ յանհոյս ուրեք նըստիցիմ , մեղուկքն անարդազոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռայման զինեւ մաղեսցին : Եթէ յեղջերէ միեղջերւոյ փախնուցում զերծեալ , նկուն ճիրանք աղկաղկաց մընոցն մորմնորդաց՝ զիս կեղեքեսցեն : Եթէ 'ի սենեակս շտեմարանայ խորշից դօղեալ ամփոփիցիմ , տաղտկատեսակ գարշութիւն գորտոյն զիս զազացուցեն : Եթէ 'ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց , շարք

շանաճանճոցն տարմից զինեւ պատեսցին : Թողում ասել զխառնիճն և զջորեակն զզօրն զօրաւոր ընդ թուրուորն թրթուր և ընդ անկենդանական երեւիլն , հանգիւրձ ջրակալիճ կարկտիւն և ապականագործ եղմամբն : Որ առ աչաց տեսիլ ապաղէնք և նուստագոյնք , բայց 'ի յակնարկին Լստուծոյ յաւէտ գոռզարար ուժոյնոք՝ հարին վանեցին զհայարան ամբարհատաւորութիւն Փարաւոնի բունութեանն բուռն դաւաղանին յաղթող վիճակաւ : Որ են կերպարանք թաքուցիլոցն կրկից լկուղաց անձնականացն աներեւութից եղիպտացւոյն անօրէնութեանց՝ յօղի տանջողաց՝ դաղտնի վնասողաց :

Գ . Եւ զու , ամենագօր արարիչ բնաւից տէրգ բուրից , 'ի յատելինն իմ հանգիսայիր հերքել զնոսա . և ինձ ողորմած կրկին զթութեամբ ձեռն մատուցեալ փրկութեան տարակուսեցեալ կոշկոճեալ վարանեալ 'ի մահ պարտելոյս : Օրի դու միայն ճանաչիս Լստուած փառաւորեալ միշտ ընդ Հօր Հոգւովք սրբով յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ ԵՆ Կ Թ .

Վ Երուրին յաւերած ինչն Էթու-Էթան Կարին Ընդիւս
նոյն աղբիւս ճարլանայ Բանի 'ի խորոյ սրբից խոռ ընդ
Լստուածայ :

Ը . Եւ արդ , վասն զի 'ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմն եղանութեան տեսունք և Լստուծոյ՝ իբր 'ի քրայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ հանասպաղ եռամ՝ և ոչ երբէք պարզիմ , միշտ խառնիմ զուղիլ և ոչ ևս միանամ : Եհա զուր արծաթագործք երկնաւոր իմ ճարտարապետ , 'ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս , ըստ մարգարէին յայտնի ա-

ոակի , և չարութիւնս իմ ոչ հալեցաւ . զոր ինձէն մտեալ չարաչար՝ իբր զեկեղազար դիւաբախ իմն ողորմելի յանդրդնեալ անկարդս խօսիմ՝ զիմն զպարտիս առեցուցանել , քան հաշտութեան հնարս ինձ այսու կաղմել : Եւ զի մի՛ անբնդել զիսպուած և անկիրթ պատահումն և անհաւասար հանգիստումն՝ պատրաստութիւնք հանդերձելոց տանջանարանացն ինձ երեւեսցին , ամենեւին անմոռաց պահեաց աստուտին՝ ՚ի յիմում՝ մարմնի նշխար մնացուածոց նախնունն անիծիցն , զոր ՚ի փոքուէ տարրէ անարգէ զմեծն է ուսանել :

Բ. Վանզի խաղալն ինքնաբերական դիւտք որովայնի՛ բոտոտք ճապուղիք շարժողականք և ազգիազգիք որդունք աղեաց պաղտնակուրք , խաղաւարտք հրակայծակիք և բիծք բոցակիծք և անիծք անկերպաւորք և երամակիք ոմանք քրտնածինք զազրամթորմիք կսկծեցուցիչք և մարմանջողականք : Ըստպատակք այլոց վայրենեաց , ըստ նմանուե գիւաց զիշերամարտից և մեկնակազէն բարբարոս դնդից խաւարասիրաց : Եւ զազանութեամբ քանասար զայլոց արարեսցւոց , կորակոր գնացիւքն , արջնամթոյր գունովն , կրկնասպարոյր կռածագ կտցան , որ զօրէն ունի խայթոցաց կարճից , իբր դժնիկ փշովք խոցոտեալ ծծեն ձգեն զարեանն խոնաւութիւն , և յանկողինս մահճաց հանդրստեանն վաստակս կրից ցուցանեն : Եւ կարկոտեալ ուրուք ձեռն հատուցանել զհատուցումն նոցա նոցին , վաղվաղակի զզան զփեսա վտանդին՝ զոր ազդին մարդոյն , և անդէն իսկոյն լերկամարմին փոքր հասական՝ իբր թեւօք իմն թոխչս արձակին , և ըստ մարտիի ձեւոյ ուտոտեալ այսր անդր տարաբերին : Եւ ըստ բազմապատիր նենգութեան բարոյից դաւող աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն ՚ի պատուածս բազում ելից , զի յերկիւղէ մահունն ապրեսցին : Եւ այնքան չքոտի և անքատ անձամբքն ոչ միայն զառմիսն և զխառնիճաղանձս ,

այլ և զմադաւորս հղօրս և ահագինս փախուցանեն հաննն տարագրեն ՚ի դատիկոն յարկի ապարանիցն բարձրութեան , և կամ ՚ի բացի բնակեցուցանեն : Վաջք արանց արեաց , որք իշխեցին ամբօխից և տիրեցին ժողովրդոց և առին զբաղաբս ազգաց , զպարտութիւն իւրեանց զօրաւոր ձեռինն ինքեանք վկայեն , թէ քանզի ոչ կարացաք ՚ի դիմի հարկանել վեհիցն բոնութեան , վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի :

Գ. Եւ զինչ է ինձ զփոքունց և զանկածից ծաղրականաց ոմանց գոյութեանց ՚ի կիր արկանել , որք զօրեղ և անհերքելի ջատագովք են Ըստուածութեանն՝ յիշատակել ինձ զհանդերձեալսն , որք ՚ի մարմնոյս անօրինելոյ բնծային պտուղք դառնութեան : Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից զիւտ , և կերչացն կոյտք անողբելիք . յորոց չէ զերծանել , քան թէ հարկաւ մարմնոյն վտանգի զապագայիցն սորօք իմաստասիրել : Եւ ոչ տեղի է գտանել ապաստանի՛ փախստեամբ անկանել առ նոսս . այլ առանց կամաց քումդ ակնարկութեան՝ և մարդկային կարք և հնազք վրիպեցան : Իսկ դու , բարերար , զամենայն ունիս բաւականապէս զկենաց հնար՝ եթէ կամեսցիս փրկել նորոգել , քաւել բժշկել և կեանագործել . և քեղ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲԸՆ Հ .

Մի քրտն յաւելուած իբլին հիծու-լիտն նսրին հսկողն ասայն աղէրս ճողլանայ Բանի . ՚ի խոսոց սրբնց խօսս ընդ Ըստուածոց :

Ը . Եւ քանզի համարձեալ զնթացս բանիս ՚ի փոքունց աստի երկնայնոց չհամարելոց ընդ գոյս եղելոց ՚ի մեծադուռնիցն տեսակս , ասացից զտօնելի հանդէս ի-

բաւանց ահաւորին անաշուտութեան : Որ զի թէ մեր ձաւորագոյնք իցեն Աստուծոյ իբրեւ զնախածանօթ հայրապետութիւնսն , և կամ մաքրագոյնք որպէս մարգարէսն , կամ անբժագոյնք իբրեւ զԱռաքեալսն , կամ ընտրելագոյնք որպէս մարտիրոսսն , եթէ ոչ դու մարգարիբոցն աննուազ բարիք և անփոփոխ խնամակալուիդ և անպակաս ողորմութիւնդ , ընդունայն է ինձ փրկութիւնն առ 'ի նոցանէ :

Բ. Օ՛ր եթէ առ նոյն ինքն Աբրահամ ձայն արձակիցեմ , իբր ողորմադին առակ ընչեղին ինձ վարդապետէ , 'ի տապոյ անտի պապակեալ , կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ . քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութեան : Իսկ եթէ առ Մովսէս , և նա զգածեալ է տկարութեամբ , որ ոչ զօրեաց առնն փրկութեմ , որ զհայթայթանաց կրկուտն 'ի պահպանութեն աւուր ժողովէր : Իսկ եթէ առ Ահարոն , և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի : Իսկ եթէ առ Դաւիթ , 'ի մէջ բարեացն առաւելութեան ըստդտեալ է և նա : Իսկ եթէ առ Կոյ և Հոբ և Դանիէլ , զայս Լղեկիէլ մարգարէ մեկնեաց յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա , և զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց Աստուծոյ ազգեալ , կենդանի եմ ես , ասէ տէր , թէ ոչ ապրեցուցեն զուտերս և զգտերս իւրեանց 'ի բարկութենէ որ հասանիցէ , բայց եթէ ինքեանք միայն ապրեցին : Իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ , 'ի քումդ խնամոց խուն մի խիթացեալ և նա ընդ կրիւք իմն զբաւեցաւ : Իողորմ ասել զբաղմացն գումարութիւն խոնարհեալ առ կարիս կարիս , թէ և յաւէտ երջանիկք իցեն : Ինչ որս և Հովասու ոմն մարգարէի 'ի մէջ աստուածաբան սպասարութեան մարդկօրէնն զայթագրութիւն մնայ յոլովից անթարգմանելի , թէ և 'ի դէմն իմն մեկնութեան ձեւակերպեցի :

Գ. Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան , և ցուցան նորա ողորմեալք բարերարիդ և զօրացեալք ամենակալիդ , կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ , շնորհեալք ազատեցուցիդ և բժշկեալք անախտականիդ , կենագործեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ : Այսուհետեւ զիտացեալ զսակն որքանութեց հողածին բնութեմ , որք մխիթարեն օրինական նմանաբար հարազատապէս վստահութեան յուսահատելոց , ահա առ քեզ դիմեցից՝ Որդի Աստուծոյ կենդանոյ Վրիստոս , օրհնեալ յամենայնի : Մանաւանդ զառակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ , զվերագրելոց բան վերստին արգարացուցանէ . բարի է , ըստ իմաստնոյ ումմն երջանկի , անկանել 'ի ձեռս տեառն , և մի 'ի ձեռս մարդկան . զի որպէս մեծութիւն նորա , և ողորմութիւն նորին : Եւ այս բան թէ և զԳաւթին իմն գծագրէր , որ զերեքմասնեան հարուածն աստուածեան առաջի եղեալ ընտրեաց ինքնին կամաւորաբար զգատակնիք մահուն սպտակման՝ իբր զկենդանի Վրիստոսի հաւատոցն յաճախութեամբ , քան զերկուցն ևս այլ փորկունս՝ որք տանջեն և ոչ ողորմին : Մակայն և իմն օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ : Օ՛ր ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութեան , առանց որոց ոչ է մատչել առ տէր , այլ զփրկողին անուն պսակեմ , և զշնորհ նորին առ ամենսին բարեհոյակեմ , և զենաւին բարձունսն 'ի թռիչս վարուց խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմութեանն գեղոյ :

Դ. Ահա դու կեանք , դու փրկութիւն , դու բժշկուի , դու անմահութիւն , դու երանութիւն , դու լուսաւորութիւն : Առա՛ ինձ անդորր 'ի մեղացս աշխատութեանց , զի և

քեզ լինի հանդիստ 'ի մշտադատս հեծութեց' ձանձրացուցիչս թախանձանաց . որ ոչ այլ իւրք , քան թէ փրկութիւն մարդկան պարարիս , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ը Ն Հ Ը .

Պ Երպէն յաւելում իբրև հեծութեան նորին հողիւ աստիճանի աղբիւր հաղթանաց Բանի . Ի խորոյ սրբից Խոսք ընդ Բարեբանի :

Ը . Եւ քանզի երջանիկքն և փառաւորեալքն սրբոցն պարք , յորոց ոմանք զոյզն ինչ գթեցին և յաճախադոյնըս հաստատեցան , փոքունս սասանեցան և մեծագոյն վաւաճումք նշուից հողոյն մաքրութեամբ լուսաւորեցան : Արդ մինն զգանգուածոյն յայտնէ զհասարակաստեղծն տկարութիւն , իսկ միւսն զգերազանցն քան զընութեանն օրէնս , վարս և առաքինութիւնս հրեշտակականս : Եւ արդ նոքա՝ որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ Բարեբանութեան Հօրն Քրիստոսի , ընտրեալքն տօնեալքն ինկեալքն և բարեբանեալքն , իբրեւ զանդամս Քրիստոսի պաշտեցեալք , և իբրեւ զթեմականս Հողոյն սրբոյ յարեալք , յոր չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի , այլ ամենեւն անկեղծութիւն և լուսաւոր արդարութիւն , և որքան մարթ է զմարդն Բստուծոյ՝ Բստուծոյ նմանեցուցանել : Արեւք պարզ և անպակասելիք , կրօնք բարձունք և անխոնարհելիք , կեանք զգաստք և անստղտանելիք , պաշտօն առ Բստուած կարծր և անփոխարկելի : Ընթացք արիականք և անկասելիք , ճշմարտութիւն միատարր և անցնդելի , զիմադրաւորութիւն զօրեղ և անհերքելի , անսաւորութիւն պայծառ և անպաշտելի : Իմաստասիրութիւն վերնական և անկոխելի , պատկեր մաքուր և անաղարտելի : Օրոց կերպարանս և զիշատակս անուանցն աղաչել՝ Բստուած իսկ վար-

դապետեաց , և նոքօք հաճութիւն 'ի մէջ խոովութեան արարչիդ բան լուսաւորեաց :

Բ . Ը . Եւ անպիտանս յամենայնի , և որքան բան զօրէ պարսաւեալս , որ մինչդեռ արթունս եմ՝ նիրհեմ , մինչդեռ զգաստ երեւիմ՝ թմբրիմ , 'ի բարեպաշտելս իմում գայթապիմ : Մինչդեռ աղօթեմ՝ և վրիպիմ . 'ի յընթանալս իմում և կասիմ , յարգարանալս իմ և մեղանչեմ , 'ի խողաղանալս իմում ամբօխիմ : Մինչդեռ արշաւեմ՝ առ 'ի յետոյնս հակամիտեմ , 'ի չուելն իմում ընդ կրօնէն դառնամ : Բնդ լուսոյն մասին և խաւար յարեմ , ընդ քաղցրութեն ճաշակ՝ օշինդք խառնեմ , ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ , ընդ կանգնելն և կրկին գլորիմ : Նաղկիմ և ոչ պտղաբերիմ , ասեմ և ոչ առնեմ , խոստանամ և ոչ կատարեմ , ռիտեմ և ոչ վերջարեմ , կարկառեմ և անդէն ամփոփեմ , ցուցանեմ՝ և ոչ ընծայեմ , մերձեցուցանեմ և ոչ մատուցանեմ : Ի ճարակել խոցուածոյս անդէն վերաւորիմ , 'ի հաշտեցուցանելն՝ վերստին խոովեմ , զուր հանդիսանամ և իրաւամբք պարտաւորիմ , գրիմ և իսկոյն եղծանիմ , նաւեմ և 'ի գիծն թուլանամ , սկսանիմ և 'ի հանդիսոն ոչ ժամանեմ : Արգիւմ և դարձեալ սասանիմ , ընանիմ և կրկին հեղում , շարունակիմ աստ՝ և անդ 'ի ստորեւ հոսիմ , բարդիմ և անդէն տոչորիմ : Հիմն արկանեմ և ոչ զլիսաւորեմ , սակաւ վաստակիմ և բերս վատնեմ , դոյզն դանձեմ և անթիւս սպառեմ , գայլս խրատեմ և ես ինքն անփորձ եմ , միշտ ուսանիմ և երբէք 'ի ճշմարտութիւնս գիտութեան ոչ հասանեմ : Օշիջեալ չարիսն նոյնչափ արծարծեմ , սուղ ինչ քաջալերիմ և առաւելապէս լքանիմ , լարիմ և իսկ և իսկ առ նմին մեղկիմ , զայս կարկատեմ և զայն պատտեմ , խելեմ զեղիճն և տատասկ անկեմ : Բնդ ամբառնալն և այսրէն բերիմ , մտեմ 'ի բոյնն աղանի և անտուստ

ազոաւ երանեմ , գամ սակաւ մի սպիտակ և սրանամ
 դառնամ բնաւին սեւացեալ : Ասեմ զիս քեզ դաւա-
 նել և սպանողին նուիրիմ , ընդ յանդիման լինելն և
 թիկունս դարձուցանեմ : Մաքրիմ և այլ մըճոտիմ ,
 լուանիմ և նովին զազրանամ , կերպարանիմ զՂաւթին
 և գործք զՂաուղայն կատարեմ , շրթամբք ճշմարտեմ
 և ստեմ երիկամամբք , աջովս մատակարարեմ և ահեակ
 կողմամբս աւերեմ : Բնդ երկրագործութեան ցորենոյն՝
 որոմն սերմանեմ , 'ի բարձրագոյն իմաստիցն 'ի վայր ի-
 ջեալ , ես ինքն դտանիմ : Հրեշտակնամ յերեսս և 'ի
 խորհուրդս դիւանամ , հաստատիմ 'ի յոտս և 'ի միտս
 տատանիմ , սուտ ձեւանամ և իրօք խոտորիմ , կեղծա-
 ւորիմ արդար և արդեամբք ամբարշտեմ : Ղասիմ 'ի
 պարս հեղոց և ընդ այսս կաքաւեմ , 'ի մարդկանէ գո-
 վիմ և 'ի տեսողէդ պարսաւիմ , 'ի հողածնելոցս երա-
 նիմ և յորդուոյն լուսոյ աւաղիմ , հաճոյանամ յետին
 ուամկին և թագաւորիդ մեծի յաչաց երանեմ : Օտուեա-
 նրն դատաւորին թողեալ , խառնակրօնիցն աղերսեմ .
 հերքեալ 'ի վեհիցն , սոսկականացն սպրդիմ : Մարմնովս
 արտաքուստ պճնիմ , և անձամբս երփնիւ ճային ճանա-
 չիմ . հպաւորիմ դաշն հաստատել , և ուխտակորոյս ար-
 տաքս մերժիմ : Այսօր մաքուր հոգեկիր և վաղիւ մողի
 խելագար . զտէրունի պատուէրն լքեալ , թելադրութեան
 օձին հետեւիմ . արիանամ զօրապէս , և վատթարագոյնս
 ընկրկիմ , զծանրութիւն աւուրն բառնամ , և 'ի ժամ
 վարձուն անմասն ելանեմ : Ի բացուստ ճոռումս խօսիմ ,
 և 'ի պատասխանատուութեանն պահու պապանձեալ
 կարկիմ , 'ի յելս արեւուն հարուստ երեւիմ , և ընդ ե-
 քեկս ունայն դեղերիմ : Յաթոուս ծերոց լաղմալ , և
 խելայիղից կցորդիմ . ննջեմ խեթիւ , և արհաւորք զար-
 հուրեալ զարթնում : Օտնդատանս կամացս չարաչարս
 հերկեմ , փոյթ խնամով 'ի չարիս , միշտ անառակ որ-

դիս , անդարձ տարագրեալս , անզղջական զառածեալս ,
 անմխիթար տրտմեալս , ինքնագրաւ գերեալս , մահու և
 ապականութեան ծառայեալս : Անողորմի տանջեալս ,
 անփրկելի մատնեցեալս , անպատուաստելի հատուածեա-
 լըս , անարծարծելի շիջուցեալս , անկազդուրելի խորտա-
 կեալս , անհանդերձելի կործանեալս : Եւ եթէ պարտ է
 զսաստիկն աստանօր ասել անօրինեալս անձին նախատի-
 նըս , ահա գրեմ՝ գրեմ և ոչ անխայեմ զխոլիս նիւ-
 թեալ գեհնին : Ստացուածս նախանձու նորոյս Աղա-
 մայ երկնայնոյ , որպէս և Վայէնն առաջին հնոյն և հո-
 ղեղինին : Որ ունիմ զբնաւն աստուստ 'ի յանձին զնը-
 շանակ ամբաստանութեանս , ոչ զնչոյս տուրեւառու-
 թիւն , այլ զբանիցս կշտամբութիւն :

Գ. Եւ արդ ո՞ր իցեն փրկութիւնքն , ո՞ր սկզբնահայ-
 րըն հաւատոց 'ի յուսահատութեանն վայրի զանգթու-
 թեանն իմ չարիս կրկնէ , մեծն մարգարէից քարամբք
 բանից կոչուձէ , արին բարեփառ աշտէին նիզակաւ 'ի
 մահ սատակէ , պատկեր ճշմարտին ընդ Աքարու հա-
 մայնիւ ջնջէ , աստուածարեալն վեհից՝ յարագողացն վը-
 րիժուց մատնէ , մարգարէածին տեսանօղն՝ ընդ ամաղե-
 կացոյն առաջի տեանն սպանանէ , նախանձաւորն Աս-
 տուծոյ՝ երկնատեղաց բոցօմն վատնէ , ստուերին լուսն
 և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընարութեամբ հոսէ , պե-
 տրն Առաքելոց ընդ Սաիիրայի 'ի կենաց զբաւէ , զար-
 մանալին քննութիւն հոգւոյն՝ բուրումն ինձ մահու ընդ
 կենացն քարոզ խառնէ : Արդ անաչառք և ինձ կաճառք
 երջանկացն , և ուժգնութեան հրամանի վերնոյն արի ըս-
 պառազէնք . ընդ հրեշտակացն և մարդիկ , ընդ տիեզե-
 լաց երկրի և տարերք , ընդ անգագայիցն և շարժողականք :
 Որովք դատեալ միշտ լինիմ տուժիք լկանաց յօրինակ
 և յիշատակ սոսկալեացն ապագայից . իբր հողմով փո-
 թորկի պէաց յաւէտ մրկեալ կենացս վստահութիւն :

մնայ անկայուն 'ի հաստատութեանց : Չոր եթէ որ ի մաստութեամբ 'ի քնին առեալ խուզեցէ զուղակացն բազմատեսիլ զանազանութիւն , զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դասեալ , որ առանց թուոյ և քանակութե համարոյ թինդս առեալ անբաւ երամոց եռան զեռան սլանան 'ի մարմնիս ծոփու , վկայեցէ և հաստատեցէ ճշմարիտ լինել զսասցելոցս բանագրութիւն :

Գ . Այլ զու ինքն օրհնարանեալ անմահ թագաւոր բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս , Աստուծոյ կենդանւոյ միածին Որդի , հզօր բարձրեալ անքնին անձառ քաւիչ ահաւոր , սաստեա 'ի ձմոռն ամբոխեալ ալեաց ողոցս ծփանաց , արձանացո զծաւալս մոլեղին շարժման սրտիս խռովութեան : Բնդոսնեա 'ի սանձս կապոյ երասանաց ըմբռման զցնդեալ մտացս վայրագութիւն : Աղիցի խաղաղութիւն հրամանաւ մեծիդ ամենավարան բբոյս սասանման , սատակեա խափանեա զբազմազլեան անդամս ուրուականս զաղտնեաց ամօթոյս երկրակենցաղս հինից : Գրեցես աղօթս մշտամատոյցս զայս նորընծայ տառ ողորմաղերս թախծագին ձայնի ողբերգարկութեան այսր մատենի : Հան 'ի խորոց մահուս անդնդոց ջնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ : Բնկալ զխոստովանութիւն անձնադատ բանիս 'ի հոտ անուշից . շնորհեա միթար դառնութեան վշտաց ուժդին հեծութեան յուսահատելոցս : Աւ քեզ ընդ Հօր Հօգուովդ սրբով փառք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս . ամէն :

Բ Ը Ն Հ Ի

Ուրիշ յաւելուած իրեն Հեծալեան Կորնի Հակոբ առ Կոյն արեւոյ Տաղլեանայ Բանի . 'ի խոսոյ սրբոյ խոս անդ Աստուծոյ :

Ը . Այլ ահա ձեզ ասեմ , ով եկեղեցիք միանձանց և աշակերտութիւնք կրօնաստանաց , որք մերկամարմին մատանդ ձեռօք առ ակնկալութիւն յուսոյն պարզեաց բարեացն անբաւից տեառն զինուորեալք , որոց զայս սեղան հանդերձանաց խորակաց բանից ընծայեցուցի , ընկալարձք զայս աւանդութիւն խոստովանութեան 'ի շինւած փրկութեան հոգւոյ : Ծաներուք սովմբ զմարմնոյս պարտութիւն , յիշեցէք զմարդարեականն ընդ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ , զի մի պարծեսցի աւանայն մարմին առաջի Աստուծոյ , և զոչ որ է արդարն և ոչ մի : Չտէրունականն մի մոռանայք , 'ի կատարածն իսկ պատուիրանին զողջիք զձեզ ծառայս անպիտանս . մի եղիցի լինել ձեզ որք խաբօղին . զգուշացարձք և զրոյն , թէ կերակուրք նորա ընտիրքն : Քանզի և ես իսկ , որ զայս նուազութիւն մասնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի , վկայեալ զանձնէ կամաւորական սաղտանք բեր բամբասանաց անբժշկական մեղանաց , 'ի սկզբնահայրն սկսեալ մինչեւ 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութեամբ հաստեցի եզի զիս ամենայնիք պարտական չարեաց :

Բ . Եւ այ յումնմէ ոչ պարտաւորէ , և ոչ հաճեցայ , 'ի յասեին նորա անյարմարապէս առ այն , որոյ առաջի ոչ է արգարանալ մարմնոյ երկրածնի , թէ ոչ երբէք շնացայ , ոչ պոռնկեցայ , և ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու : Այլ ոչ ընդհատ ինչ ժանօրէնութենէ . թողցէ նմա տէր Աստուած զայստիկ :

Թէ և Ճշմարտիւ իսկ զրեցաւ ոչ ընթացաւ որքան Թէ գթեաց , 'ի յասել զանյարմարսն 'ի դիմաց ժողովորեանն Խորայէլի բանիւ . Ապքարիայ , օրհնեալ տէր , և մեծացաք . որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան : Բայց ես քանզի դիտողին Աստուծոյ մատնեալ եմ դատաստանի , որ զկիրս աներեւութիցն մտաց 'ի կշիռս եղեալ համարի դատել զիս նոքօք ամենիրաւ հատուցմամբ , ոչ կերպարանեցայց տեսողին , ոչ կեղծաւորեցայց քննողին , ոչ ստեցից զոչ գործեցեալսն նկատողին : Ոչ խաբէութեամբ ընդ միտ ինչ մտից մեծին , ոչ 'ի տեսիլ բարոյ ցոփութեան զչարս քողարկեցից , ոչ 'ի պատկեր ընտանի զապիկարս երբէք յարգեցից : Ոչ խննշացայց 'ի զարդ օտարոտի , ոչ պճնեցայց այլով պայծառութի , ոչ պաճուճանս յարմարեցից տղեղութեանս զեղոյ : Ոչ որ մեղաւոր իբրեւ զիս , ոչ որ անօրէն , ոչ որ ամպարիշտ , ոչ որ անիրաւ , ոչ որ չարագործ , ոչ որ վրիպեալ , ոչ որ սխալեալ , ոչ որ մոլեղնեալ , ոչ որ խարդախեալ . ոչ որ շողախեալ : Ոչ որ ամաչեցեալ , ոչ որ դատապարտեալ , ես միայն եմ և այլ ոչ որ , ես ամենայնն և յիս ամենեցուն : Ոչ հեթանոսք , զի ոչ զիտէին . ոչ հրեայք , քանզի կուրացան . ոչ տղէտք և խառնիճաղանջք , քանզի յիմարք էին իմաստից : Պետ վարժից կոչեցայ յանձինս դատախազ . ուրբի ուրբի անուանեցայ , և զգովեստն առ Աստուած եղծի . բարի ասացայ առ եղկութեանն ժառանգութիւն : Սուրբ վկայեցայ 'ի մարդկանէ , որ եմ անմաքուր առաջի Աստուծոյ . արդար դաւանեցայ ամենայն իրօք ամպարիշտս . հեշտացայ 'ի գովեստ մարդկան , զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի : Կաւազանէն կոչեցայ Արթուն , և ես 'ի քուն մահու ննջեցի . 'ի փրկութեանն աւուր Հսկող յորջորջեցայ , բայց զգաստութեանն աչս կափուցի . Ահա դատաստան , ահա յանդիմանութիւն , ահա նոր

կշտամբանք և հին դատապարտութիւն , ահա ամօթ դիմաց և տագնապ հոգւոյ , ահա խնդիրք փառունց և կրչիոք մեծամեծաց :

Գ . Այլ զու միայն տէր Աստուած մարդասէր , անօրակալ և երկայնամիտ , համարեաց մեղապարտս անձին ընդ վերջին . պարտաւորութեան աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս : Մի լուայց 'ի քան զայսօսիկ , զթած , փոխանակ զի ես ինձէն անձինս զրեցի : Արդ բարձրեա և վերացուցես ըզպահս պարտաւորութեան կանոնիս ընդ քեզ կապելոս տենչանօք հոգւոյ : Հան զնախատինս պատկառանաց խայտառակութեանս , ծածկեմ աջովդ կարողութեան ըզպագեղ տեսակ մարմնոյս մերկութեան : Մատո՛ հանդըստեան զթոպեալս ուժդին մեղացս բեռամբք , կարգեմ ինձ սահման հետոց բարութեան առ ելս կենացդ : Պահեմ յիշատակ ինձ ողորմութեան և զկնի մահու , կեանք ամենեւին , օրհնեալ յերկինս և զովեալ յերկրի , բարեբանեալ միշտ յամի՛ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ ԱՆ ՀԳ .

Վ Իրոսի յաւելլած իրկին հիծոյլեանն նորին հսկողն տոնայն տղերս ճողլեանոց բանի . 'ի խորոյ սրբոյ խոսս ընդ Աստուծոյ :

Ա . Թաղաւոր բարձրեալ հզօր ահաւոր , օրհնեալդ միայն տէր Յիսուս Քրիստոս , քո է փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութեան զսատակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւնս , զպարսաւանս վհատուեառ զուարթացուցիչ գովութիւն , ընդ ամօթոյն համարձակութիւն , ընդ պատկառանացն պատիւ : Բնդ տարազութեանն յոյս բարութեան , ընդ բաժանմանն ալկնկալութիւն միութեան , ընդ սպառնականացն բանից

ողորական սիրոփանս , ընդ միանդամ դատապարտութեանն կրկին աղատութիւն :

Բ . Ողորմեան տէր , մահու մեղապարտին յաւուր արձակման շնչոյս կենդանութեան , մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողցի , զբազմարկածեան ուղեոյն զանդերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մտացս տեսմամբ ամենայնիւ վտանգեալ : Եւ 'ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յիցիցն շաւիղ , թշուառացեալ կիսամեռութեամբ դիմօք այլայլութեան , տատանմամբ մատանցս , կարկամ հառաչմամբ , նուաղ հեծութեամբ , նրբական ձայնիւ , յոգի թախծութեան յոքնամասնեայ տարակուսանաց՝ 'ի խորոցս անբերելութից՝ զչործեցեղոյս ողբալով հառաչեմ : Արողես , բարեգութ , և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութեանս , թէ որչ եղիջիր յոգեոյդ խորտակմանէ , և կամ թողեալ լիցին քեզ մեղանք քո , կամ թէ երթ 'ի խազաղութիւն սրբեալ 'ի մեղաց : Եւ զոր յայնմ ժամու ոչ ժամանցից պաղատել , այսօր ընկալցիս մարգասիրապէս , ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց : Զորժամ որ այժմս բանապաճոյճ խրոխտաձայն սիրացող բարձրապարանոց , անկեալ գնիմ՝ դի անկենդան , կարկեալ 'ի խօսից , կաշկանդեալ ձեռօք , լքեալ անդամօք , խփեալ շրթամբք , կափուցեալ աչօք : Տախտակ անշարժուն , կոճղ կխայրեաց , արձան անզգայ , սրտակիր անբարբառ , գոյութիւն անշունչ : Ողորմելի տեսիլ , աշխարելի կերպարան , սղբալի օրինակ , եղիելի դէմք , արտասուելի նըմանութիւն , լռեցեալ լեզու , ցամաքեալ խոտ , թօթափեալ ծաղիկ , ծորեալ գեղ , շիջեալ զամբար : Դատարկ կոկորդ՝ խոսպանացեալ սիրտ , աղիսեալ ազգարան , սպառեալ աղբեր , թաղկացեալ մարմին , ժողխեալ որովայն : Քակտեալ տաղաւար , կոտորեալ ոստք , բաժանեալ յօդք , հատեալ ծառ , սղոցեալ արմատ , թո-

ղեալ տուն , հնձեալ արտ , ստորախուզեալ բոյս : Օտարացեալ բարեկամ , մոռացեալ պահեստ , թաղեալ զարշուժիւն , մերժեալ ատելի , բարձեալ խէթ , անարգեալ կմախք , և իբր զանսլիտան առ ոտն կոխեալ . կարօտեալ այլոց մաղթանաց , որք զհաւասոց թշուառիս ձայնիւ նուագեալ աղերս հառաչման , ցօղով արտասուայ բարերարիդ գթութեան 'ի բարձունս տարածանեն : Օտարքեղ դարձն յեղանակին արգահատելով , զոր օրհնեմ . զնշան խաչիդ փրկութեան , զոր երկրպագեմ . զյարուեն ճշմարտութիւն , որում հաւատամ . զխառացի քո յայտնութիւն , զոր փառաւորեմ : Օղատաստանիդ ահաւորութիւն , զոր խոստովանիմ . զանիցդ յանգիմանութի , յորմէ վարհուրիմ . զհոգեոյդ սրբոյ ինձ ուղեկցութիւն , զոր պաշտեմ : Օօժմանդ տեսնազրութի , զոր և համբուրեմ . զթաղաւորելն ընդ քեզ , տէր Զիսուս , որում պաղատիմ : Ըրդ լքաւ մերժեցաւ բարձաւ տրոհեցաւ փախեաւ սրացաւ՝ անգի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս կենդանութեան , և յոյսդ որ 'ի քէն պարգեւ մնայական և անջնջական յիշատակարան պահեցաւ :

Գ . Տես ողորմութի 'ի տարակուսանս վտանգեղոյս , միայն բարեգութ փառաբանեալ Որդի Աստուծոյ , քաւել բժշկել կենագործել պաշտպանել նորոգել , նկարել կանգնել հաստատել , վերստին սանդձագործել յերջանիկն անարատութիւն : Քո է կարողութիւն , քո է փրկութիւն , քո ողորմութիւն . չիք քո ակնարկութիւն , այլ ամենեւին զօրութիւն բարձրութիւն իշխանութիւն , անվախձան թաղաւորութիւն , խկութիւն ինքնութիւն , ամենատեղի բացարձակութիւն , բարերարութիւն լուսաւորութիւն : Փառաւորեալ տիրապէս անպակաս և անյաւելուած , ինկեալ խորհրդով անթարգմանելեալ Արքորդութեանդ սրբում , զոհաբանեալ յաւէտ և եւս առ սմին 'ի նոյն պաշտօն հաւասարութեան միապատիւ

զուգականութեան , երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեանս . ամէն :

Բ Ը Ն Հ Գ .

Վ Էրոսին յաւելում իրին հեծում էտն Դորին հոկոյն առնայն տղերն հողէ-անայ Բանի . 'ի խորոյ սրտից խօսք ընդ Ըսոր-ձոյ :

Ը . Արքայ երկնաւոր , տէր բոլորեցուն , առ ամենայն բան յամենայնի միշտ երկայնամիտ : Աստուծոյ կենդանւոյ անքնին Որդի : Ահա անդ է ողորմեն իսկապէս , յորում հատաւ ակնկալութիւն վաստակոյն . անդ է բարեգործեն , յորում տեսութիւն իմաստիցն խափանեցաւ : Յայնմ ժամու է մարդասիրեն , յորում տըկարութեանն վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և արտաքոյ . անդանօր է բժշկութիւն աստուածային քոյ ձեռինդ , յորժամ բնաւ անդամոցն տեղի ետ կենդանուի . այն վայր է այցելութեան , յորում ելք հնարիցն խափանեցան : Այն է քո մեծութիւն , յորժամ գլուխահատութեան վէրն ողջացուցանես . այն է հարազատ քու մըդ ազգակցութեան , եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեսցես փրկութիւն : Այն է հանդիսարան քում յաղթանակի , եթէ զփակեալն մուտս կենաց 'ի սպառումըն շնչոյս բացես . այն են քո շնորհք վայելականք , եթէ զչարեացս իմոց մոռացեալ զբարեսցդ քո յիշեսցես : Յայնմ ես անոխակալ , եթէ ապախտաւորիս ընդ երախտաւորացն ինամարկեսցես . 'ի սոսին ծանեալ զիտացից' եթէ նայեցար 'ի նուէր բանիս նախնի զթութիւնդ , եթէ զսովորուի չարեացս բարձցես :

Բ . Յաղագս այսօրիկ հիւսին բանք և եղանակին նուագերգութիւնք , յորժամ տէրն բարի' չարն ծառայի զբարեգործայն պարգեւեսցէ : Ար մինչ իրաւամբք մը-

նասցէ բանտի , նա յարքայական ասարանսն զնա հանգուցէ . մինչ հրաւիրեալ է 'ի գուբ տղմոյ , նա 'ի բազմականս ամենապատիկս գահից գզուեցուցանիցէ . Սինչ բրելոյ զաշն դիտեսցէ , նա 'ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ . մինչ ծայրատուութեան մատանցն սպասէ , նա մատանի համարձակութեան մատուցանիցէ : Սինչ հայի հարուածոց գանից , նա գթոց զիրկս արկանիցէ . մինչ պատրաստեալ յուսայ կորըստեան , նա երեւելի տեսողաց բազմաց առնիցէ : Սինչ ակն ունի սատակման մահու , նա ընդ կենացն և փառս ընծայեցուցէ . մինչ հատման գլխոյն նայեսցի , նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ : Այս պտուղք օրհնուէ , գթած , սքանչելարմատ քում շառաւիղաց . այս արգասիք կենաց արարչականդ քո հրամանաց : Այս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց . այս նշողք լուսոյ ամենասփիռդ ճառագայթիդ . այս ախորժուութիւն ճաշակաց բարեբանեալդ քո քաղցրութեան :

Գ . Վր միայնոյ են այսօրիկ , տէր , 'ի քէն ազգեցաւ գրել ինձ գոսին . ահա գըոյսդ յատուկ աղերս աղաչեմ , օրհնեալ , 'ի քոյոց այտի պարգեւեալ շնորհեա . բաց տէր , զգանձս քո բարիս , ըստ աղբխանաց առակին : Մի խառնեսցես 'ի համբարս բարեացդ քոց 'ի չարեացն իմոց . մի շտեմարանեսցես զատելիսն քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք , ընդ սիրելիսն քո՝ որ են զթութիւնք և ողորմութիւնք : Մի պահեսցես 'ի ստացուածս քո պաշտելիս զանախորժելիսն քո՝ որ են մթութիւնք և գաժանութիւնք , և զիմ մեասելքն՝ որ են մեղք և թշուառութիւնք : Մի գրեսցես աջովդ օրհնուէ 'ի մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոցս անիծից . այլ զանհնարաւորսն ինձ համարեալս՝ մեծացուցես կրկին առաւել զանուն քո , տէր , 'ի նոսին , ցուցանել զդոյն ինձ զիւրիսս և հեշտականագոյնս : Շատ են իմ

պարտիրս և անոր քան զթիւ , այլ ոչ այնքան . հրաշա-
 լիք իբրեւ զքո ողորմութիւնքդ . բազում են մեզանքս ,
 այլ յաւեւ են նուազեալ առաջի քոյդ ներողութեան :
 Հաճախ են չարութիւնքս , այլ յաղթական են համալ-
 նից , հզօր ամենակալ , քոյդ մարգասիրութիւն . ինձ են
 անհամար իմոյս անձին բիժք , այլ քեզ յոյժ գրաւեալ
 են ընդ սահմանաւ : Ոչ են այնքան զօրաւորք առ կեն-
 դանութիւն զէնք մեզանաց պատկառեցելոյս պողարերուն ,
 որքան յիշատակ մահու կենդանւոյդ առ վանումն կոր-
 ծանողին բռնութեան : Օ ինչ ազգեսցէ փոքր խաւար՝
 աւուրդ Մատուծոյ , զիարդ բաւեսցէ գոյզն ինչ աղջա-
 մուղջ՝ մեծիդ ճառագայթից , զիարդ համբարձցի կշտեցի
 ընդ խաչի քո կրից՝ խակութիւն հեշտութեան մարմնոյս
 տկարութեան : Օ ինչ երեւեսցի յաչս ամենակալիդ քոյ
 առաքութեան՝ կոյտք մեզանաց ամենայն աիեղերաց :
 Ահա կոշտ մի հոգոյ գիւրափխրելի ՚ի կարծրութենէ
 բախման վանեցեալ , իբր զպղպջակ անձրեւոյ բազմա-
 զեղ հոսմամբ քո կամացդ չբացեալ պայթեալ անզրս-
 տին : Օ ինչ պիտոյ են քում զօրութեանդ ամինահը-
 նարդ կարողութեան ժամանակաց առաւելութիւն առ
 յանցուածոց իմոց քաւութիւն . ոչ քթթել մի ական ,
 ոչ խուն մի տեսութիւն ամանցական , ոչ սակաւ մի
 նայեցուած փայլական , ոչ կիսամամնեայ յամբութիւն :
 Ոչ փութացելոց ոտից յեղւեղումն , ոչ յեղից բարձ-
 րութենէ միոյ կանգնոյ կաթի անկելոյ , ոչ զիժ մի չա-
 փոյ մտաց հետեւեցելոյ , ոչ նշուղից արագութիւն ոչ
 շնչոյ տուրեւառութիւն : Ոչ ինչ յայսմ յանոյդ և յան-
 տրպաւորական նմանութենէ անձեւ օրինակաց յաւեւ
 անկայից՝ այնքան առ ժամայնք կամ հարեւանցիկք , որ-
 քան եղմունք ցնդմունք և հարմունք մեղացս ստուամ-
 նեաց պահեստի՝ քումդ զօրութեան , Մատուած ամենայ-
 նի , աէր Հիսուս Քրիստոս , Որդի անբնին կենդանւոյդ

Մատուծոյ : Որ տաս պարզեւս արեւ քաղցրութեան՝
 չարաց ընդ բարիս , և անձրեւես երկաքանչիւրոցն անա-
 չառապէս . կշտես սահմանես իրաւամբք և զվտանգս կը-
 րիցն հաւասարաբար : Որոյ մեծ է հանգիստն առ ակըն-
 կալութիւն պարզելին , փոքր խթանաւ փորձութեան ըզ-
 սակաւութիւն պարտուցն աստէն վճարես . իսկ որ զեր-
 կիր ընտրեցին , ներես ողորմութիւն , տալով և սոցա դար-
 ման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպասես : Աւ-
 քեզ փառք ամենագօրիդ առ ամենայն հրաշագործուի բա-
 րեխանաւոզ երկայնմութե , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ ՀԵ .

Վերսին յաւելումն իբն հիծոյ-թեան նորին հոյսի առ-
 նոյն ողբէրս հաղթանոց Բանի . ՚ի խորոյ սրբից Եսոս ընդ
 Մարտոն :

Դարձեալ առ նմն իբնապատիւ երկրորդութեան ասորումային
 Հոգւոյն աղբեցեալ , որ ինչ յԱստուծոյն սահմանեցաւ առան-
 ցութեան՝ առ ամենայն լուստորութեան էլեղեցոյ գաւանդ-
 թեան՝ մէկնապէս երբեալ ասորմոք : Աւ որ առ անշուշտնս
 նի-թեղէն ցոյցանի երանոսոր իբրապարկութեան անձաւել :

Ա . Աւ արդ ընկղմեալ զմայլեալ և ՚ի սպառ ծած-
 կեալ ՚ի յանձառութենէ առաւելութեան բազմամասնեայ
 յաճախութեան մեծիդ երախտեաց , որ ամենառատ ըը-
 մամբ աննուազելեաւ յաջմէ և յահեկէ՝ ՚ի զիմաց և ՚ի
 թիկանց համբարեալ կան անբաւութիւնք , մատուցանեմ
 ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ գովեստի դաւան-
 ման ճշմարտականի :

Բ . Օ ի որպէս երբեմն հերձուածականին չարափա-
 ռութեամբ ամենապատիրն խաբէութեամբ նենդողին կար-
 թիւն հատուածեալ ՚ի բաց հերքեցայ՝ ելեալ ՚ի գրախ-
 ր՝ 28

տէն , արդ միաւորականաւ այսու ուղիղ անբժութեամբ՝
'ի յաւանդ իսկապէս շնորհի անդրէն միւսանդամ համ-
բարձեալ սովիմբ՝ 'ի թոխչս թեւոց լուսոյ ահա յերկինս
ժամանեցից հետեւեալ :

Գ. Այլ քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հո-
գեւոր երկամբք ծնիցեալ , զմեծ և զերջանիկ դշտոյ ա-
նարատ ամենից կուսից իսկուհի՝ զպանծալի մայրն իմ՝
գովելի , պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանադրել
յայսմ մատենի . զի ծանիցի ցուցցի և այլոց ևս ապա-
գայիցն ազգայ պատմեսցի որքանութիւն փառաց խնկե-
լոյն , արժանապէս պաշտամբն պատուեալ իբր մաքուր
մարմին ընդ զլիսոյ մարդեղութեան Բանին Աստուծոյ ,
'ի յիշատակ ճառիս հաւատոյ Արրորդութեն գաւառուէ :
Աւ արդ 'ի յայս օրինակ հոգեկար պատկերի բանի ,
որ զխորանէս լուսոյ յարմարի , ընկալ զես , զթած օրհ-
նեալ , քաւեցեալ և սրբեալ 'ի սմին : Հան սովաւ 'ի
հոգւոյս զնախատինս մեղացս , անմեղս և անբիծս ընդ
հովանեաւ սորին բազմեցո՛ , յաւել զտկարս 'ի տունն
Դաւթի , և անտուստ փոխեալ 'ի տունդ Աստուծոյ ,
ըստ մարգարէին ձայնի որ 'ի քեզ , Յիսուս , ակնարկի :
Մի սոսկ զմտիցն , և մի անօգուտ զելիցն հետեւութիւն
արասցես . մի զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարես-
ցիս , և մի զհամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանի-
ցիս . մի զպաշտօնն ապաշտորհ գրեսցես , և մի զերկլը-
պագութիւն անխորհուրդ լըցես : Մի անպտուղ լինիցի
տեսականութիւն պատկերին , և մի աննշող՝ կերպարանին
սքանչելութիւն . մի անհուր ողջակիզին սպանդ մտասցի ,
և մի պատարագ ուխտի այս ճառի արտաքոյ ցրեսցի :
Մի ճաշակդ լուսոյ ինձ մահու լիցի , և մի բաժակ քո
կողիցդ արեան՝ 'ի դասապարտութիւն եղիցի :

Դ. Աղաչեմ գեեզ , տէր Յիսուս միգ յեութենէդ ,
որով զգիտութիւն Հօր քոյ և Հոգւոյդ սրբոյ ճաշակեալ

ծանեաք : Բանզի 'ի քէն իսկ վարդապետեալ զամենա-
պարգեւ կարգս եկեղեցոյ , և 'ի սմին աղօթանուէր լու-
սարան կենաց փրկութեան բարեաց , տարածեալ զսիրտս
ձեռաց համբարձմամբ զայս կնդրուկ բանի բնակողիդ 'ի
սմա տիրողիդ բնաւից երեքսրբենիդ մատուցեալ՝ յաւերժ
ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեան :

Աւ սր 'ի 'Նիկիայի սահմանեցաւ Բան , այլ իմն խորհրտածու-
թիւնն սոսիս-տժային ուսանդու-թեան :

Ե. Փառաւորեմք վերաձայնեալ նուազօր օրհնութեան
երգոց 'ի հաւատ պաշտաման բանի զբարեհրաման պատ-
ճառն եղելոց զԱրրորդութիւնն անսկիզբն՝ անհամեմատ
բարձրութեամբ , անհասական խորհրդոց և անըմբռնելի
խմաստից . անզննելի զգայութեանց և անբերելի եղելոց :
Բանակութիւն վերնականն երկնի և անսահման ներքնային
խորոց , լուութիւն սպառմանց և նախադրութիւն սկզբանց ,
մի յերից անշիոթ կերպից , և երիս՝ 'ի միոյ անհատու-
ծելի իսկութեանց , 'ի վեր քան զմտաց անարգելութիւն
յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ : Անփոփոխ բա-
րի , անսասանելի ուղղութիւն , անխառն կերպարան սի-
րոյ , մեծութիւն անյաջորդ , բարձրութիւն անխոնարհե-
լի , անվատնելի տեսականութիւն , բարերարութիւն ան-
նուազելի : Ամբ կայուն , հրաման կենդանի , ակնար-
կութիւն փրկչական , երանութիւն ճշմարտ , ակնկալուի
հաւաստի , խոստումն անստեղի , աւանդ արդասաւոր ,
ստոյգ աւետիս , վերամբարձութիւն անձեռնարկելի :

Չ. Մի Հայր միայնոյ Որդւոյ՝ միական Հոգւոյ
պատուեալ , ամենահարուստ բարութեամբ ամենեւին ու-
նայն 'ի չարէ , օրհնաձայն զօհարանութեամբ անքնին
ներբողիւ զովեալ :

Խ. Մին բարձրեալ ահաւոր անունն՝ համապատիւն

կցորդութեանց , անպատումն ազգականութեանց , եռալուսեանն զուգակցութեանց , անյաւելուածն լրականուեց : Ինքնիշխան կամաւորութեամբ պատուասիրեալ առ Հայրն Հանդուանատիպ՝ գործակցութեամբ Հոգւոյն սրբութեան խոնարհեալ իջեալ 'ի յերկնից , աննուաղ զողով ընտանի փառացն , հաճեցաւ մտանել յարդանդ մայրենի Աստուածածին կուսին մաքրութեան . յորում աճեցոյց զբոյսն օրհնութեան 'ի լուսասահման անդաստանին անարատութեան : Բնդ ամենակատարն էութեան համանեալ յանանջրպետ միականութի , թափանցական խառնութեամբ յԱստուածութեան ոգի բաղկացոյց զգոյութի շնչոյս հրաշապէս : Որով անստամբակելի երասանաւ սանձաց կրթութեան զստահակութիւնս իմ՝ հանդարտեցոյց . և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց 'ի ծայրս լուսեան անմահականն անկոյ : Ի մահ վերաւորեցաւ՝ Աստուածութեանն անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ , որով կենսացոյց զգործին պարտեաց , արարչութեանն իսկութեան 'ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ : Իջեալ 'ի վայրս խաւարային դժոխոց , եհան զկապուան իւրաստեղծ 'ի կապանաց օցտողին . և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ , յինքն նահանջեալ զգիմեցումն մահու , կանգնեցաւ կենդանացաւ աստուածապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացըն՝ կենաց և հովին հօտից բանաւորականաց : Հաւատարիմ՝ եղև յաշխարհի , և երեւեցեալ նոյնութեամբ ամենեւին աննուաղելի , որպէս եկն համայն , և համբարձաւ բովանդակ : Բաղմեցաւ նստաւ 'ի գերունակն գահոյս նախնականին պարզութեան արարչական փառաւորութեամբ : Չոր խոստովանիմբ Աստուած բարերար և տէր բոլորից , որ դատի զամենայն երկիր արդար ընտրութեամբ յաւուրն մեծի , որ ինքն է սկիզբն և ինքն կատարած , նոյն առաջին և նոյն առջապայ , անպակաս բովանդակութեամբ թաղաւորեալ 'ի լոյս անմատոյց :

Ր . Օրհնաբանեմք ընդ Հօր և Որդւոյ՝ և զանբաժանելի բղիւսումն նոցին փառակից Հոգւոյն տէրութեան : Որ ստեղծ զնաւս և կենդանածնէ զմիմ , որ անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մթութեան աշխարհակարն միգի՝ շրջէր նկարէր և կերպարանէր ամենունակ ջուրքքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ 'ի կատարումն արգեան խորհրդոյս՝ զսուրբ աւազանն լուսոյ : 'Այս արար և այժմ՝ գործէ , գոյացոյց և միշտ կատարէ արուեստս սքանչելիս , նախատեսութիւն սրբասնելոց , ազգմունս աստուածօրէնս , զօրութիւնս զարմանաւորս , մարգարէս , առաքեալս , վարդապետս վարժողս կրթութեան հանձարոյ : Չսրբարանն մատուցման արեանն Վրիստոսի յարդարեաց , քաւութիւնս անձանց , առողջութիւնս մարմնոց , ըստ նմանութեան Վրիստոսի ողորմութեամբ հրամայեաց : Մկրտեաց և դեր քան զջուր , ինքեան միայն բաւակառնութեամբ նորոգեաց լուսաւորեաց . հանապազ նովին բարեգործութեամբ զօրանայ : Վկայեաց միածնին Աստուածութեանն 'ի հոսանսն Հորդանանու , օրինակաւ տեսութեան ամպոյ ցուցաւ ձայնիւ Հօր 'ի լերինն թափովրական : Ի նոյն տիպ նմանութեան հովանի եղև յակորեան տոհմին 'ի յելնն Լզղիպտոսի . յուղէգնացուի զօրավարութեանն Մովսիսի՝ հողմով սաստկութեան ըզփարաւոն ընկղմեաց : Վահանայս կատարապործէ , իմաստունս կազմէ , թագաւորս զօրացուցանէ , քաւութիւնս ընձեռէ , կեանս շնորհէ մահացելոց 'ի նորոգութիւն յարութեանն : 'Եոյն ինքն է օծումն մարդացելոյն Աստուծոյ . մշտնջինաւոր հաւասարութեամբ ընդ Հօր երկրորդապեալ՝ 'ի պատիւ մեծութեան Որդւոյ . անսահման փառաւորութեամբ օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Աստուծոյ շատ եկեղեցւոյ, ընդ գէճ ճանիւղեցոցն, որ էն Պիլիպէանս :

Թ. Դաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխտորնակ անբժուլթեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկառուցեալ խորան յանշնչական արձանաց՝ աստուածային բընակութեան եկեղեցւոյս շինուածոյ : Որ գերազանց դասաւ և երկնի ամենազարդ բարձրութեամբ, որ 'ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ : Ակիզքն առեալ կենացս այս դանձու 'ի վերնայարին սըբահէ, խորհրդակատարն վայրէ, զոր հոգին Աստուծոյ լոյց, փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն յաւուրն մեծի Պենտակոստէին : Եթա զտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութեամբ, յորում ապա և 'ի նմին բնակչացն տուաւ լուսանորոգ բարեփառութիւն : Ուստի արիւն հզօրին Աստուծոյ բաշխեալ մատուցանի՝ յաւետքան զհարելին մահու գուժարիւ, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեան կենդանութիւն անմահութեան 'ի սմա ազդելով : Բանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական՝ 'ի սպասաւորութիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ թեւօք սորին պահեսցի : Եթա զի ոչ երկնիւք բաւականայ այս նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեան ծածկոյթ ունիցի . վասն զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան զաստուածային պատարագն մատուցանէ : Մանաւանդ զի պարտաւոր արեան կոշիւցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն յայս նուէրան ընծայեցուցէ : Մի 'ի սմա լուացումն 'ի մահն Բրիտտոսի, զի մի յանգէտս անարդեալ Աստուածութիւնն՝ 'ի ծանուցելումն

զնախնին կրեսցէ : Մի ձեռնադրութիւն 'ի սրտի օծութեան լուսոյն, զի մի յանբժուլթիւնն խարէութիւն խառնեսցի : Մի և շնորհօք քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն, զի մի ճշմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի : Մի յընտրութիւնն ապառնի հաւատ, զի մի սպառնալիք հատուցմանն զըոյցս ինչ օտար համբաւոյ զրեսցի : Մի երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբուի, զի մի կիսամասնեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրուին կարծիցի յանմահ զօրութիւն արքայական որդեգրութեն, զի ընդունելութեամբ երկնայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի : Մի յոյս կենդանութեան առ անեղծութիւնն սրբոց, զի աներկեանութիւն խոստացելոցն՝ 'ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատացի :

Թ. Այս զշնոյ պաշտելի անշնչական Եկեղեցի տայ կեանս և մահու իշխէ, ըստ օրինակի աղամեան պտղոյն յարմարապէս ճաշակելի . գերազանց քան զբանականս յանշնչութեանն հրաշագործէ : Մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ : Գրեալ եւս է տեսակ մծութեան վերնումն կամարին սկզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն՝ 'ի նմա զօրութեանց : Երբ իմն ընծայէ թուիչս մարմնոց ընդ թեթեւութիւնս հուզոց, պատուականին հարստութեամբ զանարգն յարգաւորեալ : Ոչ ինքնակիր մեղօք զազրանայ, եթէ ոչ 'ի մարդոց չարաց և կամ յանհաւատից կոխիցի : Տեպ իմն է զարմանաւոր յաղթող իմաստից մերս տեսութեանց . անբանն 'ի բանաւորէն կատուցեալ, նմին օժանդակեալ իբր վեհագոյնն յաւետ նուաստի : Մեծ է քան զմարդ, որքան ընտրելոյն Մովսիսի ցուպն յաղթողական . առաւել քան զբանաւոր, որքան զԱհարոնի գաւազանս

խորհրդական ծաղկեցեալ . զերազանց քան զմտաւոր , որչափ զԱղիաս և զԱղիսէոս՝ զեստհերձ մաշկեակն սքաշեւհարաշ փայլեալ արուեստիւ : Օգնութիւն պարգեւէ կրկին ամենակատար սրբասնեալ ձեռաց մաքրաբար , քան թէ զինսպէս : Մարմին նիւթական՝ քարի և հողոյ դոյակից հարազատ զղոյսականաց և սրբոց . իբր զվէմն անմահ կենդանի՝ ՚ի կործանումն է և ՚ի կանգնումն . որպէս զդատաւորն ամենից հողոց հանդիսանայ հրաշապէս ազդմամբ յանէծս և յօրհնութիւնս : Իրրել տեսող աներեւութից զոմն հրապարակէ և զոմն տաժէ . առ ինքն կոչէ զրեալ յանուանէ իբի զտիրօղ հըրամանատար էիցս : Իբր զլեանոյ յաւիտենական անհարուածելի է ՚ի զիմամարտից . ըմբռնէ զհոգեւորս իբր զհնարագորութիւն մեծին արուեստի . անմեղս և անվերկալութիւնս ըստ Բրիստոսի հետոյն ընթանայ , բարձր ճոխութեամբ անպատկառաբար համարձակապէս զօրէն գովելոյ զլուս ամբառնայ :

ԺԱ . Ենքան մեծ ունի սրբութիւն , մինչ զի զօրս ըստ պատկերի Աստուծոյ եղեն , կանոնաւ խորէ : Յետ յողունց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեացի մարդ որ սխալեալ ՚ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի , այլ ընդ անպատրաստիցն թերութեանց դժուարի . ոչ նզովի , այլ տեղի տայ ոչ գիտողացն զչնորհին զչափ : Ոչ լքանի ինքեամբ պարտաւոր իւրօրն գտեալ , այլ առ ՚ի մերոց զործոց խրթնանայ . ոչ թողացուցանէ երկիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց , ըստ արական անձառ խորհրդոյն . ոչ կրկին յաւուր զնոյն ցուցանէ , զի մի անընտրաբար նուիրանն խայտառակեցի : Վշտակցէ կարեաց զօրապէս իբր անախտակիր ապականութեանց որ ՚ի ՚ի մեղ շարժմանց . առանց բարբառոյ տիրապէս դատի հրամանաւ :

ԺԲ . Ես զի և տապան իմն է մաքրական , կրկին

երջանակական , ՚ի հեղձմանէ կենցաղոյս ալիաց պահապան : Ոչ բազմօք անբանիւք գազանաց դասուք և սակաւ մարդկամբ , այլ ընդ երկրայնոցս և զվերինն յինքն հաւարէ : Ոչ յայլս խաղութեան բերի , այլ ՚ի բարձրութիւնն երկնի համբառնայ . իբր զաշակերտ հրահանգեալ Հոգւոյն Աստուծոյ փախչի ՚ի նենդութենէ : Ոչ ՚ի բողբ մահու մարմնոյ հարուածոց , այլ ՚ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ : Ոչ Վոյլիւ ձեռնարկեալ զործի , այլ հաստօղին հրամանաւ շինի . ոչ Ո՞վսէս ընդ Բեսելիէլ , այլ միաձինն Աստուծոյ Հոգւօրն սրբով զսա հանդերձէ : Ոչ յարաշարժ հանապազափօխ , այլ մշտակառոյց հիմամբ անասանելեալ զսա հաստատէ : Դարձեալ իբր զտապանակն անխօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան տեսողականաց մեղ առաջնորդէ . որպէս կերպարան անբանակ Ղչին յառաջ հետեւեալ՝ ՚ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատրաստէ : Ինչ Ողիէլն անդուստ սատակէ , եթէ ոչ խաչապէս յողի բերիցի : Վպանանէ վատնեալ վաղվաղակի առ ժամայն , եթէ անամնայինն լծակցութեամբ երկրասիրաբար գետնակօխ սայլելք՝ իբր զանօթ ինչ ձեռնազնին բարձեալ տանիցի : Ոչ լեզուաւ մարմնոյ , այլ բանիւ հրեշտակաց խօսի . ոչ ունկան դոյականութիւն , և արագապէս մտառեալ լսէ . ոչ ձայն կերպաւորական բարբառոյ , և զպառզամս զործոցն Յիսուսի համօրէն ազանց պատմեալ հոչակէ . ոչ խաղալեաց շարժականութիւն , և աստուածայնով իմն կենդանութեան հագագաւ ազդէ : Ոչ ոսկերաց և ջրաց յօգուած , և երկուք հազարօք կանգնօք լայնութեամբ՝ իբր զզոնոն անհամար բարձրեալն Աստուծոյ՝ զկենդանական զօրուն գումարտակ հերբայական վառեալ ամբօխին . և այժմ ընդ նոսին իբր զանմարտիս ՚ի սրբութենէ՝ զոմանս ախտիւ մեղանաց ջրեալս հատուածեալ յինքենէ հեռի ուղեկցէ

ապրեցելոցն 'ի տաժանաւոր աղիւսարկութեանցն : Այդն իսկ էութիւնն Մատուծոյ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիմի նշանակեցաւ , պատառմամբ կողին զքնաւս արբուցեալ : Ոչ արեան երակաց ընթացք , այլ լուսոյ վերնոյն շառաւիղը թափանցանց միութեամբ զտոյն կենդանացուցեալ նորոյ պաշտպանէ : Ոչ Սողոմոն կամ Աորաբարէյ մահկանացուաց ոստիկանութիւն , այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ : Ոչ աննուիրական հասարակաճաշակ իւրով առ 'ի (Յակոբայ պարարի , այլ ահաւորին արեամբ և փառօք մեծին օծանի : Ոչ տուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ Մատուծոյ զտորին որդիս կնքեալ ձեռնադրէ . ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս , այլ արքայութեանն երկնից ժառանգս կրթէ . զ'ի ծոց իւր զրդեալսն զոգոյն Աբրահամու ընծայեցուցանէ : Փեսայ հարսնութեան սորա Որդին Մատուծոյ կենդանոյ , օրիորդք խնայից սորին հայրապետացն դումարք : Սոյն ինքն մոռացումն առնէ այսակիր բարձանցն կոամսլութեան , զի գերկնայնոյն Մատուծոյ ունի զծանօթութիւն . օտարութիւն է ամենայնիւ զիցն դրօշերց , զի 'ի համօրէն քարինս սորա Վրիստոս երկրպագի . Վակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց , զի 'ի բնաւից մայրից աշխարհի նմանութեամբ կենացն փայտի 'ի սմա տէրն նուիրի . խորտակումն է համայն զիւսպատիր յուրթիցն արձանաց , զի քարն գովեալ կարկեհան ակամբք և վիմովք կենդանեօք այսրէն հաստատի :

ԺԳ . Այս յարկ չքնաղ և աստուածընկալ ազատ է միանգամայն 'ի յամենուստ ծառայութենէ . ոչ օրինակ վերնոյն Սիոնի , քան թէ ճշմարտութիւն նմին ճանաչի . ոչ կռպպաշտութեանն կապաւ բազին և կամ լուծով օրինին տեղի պարտաւորութեան , այլ տէրունի բարեբարութեանն պարգեւարան 'ի մէջ համբուրի :

Ոչ սասանի երբէք յայլ իմն կերպարան ձեւոյ փոխարկեալ , այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի . սոյն ինքն և երկին երկնի յերկրի լուսապայծառ կերպիւհոչակի : Որպէս չէ առանց Հօրն Վրիստոսի , և ոչ առանց այսր մօր արգանդի յոգի կատարիլ : Մտուն շրջի անրովանդակելին , եթէ ոչ 'ի սմին տան տաղաւարեսցի . ոչ ունի տեղի զլսոյն հանգստեան տէրն բողբոյց , եթէ ոչ 'ի յայս կայարան կենաց մտեալ ազանիցի : Վրան 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութիւն առաւել պարծի . անբաւութիւն աստուածեան լուսոյն . որպէս զգէմն մարդարէին և զօրինակս սորին ծածկեցին , որպէս փախեան 'ի փառաց երեսաց նորին , և նմանութեան սորուն՝ որ 'ի տաճարին ոչ հանդարտեցին , 'ի տօն հանդիսի մեծի գովեստի , և 'ի բանականացս դատուց խմբեալ նուագի . աստ օրհնի կրկին բալձանօք , քան 'ի դրախտն վայելչական :

ԺԿ . Այս մայր հողեւոր երկնաւոր լուսաւոր , քան թէ երկրաւոր շնչաւոր մարմնաւոր , զիս զգուեսայ որդի . կաթն ստեանց սորա արիւնն Վրիստոսի : Եթէ Աստուածածնին իսկ պատկեր զտոյն ոք զրեսցէ , ոչ անօրինի : Իբր զնշան խաչին փրկութեան՝ զօրութիւնս զարմանազանս և արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշագործէ : Իեմ՝ ահաւորին ասեմի 'ի սմա հաստատեալ տեսանի . սովաւ խորթաբարոյիցն հերձուածողաց մոլիգնաճառ բերանք կարկին : Ունի և քարինս իմն իմանալիս և բանաւորականս , որով զգազանամիտս անմաքուրս բացուստ 'ի բաց հալածեալ տարագրէ : Մանանի և Աստուածս ոմանս եղականս պատկերս մաքուրս միոյն Մատուծոյ Վրիստոսի : Ունի և զլիւրն իւր ընդ արեւելս՝ 'ի տեղի խոստման բնակութեանն մերոյ առաջնոյ . ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զգալստեանն Մատուծոյ շաւիղ , զփայլականն առակ տիրական 'ի գէմն բերեալ

մեզ վարդապետէ . զփրկութիւնն 'ի յելից անտի ծագման արուսեկին քրիստոսեան երեւմանն 'ի վերջնում աւուրն արարածոց երկրի թարգմանէ : Յաւս հալածէ , ախտածէտս բժշկէ , դիւայ բռնութեանց զօրէ : Արգանդ որովայնի սորին աւազանն կենդանարար . 'ի պար հարսանեաց սորա դասք Առաքելոցն : Այնքան ճոխացաւ բարդաւաճեալ երանութեամբ , մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ վայելչապէս յորջորջեցաւ . տիրամօրն լուսոյ կոչմամբ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ : Մփեկոց մեղաւորաց նաւահանգիստ հանդարտութեան , խրախմանարան վերնոցն դասուց , բժշկարան անսխալի տարակուսեալ պարտաւորաց : Արրորգութիւնն անպատում 'ի սմա փառաւորի օրհնեալ յամենայնի :

Ժ. Ա. Իսկ եթէ որ ձեռն չարութեան 'ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ , և զիւս ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ արուեստ երկրակենցող զասհմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի , և ոչ պարզեւ առաւել կենաց և ակնկալութիւն աստուածային և Հոգւոյն սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախադրութիւն և երախտեաց բարձրելոյն ամենատուր լիականութիւն՝ և կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան՝ և Առաքելոց ձեռինն աջոյ բարեհանձար հիմնարկութիւն . և միանգամայն ասել՝ դուռն երկնից և քաղաք Աստուծոյ կենդանոյ և մայր կենդանեաց ազատ 'ի պարտեաց և ճշգրիտ տեսակ կերպի երեսակիս բանականի , իմանալին՝ խորհուրդ հոգւոյս , և շօշափելին՝ պատկեր մարմնոյս , և սրբութեանցն անդանձաօից գերազանցեալ նոր սրբութիւն և քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ , զայնպիսի ոչ խոստովանողան մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ 'ի ձեռն Բանին իւրոյ էակցի , բարձրեալ 'ի նմանէ և զաւանդ շնորհի Հոգւոյն փառակցի . փակեցցէ

զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին : Իսկ մեք զորս զրեցաք՝ սմին և վկայեմք , հաւատացեալ որում կարգեցաքս , յանուն և 'ի փառս ամենակալ Արրորգութեանն և միում Աստուածութեանն , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Այն է՛հ հասարակ յԱրրորգութեանն , եւ այս 'ի հայրն է՛հ լուսաւոր իսկապէս լուսաւոր :

Բ Ը Ն Հ Օ .

Վերստին յաւելումք իրեն հեթա-խեան շարին հետեւ ասնոյն աղբիւս ճաղ-խանոց Թանի . 'ի խորոյ սրբից Խոսք Լուսաւոր :

Ա. Աստուած ողորմած բազմադուրթ , հզօր ահաւոր մարգասէր , օրհնեալ կենդանի անձաւ . որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո իր անձեռնարկելի , որ և մտաց է անհնարաւոր : Քո է հատուցանել պտուղ քաղցրութեան ընդ փշոց խոտութեան , սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց : Քանզի բարի առնել ատել լոխ և աղօթս 'ի վերայ հալածչին , և փրկութիւն հայցել խոցողին , և սպանողին ներումն խնդրել 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից . որոյ քաղցրութիւնն անձաւ է քան զօրինակ և բարեբանեալ կամաց քոց անխորժելիք և դովեալ շրթանց քոց ճաշակելիք : Հոգի եւ խորժելիք և դովեալ շրթանց քոց ճաշակելիք : Հոգի եւ քրեսաց և զօրութիւն զեղոյ մերոյ , տէր Քրիստոս , օրհնեալ 'ի բարձունս : Այլ մարդք երկրածինք և ամենավրէպք՝ և բարեմատոյց ձեռաց չարիս դարձուցին . իսկ դու լոյս և սուրիչ լուսոյ ոչ լսես անէծս , ոչ ախորժես չար , ոչ կամիս կորուստ , ոչ ըղձանաս մահ : Ոչ յուրեւ 'ի խոտութեանէ , ոչ տիրիս 'ի ցասմանէ , ոչ հար-

կիս 'ի բարկութենէ , ոչ յթանաս 'ի սիրոյ , ոչ այլայլելս 'ի գթութենէ , ոչ փոփոխիս 'ի բարութենէ : Այ թիկանց շրջումն և ոչ երեսաց անդրադարձութիւն , այլ ամենեւին լուսաւորութիւն և նկատումն փրկութե :

Բ . Աթէ քաւեսցես , կարող ես . եթէ բժշկես , զօրաւոր ես . եթէ կենդանացուցանես , բաւական ես . եթէ շնորհես , առատ ես . եթէ ողջացուցանես , հնարաւոր ես : Աթէ պարզեւես , ամենալի ես . եթէ արդարացուցանես , ամենարուեստ ես . եթէ մտիթարես , ամենիշխան ես . եթէ նորոգես , ամենակալ ես : Աթէ հրաշագործեսցես , ամենաթագաւոր ես . եթէ վերստին հաստատես , արարիչ ես . եթէ կրկին դոյացուցանես , Աստուած ես . եթէ հողաս ընդ մեր , ամենատէր ես : Աթէ կորզես 'ի մեղաց , այցելու ես . եթէ շարժանեացս ընձեռես , օրհնեալ ես . եթէ յորսողէն զերծուցես , փրկիչ ես . եթէ զեղցես 'ի քոյոցդ 'ի մզ , հարուստ ես : Աթէ նախ քան 'ի մէջ խնդրելն դու կարկառեսցես , անկարօտ ես . եթէ լայնես նեղութեանս , անգործիչ ես . եթէ զվերջացեալս կոչես , խնամակալ ես . եթէ զսասանեալս հաստատես , վէճ ես : Թէ պատքեղոս արբույցանիցես , աղբւր ես . Թէ զծածկեալն երեւեցուցանես , լոյս ես . Թէ զօգտակարն իմ ծանուցանես , բարի ես . Թէ զբիծան անտես առնիցես , երկայնամիտ ես : Թէ ընդ փոքուս 'ի դաս ոչ մասնիցես , բարձրեալ ես . Թէ ծառայիս ձեռն մատուցես , ստացող ես . Թէ աջովդ քո պաշտպանեսցես , յանձանձիչ ես : Թէ վճատեղոյս դարման մատուցես , կերակրիչ ես . Թէ զանդէտս պարարեսցես , վարդապետ ես . Թէ զգիմեալս առ քեզ ընկալցիս , ապուէն ես :

Գ . Աւ արդ քո են այսոքիկ , տէր ողորմութեան , ոչ միայն գրեալ , այլ կատարեալ և զլուսաւորեալ , նախնի նահատակդ համբերութեան վկայից , որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրապէս յասպարիսի ճակա-

տուն , զի կակղեսցես զկարծր բռնութիւն մարմնոյս զոռորութեան վարժամար կրթութեան շարչարանացն վետանդի : Աւ յանպարտակիրք մարմին չափեալ զանուես մերում զտաժանականն տաղնապ տուժի , զի զգթութիդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ ՀԻ .

Ս Խրատն յախրատ իրին Հիշման նսրն Հսկոյն աւսն աղբրս ճողմանայ Եսնի . 'ի խորոյ սրբից իտս ընդ Աստուծոյ :

Ա . Աւ քանզի օր է օրհնարանեալ և լուսանորոգ կշռութեան երկուց ընտրութեանց արարածոցս սասանութեանց՝ յիդանակելոյ յայլ իմն հուժիւն երկնակնցաղ անփոխադրելի , ամբարձեղոյն խոնարհութեան և կործանելոցս վերբերութեան , սարսափելի Ուրբաթու մեծի Պասեքիս , յորում հին եհաս ժամ բարեպատեհ զրել ինձ զայս նուազ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղիւ , ահա ըղձալն համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ՝ կրեցեր . Աստուած բոլորից :

Բ . Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմովս կերպիւ , ոչ խօսեցար տուիչդ բանի , ոչ բարբառեցար հաստիչդ լեզուի , ոչ ձայն արձակեցեր սասանիչդ երկրի , ոչ մնչեցեր ամազղեցիկ փողդ մեծութեան , ոչ երախտօքն քո յանդիմանեցեր և ոչ շարեօք նոցին ըմբերանեցեր : Այ մասնեցեր ամօթոյ զմասնիչան զքեզ տանջանաց մահու , ոչ 'ի կապելն զքեզ զիմադարձեցեր և ոչ յապտակելն դժուարեցար , ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր և ոչ ընդ կոփելն երբէք խոռվեցար , ոչ ընդ կատակելն սրտմտեցար և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր : Սերկացուցին զգեեսս պատմուճանին

իրբու 'ի տկարէ , և դարձեալ ազուցին իբր անփրկա-
նաւոր ըմբռնեցելոյ : Աթէ ոչ էր արբեալ կրկնակի քա-
ցախ զանդեալ ընդ լեզույ , ոչ էր հեղեալ մաղձն իմ
մթերեալ նախնի դառնութեանն : Ճաշակեաց վճատութիւն
և արգել անգէն տարակուսանօք , առին մոլեղնաբար և
դարձեալ մատուցին անպատկառապէս : Գանիւ հարուա-
ծոց յետին անարգութեան 'ի մէջ խառնիճազանջն ամ-
բոխի գատապարտեցին , ծունր կրկնեցին նախատանաց
և պսակ եղին արհամարհութեան :

Գ. Ոչ ետուն հանգիստ կենդանարարիդ , եթէ ոչ
զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին : Ընկալար
իբր երկայնամիտ , առեր իբրեւ զհեղ , բարձեր որպէս
համբերող , ըստանձնեալ իբր զսրտաւան զփայտն
վշտաց : Որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝ ուսով բե-
լեալ զգէնն կենաց , զի յարհաւրաց զիշերայնոց զեւ-
րակերտս գահաւորակս մարմնեղէն գոյութեանս պահ-
պանեցէ 'ի գատապարտութեանն վայրի իբր 'ի խրախ-
ձան խնձորից : Հանին արտաքս իբր զողջակէզ , կախե-
ցին իբր զնոյն Սարեկայ ձգեալ զեղջերայն , տարածե-
ցին 'ի սեղան խաչին իբր զպատարազ , բեւեռեցին որ-
պէս շարագործ , պնդեցին իբր զպատամբ , Օխաղաղունդ
երկնաւոր իբր զաւազակ , զանկապուտ մեծութիւնդ իբր
զտառապեալ , զառ 'ի քրովեկից պաշտեցեալդ իբր զքա-
մահեալ , զսահմանդ կենաց իբր զարժանաւոր սատակ-
ման մահու : Օլաւտարանիս նկարիչ իբր զհայհոյիչ օ-
րինին , զտէր և զկատարումն մարգարեկից իբր զճամառօ-
տիչ զրեցելոյն , զճառագայթից փառաց և զկնիք անքնին
խորհրդոցդ Հօր՝ իբր զներհակ ծռողիդ կամաց : Օօրհ-
նեալդ իսկապէս իբր զտարագրեալ , զկապոյ օրինին լու-
ծիչդ իբր զար 'ի նզովս գրեալ , զհօւրդ ծախիչ իբր
զհերքեալ իմն կալանաւոր , զհաւորդ երկնի և երկրի
իբր զճաւաստի պատժաւոր , զ'ի լոյս անմատոյց ծած-
կեալդ իբր զհողածին ըմբռնեալ :

Գ. Ո՛վ քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարութիւ
ողորմածիդ գթութեան , որ վասն ապախտաւոր և անօ-
րինեալ ծառայիս տէրդ բոլորից զայս ամենայն կամաւօ-
րապէս և հաւանողական հաճութեամբ՝ կատարեալ մար-
մնոյդ միութեամբ 'ի քեզ ընկալար : Աւ մինչեւ 'ի քը-
նարան շիրմին տապանի անպակաս 'ի լրութենէ ամբողջ
նոյնութեամբ , Աստուած անքնին՝ զնոյն կրեալ նախա-
տինս անձառ համբերութեամբ , յարեար կենդանի ինքն-
իշխան բարձրութեամբ լուսոյ , աննուազ մարմնով և
անթերի Աստուածութեամբ , օրհնեալ փառօք , զովեալ
գթութեամբ , բարեբանեալ միշտ ողորմութեամբ , յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲՆՆ ՏԻ :

Վ Էրսորին յաւելոսած իրլին հէժաւլեան Կորին Հոկոյի օր-
նոյն աղէրս Ծողլեանոց Բանի . 'ի խորոյ սրբից խօսք լինդ
Ասորածոյ :

Ա. Աւ արդ անկեալ յերես հողանիւթ կերպիւս ,
'ի վայր խոնարհեալ ծնրագրական երկրպաղութեամբ ,
զբարեգործիդ ողորմածութեան զկենդանարար ոտս համ-
բուրեմ , զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ :

Բ. Աղաչեմ զքեզ , միայն խնամակալ մարդասէր ,
գթած կեցուցիչ հզօր այցելու պաշտպան , մի ունայնաս-
ցի վաստակք աշխատութեան փրկականդ կրից մարդա-
ցելոյդ վասն իմ Աստուծոյ , մի սոսկ եղիցի քրտանցն
կաթուած խառնեցեալ արեամբ 'ի մատնութեանն աւոր
զիշերի : Մի լեցի ստուերացեալ լուսոյդ երախտիս ,
զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պար-
գեւեցեր . մի ջնջեցին շնորհացդ աւետիս , զոր կողից
քոց կայլակք նորոգեցին : Մի անշահ եղեցին կրիցդ
պտուղք , զոր կարօտութեանս խմում մատուցիր . մի

պարծեսցի բանասրկուն վանեալ՝ զքո ստացեալս իւրաջուցանել : Ըհա յաղթեսցես կամօք քո ըղձից չարին , վերստին ապշեցցի միանգամ զարհուրեալն , կրկին պարտեսցի 'ի սպառ դատեցեալն : Մի անխայեր զազատաբարդ քո բան , որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ վերստին առ քեզ դարձուցանէ : Օանձառն արարեր բարերարութիւն յանակնկալ ժամուն յուսահատութե , յորժամ՝ բնաւ իսկ կտրեալ և օտարացեալ էր կենդանութեանն շարժողութիւն . մեռար անմահդ և զմահացեալս նորոգեցեր : Եթէ զկանոն համաձեւութեան օրինին փոխեցեր , արդ զգիւրինն և զհեշտականն և զեւսհնարաւորն մի արգելցես , սկզբնաձիր ողորմածութեան բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թաղաւոր : Ըզգեա՛ բանիւդ ամենագօրաւ , որ զչոյութիւն լուսոյն ստեղծեր 'ի նախնու. մի աւուր , և վաղվաղակի փոփոխեալ զտայց 'ի լաւ անդր : Եւ փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետեւել լուսոյդ , դու ելցես ինձ յայց , ճառագայթ ծագման հայրենի կերպիդ , և կոչեցայց առաջի քո ծառայս միաստապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն : Այ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի զպարտան հատուցանել , ահա շնորհեա՛ ինձ տառապելոյս զերեսս քո՛ լոյսդ 'ի խաւարի սրտից վհատելոց : Ըրդե՛ և կընքեա՛ զընթացմունս ելիցն , որ միշտ զեղուն բարիքն հօսեալ 'ի յուշոյս իմ՝ տեսութենէ : Պահեա՛ ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ մնացականաց , որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց , պաշտպանեալ 'ի քէն , անսահման բարի :

Գ . Ըհա ողորմեա՛ ինձ , գթած ազաչեմ զքեզ ողորմեա՛ ինձ , հօր , կրկին ողորմեա՛ : Մի փոխարկեր երկունս ցաւոց ընդ չարեաց խնոց , բարիդ ամենեւին . մի բառնար 'ի վտանգելոյն զառ 'ի քէն պարզեւեալդ շնորհ , մի կապտեր զփշումն ամէնօրհնեալդ հօգւոյ , մի լուծա

ներ զխնկեալ զկնիք արքունական պատկերիդ : Մի յայտնեսցին փուշք մեղանացս 'ի սրբութիւնս մտացս . մի խզեր զկապ միութեան զընդ քեզ սիրոյն սնդուութեան , մի մերժեսցես զարուեստ զօրութեան լեզուոյս յարմարութե , մի պակասեցուցաներ զյաջողուած աշոյս առ 'ի զլուսոյդ մասունս բաշխել : Մի գրեր 'ի դպրութեան կենաց մատենիդ զմահուն պարտիս , մի պահեր , մի ինձ համարի , մի յիշեցուցաներ , մի ամաչեցուցաներ , մի նախատեր , մի ոտն հարկաներ , մի արձանացուցաներ զմեղկութեանցն , մի ամբարեր զկորստեանցն , մի իբր գտեալ իմն ամբաստաներ : Մի յարուսցես ընդ իս ըզծառն անիծից , մի արձակեր 'ի յիս զսաղարթ փասուցըն , մի ընծիւղեր զծաղիկ մեղացս , մի բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս , մի արտաբերեր զէութիւն պողոյն : Մի թուեսցես 'ի ճիւղս երկրաստեղծ մատանցդ զգիւտս զործոցս , մի մատուցես բան ընդդէմ , ահեղ , զանօրէնութիւնս իմ յիշատակել , մի մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հօգւոյս վարել 'ի դերութեան , մի աստէն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես : Մի նուազութեամբ այսր անցաւորի զյաւիտեանական բարիսն տուժեր , մի 'ի սակաւում այսմ ժամանակի զանվախձանելի զփառսն չափեր , մի ընդհովտիս մշտաց հեծութեան զանախտական զկեանսդ զբրաւեր , մի ընդ ստուերի այսր մթութեան զանձառելիզ լոյս փոխանակեր : Մի զերասանակ մտացս լայնս՝ ըստ արտուղի հետս հեծել , մի զկամուրջ կենցաղոյս դրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն . մի զհովիտ հանձարոյս ստուերական պահեր 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել : Եթէ ամբարես զառանց համարոյ զործոցս իմ չարիս , մեռայց կենդանոյն . եթէ շտեմարանես 'ի սրտի , աստուտին կիզեալ անբոց այրեցայց : Եթէ քնեսցես զանօրէնութիւնս , առանց յանդիման քեզ

լինելոյ 'ի սպառ հարեցայց , եթէ անկակից ինձ թողցես զմեզս , 'ի նոսին վասնեալ մաշեցայց :

Գ . Ախարկեա՛ , միշտ զօրեղ ամենակարող , փախնուլ չարութեանցս որ յիս , զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ : Հրամայեա՛ , զթաժ ինամակալ գովեալ , լոյս անշիջանելի , զօրութեամբ անսահմանելեալ , զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս մարմնեղէն յարկի անդամոցս . յորում հանգուցեալ անքանելի բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ : Օգապականութիւն մեղացս մերժեալ 'ի սպառ յանարատութիւն զիս պատրաստեսցես , ամենակեցոյց թագաւոր անմահ տէր Յիսուս Քրիստոս , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ ԱՆ ՀԹ .

Վ Երբքն յաւելլած ինչն հեծոլեան նորն հոկոյն սոսնայն սոսնայն հաղթանայ Բանի . Ի խորոց սրբից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . Յիշեա տէր , տէր զթութեանց , սիրողդ իրականց , Աստուած ճշմարիտ . նայեա՛ վերստին 'ի բնուես կերպարան միշտ սխալական : Օհնեա՛ ինձ դարձեալ զամենբնթաց սարածմունս ելից արեանս շարժողութեան . բժշկապէս մատիր տեսանել , զի մարդ եմ հաստատեալ մտօք խակութեան թերի խորհրոց յայն ինչ , զօր գուխակ վկայեցեր տեսողդ ոչէից՝ միայն դու անմասն ստուեխաւորի : Ապա իրաւունս է զբել ինձ ընդ մեղուցեալն մարդկօրէն վրիպանայ սխալմամբ պարտեալ կրկին՝ իբր զերկրածին մահացու մարմին , քան բանիդ քում սուտ երեւել : Քանզի արգարեւ զիտակ իսկ ես , թէ չար է արարն և ընդարոյս չարութիւնն մեր , և ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան , ըստ հոգեհանձար իմաստնոյն կանխադեկոյց առակի :

Բ . Թեթեալոյն զսաստիութիւն տանջանայն , որ պատրաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհնին զարդ մահուն յաւիտեանականի : Բարձ զամօթոյս պարտիս , որ պահեալ է յայտնել թշուառականիս յետին ատենին յանդիմանութեան : Խրատ խաղաղութեան յառաջապարդեւ ողորմութեամբ քո ընծայեցո՛ , զի մի անտանելին ահաւորութեան 'ի ցոյցս ինձ եկեալ կերպարանեսցին , անյոյս ապշութիւն ընդ կենաց զըջման առաջի կարգեալ , դատաստանն ահաւոր , անկաշառ և անխաբելի գատաւորն , ամօթն սոսկալի , կշտամբանքն սարսափելի , յանդիմանութիւնն անփախչելի , տագնապն անձողպարելի : Պակուցումն անխորխուսելի , գողումն անվեճարելի , լալումն անսփոփելի , կրճումն ատամանցն անբժշկելի , ապականութիւնն անողջանալի , անէձքն սարսափելի աստուածային քո բանիդ , փակումն զթոյն և արգելումն սղորմութեանն : Ար ընդ զալարեղն երկնի և ընդ երկրի դղրեղն ընդ կարծրութիւն յատակիս , ըստ կուտակելոյ կոհակաց խոռվութեան ծովու իբր փախըստեան կերպ ցուցանելով , մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկցոցն : Այլ տատանեալ սասանեալ լայնատարած դեանոյս թանձրութեան 'ի հիմանց անտի , ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնային խորոց հարթէ զլերինս , և հալեալ հրդեհին բնութիւնք վիմաց և ամենայն տարերաց գոյլց : Այլայլն երկինք յանդժ փոփոխութիւն , և յեղանակին արարածք տարերօք իւրովք 'ի նորոգ նմանութիւն : Օածկութիւնք գործոցս հրապարակին՝ և աներեւոյթք կրից մեր յայտնին . վազք կրօնից ներգործեցելոյ 'ի մարմինս մեր նկարին , թագաւորն երկնից յատենի նստի , վճիռ հասուցմանն 'ի ձեռին իւրում : Ահա վայ ինձ եւթնիցս անգամ կրկին եղկութեամբ , ըստ չափոյ կշռութեան այսր համարոյ՝ որ զանբաւութիւնս թուոց պարազէ : Օհնչ գործե-

ցից , ողբարիս հոգի , յայնմ մեծի աւուր վտանգի , քանդի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քսն դճան , դիպոււմնն . զոր ոմն մարդարէ զօրինակին նմանութիւն 'ի դէմն բերելով , զձեպ տաղնասի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն . Օր օրինակ եթէ փախնուցու որ 'ի ձեռաց առիւծու և պատահեսցէ նմա արջ , և փախնուցու յերեսաց արջուն և մտանիցէ 'ի տունն , և յեցո սցէ զձեռն իւր 'ի յորմն , և խածանիցէ զնա օձ : Եւ դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի զտեսին քստմնելի . ո՛չ սպաքէն , ասէ , խաւար է օր տեառն , օր խաւարոյ և մթոյ , օր ամպոյ և մառախղոյ :

Գ . Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից հզօր օստիկան իրաւամբք ամբաստանեսցէ , և հատուցանողն ահաւոր արդարութեամբ յանդիմանեսցէ : Սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուճապեն , զոմանս 'ի կեանս հրաւիրեն և զօմանս յամօթն դատապարտեն . կիսոց դէմն լցեալս ծաղու ցուցանեն , և ինձ ահարկուս և քստմնելիս երեւեցուցանեն . ոմանց պսակս լուսապաճողն մատուցանեն , և այլոց կորուստ մահու բողոքեն . արդարոյն ձայն աւետեաց , և ինձ դոյժ անվախձան վշտաց : Յորժամ առ բարխն՝ մահու յաղթուի 'ի սպառ մեռանի , և ինձ չարագործիս կրկին յարակայի . ուր դրանն բախել ոչ ինչ ազդիցէ վճար եղեալ զթուեն առ իս : Յորժամ դպրութիւնք հրաշիցն զարմանալեաց , որ են ծածկեալքն յայժմուցս հասարակաց վարուցն տեսակք մարդկային բնութեանս դործոց , յաղագս որոյ եղն զոյութիւնք ամենայն էից , յիւրաքանչիւր մարմնս անպակաս զրութեամբ իսկոյն երեւին . և խորութիւնք անձառիցն կնքեցելոց յիմաստից աստեացս առաջի աչաց մերոց կերպարանին : Ուր այժմ շահավաճառութիւնք ողբոց և արասուաց զերկինս զբաւեն , և անդ իբր զպաժաման ընդունայնութիւնք արհամարհեալք չբանին :

Հաւազմուեք հեծութեան ոչ կանխաւ աստի առաքեալ , չէ երբէք գտանել անդէն . ողորմութիւնք ճշգով սերմանեալ ոչ պայծառ վտամամբ գնան առաջի : Ուր տաս պանն նախայանցիցն և կտակարանն տիրանարդիցն և նշաննրն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայն դատախազն : Յորում սոսկալի վայրի՝ ոմն զուստն կըցորդութե հայրենի և ոմն զխորանն վկայութե անտեսիցն և ոմն զարիւն մեծին Լստուծոյ ամբաստան իմն իրաւայի առաջի իմ տարածանեն : Օտանջանարանն բազմապատիկս անձամբ անձին աստէն իսկ պատրաստեցի , զիւրք միթարեցայց համառօտեալս յուսոյ : Օ՛ի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոյն , որ փառաւորեալքն են երանութեամբ սարսեն զողալով , ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին , ես եղկելիս աւանդակորոյս սատակման որդիս՝ ո՛ւր երեւեցայց . որ ոչ միայն չեմ պսակելոց , այլ և պատուհասն իմ անտանելի և կորուստն անսպառելի :

Գ . Ը՛յլ արագեա՛ ամենապարգեւ զօրութիւն անձառ , ձեռն փրկութեան 'ի կորուստ գերելոյս . զի օգնեալ 'ի քէն՝ զարձայց միւսանգամ 'ի դրանց դժբոց , ամենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվտանգելի պրծեալ 'ի պառժոց : Լստանօր տեսեալ մտացս՝ իմաստիւ զապագայիցն դիպուածս , բաւականացեալ 'ի լուր երկիւղին 'ի տաղնասպէ տանջանացն՝ ահին համբաւով , կամք քո բարեաց զերծեալ ապրեցայց : Եւ մի՛ մատնեցայց կորեանցն առիւծուց՝ որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն զազանութեան . զի զորովայն մահուն լցուցեալ զաստուստ պարարեալս անդ ձգեալ հալեն , ուր սնսպառ պահի մնացուած մթերիցքն 'ի ծախումն յաւիտենից : Օ՛ի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման 'ի կեանս և յերանութի . բնաւից ասպաւն թագաւոր լուսոյ , աէր Յիսուս Քրիստոս , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ե Ն Զ .

Վ Էրստի յաւելլում իրեն Գեթո-Լեան Կոլոն ...
Կայն Էրստի-Լեան աղէրս Կաղէ-անայ Բանի . 'ի խորոյ
որոյն խոսք ընդ Տիրո-Հոյն :

Ը . Եւ արդ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեց
և ահարկու սրտաբեկութեանց , պակուցանողական սաստ-
կութեանց աստուածային բարկութեանց . տարնապեալ
ողով թախծութեան 'ի սպառ , աղաչեմ զքեզ , սուրբ
Մատուածածին : Հրեշտակ 'ի մարդկանէ , մարմնատեսիլ
քերովէ , երկնաւոր արքայուհի , անխառն իբրև զօր ,
մաբուր որպէս լոյս , անշաղախ ըստ նմանութեան պատ-
կերի արուսեկին բարձրութեան , զերազանց քան զնա-
կութիւն անկոխելին սրբութեանց , երանաւոր խոստմանն
տեղի : Եղեմ շնչական , ծառ կենացն անմահից բոցեղէն
սրովն պարունակեալ , 'ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և
հովանացեալ , հանգստեամբ Հողոյն հանդերձեալ և
մաքրագործեալ , բնակութեամբ Որդոյն յարդարեալ և
տաղաւարեալ : Միածինն Հօր և քեզ անդրանիկ , Որ-
դի քո ծննդեամբ և տէր արարչութեամբ . ընդ անաղս
մաքրութեանդ և անբիծ բարի , ընդ անարատ սրբութեդ
և խնամակալ բարեխօս : Բնկալ զմաղթմանս այսր ա-
ղերսանաց քում դաւանողիս , և մատն ընծայեալ ընդ
սմին խոտնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի 'ի
քոյդ պաղատանս : Հիւսեա՛ միացն զմեղուցեղոյս դառն
հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայ-
ցուածոյ , առնկդ կենաց պողոյն օրհնութե : Եւ 'ի
քէն միշտ օգնեալ և բարեգործեալ , և 'ի մաքրական
քո ճնեղութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ , կեցից
Վրիստոսի Որդոյ քոյ և տեսն :

Բ . Օժանդակեա՛ թեւոյդ աղօթիւք , խոստովանեալ
մայրդ կենդանեաց , և եղին իմ յերկէս հովտէ , առանց
լվանաց հետեւել 'ի կեանս օթեվանայդ պատրաստուե՛ .
զի թեթեւացի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօ-
րէնութեամբ : Արացեա՛ տօն ինձ բերկրութեան զօրն
իմ տաղնապի , ողջացուցիչ երկանցն Եւայի . բարեխօ-
սեա՛ խնդրեա՛ աղաչեա՛ , զի ըստ անձառելի մաքրութեանդ
և ահա զբանիւ հաւատամ զընդունելութիւն : Արտաս-
ւօք օգնեա մտանգեցելոյս , զովեալդ 'ի կանայս . ծնունք
խոնարհեցո առ իմ հաշտութիւն , ծնողդ Մատուծոյ :
Բնդ իմում թշուառիս հողա՛ , խորան բարձրելոյն . ձե-
ռնն տուր անկելոյս , տաճար երկնային . փառաւորեա՛
ղորդիդ քո 'ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել
քաւութիւն և ողորմութիւն , աղախին Մատուծոյ և մայր :

Գ . Բարձրացի՛ պատիւ քո ինեւ և ցուցցի՛ փրկութի՛ն
իմ քեւ , եթէ զիս գտցես , տիրամայր , թէ ինձ ողոր-
մեսցիս , սրբուհի . թէ՛ զկորուսեալս շահեսցիս , անարատ :
Թէ՛ զհարթուցեալս յանձանձեսցես , երջանիկ , թէ՛ զա-
մաչեցեալս յառաջ մատուցես . բարեշնորհ , թէ՛ յու-
սահատելոյս ինձ միջնորդեսցես , միշտ սուրբ կոյս : Թէ՛
զմերժեալս ընտանեցուցես , մեծարեալդ Մատուծոյ ,
թէ՛ յիս ցուցցես զպթածութիւն , լուծիչդ անիծից , թէ՛
զժպեալս հաստատեսցես , հանգիստ , թէ՛ 'ի խաղաղեցս
յուզմանց փոխեսցես զիս , խաղաղարար , թէ՛ վրեպելոյս ինձ
հնարաւորեսցես , զովեալ : Թէ՛ վասն իմ մտցես 'ի հան-
դէս՝ մահու նահանջիչ , թէ՛ զբառնութիւնս իմ անու-
շեսցես , քաղցրութիւն , թէ՛ զբաժանմանն իմ խորոց
քակտեսցես , հաշտութիւն , թէ՛ զանմաքրութիւնս իմ
բարձցես , եղծման ընդօսնիչ : Թէ՛ զմատնեալս մահու
փրկեսցես՝ կենդանի լոյս , թէ՛ զլալեացս ձայն հաացես ,
բերկրութիւն , թէ՛ զխորտակեալս կազդուրեսցես , զեզ
կենաց : Թէ՛ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես , հոգե-

լից , թէ ողորմութեամբ ինձ պատահեցես , կտակ նուիրեալ : Օրհնեալդ միայն 'ի շրթունս անրիծս լեզուաց երջանկաց . ահա կաթիլ մի կաթին քունդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ , մայրդ բարձրելոյ տեսան Յիսուսի արարչին երկնի և բնաւին երկրի : Օրհնեալդ անձառուպէս ծնար բովանդակ մարմնովն և համայն Մատուածութեամբն , որ փառաւորեալն է ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ էութեամբ և անքննութեամբ մերոյին բնութս միացելով , ամենայն և յամենայնում , մի յՆրորողութէն . նմա փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն :

ԲԵՆ ԶԸ .

Ս Երբեք յաւելիւած իբրև Գեծոյ-Եւտի նորև Կոկոսի առ նոյն աղբիւր ճաղվանոց Բանի . 'ի խորոց սրբից խոսք ընդ Մատուածոյ :

Լ . Ընդ Մատուածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղբոս հայցուածոց , որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ՝ մաքուր բերանոց , ընկալ բարեգութ : Որք են բարիք բարեպործեալք 'ի բարերարէդ անկիրթք շարեաց , հաստեալք յամենիշխան հրամանաց լշիդ , զօրութիւնք հզօրք ակնարկութեան բարձրելոյդ , սուրբք մաքուրք անարատք , օրհնեալք վայելչականք , յաղթողք և անպարտելիք , և ըստ ընթացից տեսուն մտաց արագունք :

Բ . Որք և պողակորոյս տնկոյ թղենւոյն եռամանն դատարկութեամբ , որ զընաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնոյն , յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ , յայլի աշխարհիս արմատացելոյ , սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զոկեալ 'ի պողոց , որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկունս . սղբա բարեխօսք , հանդերձիչք , այլ և խնամակալք : Որ

գեղերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով , բարեմասնութեանն մեր սպասեն . և յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով , Օգործս ձեռաց քոց մի անտես առներ : Քանզի արդարեւ մեր են այս աղաչանք 'ի բարերարէդ Մատուածոյ վասն մեր կարգեալ առ նոսա . զի նոքա բանիւ են ստեղծեալ , և մեք ձեռօք ներգործեալ : Որք և դալոց են ընդ Միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հասուցման , ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս , յահաւորին ատենի յայտնիչք իրաւամբք զմատակարարութիւնն որ առ մեզ : Որք և անտանօր կարեկցեն աղղեալ հառաչմամբ զմշտանուէրն նուազ ձայնի , Ողորմեա՛ դու սփեղծեր մի կորուսաներ :

Գ . Արդ ընդ զօրհանութեան ձայնիցն խնդրուածոց անմահականացն վեհից՝ և 'ի մեր հեծութիւնս հոտուտեսցիս , բնաւից արարիչ , որ յաղթես զթութեամբք քո վերնոցն և ստորնայնոցս . քանզի քո է բարերարելդ առ մեզ և առ նոսին : Արդ վասն բարեպարգութեան անխտականայն , հրաշատեսիլ հրակերպիցն , անշաղխ մաքրոցն , անմեղիցն , բոցանիւթիցն , հոգեղինացն և անվանելեացն : Ամենաճեցուն առաւելութեամբ 'ի բարձրն ընտրականութիւն զերափայլ յաճախ զիտութեամբ՝ անցուրտ ջերմութեամբ ջեռուցանողք ինքնաբուն տապովն աստուածսիրութեան ըստ ինքեանց զմերս սառնասեր սրտիցս անբորբոք շիջումն : Այնիլ անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ 'ի խորանիս , առանց նիրհելոյ և դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենաստեղծիդ , քրովւէօրէն առաքինութեամբ յՄատուած : Միայեալք անբաժանելի : Որք երկնաւոր պետութիւնք են մեծք , և զինուորութիւնք անբիծք ահաւորք , երկնաւորիդ Մատուածոյ ազատագնեայ պաշտօնեալք , 'ի յամպոյդ լուսոյ ցօրք նշուղից :

Դ. Որովհետև և ինչ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ողորմել, Յիսուս, աղաչանք իմոյն հրեշտակի, գարձուցանելով զես, տէր, 'ի բարիդ քո հետս լուսոյ, Քի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտի յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդարից դիմաց զուարճութեամբ՝ քեզ, արքայ բարձրութեան փառաց անհասից, 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուցէ, գովեալ ողորմած, Եւ քեզ անքնին ընդ Հօրդ անհասի՝ թուակցութեամբ Հոգւոյդ անձառի վայելէ փառք պատիւ և երկրպագուի, յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Բ ԱՆ ԶԲ .

Վերաբերել յաւելուած ինչն հեծոյթեան շարին հակողի աստից աղէրս հաղթանայ բանի . 'ի խորոյ սրտից խօսք ընդ Մարտիրոս :

Ե. Տէր Աստուած բարերար, բազմապարգեւ թաղաւօր, կենաց պատուարան, լուսոյ կերպարան լայնատարր հանդատարան, որ յաղաղս մեղուցելոյս եկեալ մարմնացար, դորձեցեր զանպատումն և հանդերձեցեր զհրաշակնսն, մինչև կատարեցեր զառեցեալն ընդ ամենալիւր Աստուածութեանդ :

Բ. Ըրդ վասն Առաքելոցն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոյ և Հոգւովդ սրբով օժեղոց, զորոց զգովեսան արժանաւորութեան ըստ իմում կարի՝ առ 'ի փառս քո, տէր ամենայնի, յայլում բանի պաշտեցի, և ինչ ողորմեցիս յիշատակաւ սիրոյ նոցին ընարութե : Առիկ ինչ ելից նոքօք հանդերձեցես յերանութիւնն փափաքելի. ձայն բարի հովուութեան նոցին 'ի յոգ ջղն

ինչ կենաց քաղցր լուիցի : Մասն կալայց 'ի յանեղծութիւն փրկութեան տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, դետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ սքճնելոցն, 'ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղոյն զուարթութեան տիրական լուսոյն կատարելոց :

Գ. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ Աստուծոյ Քրիստոսի՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վանդաւոր և ամենակիրն անգամօք, երկրաւորական և հողազանդուածն բնութեամբ մարտուցեալ ընդ տարր զոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հողեպէս : Արիաբար ելեալք 'ի յերկրէ, ըստ մարդաբէին, վլայք ճմարիտք ամենափորձն մահու, իմանալեացն անտեսիցն և ծածկեցելոցն աներկբայ բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիք : Աշակերտք Առաքելոցն և չարչարակիցք նոցին, որ հաւասարեալ պորձովք ընդ նոսին, կատարեալ ըմամբ անպակասելեաւ պարեն 'ի խրախճանս անկէտն երանութեան : Որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստականուէր քրտնակնդրուկ աղերսիցն յարդմամբ՝ ընկալ զիս նորոգ ըստ նոցին մասին անեղծ փրկութեամբ 'ի քեզ արձանացեալ :

Դ. Ընդ խօղացեալսն հուրք և սուտերր արեամբ ներկելոցն, և ճգնաւորացն սրբոց հարցն միանձանց և քեզ հետեւելոցն, Որդի Աստուծոյ, անպարտելի քաջութեամբ և անպատիր զպատուութեամբ, ընդ դժնեայ գոռողի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցին զանմարմինն Բելիար, և մշտամարտ հանդիսի յասպարիսի կենցաղոս առանց զուանաց

ծանրաբեռնութեան՝ 'ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս
 ծովու տապանակաւ մարմնոյս թանձրութեան՝ զթեթեւութի
 հողոցն թողուցեալ՝ 'ի նաւահանդիստն կենայ հասին .
 Եւ իբր սիրողք վերնում՝ վիճակին առանց յեսնոցն մը-
 տածութեան , զթագն յաղթութեան համարձակապէս
 պայծառ ճոխութեամբ պճնեալ իսկապէս 'ի զլուս կա-
 պեցին : Վասն նոցին արժանաւոր մաղթանաց և նուր-
 րական հայցուածոց՝ և զիս զմեղաւորս 'ի պատժականաց
 ընկալ ընդ նոսին :

Եւ Եւ ահա խառնեալ զանմարտիս բան ընդ նախա-
 պրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն ,
 որ վասն իմ՝ գոչեն քեզ 'ի հաճութիւն , և ես ընդ նո-
 սին իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու , կամ տա-
 տասկ ընդ ողորկութեան , տղեղութիւն ընդ վայելչուե ,
 ախիւմ ընդ դեղեցկութեան մարդարտի , կամ հող ընդ
 յստակութեան ոսկւոյ , և կամ քարինս անարդս ընդ
 պայծառութեան արծաթոյ , բացասութիւն ընդ ճշմար-
 տութեան , կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղուե
 զանդուածոյ հացի : Ըրգ լուր , հզօր հնարաւոր գո-
 վեալ , զնոցայն վասն իմ՝ և զիմն ընդ նոսին 'ի նոցին
 գովեստ , 'ի փրկութիւն իմ՝ և 'ի փառս քո , ամենագութ
 բարեբար , օրհնեալ երկայնամիտ , կարող անքնին ան-
 ճառ , անեղծ և անստեղծ : Քո են պարգեւք , քո են
 շնորհք , գու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի .
 Ոչ ես դատապարտիչ , այլ ազատիչ . ոչ ես կորուսիչ ,
 այլ դատիչ . ոչ ես մահացուցիչ , այլ կեցուցիչ . ոչ ես
 տարադրիչ , այլ ժողովիչ : Ոչ ես մատնիչ , այլ ապ-
 րեցուցիչ . ոչ ես ընկղմիչ , այլ վերածիչ . ոչ ես
 զլորիչ , այլ կանգնիչ . ոչ ես անիծիչ , այլ օրհնիչ .
 ոչ ես վրիժառու , այլ շնորհիչ . ոչ ես թշուառա-
 ցուցիչ , այլ մխիթարիչ : Ոչ եղծանես , այլ գը-
 րես . ոչ սասանես , այլ հաստատես . ոչ ոտն հարկա-

նես , այլ սփոփես . ոչ պատճառս յօղես մահու , այլ
 հնարս խնդրես կենաց . ոչ ես 'ի կամս շարժեալ սա-
 տակման , այլ 'ի փրկութիւն ողորմութեան : Ոչ մոռա-
 նաս զայցելութիւն , ոչ լքանես զբարի , ոչ արդեւուս
 զգթութիւն , ոչ բերես վճիռ կորստեան , այլ կտակ
 ազատութեան : Ոչ թշամանիս յառատութեանց , ոչ
 բամբասիս 'ի շնորհաց , ոչ հայհոյիս 'ի պարգեւաց , ոչ
 նախատիս 'ի ձրի ձրից , ոչ անդոսնիս յերկայնամտեց ,
 ոչ եպերիս 'ի ներութեանց : Ոչ բանսարկիս 'ի բարուեց ,
 ոչ անպատուիս 'ի քաղցրութեանց , ոչ քամահիս 'ի
 հեղութեանց , ոչ առաքին այսոցիկ տրտնջմունք , այլ
 անլուելի գոհաբանութիւնք : Բարձ զմեզ իմ , հզօր ,
 լայն զանէծս իմ , օրհնեալ . քաւեալ զպարտիս իմ , ո-
 ղորմած . ջնջեալ զյանցանս իմ , զթած . մատն
 այցելութեան , և անդատին իսկ կատարեցայց : Օհնչ
 քեզ , տէր , քան զսոսին դիւրագոյն , և կամ զի՞նչ
 ինձ պարտաւորիս կարեւորագոյն , Եւլ կենդանագրեալ ,
 բարեխնամ քոյնաստեղծ պատկերիս փշուամ կրկին 'ի
 շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական շնորհի
 զամենամեզս ողի պաշտպանեալ :

Օ . Մի՛ ածեր , ողորմած , ինձ օր տարածամ 'ի
 համառօտս երբի՛ անթոշակ ապաձեռնութեամբ ընդ ան-
 կատար ուղին հետեւել , մի՛ մատուցաներ բաժակ դառ-
 նութեան 'ի ժամ ծարաւու : Մի՛ փակեր , զթած , իմ
 հանդէպ զաջողուած հողեւոր օգտիս , և մի՛ իբր յան-
 կարծադէպ հինից ասպատակ զիշեր մահուն ինձ պա-
 տահեցէ : Մի՛ տապ աթոյն յանպատրաստ պահուն
 զարմատս հատեալ ցամաքեցուցէ . և մի՛ լուսնական
 դիպուածք հասեալ դաղտնեօք միասեսցեն . մի՛ պահեցի
 ինձ սառն մեղացս , և մի՛ հոսանք ուղից կենցաղոյս զիս
 օղողեսցեն : Մի՛ հանդիստն մահ բերիցէ , և մի՛ ննջում
 նրն 'ի սասակումն յառաջեցէ . մի՛ քունն ինձ կորուստ

լիցի , և մի նիրհումեն ապականութիւն գործեսցէ : Մի վախճանն անյարմար 'ի վերայ իմ արշաւեսցէ , և մի շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ 'ի խոնարհ լոցի :

Դ . Դու ես տէր , դու զթած , դու բարեբար , դու երկայնամիտ , դու ամենակարող , սու ամենայն բան անհասութեան անձառ զօրաւոր , քաւել փրկել կենադործել լուսաւորել , վերստին հաստատել : Ի ժանեաց կերչաց զազանաց և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել , 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութեան ածել , և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փառօք բազմեցուցանել : Ը մենայն ոգի քեզ ալիքն կալեալ յուսով սպասէ , կարօտեալ քումի շնորհաց , եթէ երկնայինք և եթէ երկրաւորք , եթէ անկաճն մեղօք և եթէ ամբարձեալն արդարութեամբ , եթէ տէր և եթէ ծառայ , եթէ տիկին և եթէ աղախին . և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն : Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲՆՆ . 29

Վ Էրասմէն , յաւելում իրկն Հեծումեան Դուրսն Հսկողն
նոյն աղէրն Տողլանոց Բանի . 'ի խորոց սրբոց խօսք լնոր
Ըստից :
Ըստից :

Ը . Բարձրեալ անքնին , զօրութիւն ահեղ , տէր արարածոց , թագաւոր երկնի , ստեղծիչ հրեշտակաց , գոյարան մտաց , հաստիչ հրեղինաց , պետ բարի հոգւոց : Ը ապաւինութեան , անգորբութիւն հանգստեան , անսարան լուսաւորութեան , պայծառութիւն բերկրուն , ճանապարհ երանութեան , պատճառ կենդանութեան , առիթ բանաւորութեան , փրկութիւն առանց չարութե . Ը սաջնորդ խաղաղութեան , պարիսպ ամրութեան ,

պատուար պահպանութե , ցանգ բոցոյ մեծի օրհնութե , սահման անխաղաղութեան : Յիշեալ յայսմ սղեբրդուն մատենի բանին խոստովանութեան և զոր 'ի մարդկային ազնէ թշնամիս մեր 'ի բարի , և սրան կատարեան նոցին քաւութիւն և ողորմութիւն : Մի բարկասցիս նոցա վասն իմ , տէր , իբրեւ զուրբս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս , այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբ նախատողաց՝ ներեալ յանցանաց նոցա : Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո , արգաւրագատ , ոմանք առ մեզ մնասակարադոյնք սակաւօք , թերեւս և յիրաւի բամբասեցոցս , և ես առ քեզ , ամենապարզեւ , անթիւս և անկշտելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս :

Բ . Ըրդ յիշեալ զքո մեծութիւնդ , տէր , նայեցեալ յիմն անարգութիւն , և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմացն ատեւեաց , և դու առ քոյս ըստ քում մեծութեդ անձառելիս հրաշագործեսցես : Մի սատակեսցես զիմն խաճանողն , այլ փոփոխեսցես . խլեալ զխոտան բարս երկրաւորս , զբարիսն արմատացուցես և յիս և 'ի նոսին : Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս , և ես խաւար և յիմար . դու իսկութեամբ բարի գովելի . և ես համայնիւն չար ապիկար . դու տէր ստորիցս և երկնից , և ես անիշխան շնչոյս և հոգւոյս : Դու բարձրեալ , 'ի կարեաց զատեալ , և ես տաժանաւոր և վտանգաւոր . դու 'ի վեր քսն զկիրս երկրիս , և ես կաւ անարգութե զարշութեան : Դու ըստ մարգարէին մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան , և ես միշտ կորնչիմ ըստ նորին բանին . 'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն , և ես բաւանդակն իսկ իցեմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցեմ : Հան զիս 'ի բանդէս , արձակեալ 'ի կապանացս , զերծ 'ի շղթայիցս , փրկեալ 'ի խեղդմանէս , ազատեալ 'ի տաղնապէս : Քակտեալ 'ի յերկաթիցս , լնծ 'ի պա-

շարմանցս , արտաքսեան յերկմտութեանցս , սիտիեան 'ի տխրութեանցս , հանգս 'ի նեղութեանցս , փարատեան 'ի վշտացս , հանդարտեան 'ի խռովութեանցս , ապաքինեան 'ի լալոյս , մերժեան 'ի հեծութեանցս , հեռացս 'ի յողբոցս , կազդուրեան 'ի կականմանցս : Աստուած ողորմուեալ և պարգեւատու քաղցրութեան , մի զգրաւեալս արեամբ հզօրիւ անտես արարեալ ընդ վայր կորուսաներ , կանգնեան զհասեալս յափն մահու 'ի բազմավտանդ հիւանդութենէս :

Գ . Ահա բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան , յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ յոչպէտս երեւեալ . 'ի յանդաստանէ մօրն խնոյ սենեկի փուշս դժնկի մեղաց շառաւիղի . մի լինիր ինձ խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին Յուզայի , և կամ զաւակին Նփրեմի : Այլ քանզի բուսուցեալ անկեցի յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութեան խոտս խայթողալ կանս ինքնաթոյնս ընդարմացուցիչս , ըստ գրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետինս , զիւրոք ոչ կոչեցից զանձն իմ՝ դարշելի անդաստան անիծարեր փշովք մեղաց հեղձեալ : Ոչ սերմանեցի արդարութիւն , ըստ բանին Ովսեայ , և զիւրոք հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն : Անկաւ ստինք կուտութեան անձինս մաքրութեան , ըստ մարգարէին բանի՝ որ առ Խորայէլ , կարող ես , տէր , 'ի նոյնս հաստատել : Այնեցի ընդարձակեցի ըստ մողեկան բարուցն Յուզայի զանկողին կամացս զիւացն հոմանեաց , 'ի ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութիւն : Այլ մարմնապէսն կցորդութիւն ընդ տեսանողին անարատ զործեաց զպոռնիկն , իսկ դու փրկութիւն , հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես : Այլ արեգակնս այս անկենդան ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մատակարար , և զկարակումն մօրից ցամաքէ և զտհասս պտուղս հասուցանէ , իսկ ստացողք ամե-

նից , հոգիդ Աստուծոյ , սրբան զօրեսցես զտիղմ չաբեաց սղոտոյ և զթարախ պղծութեան մեղաց մթերից խսկոյն սպառել : Այսն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի ատելեացն իմոց՝ 'ի կարդ այս բանի , զի զհերքեալ զնասակարս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիւ մի մերժեսցես , օրհնեալ զըթութիւն : Արդ կենագործեան զիս զամենամեղս անգամօք մարմնոյս ընդ բնութեան հոգւոյս խորհել միշտ ըզքոյսդ : Իսկ բարեգործացն խնդրել բարիս , բնութեան են օրէնք՝ անբռնադատ կրիցն յարակցապէս առ սոյն բերումն : Քանզի արդարեւ առ միդ այդ պատուէր ամենայն հասակ զօրանայ , իսկ միւսոյդ երկրորդի առաջնովդ խնամով հանդիպել՝ աստուածականիւ է նմանութիւն : Յաղագս այսր իրի նախնի դասեցի զթշնամեացն իմոց արեքսանս՝ քան զերախտաւորացն բարիս :

Գ . Այլ արդ յիշեան զնոսա կրկին ընդ միոյ , որ 'ի քո՝ անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան : Այստնոր նոցա , տէր ամենառատ բարերար և անոխակալ , վարձս արդարոյ և մարգարէի , թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց , ըստ հաւատոց նոցա և առ յոյս նոցին ակնկալութեան , որ առ պարտաւոր գերիս ողջամիտ կամօք ակնարկեն . որպէս թէ 'ի մասանցք քո կեցուցչաց 'ի պահպանարան հոգւոյս ծածկութի լիով տնիցիմ : Այլ զպատժաւորս անամփոփելի 'ի քոյ տեսութեանց և անխաբելի յուղիղ կշռութեանց՝ քաղցր զթութեամբդ անսահմանելաւ մերձեցեալ առ իս՝ մաքուր արասցես անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութեանն : Այլ որպէս շուք իմն վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս սիրելիքն քո վասն քո , նայեցեալ 'ի կրօնս զպետուս բարեկերպուե՛ , չզիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկելոյս , և դու հնարաւոր ամենապարզեւ օրհնեալ մար-

դասեր՝ առ բնաւս ողորմած , վասն ամենաթշուառիս հե-
ծութեան հաշտեաց ընդ նոսա . ըստ հաւատոց նոցա
ընծայեալ նոցին մատո՛ պարգեւեա՛ զանեղծ մեծութիւնդ
և զանթառամելի զպսակդ յահաւոր աւուրն յետնում՝
հատուցմանն ամենափորձ ընտրութեանն :

Ե . Օ՛ի դու ես զրաւ փրկութեան մեծութեան ան-
վատնելի և անծախ գանձուց ստրկիս և սովեցելոյս , 'ի
վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ որ 'ի քէն
յարգեալ ճոխանամք : Առո՛ ինձ սահման ջրոյ հան-
գըստեան . արձանացո՛ անփոփոխ , պատրաստական վըս-
տահութիւն . կարգեա՛ օրհնարանեալ , անկազակարծ
յուսոյ ամրութիւն : Տուր ամենախնամ՝ դու անաչառ
պաշտպանութիւն , սասանեցելոյս բարեաց անդորրութի՛ ,
տարակուսելոյս լուսոյ ազաւինութիւն , աշխարելոյս մեծ
երջանկութիւն , վհատելոյս կենաց օգնութիւն , լքելոյս
անդայթազղելի օժանդակութիւն , նահանջելոյս անսայ-
թաք վերընթացութիւն : Օ՛ի քո ե բնաւդ և 'ի քէն է
ամենայնդ , և 'ի ձեռն քո բաշխին հաւաստութիւնդ
պիտանացուաց համայնից կենաց . և քեզ վայելէ փառք
յաւիտեանս յաւիտենից : ամէն :

Ի ԱՆ ԶԴ .

Վ Էրսոյն յաւելուած իրեն հեծոյ-լէ-խան նորին հոյողի սո-
նոյն սողէս հողլէանայ Բանի . Ի խորոյ սրտից իօսս ընդ
Ասորի-ձոյ :

Ե . Արքայ երկնաւոր , թաղաւոր բարձրեալ , աէր
բոլորից , ամենից անկալութիւն , ստեղծող տեսականաց ,
հաստիչ իմանալեաց , պատճառ եղանութեանց , կազմիչ
հանդերձելոց : Տուիչ լուսոյ , աօխթ առաւօտու , պատ-
րաստիչ վաղորդայնի , երեւեցուցիչ երեկորի , տարրիչ
խաւարի , արուեստաւոր բարեհնար : Իմաստութեան

դործօնեայ , քաւարան օրհնեալ , հալիչ միղանաց ,
հալածիչ ցաւոց , քակտիչ դառնութեանց , պահպա-
նարան հանգստեան : Հնարք նիրհման , յարմարիչ քը-
նոյ , պարգեւիչ ննջման , շնչոյ յարակարգութիւն ,
զգայութեան տեւողութիւն : Յրիչ ցնորից , յեղանա-
կիչ անրջոյ , փոխարկութիւն զարհուրմանց , այլայլութի՛
տխրութեանց , խափանիչ խիթմանց , ընդարձակիչ կար-
ծեաց : Համադրութիւն ծփմանց , ահագնութիւն խար-
դախմանց , հարուածիչ դիւաց , փախուցիչ ախտից , ըն-
կըղմիչ դայթաղութեանց :

Բ . Պաշտպանեա՛ երկնաստեղծ ձեռամբդ , զօրացո՛
բարձրացեալ քո աշովդ , ամփոփեա՛ ամենակալդ թեւօք ,
ծածկեա՛ աստուածեան խնամօքդ : Ամրացո՛ վերակացու-
թեամբ վերնայնոցդ , շուրջանակի՛ պարսպեա գումարտա-
կօքդ անմահից , 'ի յամենուստ պարփակեա՛ կցորդութի՛
հրեշտակացդ : Վ անեա՛ զընդդիմամարտն իմ զինուորու-
թեամբ զուարթնոցդ , պատսպարեա՛ զսասանեալս՝ Աս-
տուածածնիդ մաղթանօք , զբանակս անդրանկացդ բա-
րեկարգեա՛ ինձ պահպան : Բաց ընդ աչացս դիմաց և
զմտացս իմ տեսանելիս , զդաստ արա ընդ ուղոցս և
զձանդարեուն կրիցս դանգաղութիւն : Վ Երացո՛ տէր , 'ի
զգայութեանցս զմածեալս յիմարութիւն . բարձ միայն
բարեդործ , զպատրուակիս թանձրութիւն : Բնդ սկզբան
բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծաղեա՛ , ընդ ելնց
արեւուն՝ արդարութեան արեգակնդ 'ի յանձկութիւն
սրտիս մտցէ . ճառագայթ քո փառացդ 'ի յիմաստիցս
խորհրդանոց ջահեսցի . խաչիդ տեառնապրութիւն ընդ
շունչս և ընդ մարմնս համասփիս տարածեսցի : Յանձն
առնեմ՝ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս
պահպանաւ ողոյս՝ որ 'ի սմին : Օ՛ի դու ես Աստուած
անքնին , առ ամենեկին բաւական և յամենայնում բու-
վանդակ , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ձ Ե .

Վ Էրստին յաւելլաւ իրին հեծալեան նարին հսկողն սա-
նայն աղէրս ճողլեանայ Էանի . 'ի խորոյ որոնց խօսք ընդ
Լսարո-ժոյ :

Լ . Իսկ արդ վասն զի արթնականն մեր զուարթուի
քեզ ննջումն իմն է համարեալ , իսկ 'ի խոր թմբուածի
լռեն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բա-
ցութիւն աչաց , ուղղեա՛ չողոյդ քո իմաստութեամբ
զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծութեան ձայնիս
մաղթանաց : Չօրացո՛ տէր , 'ի հանդէս բարի ճգնաւո-
րական արի վաստակոց , կցորդ ըր կարեացս տկարուն ,
թեթեւս կացո զաշխատութեանս այս սկիզբն . արագեա՛
միշտ կարող , զյառաջադրեալ ձեռակերտս , զիրաւորս
ընթացո 'ի յաւարտումն լրմանն : Ի վախճան իրին բեր-
կութեամբ զիս հասո՛ , ժաման կացուցես 'ի հանդի-
պումն յուսոյն , կցորդ ըր ուղւոյն ճանապարհիս ընթա-
ցից : Ի թոխս ամբարձման փութացուցես յօգտակա-
րըն , ընդ աջմէ իմ լիցիս 'ի վտանգի ծանրութեանն ,
զձայն քո լուս՛ 'ի յանձկութեանն պահու , ձեռամբ քո
կեցո՛ 'ի կորստեանն ժամու , մատամբ քո աղղեա՛ 'ի
սահմանին անձկութեան : Հարթեա՛ զխորոց ամենաչար
խափանմանն , հոգեղինին առաքմամբ ըստ Լճախումայ
ինձ հնարեա՛ , բան ինձ շնորհեա՛ 'ի յատենի բազմուն ,
իմաստութիւն յիս տնկեա՛ 'ի հանդիպման քննութեան :
Լճապո՛ կամաց քոց հովանացիր հրաշապէս , հանգար-
տեցո՛ փայտիւզ կենաց զծովուս մրբիկ , սանձեա՛ զաս-
տեաց կենցաղոս պատկեր քոյին հրամանաւզ : Բանդե
թէ աստ ողորմութիւն քո , տէր , կամեցի , այս լու-
ծութիւն կոհակաց կարծր է քան զլէմ . և թէ 'ի ցա-

մաքի անտես առնիցես , իբր զանկայուն պնդութիւն յա-
տակիս 'ի ներքոյ աստի հոսեալ սասանի :

Բ . Լորդ ընկալ , Յիսուս , զպաղատանացս ձեռնար-
կութիւն քեզ 'ի հաճութիւն , և արա՛ ինձ զամենակար-
ծըն գայթազըութիւն մեծ վատահութիւն : Որպէս 'ի
ջրահեղձոյց ամենակործանն գորու , որք 'ի հարթ տա-
րածման գետնի առանց երկիւղն յանհոգս կէին , յողոր-
մութենէդ ամայի մնացեալ կորուան , իսկ ընդ հովանա-
ւոր մածուածով լաստիւն յոգնատատան հիմանն հայ-
թայթանօք յանուն գթածիդ յեցեալ պահեցան : Ընդ
որս և զաղաչօղս մշտատատան՝ 'ի նաւահանդիստն խա-
ղաղութեան մարգասիրապէս պրծեալ ապրեցո . վարձս
'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգեւոր շահից , զստորա-
բերս այս ստուարութիւն պարտուցս լքեալ բանիդ առա-
կաւ , 'ի քեզ , տէր , անկայց միացեալ 'ի սպառ ան-
բաժանելի , օրհնեալ յամենայնի : Եւ կցորդելով այսմ
մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հոգեղինացն
մարտիրոսաց , որք ջրով և հրով փորձեցան , և յեղց
գերծմանն ընդ մեր խնդրեցին , և մեզ յիշատակ թողին
օգնութեան , ասացեն ընդ մեզ համաբանութեամբ զուգա-
մասնութեամբ՝ եղիցի եղիցի :

Բ Ա Ն Ձ Թ .

Վ Էրստին յաւելլաւ իրին հեծալեան նարին հսկողն սա-
նայն աղէրս ճողլեանայ Էանի . 'ի խորոյ որոնց խօսք ընդ
Լսարո-ժոյ :

Լ . Ընդ այս հառաչանաց թախծութեան ողբոց 'ի
բազմաց կերպից շարակարգելոց , և ամենից հողոց ու-
ղորմեա՛ , գովեալ և երկայնափաթ թագաւոր : Կա և այ-
նոցիկ առաւել , որոց հատեալ է անկալութիւն փրկուե-
կենաց . որք ննջեցին անպատրաստաբար շիջեալ լապ-

տերօր իւղոյն պակասութեան : Ահա յիշեա՛ , տէր իմ
 գթութեան , և 'ի յայս եւս պատճառ իրաւունս ինձ
 գրեա : Քանզի թէ և 'ի փառս ահաւորութեան սքան-
 չելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած
 մարդոյս , զոմն ծանր և զոմն թեթեւ , զմինն զով և
 զմիւսն հրային , զի զիմադրութիւնն 'ի հակառակաց
 հարթ պահեցեալ՝ արդար կոչեսցուք հաւատարիմ հա-
 ւասարութեամբն . և 'ի յայսմ՝ 'ի դատման առաքինուէ
 վերաբերեալ ընդ ամբարձելոյն , զխոնարհութիւնն առ
 կան զիտման անմոռաց պահեալ՝ պսակ ընկալցուք ճրդ-
 նաւորական : Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վը-
 ըրպեցաք , և անասնաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջ-
 ման ընդ երկիր մածաք , այլ ոմն ախաիւ և այլ ոմն ան-
 դթութեամբ , միւս մասն մոլութեամբ ամենաբաղձ կե-
 ղակրոց իբր զազան մշտաբոյժ յարակայ կապեալ ընդ
 բնութեանս : Իսկ 'ի քառիցս ոմն անըմբռնելի և անու-
 չօքելի սլացմամբ 'ի բաց ոստուցեալ՝ վայրենասպէս ամ-
 բարտաւանէ : Այլ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի
 քեզ՝ նշխարաւ բոցոյն որ 'ի մեզ , ցուրան առննթեր
 կենակից նմին զնոյն կասեցուցեալ , բարւոյն ընդմիջէ :
 Այլ օղականաւն հրեշտակայնովն յառիցիմք 'ի քեզ ,
 ծանրութիւն թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի
 ստորեւ քարշեալ խափանէ :

Բ . Այլ արդ յամենուստ պարտեալ և 'ի սպառ լը-
 քեալ՝ իբր զապրիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանե-
 ցայ , վասնեալ 'ի բազմաց 'ի մահ գրաւեցայ : Վասն
 որոյ 'ի պարզեականէն զրկեցեալ՝ յողորմութեանն կողմ
 նայիմ , և պատկառեալ զիմօք համայնից ունօղս զըւ-
 նաւից աղերսաբանեմ՝ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց :
 Քանզի կարող ես յաւետ հնարիւք և կորստականացն
 ըստ իս մեռելոցն . ամենայն ինչ քեզ զօրելի է . նա զի
 և ընդ անտկար կարելոյդ և կամելոյ է ախորժելի :

Գ . Արդ այսց երկուց բարգաւաճ շնորհաց նորոգ-
 չաց առ միմեանս եկեալ՝ կարեւն ընդ կամեն , բարձեալ
 եղիցի և յուսահատութեանն վհատութիւն ազգաց մե-
 ղաւորաց . և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս հողոց
 բժշկութեան քումդ հրամանի , տէր ամենայնի , օրհնեալ
 յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ձ Ի .

Վ Էրոսի յաւելլաւ իրեն ճիշտութեան նորին ճշդիւն առ-
 նայն աղբիւս հողմանայ բանի . 'ի խորոյ սրբից իտան լից-
 Բ սոսոսից :

Ա . Այլ արդ քանզի 'ի զլուի կատարման հասեալ
 սակաւամասնեայ կտակի այսր ողբերգութեան , արա՛
 տէր վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից
 մաղթանաց ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս
 կրին չար սովորութիւնք : Որ քեզէն կարգեցեր սահման
 աւետեաց ակնկալութեան դատապարտելոյս՝ ասելով , ոչ
 են կամք առաջի Հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փո-
 քրկանցս . և դարձեալ , այս են կամք Հօր իմոյ՝ զի
 զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից :

Բ . Ահա օրհնեալ ես 'ի գթութեան , բարեբանեալ
 միշտ 'ի քաղցրութեան , խոստովանեալ յերկայնմտուէ ,
 ծանուցեալ 'ի յայցելութեան , քարոզեալ տէր 'ի
 փրկութեան , ներբողեալ դու յառատութեան , պատուե-
 ցեալ 'ի պաշտպանութեան , փառաւորեալ ես 'ի փր-
 կութեան : Արկրպագեալ յանբաւ բարձրութեան , պաշ-
 տեցեալ 'ի յանքնութեան , զովեցեալ միայն 'ի յազ-
 թութեան , վերաձայնեալ 'ի մեծ զօրութեան , խնկաւո-
 րեալ յողորմածութեան , համբուրեցեալ յանձառ հե-
 ղութեան , ճաշակեցեալ 'ի խոնարհութեան , յնդ քեզ
 և ծնողդ բո երկնաւոր Աստուածդ բոլորից միխթարուեց .

ըստ որում Հոգիդ քո սուրբ բարութեան , որ զանկեալ զգրատտ թշնամոյն և զգայթազդեալ մարդն անբանութեամբ կանոնեցեր ոչ անտես առնել : Սրոյ երախտիս հզօրիդ 'ի յիս , և առաքինութիւն մեծիդ 'ի բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառարանօղաց . որովք զայս ձայն աղերսական յարդեալ ընկալցիս մարտիրոսացն պաղատանօք 'ի հոտ հաճութեան բուրման անուշից : Եւ այսու փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զաներեւոյթ վերս միջնութն և վերջնութն մտհացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեալ , ամենակարող , զներքինս և զարտաքինս , զտիպքն և ըզգիծքն և զխարանս հարուածոցն : Բարձեալ և մաքրեալ գեղովք ողորմութեանդ վկայեալ խածուածս բազմագունիս , որ զարշելիս ընդ ախորժեղեացն քեզ ցուցանեն զէութիւն բնութեանս :

Գ . Եւ եթէ հասից յամս ծերութեան քեւ առաջնորդեալ արժանիս մահու , մի թողցես զտկարութիւնս , մի անարգեր զալիսն , մի կորացուցես զկործանեալն : Մի զիջուցես զկքեալն , մի վայրաբերեր զկոնարհեալն , մի շնչման հողմոյ մասներ զառկայծեալն , մի ընդպահկեսցես զգեղեւեալն : Մի անվերարկու առներ զստուցեալն , մի անդարման լիցի տագնապեալն , մի առանց տածելոյ յարին խարխալեալ , մի անպատիւ պատկերն հնացեալ , մի պարարտութիւնն անհամեալ : Մի շուք շնորհին անարգեալ , մի հնութիւնն քամահեալ , մի նաւ հողոյս արեկոծեալ , մի երկարութիւն յուսոյն կտրիցեալ , մի լար շաւեղին խզեալ , մի ուշ իմաստին բարձեալ : Մի գոյին կազմած զեղծեալ , մի ամբարձմանն թեք փետտեալ , մի զուարթութիւն զեղան տրդեղեալ , մի ճաճանչ նշուլին քաղեալ , մի պատուհանք աշացս փակեալ , մի լուսաւորութիւն նորին խափանեալ , մի պատկերն խօսուն անկեալ : Եւ հա աղաչեմ զքեզ ,

բարեգութ , ամենայն սրբովք պաղատիմ , լուր սոցին ինձ կանխաւ , զի զանագանն մի մոռացիս : Դու առաջնորդեցեր ինձ ըստ սաղմոսողին և ապրեցուցեր . հան աէր , ընդ երգողին և 'ի կարծեացն կասկածանաց , յորմէ երկընչիմ : Իսկ ես չեմ արժանի 'ի քէն և ոչ հասարակական կերակրոյն վարձու , այլ դու կարող ես սովորաբար և առ զլացողս բարեդործել : Բո են զարմանալիք անձառից բարեաց , միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութիւն ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲՆՆ ԶԼ :

Վ Իրոսիմ յաւելում իրին հեծուլեան նարին հոկոյն տոնոյն աղէրո Տողլատոց Բանի . 'ի խորոյ սրբոյն խօս ընդ Ըստոմոյ :

Ը . Եւ արդ ջուր կամաց և կաթ սրտասուաց՝ բեկութեամբ հողոյս մտացս լմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի , զմարգարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն Սամուէլի , զոր առեալ եհեղ 'ի սկաւառակէ յանդիման քս , ամենատես , առ ժողովուրդեանն օրինակութիւն զանձն արկանելոյ խոստովանութեամբ և հնազանդութեամբ կենարարք զարշապարաց :

Բ . Եւ արդ ընկալ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց , և հոտոտեցիս յայս նուէր բանի անարին զոհի , թագաւոր երկնի . և օրհնեալ սրբեա զտառ մաանի այսր ողբերգութեան , և զրեալ զրոշմեցես յարձան յաւիտեան ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս : Վացցէ առաջի քո մշտնջնաւոր , և յիշատակեցի 'ի լսելիսդ քո հանապազ . բարբառեցի շրթամբք ընտրելոց քոց , և խօսեցի բերանովք հրեշտակաց քոց . տարածեցի հանդէպ աթոռոյ քոյ , և ընծայեցի 'ի սրահ

սրբութեան քոյ : Խնկեցի 'ի տաճար անուան քոյ , և բուրեցի 'ի սեղան փառաց քոյ . պահեսցի 'ի դանձաբանի քում , և համբարեցի 'ի ստացուածս քո : Պատմեսցի 'ի յակննջն ազգաց , և քարոզեսցի 'ի լուր ժողովորոց . նկարեսցի 'ի դրունս իմաստից , և տպաւորեսցի 'ի սեամս զգայութեց : Իբր կենդանեօք զիմս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն . և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու , այլ յարակայութեամբ բանի այսր սօփերի՝ զրեցայց կենդանի : Մնացէ սա անեղծ 'ի կամս քո , տէր , ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ անգուլ դատիչ , անաչառ կշտամբիչ , անպատկառ յանդիմանիչ , անանխայելի դսրովիչ , անողորելի պարսաւիչ . անհամբոյր ծանակիչ : Անմարդասիրելի մատնիչ , անփրկելի տանջիչ , անկաշառ կառափիչ , անխնամելի յայտնիչ , ապառու՛մ հրապարակիչ , աշխարհալուր բողբիչ : Փողով մեծութեան ազգման առանց լուծե և կամ գազարման զիմոցս պարտեացս խոստովանեսցի :

Գ . Մոյն զիր իմով ձայնիւ իբր զիս ընդ իմ աղաղակեսցէ , տարածեսցէ զծածկեալսն , հոչակեսցէ զգաղա նիսն , կականեսցէ զկատարածն , հնչեսցէ զմոռացեալսն , յայտնեսցէ զաներեւոյթսն , բարբառեսցէ զբարուրսն , Բարոզեսցէ զխորոցն , պատմեսցէ զմեղացն , մերկացուցէ զանտեսիցն , ցուցցէ զկերպարանս թաքուցելոցն : Շօշափեսցին սովաւ որսքն , գտցին զայթաղղութիւնքն , յանդիմանեսցին անձառքն , քամեսցին չարեացն մնացուածքն : Եւ թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութե քո , Բրիստոս , 'ի դանձս պահեստի ոսկերացս ցամաքելոց . որով 'ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ մտի գարնայնոյն նորոգման աւուրն պայծառութե՝ քոյովդ ցօղով յոգի աճեցեալ այսու փրկութեամբ անմահականաւ , և անցամաքելի վերամբարձութեամբ շառաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ զարձեալ գաղա

քացայց և կրկին ծաղկեցայց ըստ քոյնաշունչ զրոյն յուսադրութեան : Եւ քեզ միայնոյ փրկողի և Հոգւոյդ քում Հօր իսկակցի , միասնական տէրութեանդ և անձառ Երրորդութեանդ խորհրդական զովեստիւ փառք և երկրպագութիւն յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Ձ Թ .

Պ Երաբին յաւելլաւ իբն հեծոյթեան նորին հսկողն սոնոյն աղերս Տաղլանոց Բանի . 'ի խորոց սրբից խօսս ընդ Աստուծոյ :

Աստուած և տէր , կեանք և արարիչ , ողորմած գլխած լոյս երկայնամիտ , անոխակալ մարդասէր ամենագութ , պարգեւատու փրկիչ օրհնեալ զովեալ բարեբանեալ : Գարան ամրութեան , պատսպարան վստահուե , առանց նենգութեան բարի , առանց խաւարի ճառագայթ , քաւիչ մեղաց , ողջացուցիչ վիրաց , անհասանելեաց հնարք , անմատչելեաց հպաւոր , անյուսութեան եք , անուն քո խոստովանեալ Աստուծոյ Որդի . և Հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի , և Հոգւոյդ ամենակալի և ինդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Գ .

Պ Երաբին յաւելլաւ իբն հեծոյթեան նորին հսկողն սոնոյն աղերս Տաղլանոց Բանի . Եւ խորոց սրբից խօսս ընդ Աստուծոյ :

Ա . Բարբառնեալ Աստուած երկնաւոր , միայն աւրարիչ , տէր ամենակալ , մեծութիւն ահեղ , գթութիւն օրհնաբանելի , ողորմութիւն խոստովանելի , բարերարութի

երկրպագելի , խնամակալութիւն պաշտելի , մարդասիրուի տօնելի , պահպանութիւն խնկելի : Բարձրեալ անքնին , մերձաւոր կամարար , ապաւէն անկասկածելի , մխիթար սրտից , փրկիչ վշտաց , ապաքինիչ ցաւոց , սպառումն վհատութեանց , բարձունս պարսեաց , փոխարկիչ կարեաց , կարգաւորիչ կրից : Յարմարիչ բանից , սանձարկու լիզուի . շրջադրութիւն շնչոյ , կայուցիչ հագագի , ամփոփիչ խորհրդոց : Արթարան կամաց , արձանացուցիչ յուզմանց , հանդարտութիւն մրրկաց , խաղաղութի ծփանաց , որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս , և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես :

Բ . Գոհարանեալ միշտ երախտաւոր , որ հեղութիւն անհպարտութեան երկայնամտեալ հանդչիս տեսչանօք անձառ հրաշիւք յանձինս սրբոց : Թաղաւոր էից համայնից , ամենայնիւ ծանուցեալ զթած , սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից . ճանապարհ կենաց , որ առաջնորդես քաղցրութեամբ զիմելոյս 'ի լոյսգ վերին : Չեռնկալու մեծ վստահութեան , որ ոչ թողացուցանես զայթաղղեցելոյս 'ի վայր կործանել . յուսոյ կերպարան , ճշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ . ապաւինութիւն հանգստեան , որ ոչ երբէք մատնես վտանղի դատապարտութեան : Ըզատութիւն շնորհաձիր , որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց . առատութիւն աննախանձելի , որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես : Այայծառութիւն անստուեր , որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարսածակեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես : Բաւիչ մեղանաց բազմաց , որ զհերքեալս 'ի փրկութենէ առաջնոյն պայծառութեամբ նորոգեալ վերստին վայելչացուցանես : Հապաւոր զիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ , եք վստահութեան առ խոստացելոցն վայելս : Երանու

թիւն սնձկալի , յոր զկենդանութիւն շնչոյս լբանին է ախորժելի , զի գրեզ գտից՝ կենդանի : Ամբ անփոխադրելի առ 'ի քաւութիւն գերուոյս զօրացեալ . ամենադուքիւն , անսխալելի դեղ կենաց , որ և մոռելոց բնաւին եղծելոց առնես զարանչելիս : Ըմնաստեղծ անհրկրայելի , որ զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք զազանաց ծախեալն 'ի քթթել ախան նովին հիւթալանութ անպակաս յարուցանես : Ընհաւասար համարձակութիւն , յորում աստուածօրէն պանծանօք պարծելն է իրաւացի :

Գ . Հայեաց տէր , յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանղ նեղելոյս , և արա՛ անդորր հանգստական դիւրաւոր 'ի բազմատագնասոս հեծութենէ : Եւ զյարուցեալ զուարս սատակչայն , եթէ սպառազէնք այսական զժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինութիւն , եթէ մեղաց տղեղ և քոատելի կերպարանք , եթէ ցաւոց և ախտից վատնիչ և կորստական նշմարանք , մերժեսցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես հեռի սահմանաւ 'ի սպառաքալարեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեանն : Եւ կատուցես կայուցես նպատակ կենաց և ամուր մահարձան զնշան խաչիդ ապաւինելոյս 'ի քեզ փրկուի : Եւ յայսմ անպարտ անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան լուծցին որողայթքն գաղանամածուի սատանայականք , կապտեսցին մեքենայքն , վատնեսցին զայթակղութիւնքն : Խայտառակեսցին հաղթիցն զբութիւնք , յայտնեսցին երեւոյթք որսոյն , գտցին նենգօղին ծուղակք , վերացին վարմին վերարկուք , տուշորեսցին որոմանցն բոյսք , նզովեսցին բոնաւորին չաբաբանութիւնք : Կտրեսցի լար խաբէութեան 'ի մահ որսողին , պարսեսցին պատրօղին բանասրկուիք , պակասեսցին զէնք զրպարտողին , անկցին սուսերք մահարեւին , սուղեսցին սաղրողին պատրաստութիւնք , արձակես

ցին տոռուք տաղնապօղին : Այլալեսցին սուտ կերպարանք կեղծաւորին , սատակեսցին խրոխտականացն խիստ յարձակմունք , ցրուեսցին կցորդութիւնք կերչացն , բաժանեսցին ազինք աւազակացն : Քայքայեսցին բոլք բարբարոսացն , քանդեսցին ամրոցք ապստամբոջացն , արգելցին ամպրոպք յանդգնելոցն , փարատեսցին փորձողին անձրեւք , հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին : Խորտակեսցի եղջեր գոռոզին , մանրեսցին ամբառնալք զրօշիցն կերպարանաց , փշրեսցին ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն , նահանջեսցին դիմեցմունք ճակատելոցն , քակտեսցին միաբանութիւնք զօրացն (Բեւիարայ) թէ անմարմինք և եթէ մարմնաւորք , փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց յեւթն տարակոյս . 'ի գուբն ինձ փորեալ ինքեանք ընկճեսցին : Հեղանակեսցին ձմերունք ձանձրացուցին , հատցի կապն կցորդութեան մշտաջան աւազակին , նողկասցի մտացս կայից համբոյր շողբորթին , ընդմիջեալ մեկնեսցին նետաձգութիւնք նեղչին , կացցէ 'ի սասանման նաւ խարդախողին , լսեսցին յարմատոց անտի առամունք խածանոցին :

Դ . Վասն փայտիդ օրհնութեան կենաց՝ յորում պրկեցար Աստուածդ անըմբունելի , յիշատակաւ բեւեռացըդ՝ որով 'ի գործի մահուն մաժուցար արարիչդ երկնի և երկրի , արեամբդ տէրունականաւ՝ որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար , լեղւոյն դառնութեամբ՝ զօր արբեալ , զդեղատութիւն կորուսչին արտաքս հեղեր , պատմաբանութեամբ ըղձական ճառիւք կրիցն սարսափելեաց՝ որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր , անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելոյդ՝ յորմէ գողան և դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երեւութից և աներեւութից , եղկցին այս ամենայն պարգեւք

չնորհաց խոտալմանելոյս 'ի պաշտպանութիւն , 'ի բժըշկութիւն և 'ի քաւութիւն : Աւ մահաբեր լեղւոյն դառնաթոյն օձին , և որ 'ի նմա ազդեսց տիեզերապաւ չարութիւնն , 'ի սատակումն եղկցի նորին . նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն սովաւ մատնեսցի , կապեսցի և ըմբոնեսցի : Աղկցի ողորմութի ստեղծօղկի ընդ իս , և շունչ ողոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի :

Ա . Աւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գոչման ազօթից հայցման ծերոյ և աղայոյ , կուօի և երիտասարդի , և եթէ յազախնաց ոք պաղատեսցի աստուածախրատար , հաւասարապէս անաչառութեամբ ընկալցին 'ի քէն մասն երանութեան պարտուց ազատութիւն : Հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան , նկարեալ դարձեալ զբոյգ կերպարան անփոփոխելի : Ահա տիրապէս հնարաւոր զօրեղ , անպատում անհաս անխմանալի , տեսցես աստուծոյ 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան , որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի , վասն Հօր քո երկնաւորի և բարերարի , և Հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի , Աստուածածնիդ բարեխօսութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց : Օհ դու ստեղծեր դամենայն , և 'ի քէն եղեն ամենայնք , և դու տիրես ամենայնի . և քեզ փոսք յամենեցունց , միդ յիսկութենէ անժամանակ Արրորդութեանդ , զուղակցապէս փառաւորեալ յանրաւս , և յաւիտենից յաւիտեանս . ամէն :

Բ Ա Ն Գ Ը .

Վ Երբ որ յաւելոյս ինչին հեծոյս լինին շարին հակառէ աս
նոյն արեւոյ Տարիւնաց Բանին . 'ի խորոյ սրբոյ խոսք ընդ
Աստուծոյ :

Ը . Տէր , տէր զթուօթեանց և Աստուած ուրբ
մութեանց , անուն մեծութեան , ձայն ահաւորութեան ,
կոչումն սաստկութեան , լուր անհասութեան , բարբառ
դողութեան , հնչումն հիացման , յուսադրութիւն բարե
բարութեան ամենողորմ՝ քաղցրութեան : Յորմէ երկու
ցեալ սասանին ամենայն բնութիւնք եղելոց . 'ի քո ըս
պառնալեաց ահիդ պակուցման , սաւառնին սերովբէք ,
ամփոփին քերովբէք , պարուրին պարք յուսակերպիցն ,
երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն , նոյնքն
յնծան դողութեամբ մեծաւ 'ի մի նաւակատիս բերկրուե :
Օտարձուրին դեք , ընկրկին շարութեանցն գունդքն ,
պակասին խաւարասիրացն հոգիք , անգնդոց մատնին հը
րեշտակք օտարին : Ասպին նշանաւ խաչին՝ յարձակմունք
գիմամարտին , փակին 'ի ստորին բանտի քինաւոր ամա
ղեկացիքն , անխզելի հանգուցիւք պաշարին խուճք հա
կառակորդին : Արգելին անգերծ զընդանաւ՝ մահազինա
ցըն կաճառք , պնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ այ
սականացն գումարք , պապանձին կարկեալ ընդմարա
նիցն դասակցութիւնք , պարաւանդին հիւժմամբ կորրս
տեան աներեւութիցն ժողովք , անդոժ շըթայիւք նեղին
առաքելութիւնք 'ի երաքրիստոսին :

Բ . Ահա կարկառեմ մատամբք ձեռինս զտեառնա
գրութիւն նշանիդ 'ի թամ գիշերիս , որ ոչ մթանաս
խաւարաւ անգիտութեան , ամենեւին տեսականութիւն ,
քան թէ 'ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես : Ըն

կալ զաղաչօղս վտանդաւոր զոհաբան ընդ պահպանուի
թեւոց հզօրիդ , փրկեալ 'ի ցնորից եկամուտ պղտորուեց ,
սուրբ արա զղղայարան հայելեաց սրտից նկատմանց :
Ամրացո՞ փայտիւդ կենաց 'ի տիրական անրջոց , արեամբ
քո սրակեա զըրջարկութիւնս կայիցս , զհետս ելումսիցն
կաթուածով կենարար կողիդ գծադրեալ : Արգոցն
պահպանարան քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի ,
հանդէպ տեսութեան աչացս ամբարձման փրկականդ քո
կրից խորհուրդ առգիցի , ընդ բարաւոր յարկիս չարչա
րանաց քոց գործի հաստիցի , զծառոյդ օրհնութեան
հաւառք յուսոյ իմոյ կախեսցի : Արգել տէր , սովաւ
զատակիչն հոգւոց , մտցէ անխափան պաշտպանն լու
սոյ , և ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս և զբեռն պար
տեանցս թեթեւացո , զոր 'ի լուարանի մտացս ամփոփման
մահճացս անկողնի ուշաբերեալ զյուսահասութեանցն
դառն պտղոցն՝ խոստովանիմ՝ ամենագիտիդ զանհամար
մասունս գործոց շարաշար անօրէնութեանցս :

Գ . Հանգո՞ զյատարակեալս 'ի բազմածուփս աշխա
տութենէ , բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կոր
ծանման . զգառնութիւնն ընդ վշտացն , զհեծութիւնն
ընդ կարեացն , զանձկութիւնն ընդ թշուառութեանցն ,
զհառաչմունսն ընդ խորտակմանցն : Օքեկութիւնսն ընդ
ապշութեանցն , զթմբութիւնսն ընդ շրտմանցն , զարբե
ցութիւն ընդ յիմարութեցն , զթերամտութիւնն ընդ խելագա
րութեցն , զսառուժն սիրոյն և զհրային ջերմութիւն աղուական
ախտին : Օժանդակ լեր տկարութե բազմատխուրս տար
տամութեան , բարեգործ , աջովք շնորհի , ձեւամբք նո
րոգողի , մատամբք կենսաբաշխի , փառօրդ մշտափայլի ,
յարակայութեամբ անեղծի , երեսօրք զուարթականի ,
խկութեամբ Այիդ պաշտելի , բարձրութեամբք երկրպա
ղելի : Հատո՞ զշարաշար հեծութիւն կորստականս խեղդ
ման , զնոր գիւտ շարին , զհին խարդակութիւն բանսար

կուին , զօտար ազդեցմունսն 'ի մահ կարթողին , զան-
 յարմարական երեւոյթս հանապազօրդեան եղեռնագոր-
 ծին , զառ աշտ հնարագրութիւնն դժնդակ զիւին , զօ-
 ղոքական բոցաշնչութիւն ձգող կախարպին : Աստուծոյ 'ի
 տեղումս հանդստեան մեծօրինակ այսր դապարման յան-
 երեւոյթ մտածութեանց , 'ի մասնաւոր սխալութեանց ,
 'ի մեծագոյն գայթաղութեանց , 'ի փոքրագոյն ոտնա-
 սուլութեանց , 'ի խաբեբայ չար ձանձրութեանց : Հեռացո՛
 զանդէս մտածութիւնն 'ի զգայութեանց ծառայիս յան-
 ցաւորի , զկիրս բասրելիս , զվարս թշնամանելիս , զգիւղ-
 ւածս պատկանելիս , զհետս վրիպելիս , զպատիրս ձա-
 ղելիս , զխորհուրդս անգօսնելիս , զաւերաբանութիւնս
 նշկահելիս : Աստուծոյ հոգւով և անշաղախ մարմնով
 զապաւինեալս 'ի քեզ հանդերձեա , 'ի շնչմանէ հոգւոյ ,
 'ի զարկմանէ բռնութեանց , 'ի բախմանէ փոթորկաց , 'ի
 յոսամանէ մրրկաց , 'ի յարձակմանէ զազանաց : Ի կափ-
 ման աչացս հայեցուած սրտիս մի ստուերացի , այլ
 զուարթացի պայծառացի վայելչացի՝ ընդ քեզ փայ-
 լեցի , տէր Յիսուս Քրիստոս , լուսաւոր վառմամբ ան-
 շեջանելեալ : Բանիւ քո սրբեա զպատուարանս բազմա-
 կանիս 'ի խորամանկութեանց , 'ի զաղմանց , 'ի քո ա-
 տելի յիշատակաց , 'ի վերնամարտ մաաժմանց , 'ի քրէա-
 կան մարտութեանց , 'ի տիրանենդ անշորհութեանց ,
 յաստուածընդդէմ՝ հերձուածութեանց : Գնդիւք վերնայ-
 նոցդ վերակացու ինձ լիցիս , պետութեամբք իշխանութիւնք
 զօրաւորօքն անյաղթականաց մաքուր մատակարարաց սուրբ
 Աստուածուեդ : Առաքեալն աւետեաց աւետարանան ,
 մարգարէքն կտակարանօքն , մաղթանք երջանկացն 'ի կա-
 տարածի աւուրն ընծայեալ : Արովք ներհեցից երկիւղիւ
 ըսա քեզ արամութիւնք , և զարթեայց շնորհօք քո կրկին
 ուրախութեամբ : Եթէ վհատութեամբ ննջեցից , յա-
 րեայց դարձեալ հոգեւորական բերկրութեամբ : Եթէ

ընկողմնեցայց մեղանօք , կանգնեցայց վերստին զատեալ
 'ի խղճէ անաղտ անբժուութեամբ :
 Գ . Լըւր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հե-
 ծութեան , միայն բազմագութ , բարեխօսութեամբ սրբոյ
 Աստուածածնիդ և ամենայն արդարոց և նահատակաց
 ընտրելոյ : Եւ քեզ փառք յամենեցունց իմնվս զոչմամբ
 վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց զա-
 սուց , 'ի զովեսա հօր քոյ Աստուծոյ մերոյ և Հոգւոյդ
 սրբոյ բնաւից հաստօղի և նորոգողի , յաւիտեանս յա-
 շիտենից . աւնն :

Բ Ա Ն Գ Բ .

Վ Էրսորն յաւելլաւ իբլին հիժու-վէտան Կորնի հսկսլն ու-
 նոյն տղէրս Տուր-անայ Էանի . 'ի խորոց սրբից խօսք ընդ
 Աստուծոյ :

Ը . Արեգակն արդար , ճառագայթ օրհնեալ , լուսոյ
 կերպարան , փափաք անձկութեան , բարձրեալ անքնին ,
 զօրեղ անպատում , բարեոյ բերկրութիւն , յուսոյ աւ-
 սութիւն , զովեալ երկնաւոր , թաղաւոր փառաց , Քրիս-
 տոս արարիչ , խոստովանեալ կեանք : Եւ արդ զթե-
 րութիւն վրիպանաց բազմասխալ ձայնի եղիւրոյս ամենա-
 զօրդ բանիւ լցեալ մատուցես յաղիրս հաճութեան
 հօր քում բարձրելոյ : Ար վասն իմ 'ի փորձ եկիր ա-
 նիծից , կերպարանեալ զիմ նմանութիւն , ամենեւին կե-
 նաց օրհնութիւն , վերնոց և ներքնոց բարեխնամօղ տե-
 սուչ համայնից : Օհ թէ յանձն առեր մեռանիլ վասն
 իմ , Աստուած և տէրդ բողոքեցուն , որչափ հաճեսցիս
 առաւել և այժմ՝ վտանգաւորս կրից կարեկցել , ընդ իմ
 պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ ա-
 տելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւք քո Հայր :
 Բ . Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատու-

ցելոյ 'ի հաճութիւն կամաց առաքելո՛ք բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս , թողցին պարտիքն , սպաքինեսցի ամօթն , մոռացին պատկառանքն , բարեգործեսցին դատակնիքն : Ստակեսցին որդունքն , վերացի լաւն , հանգարտեսցէ կրճումն ատամանցն , սպառեսցին ողբքն , հատցին արտասուքն , մերժեսցի սուգն , հայածեսցի խաւարն , վասնեսցի հուրն սաստկութեան , հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք :

Գ . Ելիեսցեն գթութիւնք կամօղիդ և պարգեւօղիդ կենաց ամենից , ծագեսցի լոյսդ . արագեսցէ փրկութիւնդ , հասցէ օգնութիւնդ , ժամանեսցէ այցելութիւնդ , կանխեսցէ ջօղդ ողորմութեան , յառաջեսցէ արբուսցէ զանգաստանս պասքեալ՝ անկեալ ոսկերացս թշուառութեամբ 'ի վիհն մահու : Մաղկեցուսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ , որ անծախսպէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց : Օ՛ի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղայ՝ շորհօք քո , պթած , 'ի քեզ զօրացեալ քեւ նորողեցայց , զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութեամբ 'ի յարութեանն արգարոց Հօր քում օրհնեսցեալ : Ի՛նք որում քեզ փառք , և Հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն վայելչական զօհութեամբ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ա Ն Գ Գ .

Վերսորին յաւիտեանս իսկին հեծուլեան նսրին հոյողե ասնոյն աղէլս հաղմանոց բանի . 'ի խորոյ սրբոց խօսք ընդ Լսորո-ժոյ :

Ը . Լստուած յաւիտենական , բարերար և ամենակալ , ստեղծիչ լուսոյ և յօրինիչ զիշերոյ , կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի , յոյս ակնունդաց և երկայն

մտութիւն տարակուսելոց , Որ ամենարուեստ իմաստուրքո դարձուցանես յայդ զստուերս մահու , աննուազ ծագումն և անմուտ արեգակն . քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար զիշերոյ . որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց և տանգարամետականաց : Որ լսեսս զհեծութիւն կասելոց և հայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զննդրուածս նոցա , Լստուած իմ և թաղաւոր իմ . կեանք իմ , և ապաւէն իմ , յոյս իմ և վստահութիւն իմ , Յիսուս Քրիստոս Լստուածդ ամենայնի , սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց , մտիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց , որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա : Լուսքեան զպահպանողական զօրութիւն աջոյ քո և փրկեան զիս յերկիւղէ զիշերի և 'ի զիւէ չարէ . որպէս զի զիշատակ սոսկալի և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ՝ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ , կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարգան գեեզ 'ի բոլոր սրտէ :

Բ . Եւ 'ի զրոշմէ խաչի քոյոյ նշանիդ , զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորողեցեր , և 'ի նոյն շորհօրդէզրութեան զմեզ մկրտեցեր , և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր , այսու պարգեւօք աստուածականօք ամաչեսցէ Սատանայ , քակտեսցին մեքենայքն , բարձցին որոգայթքն : Պարտեսցին մարտուցեալքն , պակասեսցին զէնքն սայրասուրբ , մերժեսցի մէգն , փարատեսցի խաւարն , մեկնեսցի մառախուղն , բազուկ քո հովանացի . և աջ քո կնքեսցէ : Վասն զի պթած ես և ողորմած , և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոյ : Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ Ը Ն Պ Ղ .

Ի Ինչո՞ւն էր շնորհիւ Բարեբախտութեան Ժամակարկն խորհրդածու-
թեան աղաչանս երեւալ ընդ Խերդարանս Լազարձատութեան :

Ա . Պոհանամ զբէն , բարեգութ , միայն մարդա-
սէր , արարիչ երկնի և երկրի , Արդի Աստուծոյ կեն-
դանոց : Այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ
քոյ յիշատակի 'ի լուծիւն հնչման փայտից հրաւիր-
ման . որով բախեալ զձայնարձակութեցն զազդողարան ,
սթափեցաք կանգնեցաք , 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրի-
նակս թմբբմանէ : Ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի
բերեալ ձգեցաք 'ի ժամ պաշտաման օրհնարանութն ,
յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդէպ հատուց-
մանս քեմի :

Բ . Ահա փանօք քեզ , անսահման անուն և անբու-
փանգակիլի զօրութիւն , որ այսբանեօք հնարաւորութիւնք
ընդ փրկութեան իմում հոգացար : Պոհաբանեալ անեղծ
խակութիւն , որ կերպարանեցեր հրաշիւք աստտին ըզ-
հանդերձերցն նմանութիւն , հանդարտ զործեաւ վայել-
չականաւ փայտի անօթոյ առ քունս անյարիր սաստիկս
որոտացեր : Արպէս թէ ընդ ծուլութեանս զանդաղութի
զյանդիմանութիւն խրատուդ խառնեցեր , 'ի հայրենի
սիրոյդ հեղութիւն զուժգնութիւն ճայթմանն յարեցեր .
յընդօստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարգասիրտպէս
քաղցր անձրեւեցեր : Աչ մեղմութեամբ մեղմական փան-
ցիւ նիրհմամբ ընկղմցիր , և ոչ անխնամաբար ահա-
ւորութեամբ զատոապեալ հոգիս զարհուրեցուցեր :
Ներբարական երկրպագութիւն սսեղծչիլ բոլորից , որ
այժմէն ցուցեր համայն յայանապէս զօրինակ ահեղ
բարբառոյն մեծի աւուրն յարութեան , կենդանացուցիտ

'ի դադարմանէ դժոխական անբանութենէ , 'ի խնդիր
եղեալ կոչեցեր զպահասամիտս 'ի գինիդ ուրախութեան :
Արարեր զօղն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ
սէր փեսայիդ . երկուցեր փոքր այս խթանաւ զպարա-
սանին զվիթխարութիւն , լուծ ստուար կրթութեան
ստամբակին լուսոյ զայս իր զործեցեր , վարապան վա-
նիչ չարախօսին կզակաց եղեալ կազմեցեր . փառաւո-
րեալ յաւէտ անբաւ բարձրութիւն մեծիդ Աստուծոյ ,
որ փոխարկեցեր զփայտին պարտիս յազատութիւն շնոր-
հիլ կենաց : Իմաստնացուցեր վերստին դարձեալ զչիմա-
րրս ցնդեալ՝ հոգեւորական հանձարովդ , կարկառդ կրուձ-
մամբ զանրժշկութիւն հարուածոց օձին առանց մոռաց-
ման միշտ թարգմանեցեր : Ընդ Արորորութեանդ զը-
ծագրութիւն զկասն երեքիլին իմ՝ փաստակարին 'ի կատա-
րածին սովինք կրկնեցեր :

Պ . Գովեսաք ներբողից բուրմամբ ինկոց վերառաքեմ
քեզ , ամենախնամ , զի 'ի ստապատիր կոոցն բազմաստուա-
ծութենէ առաւել յաճախագունիւք որսացար զանձն իմ
պարտաւոր 'ի քո երկրպագութիւն : Խորոխ և ահարկու-
նուիրեալ փայտիւս զձշմարտութիւնն քարոզեցեր , մե-
ծացուցեր այսր պատճառաւ պատշաճականաւ զնոր աւե-
տարանութեանդ պատիւ : Սոյն ինքն աղաղակ բարձրուե-
ղոչման սպառազինութեանդ քո , արքայ պետութեանց
կայսերաց երկրի տէր Քրիստոս . նշան խրախութեան ա-
ւարտման հանդիսի մարտի քո , Յիսուս , յորում իմա-
նալին Քարաւոն կապեալ ըմբոնեցաւ , կոփիչ հանապա-
ղորդեան զլսոյ զազաթան հպարտացեալ չարագործին՝
շերտս այս տաշեցեալ : Սովաւ դումարին 'ի պատերազ-
մի որդիք Սիոնի ընդգէմ աշխարհակալին խաւարի : Տուն
իմն ստուածաւանդ կրթութեան կարգեալ 'ի հեռուստ
այս զբոջուած իւղեալ՝ առանց հնամալոյ և կամ խա-
փանման , նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուցման

ի բացուստ անդր ծանուցմամբն : Ազգակից հանգունա-
 նման կենացն փայտի՛ որ ՚ի դրախտիդ Աստուծոյ ,
 կոչարան բարւոք հաւաքման փոյթ ընթացիւք ՚ի յարկն
 օրհնութեան , պատկեր տեսակի տնկոյն դիտութեան ՚ի
 կարգ ընտրութեան բարւոյն և չարի : Յիշատակ մեծ
 տեսանագրութեան յերեսս կերպիս Հողւովք սրբով
 զնշան իսաչիդ , նախագեկոյց աւետամատոյց փառաց գա-
 լըստեան ՚ի գշխոյն պահեալ սուրբ թագաւորիդ : Յոր-
 դորիչ քաջալերական մաքրապարիցն խրախճանութեան ,
 անախտական սիրարկու անձնահամբոյրն կցորդութեան
 շքեղաշուք քողընծայ ամենածին կուսին Ռազուհոյ ,
 յարգարիչ ծածուկ սրճնութեան՝ որ ՚ի հողին է վայել-
 չութիւն , նմանութիւն պատգամին Սինայ , որ ՚ի տէրու-
 նեացն արտաքս առաքէր : Միշտ օրիորդ պանծալի ան-
 շաղախ որդւոց մայր անարատից՝ սովաւ փառազարդէր :

Դ . Գերագոյն քան զԱրքիքովին փողոզն եղջերեայ
 զբռնութիւնն Ռեչիարայ սովաւ հարթեալ տապալեցեր ,
 քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ՝ ընդդէմ
 Գողիաթու , գայիսոն նորոգ կառուցեր վկայ ահարկու
 կործանմանն Սատանայի , զ՚ի խոր աճեցեալ արմատս
 մեղացն մեքենայիւս այսու խլեցեր , զմոռացեալ գործոցս
 իմ պարտիս՝ այսր երախտեօք ընդ իս կապեցեր : Օր
 եթէ այլ իմն ձայն բանիդ Աստուծոյ անուանեմ նա-
 խապատում եկաւորութեանն , ոչ սխալեմ քան թէ
 Ճշմարտեմ . ՚ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՛ մե-
 ծութիւն գործոցդ Յիսուսի առաւելապէս պատմալ
 հոչակի : Իրբաւոր օգնականութիւնս վերնապարգես և
 քոյննատուրս ՚ի յայսմ անպատասպար ապաւինութենէ
 երկրականաց զարմանագրեցեր :

Ե . Խոստովանեալ անունդ անքնին մարգասիւրիդ բա-
 րեխնամութեան , խնկեալ խորհրդով սրբամասնութեան
 անգժագրելի կերպարան լուսոյ : Որ կրկնաձիր նշանաւս

այսու նետս արձակեցեր հեռաձիգս ձայնատրականս օդա-
 չուս և յարմարաթուիչս ունողս յինքեան հողի կենդա-
 նի , որով անսխալ հանդիպմամբ զնպատակն խաւարային
 աղեղնաւորին գաղտնութեան յաւէտ կործանմամբ ՚ի
 յետս ընթացեր : Իբր զպատնէչս ամրաբերձ բերդամար-
 տութեան կանգնաւորս անվայրարկելիս՝ աստուտ անդա-
 նօր զկտեալ դիպուածս այս փայտի զարկման հրեշտակ
 կամարար թշնամոյն ներհակ վերուզարկեցեր : Բանիւ
 հրամանի մեծիդ անխարկութեան , օծութեամբ շնորհիդ
 արեամբ քօ խառնեալ՝ զայս եղջեր խեթկիչ մոլի գո-
 ռոզին իբր զխաչիդ փրկանակ յեսանեալ սրեցեր : Ի մեծ
 ազգմանէ այսր աղաղակի դեր քան ՚ի վերնոցն քան-
 դեալ վերացաւ գրանդն ամրութեան կամաց անվայելուչ
 և ամեներկչոտ խննշութեան կարճամտին , ընդ հրեա-
 կան սրտին իմաստից և ստուերական տանն կործանուե :

Օ . Փառաբանութի քեզ վերընծայեմ , անմահ թա-
 գաւոր , զոր արարեր և հաստատեցեր աշովք քօ հզօր
 աղաչեմ զքեզ , կրկին ներգործեա : Անցուցեր սովաւ
 հերքեալ առ ՚ի մէնջ զսեթ՝ դժնդակ խորամանկութեան
 բանսարկուին , զտաժանական տապ մեղաց , զհողմն գառ-
 նութեան շնչման խաբօղին , զտարր արկածից մահու
 երկիւզի , գառ ՚ի յօգից ցնդմանէ մլասակար բերմունս
 տխրեցուցիչս , զայսախառն հեծեծութիւնս թալկացու-
 ցիչս : Յրուեա՛ վերստին քոյննազէն հեծանաւս՝ օժան-
 դակեալ թեւօք նշանիդ՝ զամպս հրածինս , զորոտմունս
 կարկտաբերս , զցաւազին ցոլմունս հրախաւար կեղծա-
 ւորութեան փչման բազմտանի վիշապին , զսուր սա-
 տակման , զձակատամարտ գիմեցման , զյարուցելոցն
 ՚ի վերայ վայրենական խորհրդոց զդիւացն կաքաւս :
 Յորմէ զարհուրին յայսմ իրէ փղբուէ՛ տեղի տուեալ
 մեծաւ գողութեամբ , կիրթ իմն ծանօթութիւն յայս-
 նի դիտացեալ , թէ յայս ազգ ձայնի յառնէ տէր

'ի դատաստան : Այլ խրախուսին յոգի արութեամբ զըրազեալ պնդապէս սուսերաւ Հոգւոյն աստուածարեալ մարտիրք ամենայն 'ի ձեւ կանոնի այսր յիշատակի , որ զամենափորձ հրոյն ընտրութենէ գոչմամբ անկերպարեւելաւ՝ համօրէն ազանց քարոզէ 'ի յօրինաւոր ասպարէզ երջանկարար նահատակութեան :

Ե . Հարաւ ահա փող աւաղափող , համբարձաւ սովաւ Աստուած օրհնութեամբ , պատմեցաւ սովիմբ ամենայն երկրի , հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց , ձայն պահապանաց մեծին զօրացաւ , ըստ բանին Կոսայեայ , և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցորք : Յնդեցան ջրոյն առակաւ 'ի ձեռն սորին թշնամիք խաչին : Անպատուեցաւ ճաշակն պտղոյ առաջին փայտին , տօնեցաւ նիւթս այս խորհրդական կենաց անուանեալ : Անարգեցաւ երկաթ առ 'ի պէտս պատերազմի , իբր զարթութիւն տեառն 'ի սանձս երիվարին մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ , ամփոփեցաւ օձեալս ցպով հովուին երկնայնոյ սուր իշխանութեան մարդկային ձեռին : Ոչ գծեաց 'ի քար տաճարին մուրձինչ գործողի . իսկ յաստուածակերտս խորան փայտս այս նուիրեալ ընդ խաչին թեւոց սլացեալ զօրէ : Ոչ 'ի գրուխս ամսոցն և կամ՝ յեւթնիցս եւթներորդս յօրեւինիցն՝ 'ի յանկեան ուրեք խափանմամբ փողէ , այլ ընդ ծաղս տիեզերաց և ընդ ծիրս եզերաց՝ 'ի ծոցս ջուրց բազմութեան ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ սաստկութեամբ անարպել ճայթմամբ իմն աստուածայնով հընչեցեալ աւետարանէ : Կոտորեցան սուսերք սատակողին այս փայտի ցուցմամբ , յանօգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ 'ի խոփս և 'ի մանգաղս :

Բ . Ոչ արձագանք արձանաց 'ի խորոյ ինչ զանչուէ խիտտս առաքեցեալ , և ոչ գմնգակապէս ըստ իմաստակի ումեմն օտարի՝ զօք վերաւորեալ , ոչ անախորժ սը

գութեամբ ընդ ունին մտեալ և ոչ զաման ուղղոյն անկամակութեամբ չար թնդեցուցեալ : Ոչ ոսկերցն փուշ խրտուցման յանձն բուսուցեալ և ոչ մտացն այլայլ ապշութիւն առաջի արկեալ , ոչ զանդակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ և ոչ քար ընդ վիզոս սալի առանց քաղցրութեան առ նոյն զարկուցեալ : Պարփակարան անխորտակելի նորոյս Սիոնի , մի սա 'ի սպասուցն կազմուածոց արարչաւանդիցն զլիւսւորաց , զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ զեւտականացն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն : Օրինակ ձայնի հրեշտակին , զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեւակաւ զայն սպաւորեաց : 'Կոր զործի շնորհի նուագաբանաց աւետարանին՝ զարթուցիչ Հոգւոյն առ մեզ , քան առ օրհնաբանութիւն սաղմոսարանին 'ի վերայ Աղիսէին : Սկզբնապար նախընթացութեան աղէյարմար ջութակաց բարետաւիղ ողբերգարկութեանց՝ բարացուցական բամբռան բառացի բարառութեանց , սրինդ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ : Ոչ հեթանոսօրէն ուրուածայն հնչման և կամ՝ հրէաբար խակախորհութեան , զոր մարգարէն տեւամբ ազդեցոյց . 'ի բաց արա յինէն , այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տաժմամբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պատահարաց :

Թ . Այլ արդ ընկալայ օրհնաբանութիւն յարգեալ գովեստի զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառատրութիւն , քո պաշտօն և իմ՝ զօհութիւն , անաղանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանդ : Մտցէ ձայնդ այդ աստուածարեալ ընդ պատուաստ յօղիցս շաղկապութեան , հանել 'ի հոգւոյս զպատիրս զիւաց և զմուտս անիծից և մեղաց ապակաւութեան : Արացես լինել զայս իր նշանակիչ ջնար ջահաւորական , անջրելի նամակ , ջատաղով անխափա

նական սնորհնականացդ : Ահա պարգեւեա՛ս սովաւ , բարեգութ , աղաչեմ . հղօր , կրկին մեզ շնորհեա՛ս պահպանութիւն 'ի դիմամարտից յաներեւոյթ և յերեւելի : Ինձեռեա՛ս մեզ , ձեռն ամենալի , որ բանաս և մատուցանես պատրաստարար բաշխմամբ 'ի մատունս բազմապիսիս , օգոց քաղցրութիւն , անձրեւաց շայեկանութիւն : Պակասեսցին քոյով հրամանաւ այսու բարբառով հողմ տապախանն , շնչումն ցաւաբեր , յարձակմունք հինից չար խարդախութեանց : Սովաւ խափանեսցին ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց դժնեայ մատնչին . հալեսցին հատյին և մեռցին յերջանիկ ձայնէ օծեալս այս փայտէ , որդն և ուտիչ և ամենայն նմանք սոցին , որ 'ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին : Արմատացո՛ մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյր 'ի քեզ մեծ պաշտպանութիւն , ստեղծիչ բողբոց տէր արարածոց , զայս ծառ Սաբելայ , որ ունի կախեալ 'ի դիտակ ոստոցն զաւանդ սուրբ նորոգ այժմու փրկութեան ծաղկեալ քեւ , Քրիստոս , 'ի պտուղ կենաց անմահականաց : Փախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի այսր փայտի փառաւորելոյ բարեգեկոյց ձայնարձակութեամբ՝ « Եսարք ներհակք ստապատիրն ստորնականաց բազմաձեռնեան խարդաւանողաց : Երծեսցին սովաւ 'ի յանդոց պտղատոհմական արօրագրութեանց մերոց սահմանաց և 'ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վերք վատնիք և հոյք մորմոքեցուցիք : Ատրեսցին սովաւ յաւերժաճք կրկնատգեղ և անվայելուչ պատահմանց՝ 'ի հնարից չարին 'ի մեզ յայանելոց : Իսկապէս վանեսցի սովաւ , որք յերկաբանչիւրոց բնութեանցս մերոց վերերեւին ինքնաստեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց . յումնն օտարին վրիպակ մտածմունս , և յայումն դարչողութիւնք անմաքուր զեռնոցն ապականողաց : Փրկեա՛ս տէր Արսուս , աղաչեմ՝ զքեզ , փրկեա՛ բարերար . կար-

կառեա՛ առ իս զաջդ ամենագով , և օգնեալ ինձ սովաւ զերծո՞ զիս յամենեցունց ընդդիմացողաց :

Ժ . Խառնեսցի միացի հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի փոխարկել զադամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյին բանիդ արդիւնատրութիւն : Հարցես միեսցես զայս նեցուկ հրաչից քումդ սքանչելեաց 'ի սիրտս ծորեալս և յոգիս լքեալս , և հաստատեսցես կազմալ պնդապէս 'ի կայումն ուղիղ անսասանելի : Իսկ զանընդոստն կակղացուցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեղութեան աստուածաւանդ քո պատուիրանիդ , որպէս զՊաւղոսն և զՍատթէոսն : Այլեցո՞ մարդասէր , պատուեալս այս փայտիւ զերախտիս խաչիդ , որով զանձառն ներդործեցիր : Բարձ յինէն կեցուցիչ , զվտանդ պարտեացս պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տապանակիդ : Բացցին կամօք քո , հղօր , 'ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց : Լուիցեն յայս մեծի բարութեան 'ի քումրդ ակնարկութիւն՝ ակնաջք խից . պարգեսցին 'ի ձեռն սորին լեզուք համբացելոց . լուսաւորեսցին 'ի սոյն տեսարանք աչաց , հայել մաքրապէս 'ի քեզ պշտեցեալ անայլայաբար : Օղջասցին դարձցին կազդուրեալ կամք յափրացելոց . ընձեռեալ տացես տէր , տագնապելոյս անձրեւ արտասուաց : Աղիցի քեւ սա մեզ լուր ցնծուե՛ , ձայն ուրախութեան ; բարբառ բերկրութեան , նուագ հանգստեան , նիւթ երանութեան , պատճառ փրկութեան , առիթ քաւութեան : Երծումն վշտաց , խզումն խեղդմանց , ընդարձակութիւն նեղուեց , համառօտումն խեթմանց , հալածումն հեծութեց , թեթեւութիւն թառաչմանց , յապահովութիւն կարեաց : Արդադրութիւն կըրից , սփոփութիւն վհատմանց , բժշկութիւն ցաւոց , տեւականութիւն հեղգութեանց , ուշադրութիւն անտեսիցն :

ԺԼ . Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ , և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ սան-

դուղ երկնաշուր , առ Հայր քո օրհնարան ահաւոր ա-
նուն ձգեալ մատուցես , բարերար , Հոգւոյդ առաջնոր-
դութեամբ միանալ 'ի քեզ անընդմիջելի : Որով և սրբ-
բոյ միոյ միայնոյ և միանական տէրութեանդ և անեղծ
արարչութեանդ 'ի կենդանեաց և յանշնչականեաց հաս-
տելոց վայելչական զոհութեամբ փառք և իշխանութիւն
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Բ ԱՆ Գ . Ե .

Մ Էրասմէն յաւելում իբրև Գեթու-
նիստ աղէրս ճարտար Բանի . Արեւ-
շատի սրբապետ ինչոյն մասին :

Ա . Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում ,
անձկութեան փափաք յար ախորժելի , 'ի սրբերգենիցն
փառատորոզաց միշտ սրբարանեալ բնակեալդ 'ի սրբում ,
ըն և ամենազեղուն բարութեամբ առատաձեռն աննուա-
զելի , լոյս բարի և ծագումն անաղօտելի , երկրպագեալ
փառաւորութիւն , ահեղ և անդննելի , ամէն և յամե-
նայնում : Այսու բանիւ դաշամբք յուսոյ ուխտ ընդ
քեզ միութեան , հզօր այո , ամէն պէլուիայ . զովեալ
թաղաւոր հանուրց , Աստուած բոլորից , ստեղծիչ գոյից
և տէր կամարար , միայն առիթ պատճառաւորաց , փրկիչ
և օծեալ մշտապաշտելի :

Բ . Ուստի մեկնապէս թարգմանեալ 'ի մեզ զայս
գանձ անվաճառ և հարստութիւն անփոխադրելի , Յիսուս
Քրիստոս արքայ երկնաւոր , որում զողութեամբ մեծաւ
սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչ-
չութիւնք , կրկնեալ քեզ յօժարութեամբ 'ի հաճութենէ
անխոտոր մտաց , ծունր զոհութեան , ստեղծօղ էունց ,
որ են 'ի տեսման և 'ի ծածկութեան : Որ ետդ և էիր
միայն բովանդակ ամենեւին անպակասելի , աոհր զմերս

խկապէս համայն , զի 'ի լրութենէ քունմէ լցուցես .
(Երհնեալ և բարերանեալ , ծանուցեալ յաւետ միշտ
անքննութեամբ ողորմութեամբ մեզ 'ի փրկութիւն , 'ի
փառս և 'ի զովեստ անձառ բարձրութեան ահաւորիդ
բարերարութեան : Սկզբնաձիր օժմանս շնորհի մեծախոր-
հուրդ հրաշագարգութեան : Քանզի լոյս քո մեզ ծա-
նուցեալ , ճառագայթ անհաս , ծագումն անսահման , ա-
րեղակն անաշտասփիռ , աստղ սահմանիչ երկակշիռ
տարութեանց , ճրագ ոսից և լոյս հետեւմանց , որով
'ի ցոյցս իմաստից եկեալ տեսութեամբ բանիս այս յար-
մարութեան , տօնեմք պարերգութեամբ հրեշտակօրէն
յօտակամաբար փրկչավայելուչ կնգրիւս խնկեալ զպար-
գեւաբաշխ առտոտարութիւն ամենիմաստիդ յեւզ զու-
արթ անբիծ դաւանման : Քանզի 'ի սկզբան անդ կապ-
տեցելոյ ողորմել տխրականութեամբ 'ի փշմանէ բարձ-
րագոյն շնորհին ' հայրն իմ սկզբնաստեղծ ' և հնացեալ
յաւետ մեղացն դերմամբ 'ի մահ գրաւեցաւ , կապեալ
ընդ եղժման ասպականութեան անգերծ , հանդուցիւ , 'ի
ծառոյն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամենակոր-
ծան գլորման , հերքեալ 'ի լուսոյ ' այսր խաւարին վայրի
մատնեցաւ : Իսկ դու , զթած տէր ողորմութեան , քանզի
յաւետ քան զնոյն ծանեար զօր օտեղծեր , և զի չէիցն
ակնկալութեամբ չեկաց յոր ինչ էրն , որով անկարօ-
ղանայր իսկապէս տեսանել 'ի լոյսն վերին անմասոյց
գերակայութեան անսահմանելոյդ : Ոչ մշտապայլ յա-
րակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր , այլ զիշե-
րայնոյն ոտնալպիրժ մթին արհաւրաց ձեռնկալութիւն
ձիթոյ շարամանութեամբ նւեթոյ պատուով ընդ նոյն
զանդելոյ ' յօրինակ քո անխտ միութեամբ ընդ մեզ
խառնելոյ ' մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր : Օ , ի որ
'ի ստուերս մահու տարագրեալ գտաք ' կանխակորուստ
անկողն պարտեաց , 'ի պատճառ իբրին ազգակցաւ պաղոյն

Ջահաւորեցեալ Հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորութիւն : Արպէս և փայտին մահու՝ մաժմամբ քո 'ի նա ածեալ մաժուցեր զմեզ , առակաւ մեծի խորհրդոյն միաւորեալ 'ի փայտն կենաց :

Փ . Եւ արդ որպէս ոչ է օր լրմամբ առանց գիշերոյ , և ոչ անօրէնութիւն յարկի առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ : Քանզի իբր օրինակն հասարակային ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութիւն լուսաւոր առնէ , նոյնպէս և մարբեալն քոյինաշունչ շնորհին ընտրութիւն անիմանալեաւ զաներեւոյթ հոգիս միութեամբ 'ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ : Ոչ որպէս յիջումն լուսարանի սուրբ աւագանին լուացմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատալք առնուլ սրբութիւն , սոյնպէս 'ի յօժումն իւրոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութիւն սովմբ և 'ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի : Եւ որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի գրաւութիւն մեղաց փխտացելոցն նախաժառէր , իսկ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութի հրաշալի յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէր : սոյնպէս եւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օժանէ զարտաքին խորանս , իսկ զներքին մարդս աներեւակ ծածկապէս մտեալ՝ նոր կենդանածնէ :

Վ . Սատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ արարչիդ երկնի : Քանզի որք զիւրոյն կրեցին օգտութիւն՝ որ յողորմութեանն շահնծայութիւն , և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ , թէ ողորմած եմ ես տէր : Քանզի որպէս սիրոյն անուան կցորդիս Մստուած , նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տրնտեսութենն որ առ մեզ : Վեհագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր գիմակերպութիւն այս ճարպ պարարտութեան երկրի թանձրութեան՝ հողանիւթ գոյակա-

նութեան : Ոչ որպէս սոյն մասն 'ի կենդանւոյն ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ ըստ օրինին , այլ արարչուեդ բողորովին պտուղ որոշիւր , նոյն նմանութեամբ եւս և աստանօր իբր զօրութիւն տեսան մատչելի , յայս աւանդ հաճութեան Լչիդ Մստուծոյ վայելապէս սուեալ նուիրի , հոգւոյս հարազատ զուգաճանապարհ , արարողիդ պահեալ և ուխտեալ : Քանզի ոչ շունչ արեան և ոչ ճենձեր ինչ զուարթութեան օրինակ հոգւոյս իմոյ և կարւոյս ընդ անդամութիւս մտոյն ծախի , այլ արքայութեդ վերնում վիճակի տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ Ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի :

Ե . Ոչ էր մատչելի 'ի նախագահութիւն արու անգրանիկ դատիչ քննողաց , եթէ ոչ օժմամբ ինչ նշանակէր : Ոչ քահանայութիւն 'ի յանկոխելին տեղի ձեռնարկէր , եթէ ոչ այսու կատարեալ լինէր : Հակոբ ըզքարն պատկեր վիմին , 'ի խորհուրդ երկար խորանին ընտրութեան , օժմամբն տպաւորեալ կերպացոյց : Եւ որ զիջումն անձառ բարձրելոյդ տեսութեամբ սանդղոցն յարմարութեան , և զիս 'ի վեր տանելոյն անդ ուղեկցութեամբն , զարձանն իւղեալ կառոյց նւատակ 'ի ցոյցըս ասպանեացն յիշատակի : Ահարոնեան քահանայութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ Մստուծոյ օժմամբն ճոխանայր . որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն զեղեալ գերափառ իւրոյն զարմանազան կենդանագրուէր , ըստ սաղմոսին , զփառաց նախնւոյն առակէր զանդրադարձութիւն և զշնորհիդ կենաց սրբութեանն ընդ մեզ խառնութիւն : Թագաւորութիւն ոչ էր պանծալի աստանօր պատկերաւն ստեղծագործիդ , եթէ ոչ եղջիւրք իւրոյն օրհնութեան ձեռնարբեալ պսակաւ պճնութեան թաղին՝ յանուն քո , Քրիստոս , զլուխ ամբառնայր : Եւ զեանդ զնախնին վեհից մոռացայ , զծառայն մեծիդ և ըզկերպարանն անպարապրելոյդ : ոչ ահա Սեպիսեղեկ յօ-

րինակ ճշմարիտ ահաւորութեան 'ի ձիթաստանեաց լե-
րինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյ՝ Աստուծոյ զետե-
ղեալ կացին, 'ի վերնոց անտի հրեշտակաց 'ի ստղոց
տեղոյն իւղեցաւ: Աւտի շիրմի սկզբնահօրն պաշտպան
եպիսկոպոսական արքայապատիւ ճոխութեամբ 'ի քէն
հանդերձեալ նստաւ, մինչեւ յայտնեցար երեւեալ լու-
մամբ համայն իսկութիւն ազամային կենդանապորձուեղ:

Օ. Եւ արդ քանզի քո են շնորհք և քեզ վայելին
գոհաբանութիւնք, օրհնաբանեալ Որդի Աստուծոյ, դու
ինքն յարմարեալ բարենշմար տպաւորութեամբ զաղաչա-
նքս իւղաւորական խնկապատարս զմուսալիքս պատճառ
քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան:
Մատո՞ տէր Յիսուս, վերացս աներեւութից զայս ձէթ
լուսանիւթ, և արկ 'ի սոյն խարանս խոցոյ մահացուի
զկաթուած օրհնութեան իւղոյ՝ փրկութեան անապակ
գինեաւ սիրոյդ, միութեամբ արարչականաւ պատսպա-
րեալ պատանօք խնամոց, զի յիշատակարանս թարգմա-
նօրէնս բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յարմարուք
'ի թեւս Հոգւոյդ զկարգ իւր դացէ: Ի վերայ Գաւթի
Հոգի քո՞, բարձրեալ, յայնմ օրէ խաղաց, յորմէ օ-
ծութեամբն նուիրեցաւ: Սաւուղ յայր յայլ եւ 'ի մար-
գարէս ոմանս անտուտ իսկ գրեցաւ, յորժամ օծուամ
ժամանեցաւ զազաթան նորին: Արքայութիւնն ասորես-
տանեայց օծմամբն զրաւեալ մատուցաւ 'ի կցորդութիւն
տանն Իսրայէլի: Այստեղս ոմանս նշանաւորս վեհս և
երեւելիս 'ի խժականաց բարբարոս ազգաց եւզս այս
կենսապնդող ցօղով անձրեւեալ՝ իբր կարթիւ որսացաւ
'ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ Աստուծոյ:
Բանն որ առ Աիւրոս երկնաւորին պատուասիրութեան
զօծեալն ձայն նմին մեծ վարկաւ: Չայն սաղմոսօղին
գեր բան զմարդարէութիւն զօծեալն անուն նախայար-
մարեաց, կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր ա-

ւանդեալ, մի մերձենայք և մի մեղանչէք: Առ Հեղիաս
առաքելութիւն աստուածային հրամանատրութեանն, նը-
շանակ իմն հանելոյ 'ի պաշտամանէ անտի Բահաղու,
զօծելութիւնն 'ի Քորեբազդեաց Յէուայ և Աղայէլի:
Եւ լ թափեալ անուն փեսայիդ 'ի հոգեկնց բանից ի-
մասնոյն վերավայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ. որպէս
զի հոգին, Աստուծոյ յաւէտ պատկեր և նշանակիչ, զ'ի
փոքուս զմեծդ կերպապորութիւն քե և նկարագրեալ ընդ
քեզ միասցուք առմամբ քո շնորհիդ:

Ե. Եւ զի՞ եւս երկարս պատուածօրէնս բացականա-
գոյնս զժաղարականս և առակաւորս շարագրեցից առաջի
վերնոյդ և ահաւորիդ՝ մաղթողական բանաստեղծութիւս:
Տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի 'ի յօժ-
մանէ անտի սկսար քարոզել զաւետարանն արքայութե,
վայեալ անտուտ 'ի Յովհաննէ՝ օծեալ և զառն Աս-
տուծոյ՝ բարձօղ մեղաց աշխարհի: Օ. Ի թէպէտ ընդ
օծմանն օրհնութեան Հոգին էր քեզ իսկաբար լումամբ՝
և Աստուածութեան խառնութիւն բովանդակապէս, այլ
անունն պաշտի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս
ազգեկն 'ի սուրբան. զի զստրկութիւն ազամեան մար-
մնոյն մեծանալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ
արասցես: Բացեալ զառածս մարդարէութեանն Ասայ-
եայ՝ դու ինքն Աստուածութիւնդ մարդացեալ ընթեր-
ցար, հաւատարիմ առնել զբան ծառայից քոց, տէր:
Եւ իբրեւ ծանուցեալ եղեր օծութեամբն 'ի կարգ անդ
բանին, թէ Հոգի տեառն 'ի վերայ իմ՝ որով և օժ իսկ
զես, ապա փակեցեր 'ի հանդիտափառն օծելութեանէ
զօրբանութիւն երկաքանչիւրոցն, յայտ արարեալ խորո-
ցաւ սահմանի՝ ընդարձակ հեռաւորութեամբ մեծաւ կըն-
քեցեր. զմերս կաթուածով ինչ շնորհազարդեալ, և
զօրք իսկութեամբ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ հաւասա-
լութեամբ թարգմանեալ: Ի նախածանօթ մերկակեր-

պուժեանն պանծալի իմն գովեստիւ՝ օծեալն կոչմամբ 'ի հրեշտակաց փառատրողաց արարածոց երկրի ծանուցար : Օր մարդարէն կանխաւ գուշակեաց զ'ի Հորդանան , և յընտրեալն լեառն Թաբօրական հայրենի ձայնիդ եկաւորութիւն , թէ որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր : Օր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ առ 'ի զառեալդ ձեռնադրելոյ , օծ զքեզ Մստուած՝ Մստուած քո իւզով ուրախութեան :

Բ . Հոգի երեսաց մերոց , տէր Քրիստոս . որ է օծեալ անունդ իսկոյն , որով զփշումն կենդանութեան 'ի դէմն մեր լոյս բարերարութեամբդ քո աղքեցեք . իմաստութեամբ ումեմն երջանկի՝ մարգասիրութիւն խոստովանելի , ասելով առ ոմն , թէ եզ վկայութիւն առաջի տեառն օծելոյն . զնոր աւետեացս վկայելով , թէ կօշիկս անգամ ոչ առի յամենայն մտեղեաց : Երդոցն երգ իւզեփեցական զինի զՄստուծով ծանուցեալ զխորհուրդն 'ի գովեստ հարսին սուրբ եկեղեցւոյս՝ զմուռս առաքիւնութեան հանդերձ ամենայն առաջին իւզովն : Եւ եւս զմուռս և կնդրուկ մաքրութեան վարուց ամենայն փոշեաց անուշից իւզովքն զանգեալ՝ անդատին և այսր յառաջաբերեաց : Դանիէլ զկենսատու մահու քո , Քրիստոս Թագաւոր երկնի , 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի զայս անուանադրեալ վկայեաց յայտնի , թէ զկնի վաթսուն և ինն եւթներորդացն՝ սպանցի օծեալն , և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց : Ճրագակիր աշտանակն Օտքարիայ Մագովայ՝ որ 'ի Բարեբեայ՝ իւզոյն բարեբաշխ բացատրութեամբ 'ի մասունս եւթանց առաջադրութեանց զնդիցն վառելոց՝ 'ի ջահէ անտի զօրուք անեկամտաբար վիճակաւորեալ , զ'ի քոյդ լրութեան 'ի մեզ փրկութիւն և օծելութիւն դերաբնապէս նախագեկուցեր : Օր ըստ օրինին անտուստ գուշակմամբ 'ի խորանին որ 'ի տաճարին՝ ամէնքնտեղ իմն կրթութեամբ

սովորաբար մատուցեալ ինէր , պանք բաղարջնծայք և նաշիհք իւզովք խառնեցեալք , և զուարակք եզանց իւզարիեալք , և տիրական անուամբ ձայնեցեալք , և հաւուց ոմանց Թաթաւամբ յազգակից ճարպին 'ի յարիւն , այսր խորհրդոյ առձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ , միածին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ Մստուծոյ : Միայն դու օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնութեամբ համայն էութեամբ իսկապէս լրմամբ ամենայնիւ անպակասելի :

Թ . Եւ զի՞ եւս իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի , և ոչ ճաշակել զքեզ , քաղցրութիւն : Իմանալ քեւ զայս՝ թե զի՞նչ իցէ եւզն , եթէ ոչ զտիրութիւնն 'ի փայտն պարտեաց սովմբ բըժըշկեալ , ըստ սաղմոսողին , զուարթ դործեսցես : Եւ զի՞նչ պարարտութիւնն , եթէ ոչ զկերակուրն մահու սովաւ մոռացուք լրեալ 'ի սմանէ : Եւ զի՞նչ օծութի , եթէ ոչ զմոխրոյն թշուառ տեսութիւնն 'ի ձեռն սորին փոխարկեսցուք 'ի պայծառութիւն յաւէժ ուրախութեան , անուամբ քո փրկեալ՝ յոգի զօրութեան Հօր անուանեսցուք : Եւ զի՞նչ արդեւք մարգարէին հոգեւոր ըլձականութիւն ամենատեղն բաղձանացն իցէ իմանալ , որոյ ձերութիւնն առակի 'ի ձէթ պարարտութեան , և կամ օծանելն իւզով զզլոյն վերամբարձութիւն , եթէ ոչ զհին խորդախութիւն սզոյն սաստկութեան 'ի մահ կործանմանն կենագործեալ դեղովս այս կենաց՝ պատրաստարեալ օծանդակեսցես : Եւ զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն , եթէ ոչ 'ի մէջ իմն անյուսուծ մեղացն միգի և կռապաշտութեանն խաւարի՝ կերպակցապէս միութեամբ 'ի յիս Մամանուէլ : Եւ կամ զի՞նչ մարդարէն աստուածաբանեալ 'ի սփոփանս զտարթարար օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ , օծցին իւզով 'ի մրոյ պարզելոյ . Եւ կամ ի

մատուանն 'ի դիմաց հարսինն ասէ օրիորդացն, հաստա-
տեցէք զիս եւղով և Կեղեցկազարդ խնձորով յարկեալ
ծածկեցէք, և 'ի սլարտէզ իւղենեաց սածեալ զրգե-
ցէք, եթէ ոչ այսր ահա ընտրական նիւթիւ Հոգևովդ
քո լցեալ 'ի սոյն լոյս տեսցուք զանխմանալիդ 'ի մեզ
բարձրութիւն գովեալ : Եւ արդ քեզ, միայն խնամա-
կալ, պատճառդ բարի բնաւից եղիլոց, ձեռն համբառ-
նամ, տարածմամբ բազկացս, երիկամանցս զործակցութիւն,
սրտիս հեծութեամբ, լեզուիս և շրթանցս ձայնարկութիւն :
Սուր ողորմութեամբ, տէր, պաղատանացս խնդրուածոց
առ քեզ կարդալոյս : Հնորհաւորեալ այսու պարդեօք՝
զսհարանութիւն քեզ վերընծայեմ, հղօր ահաւոր բար-
ձրեալ անքնին, անսխալ փափաքմամբ միշտ համբուրե-
ցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, օրհնեալ հա-
նապաղ յաւէժ անդադար երգածայնութեամբ : Ինձեռ-
եա՛ առաւել բարերարութիւն 'ի սպառ վրիպելոյս . տուր
յոյս քաղցրութեան՝ ոչ մասին միոյ մատուցման լուսոյ
արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել քեւ բարի, բզ-
նրբութիւն ծածուկ խորհրդոյս, զրգութիւն խառնեալ
ընդ աղերս ասել ընդ Դաւթի, ընկալաք Լստուած,
զողորմութիւն քո, և զծածուկս գաղտնեացդ անտեսից՝
իմաստութեամբ քով յայտնի արարեր :

Ժ. Եւ արդ մեծութիւն քեզ, ամենակալ առատա-
ձեռն աննուազելի, ամենափոյթ առ 'ի զթութիւն, մըշ-
տայօժար 'ի բշկութիւն, զի միացուցեր խառնեցեր ընդ
մերձաւոր դերագիւտ ընտանի նիւթոյս զհրաշս անձառս
քունդ սքանչելեաց ահաւորութեան : Քանզի զօր երկին
ամենայն բարձանց՝ երկրիս լայնութեամբ և անզնոց
ներքնոց խորութեամբ՝ ծովուց բազմութեամբ ոչ զօրէ
տանել, այլ իբր զգոյզն 'ի մեծէ բերի, 'ի փոքր գոյս
տեսականեցեր զօրութեամբ՝ սահմանեալ ճշմարտապէս
անհրապուրելի . զի մի նորոգ իմն երեւելով յայլ էու-

թեանէ՝ առ աչս հարեանցի երեւականութիւն ինչ վար-
կանեցի, վերաւորել քան թէ բշկել անընտրելաբար
զկարծիս մտաց : Քանզի որպէս մարմին քեզ հաւատ-
տապէս, օրհնաբանեալ Որդի Լստուածոյ, խնկութիւն
և ոչ օրինակ 'ի յարգեանցն ցորենոյ արարչապէս միշտ
հանդերձեցեր, և կայլակ կողիդ զարիւն խաղողոյ, և
արգանդ կենաց հոգեւոր ծննդեանն զառատութիւն ջուրց
յոլովութեան, նոյնպէս և զհոգի անմահիդ փշման՝ սո-
վաւ և 'ի սոյն արդիւնատրեցեր : Երկունք կենաց որոյ
կերպարան յառաջ եկելոյն և ոչ հեթանոսութեամբ է
փոխարկութիւն, որպէս ոչ տեսողութեան խաչական
փայտի ինչ երկրորդութիւն, նստելոցս յերկրի խաւարի
ըստ նմանութեան քո, տէր, ծագեցեր : Քանզի յայս
կերպարան շնորհի զանսլակաս լուութիւն անհասիդ յայ-
անեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի տոնանկն կարօ-
տացի և մի ընչեղն բարձրամտեցէ, ըստ օգոյ հաւա-
սար բաշխման և լուսոյ արեգական տարածման և ջրա-
կան վտակաց զեղման : Օյ հաւասարապէս բաշխիր
երկրածնաց մանանային զսղաքամանութեամբ՝ փոքունցն
առաւել քան մեծամեծացն :

ԺԼ. Իսկ այս նիւթոյ տեսաւորութիւն խորին խոր-
հրդոյ և 'ի բնուստ անտուսա հրաշապէս ունի զթարգ-
մանութիւն : Որպէս զի ոչ երկմիտ ինչ շութափութիւն
անհաստատապէս զտեղի փոխէ, և ոչ նենգողաբար բզ-
բնակութիւն ինքեան լքանէ : Քանզի ոչ վերջնականօք
աճառովք հերքի, և ոչ յընդդիմակցէ ումեքէ ողողեալ
արտաքս ելանէ : Վասն զի որպէս պատահումն գունոյ
յեւթիւն մարմնոյ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ
գոլովն Կոյսցուցանէ և ոչ գոլովն ապականէ, այսպիսեաւ
իմն յարմարութեամբ իւղոյս զօրութիւն՝ անդասին 'ի
յիւրոց անտի կերպարան զառեանն ունողի միասնական
զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր, տէր Հիսուս

Վրիստոս ընդ իրին գոյի և զօրինակն լծակցելով : Վրան զի զանհմանալին տեսութեան աչաց և մտաց ըղձից 'ի դէմս բերեալ կերպաւորեցեր , 'ի ստղոց երկրի ճշնեալ մզելով զարմանսեօք հրաշագործութեամբ մատակարարել մեզ պատրաստեցեր : Մանաւանդ զի ոչ յողովից խառնից 'ի մի եկելոց խմբակցութենէ զանազան ծաղկանց , ըստ հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլութենէ , զայս եւղ օծութեան հրամանատրեցեր , այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքնին խառնեցար 'ի սոյն մաքրութիւն վերնալոյս ձիթոյ : Որ թէպէտ անձառեն համադրութիւնք քումդ անուշութեան , և ընդ օրինակաց իրիք ոչ համեմատի , այլ ծաղիկ դաշտի և շուշան հովտաց և նարդոս ընտիր և եղեգնախունկ խառնեալ հալուէիւ , յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ուղիւզոյ և ազնիւ գինւոյ . ոչ սոսկ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճսպէս օրինակեցար , փառաւորեալ անունդ անքնին , որ զամենայն ընուս , և յիրէ իմքէ ամենեւին ոչ կարօտանաս : Ուստի ոչ շփոթելովք 'ի հակառակաց բռնադատութեանց բաժանեալ կամաց մեկին առակի , այլ 'ի սիրոյ հաւանութենէ աստուածապէս 'ի մէնջ պարարիս . վասն մեր ըստ մեզ առ ամենայն վայելչական նմանութիւն օրինակեցեալ : Ըն որս լոյս բարի և հուր ջեռուցիչ , տապ սիրոյ առանց մասին ինչ շնչման անգթական սառնացրտութեան այս զանգուած նիւթոյ կաթուածոյ ձիթոյ մաքուր մտաց տեսեալ իմանի , սրով յիրաւի սովաւ 'ի յՄստուած է միանալի : Ընդ Սողոմոնի օծելոյ որդեգրեցելոյ Մստուծոյ երգեմ բերանով հարսինն երկնաւոր փեսայիդ բարեբան զոհաբանութիւն , համբուրեալ 'ի յիղձս մտաց զհոտ իւղոց քոց քան զամենայն խունկս : Եւ իբր զբանս կենաց յախտենականաց ունօղի , ըստ հոգելից բանի իսատանոյն և աստուածաբան Մետարանչին , զհետ քո 'ի հոտ իւ-

ղոց քոց ընթացութեալ լուսեալ զերեսս ջուրքք կենաց . Որ 'ի վեր է քան զերկին օգոյս այսորիկ , և օծեալ զգլուխս անախտական իւղովք երկնայնով՝ յանգիման եղէց բեզ ուրախութեամբ , զուարթապէս և ոչ տըխրաբար :

ԺԲ . Ըստ իւղ խնկելի պաշտելի և երանելի , ոչ սոսկ օծումն ուղղոյս սենեկի , և կամ հերաց վարսից զազաթան նպաստ ինչ մատուցանի , եթէ ոչ տէրունական կենսատու խաչիւղ տեսնապրեցի : Սոյն եւղ զարմանահրաշ օրհնութեան լուսոյ զհրեայն և զխուժն՝ ըզհնդիկն և զարբարոսն՝ զսկիւթացին և զերենացին՝ ըզդուժն դժնէաբար և զարհարատեսակ շանազուլին սուկալիթխար , զտէրն աղատ և զստրուկն ծառայածին քրիստոսեան արարեալ , անուամբ քո կնքէ , և Հոգւոյդ սրբոյ ընծայէ , և Հօրք երկնաւորի հարազատ որդի հաստատէ : Բազմօրինակ են սովաւ արուեստից տեսմունք յարմարեցեալք , նախ նիւթոյն ապա զօրութեանն : Վրանզի իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի և անօգուտ եղեալ անպատուի , նոյնպէս և մարդ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խորտակի , և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի : Մասն սա քո , Քիսուս , որով զհրաշալիսն զարմանազրես . քանզի իբր անկծելի կազմութեամբ կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստ շրջարկութեամբ պաշտպանեալ ծածկէ յայլագունակ խրթնի եկամտից . մինչ զի այսու մաքրութեամբ թաթաւեալն 'ի սմա ոչ ներկի արեամբ , և ոչ տխրատեսակ երկնիւ այլայլն : Եւ զի և թափանցանց իմն խառնութեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն մերոյս գոյութեան մտեալ անցանէ : Ըն թէ անէճք սաղմոսօղին ձիթոյ առակաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի , որչափ ևս Հոգիդ սոյն ճարպով լուսոյ զաներեւոյթ ներքնոյն տեսակս կենապործեալ ողջացուցանէ , ազդումն

տուեալ 'ի խորոց անտի շնչման հաղաղին՝ մինչեւ 'ի սպառուած ծայրիցն եղերաց զքնան ընկղմէ զիշատակ մարմնոյ մահուն արկածից : Քանզի կենդանական զօրութիւն քո միշտ ահաւոր , տէր Զիսուս Քրիստոս , 'ի սմին խաննեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ :

ԺԳ. Ըյս օծումն բարետեսիլ և առ բոնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս իբր զօրաւոր հնարից կերպարան ճգնաւորական անըմբունելի ձեռաց ներհակին օրինօք պաշտի , դիւաց և ախտից հզօր ահարկու : Քանզի յոք նապաճոյճ պճնութիւն բանին Եզեկիէլի առ իմանալին փարաւոն , հենդնաւոր առակազրութեամբ ողբականօք շարայարմարեալ , յորժամ եղեր , ասէ , և հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին , ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան : Օրհնարանեալ ահաւորութի մանապայր ձեռնկալութեան , որ միշտ անձառ ես բանից և դերազանցեալ քննութեանց , որ աւետարանան կենաց խնկին յարակայ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի Դաւթի : Եւ 'ի քահանայապետին հարցմանէ , դո՞ւ ես օծեալն Որդի օրհնելոյն : Եւ յերանաւորն դաւանութեանէ Պետրոսի օծեալ միայն Որդի Ըստուծոյ կենդանոյ : Եւ յապահաւատ քննողացն , եթէ դու ես օծեալն , աւսեն , ասա՛ մեզ համարձակ : Եւ 'ի կանոնականացն քոց հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տէր ամենայնի : Եւ Հերովդէս յառաջ քան զսոյն զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ : Եւ զեմբող զրեն , դու իսկ ասացեր , զօծեալն Ըստուծոյ զտէրն Դաւթի զանսկիզբն Որդի՛ ժամանակաւ որդի : Քանզի այսպէս ընկալաք վայելաբար զայս թարգմանեցեալ , որ 'ի մեզ բերի ծայրն կաւարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախապատուութեան :

ԺԴ. Ըյնքան ունի ահաւորութիւն միանգամայն և սրբութիւն իւզաւորական խնկաւորութիւն սոսկալի ան

ուանս օծութեան , մինչ զի որպէս ոչ է համարձակել ուրուք յերկնայնոցս Ըստուած անուանիլ՝ այլ աստուածային , նոյնպէս ոչ բերէ մարմնն զՔրիստոսու անուն անձին համարել , այլ զքրիստոնէայն : Ընտանելի նախ նոյն միծութեան Սկրտչին՝ ջուրք զհողին հրաւիրողին . քանզի չեմ ես , ասէ , օծեալն , այլ առաքել առաջի նորա : Սովաւ շրջէին , որպէս բանն ազգէ աւետարանչին Մարկոսի , առաքելականացն լծակցուիք , իբր ազգակից հարազատ ձեռնիդ Ըստուծոյ՝ այսու վարեցեալք , Քանզի իւզով օծանէին և առանց մարգկային հնարից անուամբ քո բժշկէին : Վասն զի որպէս խաւար 'ի լուսոյ և ցաւ յոողջուէ , դիշեր 'ի տունջնեւ և մահ 'ի կենաց , այսպէս և 'ի սոյն իրէ տիրապարդեւէ ամենայն չարին երեւոյթք մերժին խափանին և բնաւին ամիսփին : Քանզի որպէս ճանճք զազիբք և փոքր զեռուկք սարգից և ունկնամտից իբր 'ի դեղոց մահու յայս նիւթոյ սպառեալ պակասին , սոյնպէս լուծեամբ շնորհի օրհնութեան սոյն եւզ զօրացեալ՝ և զայսու վանէ և մուրհակս չարեաց ջրէ և զվճիւ մահու պատառէ : Ոչ է աւազան կատարեալ առանց օծման օծանգակութեան : Եթէ աւազակայն մահու խոցման զմարդն առաջին , այս զեղ փրկութեան մատուցեալ տուաւ : Եթէ անձարակ վիրացն Զակորայ և Խարայէլի՝ սոյն իր պատուական յիշատակեցաւ : Ըյս իւզոյ փափաքեալ Դաւթի՛ իբր ձիթենի պտղալից 'ի տանն Ըստուծոյ յուսով յարակայի , լքեալ զԹլիստութիւնն անդստին զվիրաութեանս շնորհ զուշակէ : Եւ զի է ինձ զայսմանէ ճառել , և համայնին կարծել հասանել , որ և ոչ վերինքն զօրեն ձեռնարկութեամբ ինչ բանի զսոյն խորհուրդ 'ի մանաւորէ ինչ ճառելով նշանակել , թաղում՝ ասել թէ յիսկութենէ :

ԺԵ. Փառք քեզ միշտ և յամենայնի , անմահ թաքաւոր , 'ի յայժմու երկեցեալ օրհնարանութեանս , զոր

արարեր և կատարեցեր առ իս , բարեխնամ գթած և երկայնամիտ , հարուստ և առատ ամենայաղթող . անգլխախնի 'ի հարցն զծագրելով զօրինակն մինչև 'ի լուսնն ածեր զխնայութիւնն ճշմարտապէս : Դու լոյս իսկ բնութեամբ և արեգակն մշտապայծառ , և զաշակերտացն դաս լոյս անուանեցեր , որով զարարածս ամենայն երկրի ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լցուցեր : Բնկալար զեւրն անուշութեան յուսմանէ 'ի յոտս , յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ , և 'ի միւսմէ պոռնկէ 'ի զլուսն , նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ : Մշտափափաք բաղձանօք անասճմանելիդ 'ի սոյն հոտոտեալ , մինչ զի ուխտիւ անփոխադրելեալ օրէնս յարակայս օրհնարանելիս՝ քոյնահրամանս պատուերս կենաց ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաւաձեռն իւղոյն յարգաւորութիւն , զարմանս հրաշից լսողացն առ ապառնեացն յուսադրութիւն : Դուք օծուի ունիք զսրբոյն , ասաց երջանիկն առաքելութեանց , մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ յառաւելութենէ կենդանարարիդ անսրակաս բովանդակութեան : Ուստի յաւէտ իմն յարմարաւոր և հանգունատիսդ առ 'ի մասնաւորն նմանութիւն լուսոյդ և հոգւոյդ սրբոյ՝ այս կաթնած օրհնութեան 'ի վերնոյդ բարեբաստութեանց անսպառաբար սրակեցեալ 'ի մեզ : Եւ ասի լոյս , իբր զնախաթիւ գոչ ստեղծուածոց և արարչութեանդ պատկերակից , որով զեւար մթութեան մեղաց հալածես : Իսկ հուր , զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի զուրութիւն ըստ էականին կշիռ բաշխութե , ծածուկ և յայտնի , լուսալ և ծանուցեալ : Եւ եթէ ոչ ընդհարցի 'ի 'ի հակառակէն , ոչ յինքնասաստ յօժարմատութենէ բաղձայ բորբոքիլ : Դարձեալ և օծումն , զի արքայաբար որդեգրեալ ընդ քեզ 'ի ժառանգութիւն հօրդ մատուցես . ողորմութեանդ ազգակցաւ նկարեալ

'ի մեզ անեղծանելիլ՝ 'ի հանդերձեալ փառսն փայլեսցոյք : Դարձեալ և հոյի , զի մաքրեալ զարկածս իսպէութեանն՝ որ 'ի բանասրկութիւն ներգործութենէ , նորոգ փոփոխմամբ հոգւով և ճշմարտութեամբ հօրդ երկնաւորի երկրպագեսցոյք , բեւեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք , ամենապարգէս :

Ժ.Օ. Եւ հա արգարեւ յաւէտ իսկապէս եւզս այս լուսապատար ինկալիլ՝ վերնականիդ սիրոյ տեսութիւն , Վասն որոյ և Պաւղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ճառս զոհաբանութեանն ասելով յայտնի , որ օձ զմեզ ձեւք հանդերձ 'ի Բրիտոս Կիսոս՝ Եստուած է , որ և կրնք քեաց զմեզ և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր : Եւ զարձեալ , մի , ասէ , տրտմեցուցանէք զհոգին սուրբ Եստուծոյ . որով կնքեցարուք յաւուրն փրկութեան : Պատկառելի և անվանելի օծութեանս յորջորջութիւն իբր 'ի նորումս յաւէտ քան 'ի հնումն : Բանդի բանն դաւթեան սաղմոսին զտիրական տնօրինականաց սկզբնաւոր կրիցդ խորհուրդ՝ ճշմարտաբար վերասահմանէ , ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց վասն տեառն և վասն օծելոյ նորա : Մարդարեւութիւն մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս հրէախումբ չար մոլեղնութեանն՝ որ 'ի տէրդ յանդգնութիւն , ով է որ ձգիցէ զձեռն իւր յօձեալն տեառն և քաւեսցի : Բանդի թէ և յագգայնոյն սպանաւ Կաւուղ , այլ ոչ 'ի սպառ մերժեցան յամօթ և 'ի նախատինս աղցաց օտարաց , մինչև արեանդ Եստուծոյ հաղորդեալ գտան , Գրաւական մեծ յիշատակի ապագայիցն ժառանգութե՝ աղօթմանուէր աղերսարկութիւն ասել սաղմուսին , վասն Դաւթի սիրելոյ քոյ՝ մի դարձուցաներ զերեսս քո յօձելոյ քումն : Եւ զարձեալ , նայեալ և տես յերեսս օծելոյ քոյ , և արա՛ ողորմութիւն ընդ օծելոյ քոյ :

Ժ.Զ. Ձեռին քո , Բրիտոս , երկրպագեալ պարգէս

ւատրուծիւն այս հիւթ լուսակիր . քանզի ոչ այլ մեծ
բարձրութիւն յարքայութեանն ճոխութեանէ , ասէ մար-
դարէն 'ի դիմաց քոյ , տէր , քան թէ՛ գտի զՎատիթ
ծառայ իմ և իւզով սրբով իմով օծի զնա : Աւտի
կիրթ իմն յիշատակաւ դքոյդ համբուրեալ լուսոյ օծուի ,
տէր Յիսուս Քրիստոս , ծանկցուք զքեզ անփոփոխ
մշտնջենաւորութիւն , թէ դու ես ամենայն՝ և յամենայ-
նի միայն թաղաւոր թաղաւորութեանց , և ճշմարիտ օ-
ձեալ իւղելոց , փառաբանեալ երկրպագութեամբ երէկ
և այսօր : Քանզի զոր օրինակ պատրոյդ թացեալ 'ի
ճարպում ոչ երեւցուցանէ ինչ նշոյլ մինչեւ հուրը
լուցեալ վառիցի , սոյնպէս և այս օծութիւն լուսոյ առ
'ի մեզ հեղեալ 'ի հանգերձեալն ջահաւորի : Այս է
կերպարանին մեկնաւոր բացերեւութիւն , 'ի նախնեացն և
այսր բերեալ բարենշան իմն յարմարութեամբ՝ հրաշա-
պայծառ երանգաւ գունեալ :

ԺԼԴ . Արդ այսոցիկ պատճառ վերագոյն մասանց կե-
ցուցչաց աստուածականաց արարչութեանդ հարազատաց ,
ասանց որոց ոչ է գրիլ քրիստոսեան , և ոչ նազովու-
ցի անուանիլ , և ոչ յիշատակիլ յորդիս Յուդայի , և
կամ խրախոյս բառնալ յանուն Աստուծոյ Յակոբայ :
Այս հիւթականութիւն օրհնութեան ձիթոյս , յորում
սուրբ Արքորդութիւնդ խառնեցեալ միաւորի , ճառագայթ
շնորհաց , շուք մերոց դիմաց , նկարագրութիւն երեսաց ,
բարեձեւութիւն պատահմանց : Լուսաւորութիւն աչաց ,
տեառնագրութիւն բբաց , վայելչոյի այտից , զարդ կեր-
պարանաց , պահպանարան շրթանց : Հանգերձիչ կրօ-
նից , յարմարիչ վարուց , շաղկապ հաւաքմանց , զօրուի
անձանց , ուժգնութիւն դիմեցմանց , խափանիչ յուռ-
թից , քակտիչ հմայեկաց , նահանջիչ ձեռնածուաց ,
խայտառակիչ կախարդաց , դտիչ աղանդից , բոնախոյ-
եան դիւտց : Փարատիչ ցաւոց , կատարիչ կնքեցելոց ,

տենչանք երախայից , անգինն արաքնոց , հիացումն հե-
թանոսաց , նախանձարկու անհաւատից : Մերկացուցիչ
զաղտնեաց , յարզանք յետնոց , փառք սարկաց , սք՛նու-
մըն կանանց , աճեցումն տղայոց , հրձուանք ձերոց ,
ձեռնադիրչ նուիրելոց , զգուշութիւն մաքրոց , պսակ թա-
գաւորաց , ճոխութիւն արքայից , յառաջագրութիւն կայ-
սերաց : Քանզի զոր օրինակ աման ինչ կնքեալ՝ նշանա-
կիչ իմն է ներքնայնոցն մեծագնութեան , նոյնպէս բարձ-
րութիւն շնորհին 'ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն
քո , Աստուած տէր Յիսուս Քրիստոս , վայելչական իմն
տեսակաւ ծանուցեալ նշանակի : Իսկ անունն իսկոյն
անգստին 'ի նոյն յորջորջեալ կոչմամբ , ըստ հօգեից
արանց իմաստնոց՝ որ յեղիպտացուց անտի սկսեալ , 'ի
դէմն ածելով զիրին կերպարան՝ ահաւոր խորհրդայ
պատկեր :

Սալիս սրբապա իւրոյն Սիւսանի :

ԺԼԵ . Քանզի միտնս այս օրհնաբանեալ , զոր մար-
դարէն կանխաւ լոյս աչաց գրեթէ զսոյն ազերսեալ խընդ-
րէր , ըստ քերթութեանն բառի որ ըստ խորութեանն
Հովնրոնի , թարգմանեալ իմանի , ինձ մայր : Այս ին-
քըն է՝ առ 'ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրապէս ,
և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լու-
ծականութի՛ առ աւաղանին լուսաւորութիւն : Այլ իբրեւ
զգեզ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յեղանակել ըզ-
ցնդեալս իմ վայրագութիւն , և զաղբերց հեղեղեալ
մշտահասութիւն : Իսկ մառնամուտ՝ որ և այս միտնն ,
ըստ այլում բառի ցուցանի . այս ինքն է մթին , որ և
խաւարչուտ գոյ և ծածկեցեալ կամ անտեսական . որ
և սոյն կոչումն փիմաութեան չէ օտարացել : Քանզի
արգարեւ յիբէ անտի անունն նշանակի . վասն զի ան-

քրնին է այս խորութիւն յաւէտ քան զամենայն սրբաւի սրբոց : Օ՛ր ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնութեամբ զսիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութեամբ 'ի մասունս աղ զողականայն տնօրինապէս տեառնադրի : Սակայն անհասութեամբն վերնականաւ և զանունն ունի անքնին : Վանդի որպէս Մատուած՝ իսկ և իսկ 'ի լոյս անմատոյց աբի, իսկ անսահման փառաւորութեամբն՝ յեղանակաւ իմն անբաւուր 'ի խաւար անդինն ծածկեալ իմանի, փակեալ արտաքուտ 'ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորունն լուսոյ 'ի լեզուաց ոմանց ճարտարաց 'ի ճահ ձեմութեանց զրականապէս անունազրութեամբ մալլ առձայնի, վասն ոչ զօրելոյ երկրածին բնութեան զիսկն զխտելոյ : Իսկ զերկաքանչիւրս աստուածականայն անգոստին յինքեան հարստաբար տիրապէս ունի . քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ եղս այս նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կընդրկաւ : Վասն զի Մատուած մեր հուր ծախիչ է ըստ Մովսէսի, և զարձեալ լոյս է ըստ Յովհաննու . ուստի և Ասայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ . եղիցի ասէ . լուսն Իսրայէլի 'ի հուր :

Ի . Դարձեալ այլ իմն կերպարացանելով զբանս առ 'ի նոյն պատկեր յայտնութեան էրի . վասն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն՝ որ 'ի գթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել : Վանդի Սեռայ, որ է դառնութիւն . այս ինքն նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանումնց, որ և միտն ըստուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան ազգականութիւն : Վանդի այսու օժմամբ հոգեւորականաւ խզեալ կամ հատեալ 'ի սնտիասէր մահակերպարան տաղտկազազրական հեշտութեանց հակառակողին, որ օգախոնաւ մեղկութեամբ զքնարս ձայնատրական՝ և կամ

զարկուած վերածածկութեան մինարհետ ուժգնաբարբառ խրոխտահանական կազմուածոյ թմբկիս գործակաւութեան, ջրացիլ իմն գիշութեամբ անվայելուչ թուրազանակեալ՝ 'ի ստորեւ կորստեան քարշէ զօրինակ մերս զոյւթեան : Կայսրիք յուսով վերստին զարձեալ ընդ անձառ խորհրդոյ խաչի քո, Վրիստոս, մկրտեալ 'ի մահ կենդանուոյդ՝ անվախձան կենացդ սովաւ հաղորդիմք, 'ի քեզ իսկ Մատուած համայնիւ խրախուսեալ 'ի սպառ ամենեւին անհատուածելի :

ԻԸ . Այս եւլ զգրօշեալն քառակուսեան յանուն քո, Յիսուս, նշանի բարձրելոյդ հաւատար հաստէ . շնորհ ընձեռեալ զուգափառ և նմանատիպ արեան կեցուցչիդ նոյն անվանելի փառօք պատկեալ մեծացուցանէ . փայտ անուանի լեղոյ օրհնութեան, ըստ մարգարէին կանխաձայնութեան, զ'ի հասարակաց կաղմեցեալ բուսոյ անտառաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խակութենէ չարին արկածից և օտար կարծեաց 'ի ստեղծօղ վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց հասուն ներգործէ : Օ՛ր և որ 'ի մեզ մտիցն պատուհանաց մշտաբացիկ թամկանցանցունք յանուն մեծութեան ահաւորիդ զօրութեան 'ի խոհական իմն համեստութիւն քեւ տեառնադրեցեալ առ 'ի յընձակերա օթեւան Հոգւոյդ՝ անաղղելի պատրանաց չարին խաւարահոլմ խարքախողին, այսու լուսով զսպեալ ամիսփիմք 'ի նուազ զոհութեան երեկորեայն պաշտաման ընդ երկնայնոյն զամբարաց՝ առ օրինակ վասման շնորհիդ որ 'ի մեզ : Ի սոյն յիշատակ փրկութեան բազմացն սովաւ անկեցեալ ծաղի, և ծաղկաւէտ եղեալ պողածնի, 'ի սպաս ընթրեացն պատրաստութեան յետնում գիշերի 'ի մեծիդ դալարեան : Ահա զայս լոյս ճրագի համարեալ 'ի կիր արկանեմք :

ԻԹ . Դարձեալ ըստ գծագրացն գումարութեան քսան և չորիցն շարագրութեան՝ որ յալիստիտաց ան .

տի վերաթուի մինչեւ 'ի քսաներորդ երկրորդն կարգի ,
 յորում զայս խորհուրդ խորութեան անտուսա թարգ-
 մանեալ՝ ճաշակ հեշտալի՝ որոց հաղորդին՝ ջամբել պատ-
 րաստեմք ամենակազմ յարմարութեամբ : Քանզի յութ-
 սըներորդէ անտի գրոյ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝
 ստուգաբանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան նիւթ
 ճշմարտագրի . որ է կերպարան արդեան խմորոյ յինքն
 բերողի զզանգուածն զօրեղապէս : Որ ոչ սակաւն 'ի
 յորովէն պարագայի , քան թէ 'ի նոյն իրն դարձուցեալ ,
 ըստ աւետարանական առակին , զամենայն առ ինքն վե-
 ղաբերեալ աձեցուն առնէ :

ԻԳ . Սոյն եւզ հեղութեան միշտ համարձման և
 խոնարհութեան օրինակ և նմանութիւն , առ ոմն կակուղ
 պատառաւ մատուցեալ ջամբի , հարթակշիռ և բարե-
 յարմար բանի կերպարան . իսկ համայնիցս լուծականաց
 հոսանուտ և ստորածորելի նիւթից գերափառ վերաշըր-
 ջական հրաշափառ խորհրդոյ պատկեր : Քանզի և յա-
 ման ինչ մորթոյ արկեալ՝ ոչ ըստ զինուոյ ձեւոյ և կամ
 ջրոյ թացութեան մեղիէ , այլ 'ի սահման պատշաճին
 պահէ : Այսպէս ընկալեալ զըրոյցք բարեոյ անհաւա-
 սար առաւելութիւն , Որդի Աստուծոյ կենդանոյ , ըզ-
 սրբանուէր այս օծելութիւն 'ի ճակատ գիմնայս արեամբ
 քո զրեմք , և 'ի բնութիւն շնչոյս Հողւով քո տպաւո-
 բեմք : Հաւատացեալ խորհրդով մտացս , եթէ յաւէտ
 յայանեսցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ ծայրարձա-
 կութեամբ 'ի տարածումն յողնատեսիլ զարմանահրաշ-
 ընգարձակութեան՝ պտուղ իւղոյ ընծայեալ զըրոյս 'ի
 փառս ապառնեացն հանդերձելոցն : Այս ճարպ հողեւոր
 երջանիկ և վերնանշող 'ի գեմն երեսաց իմն պատկերի՝
 քումդ նշանաւ ջահաւորեսցի :

ԻԴ . Եւ քանզի իբր անհաս ոչ ըմբռնական այս
 մեծ զօրութիւն արագ սրացմամբ 'ի թեւս թեթեւս մնաց

պայմանի , անգր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն
 հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ 'ի ըս-
 պառ որոշեալ փակեցաւ յինէն : Ոչ օրինակեցաւ կը-
 ցորդաւ , ոչ նմանեցաւ զուզամանութեամբ , ոչ սահ-
 մանեցաւ ձեւակերպութեամբ , ոչ կշռեցաւ ընկերին չա-
 փով , այլ ահա ընդ աստուածեան խաչիդ նշանի հա-
 ւասարութեամբ արեան կեցուցչիդ հողիպպէս գերազան-
 ցեցաւ : Եւ արդ օրհնեալ զմեզ , աէր , սովաւ և 'ի սոյն .
 եւս և անունդ քո ահաւոր լուսաւոր , երկնաւոր և զար-
 մանաւոր , 'ի դովեստ փառաց անձառից մաքրակրօնից
 բուրխաւաւ խնկեալ , սուրբ սուրբ , անքնին անպատում
 բարձրեալ ողորմած , վերերգեալ ճշմարիտ բարերար և
 սուրբ , արա՛ սովաւ փրկութիւն , սուր և քաւութիւն ,
 պարգեւեալ բժշկութիւն , հանդերձաւորեալ շնորհ , առա-
 տաձեռեալ երանութիւն : Հօծումն այս ձիթոյ երկնան-
 ձրեւ լուսոյ անարատ գտայց . յիւղեալս այս թեզան
 բանաւորական մի մտցէ և մի գրաւեսցէ տխրականութի
 աղտոց մեղանաց՝ շաղախել երբէք զոյւոյս կերպարան :
 Եղիցի սոյն ինքն որոց մատչին օծանիլ սովաւ , հարս-
 նապաճոյճ՝ պանծանօք պճնել գեղայօրէն սուրբ վայել-
 չութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ : Եղիցի
 հօրս այս լուսափառ և աստուածաձիր՝ մերձեցելոցն 'ի
 սոյն ընտրութիւն մուխ կրկնեաց և բարեփափաք ջեր-
 մութե այլ յօրինուածոյ , որով ամենայնիւ ամենապատ-
 րաստ սնգութեամբ՝ 'ի կարծրականումդ անասանս վիմիդ
 յարակայեցեալ միշտ արձանացայց 'ի քեզ հաստատեալ
 աներկմտելի : Իցի նշանակ վերնամրցանակ այսր պար-
 գեւի սովաւ վառելոցն , ոչ ողողիլ ջուրք , ոչ այրիլ
 հօրք , ոչ ցրտանալ 'ի սառնութենէ , ոչ փասակար
 հողմով շիջանիլ , ոչ աղտեղիլ յուրուական ինչ պըղ-
 ծութենէ , ոչ զպահարսն չարին մատնել , և ոչ 'ի ըս-
 տօրեւ եղցն զմթերս գանձուն կենաց յիմարարար ար-

տաքս հանել : Ոչ անսպասար մնալ 'ի թեւոյ քոց
 օգնականութենէ , և ոչ դէպցեալն 'ի մեզ օծութիւն ան-
 մաքրապէս 'ի բայ մերկանալ : Այլ եղիցուք քեւ 'ի
 սոյն հրացեալ , սովիմք պարարեալ , սովաւ լուսաւորեալ
 այսու արդարացեալ աղատացեալ պսակեալ և թագա-
 ւորեալ : Եւ քեզ միայնոյ միայն Օծելոյ յամենեցունց
 օրհնութիւնք երկոց , ալէլուք լեզուայ , հնչմունք ձայնից ,
 յաղթանակութիւնք զովեստից , բարեբաստութիւնք շըր-
 թանց , սրբաբանութիւնք սաղմոսաց , ընդ Հօր և Հո-
 դոց սրբոյ յաւիտեանս յաւիտենից : ամեն :

Այն ինչ ճշմարտութիւնն 'ի սրբութեան , իւրոյն սրբա-
 նորութեանն 'ի սրբութեանս սրբութեանն :

ՅԻՇԵՏԵԿԱՐԱՆ

Մարտինիս Գրութեանն :

Բայտ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շար-
 ժութեան , որ ըստ լրատատարն նշուղղեղն արփիաճա-
 ճանչ լուսակիրն օրակշիւն մղտափարատն ակնատարար
 ականն արեւու՝ ստեղծականն արուսեկի , որ համբարէ
 հոլովէ կուտէ ամաց յոլովութիւն 'ի չափս դարուց շն-
 չասողաւ և կենդանանորոց առուղիկան յաւիտենիս , 'ի
 յաւարտումն կառարման իններեակ յոքեղինին , 'ի ըս-
 կիզն պսակելոյ մտի տասնեկին յաբեթական սոհմիս
 տումարի , յետ երկից ամաց անցելոց՝ որ դէնի դալատեան
 'ի կայս և 'ի կոյս կողմանց Հիւսիսոյ զիմաց արեւելից՝
 յաղթող և մեծ կայսերն Հոռոմոց Բասիլ : Արթամ
 ընդարձակ և մակադաւիթ կանոնաւ սփիւռ տարածէր՝ լիա-

սահման և անխորոց 'ի ստուարակարկաւ կոթողս կարծր
 արձանաց՝ 'ի ձողմն ձեռին և յանխղելի լարս սարանաց
 երկարագունից՝ անթարթափ 'ի նոյն վերասլացեալ 'ի
 յաջ և յահեալ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մա-
 սանց վիճակոց խմբից աշխարհաց 'ի ծոց իւր :

Արդ 'ի յայնմ անգործութեան միջոցի , յորում ե-
 զբեալ ընդոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ , ստացեալ
 հիմնեցի կառուցի կարգեցի կուտեցի , արձանացուցի դի-
 զն բարդեցի կացուցի յուցի , հաստատելով 'ի հրաշա-
 կերտութիւն միազոյ իրի զբաղմաստեղնեան զրուագս զը-
 րութեան այսմ սոփերի արդասաւորի , ես Գրիգոր կրօ-
 նաւոր քահանայ , յետին բանահիւսաց և կրտսեր վար-
 ժապետաց , զործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ
 Յովհաննէս կոչեցելոյ Արեւկայ մեծափառ և բարձրա-
 պատիւ ուխտի վանականի : Որք իբրեւ զմի մարմին բա-
 նական 'ի յերկուց առ մի կերպարան շինելոյ զիմաց
 կենցաղալարելով , ոչ միայն հարազատք , այլ և միա-
 շունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք , 'ի քա-
 ոից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք :

Արդ հայցելն 'ի ճաշակողացոյ յայսմ սեղանոյ յոք-
 նօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ
 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս ,
 սեռն սիրով 'ի միտս բարիս : Արով և դուք եղիջկք
 գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեանն :

ԱՆԵՏԱՐԱՆ՝Ք

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ի ՄԵՏԹԻՈՍԻ ԱՆԵՏԱՐԱՆԻՆ

Տէրն Դէ Յիսուս Քրիստոս

Աւ շրջեր Յիսուս ընդ ամենայն կողմն դալիլեացոց, ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութե, և և բժշկէր զամ չիւանդուիս՝ և զամ ախտս ՚ի ժողովրդեանն: Աւ ել լուր նորա ընդ ամ երկիրն Ասորոց, և մատուցին առ նա զամ չիւանդըս, որ նեղեալ էին ՚ի պէտպէս ցաւս և ՚ի տանջանս, և զղիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բըժըշկեաց զնոս: Աւ երթային զչեսո նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալիլէէ և ՚ի Դեկապոլեայ և Յերուսաղէմ և ՚ի Հրէաստանէ և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոս:

Տէրն Դէ Յիսուս Քրիստոս

Այլ իբրեւ էջ ՚ի լեռնէ անտի, զնացին զկնի նորա ժողովուրդք բազումք: Աւ ահա մատուցեալ բորոտ մի՝ երկիր պաղանէր նմա և ասէր. Տէր, եթէ կամիս, կաւոլ ես զիս սրբել: Չգեաց զձեռն իւր և հասոցց ՚ի նա Յն և ասէ՝ կամիմ սրբեաց, և վազվազակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն: Աւ ասէ ցնա Յն, զպիշ լեր

Տէրն Բէր Յիսուս Քրիստոս :

Մինչ զեռ նա զայս խօսէր ընդ նոսա , ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր , Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ , այլ եկեալ զիցես զձեռն քո 'ի վերայ նորա , և կեցցէ : Յարեաւ Յի և զնաց զհնի նորա աշակերտօքն հանդերձ : Եւ ահա կին մի տեռաւ տես երկոտասանամայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի նորա : Քանզի ասէր 'ի մտի իւրում , թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նորա փրկիմ : Իսկ Յի իբրեւ դարձաւ և ետես զնա՝ ասէ , քաջալերեաց գուսարը , հաւատք քո կեցուցին զքեզ . և փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ : Իբրեւ եկն Յի 'ի տուն իշխանին , և ետես զվնողարսն և ամբոխ յոյժ , ասէ ցնոսա , 'ի բաց զնայէք . զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ . և ծաղր առնէին զնա : Եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց , եւ մուտ՝ կալաւ զձեռանէ նորա և յարեաւ աղջիկն : Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն :

Տէրն Բէր Յիսուս Քրիստոս :

Եւ մինչ զեռ անցանէր ընդ այն Յիսուս՝ զհետ եղեն նորա կոյրք երկու . աղաղակէին և ասէին , ողորմեաց մեզ որդի Դաւթի : Եւ իբրեւ եկն 'ի տուն , մատենն առ նա կոյրքն , և ասէ ցնոսա Յի . հաւատայք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ . ասեն ցնա՝ այո՛ տէր : Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա և ասէ , ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ . և բացան աչք նոցա : Եւ սաստեաց նոցա Յի և ասէ՝ զգոյշ կացէք՝ մի՛ ոք զիտացէ : Եւ նորա ելեալ համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ընդ այն : Եւ յերանելն նոցա արտաքս , ահա մատուցին առ նա՝ այր մի համբ զիւհար : Եւ յերանել զի-

ւին՝ խօսեցաւ համբն . և զարմացան ժողովուրդքն և ասեն , թէ և ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԽարայէլի : Իսկ փարիսեցիքն ասէին՝ թէ իշխանաւն զիւհաց հանէ դա զգեւս :

Տէրն Բէր Յիսուս Քրիստոս :

Եւ շրջէր Յի ընդ ամ քաղաքս և ընդ փիւղս՝ ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա . և քարոզէր զաւետարանն արքայութեան , և բժշկէր զամ ակտս և զամ հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն : Եւ տեսեալ զժողովուրդսն զթացաւ 'ի նոսա , զի էին աշխատեալք և ցրուեալք իբրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ : Յայնժամ ասէ ցաւալկերտան իւր . հռնձք բազում են՝ և մշակք սակաւ , արդ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր : Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսրն իւր , ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց՝ հանել զնոսա և բժշկել զամ ակտս և զամ հիւանդութիւնս :

Տէրն Բէր Յիսուս Քրիստոս :

Եւ զնացեալ անտի Յի՝ եկն 'ի ժողովուրդն նոցա : Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր զօսացեալ էր . հարցին ցնա և ասեն . եթէ պարտ իցէ 'ի շաբաթու բժշկել . զի շարխօսեսցեն զնմանէ : Եւ նա ասէ ցնոսա , ով է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի , և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու , միթէ ոչ ունիցի և յարուցանիցէ զնա : Իսկ արդ որչափ եւս առաւել է մարդ քան զոչխար , ապա ուրեմն պարտ է 'ի շաբաթու բարիս գործել : Յայնժամ ասէ ցայրն , ձղեա՛ զձեռն քո . և նա ձղեաց և եղև ողջ իբրեւ զմուսն : Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս՝ խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա :

Լուսինի Բեր Զեպար Բերկապուտ

Յայնժամ մատուցաւ առ նա զիւսհար մի կոյր և համր՝ և բժշկեաց զնա . որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ : Օարմացան ամենայն ժողովուրդքն և ասէին . մի թէ սա իցէ Բնն որդի Դաւթի : Բայց փարիսեցիքն իբրեւ լուսն՝ ասեն . ոչ իւրք հանէ դա ըզգեւս՝ եթէ ոչ Բէեղղերուղաւ իշխանան զիւայ :

Տեառն Բեր Զեպար Բերկապուտ

Եւ ելեալ անտի Յիսուսի՝ զնաց ՚ի կողմանն Տիբրոսի և Սիդոնի : Եւ ահա կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա , ելեալ աղաղակէր և ասէր , ողորմեաց ինձ , տէր որդի Դաւթի , դուստր իմ չարաչար այսահարի : Եւ նա ոչ ետ նմա պատասխանի . և մատուցեալ աշակերտքն նորա աղաչէին զնա և ասէին , արձակեա՛ զնա զի աղաղակէ զՏեո մեր : Եւ պատասխանի ետ և ասէ , ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի : Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր , տէր , օգնեա՛ ինձ : Պատասխանի ետ նըմա և ասէ , ոչ է բարւոք՝ առնուլ զհաց մանկանց և արկանել շանց : Եւ նա ասէ , այո՛ տէր . քանզի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տեառն իւրեանց : Յայնժամ պատասխանի ետ նմա Յն և ասէ , ով կին դու , մեծ են հաւատք քո . եղիցի քեզ որպէս և կամիս . և բժշկեցաւ դուստր նորա ՚ի նմին ժամու :

Տեառն Բեր Զեպար Բերկապուտ

Եւ զնացեալ անտի Յնի՝ եկն ՚ի ծովեզրն զալիւբեացոց . և ելեալ ՚ի լեառն նստէր անդ : Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս կաղս՝

կոյրս՝ համբոս՝ միակողմանիս , և այլ բազումս , և ընկեցին զնոսա առ ոտս նորա , և բժշկեաց զնոսա : Մինչեւ զարմանալ ժողովրդոցն , որ տեսանէին . զի համբոսն խօսէին , կաղք գնային , միակողմանիք բժշկէին , կոյրք տեսանէին , և փառաւոր առնէին զՅն Իսրայէլի :

Տեառն Բեր Զեպար Բերկապուտ

Եւ իբրեւ եկին ՚ի ժողովուրդն , մատեաւ այր մի ՚ի ծունր իջանէր և ասէր , տէր , ողորմեաց որդւոյ իմում . զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ . բազում անգամ անկանի ՚ի հուր՝ և երբէք ՚ի ջուր : Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել : Պատասխանի ետ Յն և ասէ , ով ազգ անհաւատ և թիւր , մինչեւ ցերբ իցեմ ընդ ձեզ . մինչեւ յերբ անսայցեմ ձեզ . անձ զնա առ իս . և անին զնա առ Յն : Եւ սաստեաց ՚ի նա Յն . և ել ՚ի նմանէ դեւն , և բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմանէ : Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն և ասեն ցՅն , մեք ինդէր ոչ կարացաք հանել զնա : Եւ նա ասէ ցնոսա՝ վասն թերահաւատուե՛ ձերոյ , ամէն ասեմ ձեզ . եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանիսոյ , ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անգր և փոխեցի : և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ : Բայց այս ազգ ոչ ելանէ , եթէ ոչ աղօթիւք և պահովք :

Տեառն Բեր Զեպար Բերկապուտ

Եւ յեկանել նոցա յԱրեփովէ , զնացին զՏեո նորա ժողովուրդք բազումք : Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհան . իբրեւ լուսն թէ Յն անցանէ՝ աղաղակեցին և ասեն , ողորմեաց մեզ , Յն որդի Դաւթի : Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեցեն . և նորա

եւս առաւել աղաղակէին և ասէին, տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի: Օտեղի առ Յս. Կոչեաց զնոսս և ասէ՝ զինչ կամիք զի արարից ձեզ: Ըսենցնա՛ տէր, զի բացցին աչք մեր: Եւ զԹացեալ Յս մերձեցաւ յաչքս նոցա, և վաղվաղակի տեսին և զնացին զհետ նորա:

Ի ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Տէրմբ Գրքն Յեւոսի Բրիտանի

Եւ մտանն ՚ի Կափառնաում, և իսկ և իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն ուսուցանէր զնոսս: Եւ զարմանային ընդ վարդապետուի նորա, զի ուսուցանէր զնոսս իբրեւ իշխանութի, և ոչ որպէս դպիրքն: Եւ էր ՚ի ժողովրդեանն նոցա այր մի՝ յորում այս պիղծ գոյր ՚ի նմա. որ աղաղակեաց և ասէ, թոյլ սուր, զի կայ մեր և քո, Յս նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. զիտեմք զքեզ ուլ ես սուրբդ ԼԵՂ: Սաստեաց ՚ի նա Յս և ասէ, կարկեաց և ել ՚ի դմանէ: Եւ զարկոյց զնա այսն պիղծ և աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և ել ՚ի նմանէ: Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեանս և ասել: Օրինչ է այս նոր վարդապետուիս. զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստե և հնազանդին սմա: Եւ ել լուր նր ընդ ամ կողմն գալիլեացոց:

Տէրն Գրքն Յեւոսի Բրիտանի

Եւ վաղվաղակի ելեալ ՚ի ժողովրդեանն եին ՚ի տուն Սիմոնի և Լուդբայ՝ Յակորաւ և Յոհաննու հանգերձ:

Եւ զորանչ Սիմոնի դնէր ջերմացեալ. և վաղվաղակի ասենցնա վասն նորա: Եւ մատուցեալ յարոյց զնա՛ կալեալ զձեռանէ. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնա:

Տէրն Գրքն Յեւոսի Բրիտանի

Եւ իբրեւ երեկոյ եղև ՚ի մտանել արեղականն՝ բերէին առ նա զամ հիւանդս և զդիւահարս: Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս ՚ի պէսպէս ակտից. և դեւս բազումս եհան: և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա՝ թէ՛ Բրն է:

Տէրն Գրքն Յեւոսի Բրիտանի

Եւ ընդ այդն ընդ առաւօտն յարուցեալ ել և զնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս: Եւ զնաց զհետ նորա Սիմոն՝ և որք ընդ նմայն էին. և իբրեւ դտին զնա, ասենցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ. և ասէցնոսս. եկայք երթիցուք և յայլ մատաւոր դիւղաքաղաքն՝ զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ: Եւ քարոզէր ՚ի ժողովուրդս նոցա ընդ ամ գալիլեացիս, և դեւս հանէր: Գայ առ նա բորոտ մի, աղաչէր ՚ի ծունր իջանէր և ասէր. տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել: Իսկ Յս զԹացեալ ձգեաց զձեռն մերձեցաւ ՚ի նա և ասէցնա, կամիմ սրբեաց: Եւ իբրեւ ասացնցնա, վաղվաղակի զնաց ՚ի նմանէ բորոտուին՝ և սրբեցաւ: Եւ սաստեալ նմա՛ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ, Օգոյշ լեր մի ումբ ինչ ասիցես, այլ երթ ցոյց զքեզ քահանային, և մասոյ վասն սրբուեքոյ պատարագ՝ զոր հրամայեաց Սովսէս ՚ի վիպութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող ընել նմա յայանապէս ՚ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամ կողմնաց:

Տէրն Գր Գեորգի Բրեխարի

Եւ մտեալ դարձեալ 'ի Կափառնառում յետ աւուրց , լուր եղև եթէ 'ի տան է . և ժողովեցան բարձրաբ' մինչեւ տեղի եւս ոչ լինել և ոչ առ դրանն , և խօսէր նոցա զսանն . Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից . և իբրեւ ոչ կարէին մարձենալ առ նա յամբօխէ անտի , քակեցին զյարկն՝ ուր էր Զն , և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճն՝ յորում կայր անդամալոյծն : Եւ տեսեալ զհաւատս նոցա ասէ ցանդամալոյծն , որդեակ , թողեալ լիցին քեզ մեղք քո : Եւ էին ոմանք 'ի դպրաց անտի , որ անդ նստէին՝ և խորհէին 'ի սիրտս իւրեանց : Օխնչ է այս՝ որ խօսի սա զհայհոյուիս . ով կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ մի ԸՅ . Եւ գիտաց Զն յողի իւր՝ թէ այնպէս խորհին 'ի սիրտս իւրեանց , և ասէ՝ զի խորհիք զայդ 'ի սիրտս ձեր . Օխնչ զիւրին է , ասել ցանդամալոյծն թողեալ լիցին քեզ մեղք քո , եթէ ասել՝ արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո : Եւ զի գիտասջիք , եթէ իշխանուի ունի որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն՝ Բեզ ասեմ , արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո : Եւ յարեալ վաղվաղակի առեալ զմահիճն՝ հլ առաջի ամենեցուն . մինչեւ զարմանալ ամենեցուն և փառաւոր առնել զԸՅ և ասել՝ թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք :

Տէրն Գր Գեորգի Բրեխարի

Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն , և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր : Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթուն զի չարախօսեցեն զմահնէ : Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր ,

արի անց 'ի մէջ : Եւ ասէ ցնոսա , զինչ արժան է 'ի շաբաթու՝ բարի՝ ինչ գործել՝ եթէ չար առնել . ողի մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել . և նոքա լիցցին : Եւ հայեցեալ Զնի զնորք լի ցասմամբ՝ տրտմալ վասն կուրութեց սրտից նոցա , ասէ ցայրն՝ Չպեա զձեռն քո . և նա ձգեաց , և ողջացաւ ձեռն նորա : Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանսօքն հանգերձ , խորհուրդ առնէին վասն նորա , թէ զիսրդ կորուսցեն զնա :

Տէրն Գր Գեորգի Բրեխարի

Իսկ Զն աշակերտօքն իւրովք զնաց 'ի ծովեզոն . և բազում ժողովուրդ 'ի գալիլեացոց երթային զհետ նորա , և 'ի Հրէաստանէ , և յԵրուսաղէմէ , և յայնկոյս Զորդանանու , և որք 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնէ , բազում ժողովուրդ իբրեւ լէին որչափ ինչ առնէր՝ գային առ նա : Եւ ասէ ցաշակերտսն իւր՝ զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբօխին՝ զի մի նեղեցեն զնա : Բանզի զբազումն բժշկեաց . մինչ գալ խոնել զնովաւ , զի մերձեցին առ նա՝ որք ունէին ախտս ինչ : Եւ այսք պիղծք՝ յորժամ տեսանէին զնա՝ անկանէին առաջի նորա , աղաղակէին և ասէին . թէ դու ես Որդին ԸՅ . և նա յոյժ սաստէր նոցա՝ զի մի յայտնի առնիցեն զնա :

Տէրն Գր Գեորգի Բրեխարի

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն գերզեսացոց : Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի՝ պատահեաց նմա այր մի՝ 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ : Որոյ և բնակութի իւր իսկ 'ի գերեզմանս էր . և ոչ շղթայիք դք եւս կարէր կապել զնա , վասն բազում անգամ ոտնակապօք և շղթայիք կապելոյ , և խզելոյ 'ի նմանէ :

զղթայսն , և զստնահապսն խորտակելոյ . և ոչ որ
 կարէր պարտել զնա : Բանզի հանապազ զցայդ և զցե-
 րեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր , և կոծէր
 զանձն իւր քարամբք : Իբրեւ ետես զՅն 'ի հեռաստա-
 նէ , ընթացաւ և երկիր եպագ նմա : Աղաղակեաց 'ի
 ձայն մեծ և ասէ , զի կայ իմ և քո , Յիսուս Արդի Այ
 բարձրելոյ , երգմեցուցանեմ զքեզ յԱստուած , մի տան-
 ջեր զիս . քանզի ասէր ցնա՝ ել այդ պիղծ 'ի մարդոյ
 այտի : Աւ հարցանէր ցնա՝ թէ զինչ անուն է քո , և
 ասէ նա Ագէոֆն անուն է իմ . քանզի բազումք եմք :
 Աւ աղաչէին զնա յոյժ , զի մի առաքեսցէ զնս արտաքս
 քան զաշխարհն : Աւ անդ էր առ լերամբն երամակ մի
 խոզաց արօտակսն մեծ . աղաչեցին զնա ամենայն դեւքն
 և ասեն , Առաքեա՛ զմեզ 'ի խողան՝ զի մայուք 'ի նոսա .
 և հրամայեաց նոցա : Աւ իբրեւ ելին այսն պիղծք՝
 մտին 'ի խողան , և զիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի
 ծովն . էին իբրեւ երկու հազարք , և հեղձնուին 'ի ծո-
 վուն : Աւ խողարածքն փախեան , և պատմեցին 'ի քա-
 ղաքին և յազարակս . և ելին տեսանել զինչ իցէ՝ որ
 դործեցան : Գան առ Յն և տեսանեն զգիւհաճարն զի
 նստէր զգեցեալ և զդաստացեալ՝ որ ունէր զԱգէոֆնն ,
 և զահի հարան : Աւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն
 էր , թէ զինչ եղև այսահարին , և զինչ վասն խողիցն :
 Աւ սկսան աղաչել զնա զնալ 'ի սահմանաց նոցա : Աւ
 իբրեւ եմուտ նա 'ի նաւն՝ աղաչէր զնա զիւհաճարն զի
 ընդ նմա իցէ . և Յն ոչ ետ նմա թողլ , այլ ասէ ցնա՝
 երթ 'ի տուն քո առ ընտանիս քո , և պատմա՛ նոցա ,
 որ ինչ միանգամ տէր արար քեզ , և ողորմեցաւ քեզ :
 Աւ չոգաւ և սկսաւ քարոզել 'ի Գեկապօլիս , զոր ինչ
 արար նմա Յիսուս . և ամենեքին զարմանային :

առ նարսն հարսոյ մասի , արք լմբայ զնայ՝ սո՛ զո
 ձմանմ մ' այնքոյ մ' , այնքոյ՝ գոխակնց մ' զորպիսմ

Տէրն Ժր Յնուս Բրեխոս

Աւ իբրեւ անց Յն միւսանգամ յայն կողմն , ժողովե-
 ցաւ առ նա ժողովուրդ բազում , և էր առ ծովեզերքն :
 Աւ ահա մի 'ի ժողովրդապետացն զայր , որում անուն
 էր Յայրոս . և իբրեւ ետես զնա՝ անկաւ առ ոսս նո-
 րա : աղաչէր զնա յոյժ և ասէր , թէ գուտար նորա
 մերձ է 'ի մահ , զի եկեալ զնիցէ նմա ձեռն՝ որպէս
 զի ապրեսցի , և կեցցէ : Աւ գնաց ընդ նմա . երթայր
 և ժողովուրդ բազում գհեա նորա , և նեղէին զնա : Աւ
 կին մի էր 'ի տեռատեսութեան արեան զերկոտասան
 ամ , և յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց . և ծախեալ
 զինչս իւր զամ՝ և չէր ինչ օգտեալ , այլ եւս առաւել
 զայրացեալ : Իբրեւ լուաւ զՅնէ՝ եկն 'ի մեջ ամբոխին
 յետոյ՝ և բունն եհար զհանդերձէ նորա . քանզի խորհէր
 'ի մտի , թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նորա , փր-
 կեցայց : Աւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան
 նորա , և զիտաց 'ի մարմին իւր թէ բժշկեցաւ 'ի տան-
 ջանայն : Աւ անդէն վաղվաղակի զիտաց Յն յանձն իւր
 զզօրութիւնն որ ել 'ի նմանէ . գարձաւ յամբոխն և ա-
 սէ , ով մերձեցաւ 'ի հանդերձս իմ : Աւ ասեն ցնա ա-
 շակիրտքն . տեսանես , զի ամբոխդ նեղէ զքեզ , և ասես
 թէ ով մերձեցաւ 'ի հանդերձս իմ . և շուրջ հայեր
 տեսանել՝ թէ ով զայն արար : Աւ կինն զարհուրեալ և
 դողացեալ վասն որոյ գաղտն արար , քանզի զիտէր զինչ
 եղև նմա . եկն անկաւ առաջի նորա , և ասաց զամ՝ իրսն
 ստուգութեամբ : Աւ Յն ասէ ցնա , գուտար , հաւատք
 քո կեցուցին զքեզ , երթ 'ի խաղաղութիւն , և եղջիւր
 ողջ 'ի տանջանաց քոց : Այնչ դեռ նա զայն խօսէր՝
 գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին և ասեն , թէ
 գուտարն քո մեռաւ՝ զի եւս աշխատ առնես զվարդապետդ :

Իսկ Յն իբրեւ լուաւ զբանն ասացեալ , ասէ ցժողո՜ վըրդապետն , մի երկնչիւր՝ բայց միայն հաւատա՜ : Եւ ոչ զք եթող ընդ իւր երթալ . բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս ղեղբայրն Յակոբայ : Գայ 'ի տուն ժողովրդապետին՝ և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս և աղաղակ յոյժ : Եւ մտեալ 'ի ներքս ասէ ցնոսա՜ զի խռովեալ էք և լայք . մանուկն ոչ է մոռեալ՝ այլ ննջէ : Եւ ծաղր առնէին զնա . և նորա հանեալ արտաքս զամենեսեան՝ առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր , և զնոսա որ ընդ նմայն էին , և մտանէ ուր դնէր մանուկն : Եւ կալեալ զձեռանէ մանկանն ասէ ցնա , տալիթա կուսի , որ թարգմանի՝ աղջիկ դու , քեզ ասեմ արի : Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և զնայր . քանզի էր ամաց՝ իբրեւ երկոտասանից . և զարմացան մեծաւ զարմանալեօք : Եւ պատուէր տայր նոցա յոյժ՝ զի մի որ զիտասցէ զայն , և ասաց տալ նմա ուտել :

Տէրածք Գրոյ Անուսի-Քրիստոսի-

Եւ իբրեւ անցին յայնկոյս , եկին յերկիրն Գերնեսա՜ րէթ . Եւ իբրեւ եղին 'ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ծա՜ նեան զնա արք տեղւոյն այնորիկ : Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամ գաւառն , սկսան մահճօք բերել զհիւանդս՝ ուր լսէին թէ անդ իցէ : Եւ ուր և մտանէր 'ի գեօղս կամ 'ի քաղաքս՝ կամ յաղարակս՝ 'ի հրապարակս դնէ՜ ին զախտաժէտս՝ և աղաչէին զնա՜ զի դոնէ 'ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն . և որ միանգամ մերձե՜ ցանն՝ փրկեցան :

Տէրածք Գրոյ Անուսի-Քրիստոսի-

Եւ անտի յարուցեալ եկն 'ի սահմանս Տիրոսի և Սիդոնի . և մտեալ 'ի տունն ոչ ումք կամէր յայտնել , և ոչ կարաց ծածկել : Լուաւ կին մի զնմանէ՜ որոյ դուստր

իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ , եկն անկաւ առաջի նորա : Եւ կինն էր հեթանոս Փիւնիկ ասորի յազգէ . և աղա՜ չէր զնա՜ զի զդեռն հանցէ 'ի դատերէ նորա : Եւ Յն ասէ ցնա՜ թոյլ տուր նախ յագեացին մանկունք . զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց : Եւ պատասխանի ետ և ասէ . տէր , և շունք 'ի փշա՜ նաց սեղանոյ մանկանցն կերակրին : Եւ ասէ ցնա՜ վասն այդր բանի երթ . ել դեռն 'ի դատերէ քումմէ : Գնաց 'ի տունն իւր՝ և եզիտ ելեալ զդեռն , և զդուստրն զի անկեալ դնէր 'ի մահիճս :

Տէրածք Գրոյ Անուսի-Քրիստոսի-

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիրոսի և Սիդոնի , և եկն 'ի ճովեզրն գալիլեացոց 'ի մէջ սահ՜ մանացն 'ի Գեկապօլիս : Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր , և աղաչէին՝ զի ձեռն զիցէ 'ի վերայ նորա : Եւ առեալ զնա մեկուսի յամբօխէ անտի , արկ զմա՜ տունս իւր ընդ ականջս նորա և եթուք անդր . և կալաւ զլեզուէ նորա , հայեցաւ յերկինս՝ յուրոց եհան և ասէ՜ եփփաթա՜ որ է բացիր : Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա և լուծան կապանք լեզուի նորա և խօսէր ուղիզ : Եւ պատուիրեաց նոցա՜ զի մի ումք ասիցեն . և որ՜ չափ նա պատուիրէր նոցա , նոքա ևս առաւել քարոզէին . և եւս քան զեւս զարմանային և ասէին , զամ ինչ բար՜ւոք զործեաց սա , զի խլից լսել տայ և համերց խօսել :

Տէրածք Գրոյ Անուսի-Քրիստոսի-

Գան 'ի լճեթալիգա , և ածեն առաջի նորա կոյր մի , և աղաչէին զնա զի մերձեսցի 'ի նա : Եւ առեալ զձե՜ ունէ կուրին եհան արտաքոյ շինին , եթուք յոչս նորա և ձեռն եդ 'ի վերայ նորա . և հարցանէր ցնա՜ թէ տեսա՜

նիցէ ինչ : Բացաւ և ասէր , տեսանեմ զմարդիկս զի շրջին իբրեւ զծառս : Ղարձեալ եղ ձեռս 'ի վերայ աչաց նորա , երաց և տեսանէր . ող ջացաւ և տեսանէր համարձակ զամ : Ըրձակեաց զնա 'ի տուն իւր և ասէ , 'ի շէնդ մի մտանիցես , այլ երթ 'ի տուն քո . և յորժամ 'ի շէնն մտանիցես . մի' ումբ ասիցես 'ի շինին :

ՏԵՐՄԵ ԳԵՐՈՂ ՅԵՍՈՒՍԻՆ ԲԵՆԻՍՈՒՍԻՆ

Եւ եկել առ աշակերտսն՝ տեսին ամբոխ շուրջ զնորք . և զբարձրսն՝ զի վիճէին ընդ նոսա : Եւ վաղվաղակի ամ ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան . և ընդ առաջ ընթացեալ՝ ող ջոյն տային նմա : Եւ եհարց ցնոսա , թէ զինչ վիճէիք ընդ նոսա : Պատասխանի ետ մի ոմն 'ի ժողովրդեանէն և ասէ , վարդապետ , ածի զորդի իմ առ քեզ , զոր ունի այս համր . և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա , և փրփրէ և կրճաէ զատամունս իւր և ցամաքի . և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն , և ոչ կարացին հանել զնա : Պատասխանի ետ նոցա և ասէ , ով ազգ անհաւատ , մինչեւ յերբ իցեմ առ ձեզ . մինչեւ ցերբ անսայցեմ ձեզ . ածէք զնա առ իս : Եւ ածին զնա առ նա . իբրեւ ետես զնա այսն՝ վաղվաղակի շարժեաց զնա . և անկեալ յերկիր թաւալէր և փրփրեայր : Եհարց ցհայր նորա և ասէ . քանի ժամանակք են յորմէ հետէ այդ եղեւ դմա . և նա ասէ՝ 'ի մանկութենէ : Բազում անգամ 'ի հուր արկանէ զզա , և 'ի ջուր՝ զի կորուսցէ . արդ եթէ կարող ինչ ես , օգնեա մեզ տէր , գթացեալ 'ի վերայ մեր : Եւ Յն ասէ ցնա՝ ասացեր թէ կարող ես . ամ ինչ հնարաւոր է այնմ , որ հաւատայն : Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն և ասէ . հաւատամ տէր , օգնեա մնահաւատութեա իմում : Իբրեւ ետես Յն , եթէ կուտի ժո

ղովուրդն 'ի վերայ , աստեաց այսոյն պղծոյ և ասէ , համրդ և խուլ այս , ես տամ հրաման , ել 'ի դմանէ և այլ մի ևս մտանիցես 'ի դա : Եւ աղաղակեաց և յոյժ լինեաց զնա և ել . և եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ . մինչեւ բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ : Եւ Յն կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա և կանգնեցաւ : Եւ իբրեւ եմուտ նա 'ի տուն , աշակերտքն առանձինն հարցին ցնա՝ մեր ընդէր ոչ կարացար հանել զնա : Եւ ասէ ցնոսա . այդ ազգ ոչ իւիք ելանէ , եթէ ոչ պահօք և աղօթիք :

ՏԵՐՄԵ ԳԵՐՈՂ ՅԵՍՈՒՍԻՆ ԲԵՆԻՍՈՒՍԻՆ

Եւ գան յԱրիքով . և ընդ ելանել նորա յԱրիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդով , որդի Տիմէի Բարստիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս ճանապարհին . Իբրեւ լուաւ թէ Յն նազովրեցի է՝ սխաւ աղաղակել և ասել , որդի Ղաւթի Յն , ողորմեաց ինչ : Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեցէ , և նա առաւել եւս աղաղակէր , որդի Ղաւթի , ողորմեաց ինչ : Օտեղի առ Յն , և հրամայեաց կոչել զնա . կոչէն զկոյրն և ասեն ցնա , քաջալերեաց արի կոչէ զքեզ : Եւ նորա ընկիցեալ ըզձորձս իւր՝ յարեաւ և եկն առ Յն : Պատասխանի ետ նմա Յն և ասէ՝ զինչ կամիս թէ արարից քեզ . ասէ ցնա կոյրն , Ռարբունի , զի բացայց : Եւ Յն ասէ ցնա . ելթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ . և վաղվաղակի բացաւ , և երթայր զհետ նորա 'ի ճանապարհին :

[Faint bleed-through text from the reverse side of the page]

և ասէին, եթէ դու ես Որդի Այ. և նա սաստէր՝ և ոչ տայր նոյա թոյլ խօսել, զի գիտէին զնա, թէ Վրն է:

Տէրն Գրայ Յիսուսն Վրէստոսն

Եւ եղև ՚ի Հասաներն նորա ՚ի մի քաղաքացն, ահա այր մի լի բոշոսութեամբ իբրև ետես զՅն, անկեալ ՚ի վերայ երեսաց աղաչեաց զնա և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Չղեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա և ասէ, կամիմ սրբեաց, և վաղվաղակի դընաց ՚ի նմանէ բորոտութիւն: Եւ նա պատուիրեաց նմա մի ումբ ասել. այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարաղ վասն սրբութե քոյ. որպէս և հրամայեաց Մովսէս ՚ի վկայութի նոցա: Եւ յորդէր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովարդք բազումք լսել և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց: Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս:

Տէրն Գրայ Յիսուսն Վրէստոսն

Եւ եղև ՚ի միում աւուրց և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին. որ ծողովեալ էին յամենայն քաղաքաց պալիւեացուց և Հրէաստանի և Արուսաղէսի. և զօրութիւն տեսնէր ՚ի բժշկել զնոսա: Եւ ահա արբ բերէին զայր մի՝ որ էր անդամալոյծ. և խնդրէին զնա մուծանել ՚ի ներքս և զնել առաջի նորա: Եւ իբրև ոչ գտանէին՝ թէ ընդ որ մուծանիցեն զնա ՚ի ներքս վասն ամբոխին, ելին ՚ի տանիս, և ՚ի ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահաձօքն հանդերձ ՚ի մէջ առաջի Յնի: Եւ տեսեալ զաւատան նոյա՝ ասէ ցնա, այր դու, թողեալ լիցին քեզ մեղք քո: Ակտան խորհել գպիրքն և փարիսեցիքն և ասեն. ո՛ր է սա, որ խօսի զհայհոյուիս. ո՛վ կարէ թողուլ

Ի Գ ՈՒԿԵՍՈՒ ԸՒՆՏԵՐՄԵՆՆԵՆ

Տէրն Գրայ Յիսուսն Վրէստոսն

Եւ էջ ՚ի Կափառնայում ՚ի քաղաքն դալիւեացուց՝ և ուսուցանէր զնոսա ՚ի շաբաթան: Եւ զարմանային ընդ վարդապետութի նորա՝ զի իշխանութի էր բան նորա. Եւ էր ՚ի ժողովորեանն այր մի՝ զոր ունէր այս զիւի պղծոյ. և աղաղակեաց ՚ի ձայն մեծ և ասէ՝ թուլացո՛, զի կայ մար և քո, Յն նազովրեցի. եկիր կորուսանել զմեզ՝ գիտեմք զքեզ ՚ի՞ վ ես, սուրբդ Այ: Սաստեաց ՚ի նա Յն և ասէ՝ պապանձեաց և ել ՚ի դմանէ: Օգետնեաց զնա դեւն ՚ի միջի անդ, և ել ՚ի նմանէ. և ինչ ոչ մնասեաց նմա: Եւ եղեն զարմանալիք ՚ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ասէին, զի՛նչ է բանս այս՝ զի իշխանութի և զօրութի սաստէ այսոց պղծոց և ելանեն: Եւ երթայր հոչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառան:

Տէրն Գրայ Յիսուսն Վրէստոսն

Եւ յարուցեալ ՚ի ժողովորեանէ անտի՝ եմուտ ՚ի տուն Սիմոնի. և զորանչ Սիմոնի տաղնապէր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա: Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա: Եւ ընդ արեւուն մտանել՝ որոց էին հիւանդք ՚ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա: Եւ նա իւրաքանչիւր ումբք ՚ի նոցանէ պնէր ձեռս և բժշկէր զնոսա: Ելանէին դեւքն ՚ի բազմաց՝ աղաղակէին

զմեղս՝ բայց միայն ԱՃ : Իբրեւ զիտաց Յն զխորհուրդս նոցա , պատասխանի ետ և ասէ ցնոսա . զի խորհիբ 'ի սիրտս ձեր . զինչ զիւրադոյն է , ասե՛լ թողեալ լիցին քեզ մեղք քո , եթէ ասե՛լ արի և զնա : Այլ զի զիտասջեք , եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն , քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո : Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիւրեւ յորոյ վերայ անկեալ զնէր , զնաց 'ի տուն իւր՝ և փառաւոր առնէր զԱՃ : Օտարմանք կալաւ զամենեւեան , և փառաւոր առնէին զԱՃ . լի եղեն ահիւ և ասեն , եթէ տեսաք այսօր նոր նշան :

Տէրն Բեր Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև 'ի միտում շաբաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն և ուսուցանել . և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գոսացեալ էր : Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիքն՝ թէ 'ի շաբաթուն բժշկեսցէ՝ զի գտանիցեն չարախօսութի զնմանէ : Եւ նա զիտէր զխորհուրդս նոցա . ասէ ցայրն որոյ ձեռն գոսացեալ էր , արի անց 'ի մէջ . և նա յարուցեալ եկաց : Ասէ ցնոսա Յն՝ հարցից ինչ զձեզ . զինչ արժան է 'ի շաբաթու , բարի՛ ինչ առնել , եթէ չար զործել . ողի՛ մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել : Եւ հայեցեալ շուրջ զամենքումբք զայրադին , ասէ ցնա՝ ձգեա՛ զձեռն քո , և նա ձգեաց . և հաստատեցաւ ձեռն նորա իբրեւ զմիւսն : Եւ նոքա լեցան յիմարութի , և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի :

Տէրն Բեր Յիսուսի Քրիստոսի

Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղն մի տափարակ . և յողով աշակերտացն նորա , և բազմութի յոյժ ժողո-

վերդեանն , յամենայն հրէաստանէ և յԵրուսաղէմէ և յայնմ կողմանէ և 'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի . որ եկին լսել 'ի նմանէ և բժշկել 'ի հիւանդութի իւրեանց . և նեղեալն յայտոց պղծոց բժշկէին : Եւ ամ ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ինա , զի զօրութի բազում ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին :

Տէրն Բեր Յիսուսի Քրիստոսի

Եւ իբրեւ կատարեաց զամենայն բանս իւր 'ի լսելիս ժողովրդեանն , եմուտ 'ի Կափառնաում : Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանել՝ որ էր նմա պատուական . իբրեւ լուաւ զՅնէ , առաքեաց զծերան 'ի հրէից , աղաչէր զնա զի եկեսցէ ապրեցուցէ զծառայն նորա : Եւ նոքա եկեալ առ Յն աղաչէին զնա ստէպ և ասէին , թէ արժանի է՝ որում զշորհս զայս առնես . զի սիրէ զազգս մեր , և զժողովրդանոցն նա շինեաց մեզ : Եւ Յն զնաց ընդ նոսա : Իբրեւ ոչ ինչ կարի հեռի էր 'ի տանէն , յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս , և ասէ ցնա , տէր , մի ինչ աշխատ լինիր . զի չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես . վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ դալոյ . այլ ասա՛ բանիւ , և բժշկեսցի մանուկս իմ : Քանզի և ես այր մի եմ կարդեալ ընդ իշխանութի . ունիմ ընդ ինեւ զինուորս . և ասեմ սմա երթ , և երթայ . և այլում թէ եկ , և զայ . և ծառայի իմում թէ արա՛ զայս , և առնէ : Եւ իբրեւ լուաւ զայս Յն զարմացաւ . դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա և ասէ , ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յիսուայելի այսչափ հաւատս գտի : Եւ դարձան անդէն պատգամաւորքն 'ի տուն . և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ :

Տէրի Դէ Յիսուս Քրիստոս

Եւ եղև ՚ի վաղին երթայր ՚ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բազում: Իբրև մերձ եղև ՚ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամոր մոր իւրոյ. և նա էր այրի, և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա: Իբրև եաես զնա տէր՝ զԹացաւ ՚ի նա և ասէ, մի լար: Եւ մատուցեալ մերձեցաւ ՚ի դագաղսն. և որք բարձեալն տանէին՝ զտեղի առին, և ասէ, պատանի դու, քեզ աւեմ արի: Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել, և ետ զնա ցամայր իւր: Եւ ահ կալաւ զամենեսին և փառաւոր առնէին զԱՃ և ասէին՝ Թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ՚ի միջի մերում. և Թէ այց արար ԱՃ ժողովրդեան իւրում ՚ի բարութի: Եւ ել զրոյցս այս ընդ ամենայն Հրէաս. տան վասն նորա՝ և ընդ ամենայն կողմանս աշխարհին:

Մասն Գեորգի Դէրոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամի այսորիկ: Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս. առաքեաց առ տէր և ասէ, դ՞ու ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք: Եւ եկեալ արքն առ նա ասեն՝ Յովհաննէս Սկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ՝ դ՞ու ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք: Եւ ՚ի նմին ժամու բժշկեց զբազումս ՚ի հիւանդութեանց և ՚ի հարուածոց և յայտոց չարաց. և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել: Պատասխանի ետ նոցա և ասէ՝ երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսիքդ և լուայք, զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին: Եւ երանի՛ որ ոչ դայթակղեսցի յիս:

Տէրա՛Բ Դէրոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ նաեցին իջին յաշխարհն գերդեսացոց՝ որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ: Եւ ընդ ելանելն նորա ՚ի ցամաք՝ պատահեաց այր մի ՚ի քաղաքէն՝ յորում էին դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ ՚ի տան բնակեալ, այլ ՚ի գերեզմանս: Եւ տեսեալ զՅՍ, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծածայն. զի՛ կայ իմ և քո ՅՍ Որդի ԱՅ բարձրելոյ, աղաչեմ դեզ մի տանջեր զիս: Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել ՚ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կսպէր ՚ի շղթայս և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն՝ և վարէր ՚ի դիէն յանապատս: Եհարց ցնա ՅՍ և ասէ, զի՛նչ անուն է քեզ. և նա ասէ՝ Լէզեովն. զի դեւք բազումք մտեալ էին ՚ի նա, և աղաչէին զնա՝ զի մի հրաման տայցէ նոցա երթալ յանդուսդս: Եւ էր անդ երամակ մի խողից բազմաց արօտական ՚ի լերինն. և աղաչեցին զնա՝ զի հրաման տայցէ նոցա մտանել ՚ի նոսա. և հրամայեաց նոցա: Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին ՚ի խողեանն. և դիմեաց երամակն ՚ի դահէ անտի ՚ի ծովակն՝ և հեղձաւ: Իբրև տեսին խողարածքն զիրսն որ եղեն փախեան. և պատմեցին ՚ի քաղաքին և յաղարակսն: Եւ իբրև ելին տեսանել զգործսն, և հկին առ ՅՍ, և գաին զայրն ուստի դեւքն ելեալ էին՝ զգեցեալ և զզաստացեալ նստէր առ ոսն ՅՍի, և երկեան: Պատմեցին նոցա՝ որոց տեսալն էր, Թէ զիարդ փրկեցաւ զիւսհարուն: Եւ աղաչէր զնա ամ բազմութիւն շուրջ զկողմամբքն գերդեսացոց, զնալ ՚ի սահմանաց նոցա. քանզի ահիւ մեծաւ տագնապէին, և նա մտեալ ՚ի նաւ դարձաւ անդրէն: Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ էին շուրջել ընդ նմա: Արձակեաց զնա և ասէ, դարձ ՚ի տունն

քո և պատմեա՛ զոր միանգամ արար քեզ Աստուած .
Վնաց 'ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յն՝

Տէրն Բէր Յիսուս Քրիստոս

Եւ իբրեւ գարձաւ անդրէն Յն, ընկալաւ զնա ժողովուրդն, քանզի ամենեքեան ակն ունէին նմա: Եւ ահա եկն այր մի՝ որուն անուն էր Յայրոս . և նա էր իշխան ժողովրդեանն . անկեալ առ ոտսն Յնի, աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա: Չի գուտոր միամօր էր նորա, ամաց իբրեւ երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա: Եւ կին մի էր 'ի տեառտեսութեան արեան ամաց երկոտասանից . որ 'ի բժիշկս ծախեալ էր զնա՛ ինչա իւր, որում ոչ էր լեալ հնար յումբէ բժշկիլ: Մատուցեալ յետոյ . մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նորա, և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա: Եւ ասէ Յն՝ ո՛վ է որ մերձեցաւն յիս . իբրեւ ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որք ընդ նմա էին . մարդապետ, ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ: Եւ ասէ Յն՝ ոմն մերձեցաւ յիս . քանզի զիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն: Իբրեւ ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով և անկաւ առաջի նորա . թէ վասն որոց իրաց մերձեցաւ 'ի նա, պատմեաց առաջի նա՛ ժողովրդեանն . և եթէ որպէս բժշկեցաւ առժամայն: Եւ ասէ՛ քաջալերեաց դուստր . հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղաղութիւն:

Տէրն Բէր Յիսուս Քրիստոս

Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա, մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առներ զդա: Իսկ Յն իբրեւ լուաւ, պատասխա-

նի ետ նմա և ասէ . մի երկնչիր, միայն հաւատա՛ և կեցցէ: Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ զոք եթող մտանել . բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զՏայր մանկանն և զմայր նորա: Եւ ային ամենեքեան և կոծէին զնա . և նա ասէ՛ մի լայք . զի չէ՛ մեռեալ՝ այլ ննջէ:

Եւ նոքա ծաղը առնէին զնա . զի զիտէին թէ մեռաւ: Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ, արի՛ կաց մահուկ դու: Եւ դարձաւ ողի նորա և կանգնեցաւ վաղվաղակի . և հրամայեաց տալ նմա ուտել: Եւ զարմացան ծնողքն նորա . և նա պատուիրէր մի ումբ ասել որ ինչ եղեւն:

Տէրածէ Բերդ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում: Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ, մարդապետ, աղաչեմ՝ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ: Եւ ահա այս հարկանի 'ի նմա . և յանկարծ գոչէ . և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ . և հազիւ մեկնի 'ի նմանէ խորտակեալ զնա . և աղաչեղի զաշակերտսն քո՝ զի հանցեն զնա, և ոչ կարացին: Պատասխանի ետ Յն և ասէ, ո՛վ ազգանհաւատ և թիւր . մինչեւ յերբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ, մատո՛ այսր զորդին քո: Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն և շարժեաց: Սաստեաց Յն այսոյն պղծոյ՝ և բժշկեաց զմահուկն և ետ զնա ցհայր իւր: Եւ զարմանային ամենեքեան 'ի վերայ մեծամեծացն Այ . և 'ի զարմանալ ամենեցուն 'ի վերայ նմի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր . զիք դուք 'ի լսելս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի մարդոյ մատնեղոց է 'ի ձեռս մարդկան:

Տէրի Բեր Անուան Բերնարտ

Եւ հաներ զեւ մի համբ . և եղև յերանել զիւնս՝
 խօսեցաւ համբն . և զարմացան ամ ժողովորդքն : Եւ
 ոմանք 'ի նոցանէ ասեն՝ Բէեղղբուղաւ իշխանաւն զիւաց
 հանէ դա զգեւս : Եւ այլք փորձէին և նշան յերկից
 խնդրէին 'ի նմանէ : Իսկ նորա զիւացեալ զխորհուրդս
 նոցա , ասէ ցնոսա . Ամենայն թաղաւորութի բաժանեալ
 յանձն՝ աւերի . և տուն բաժանեալ յանձն կործանի .
 Ապա եթէ և Սառանայ բաժանեցաւ յանձնէ , զիւրդ
 կայցէ թաղաւորութի նորա . զի ասէք զինէն՝ թէ Բէեղ-
 զբուղաւ իշխանաւն զիւաց հանէ դա զգեւս : Եթէ ես
 Բէեղղբուղաւ հանեմ զգեւս , որդիքն ձեր իւ հանի-
 ցեն . վասն այդորիկ նոքին եղիցին ձեզ դատաւորք : Իսկ
 եթէ մատաւր Այ հանեմ զգեւս , ապա հասեալ է 'ի
 վերայ ձեր արքայութիւն Այ : Զործամ հզօր վառեալ
 պահիցէ զտուն իւր , 'ի խաղաղութե են ինչք նորա .
 բայց եթէ հզօրագոյն քան զնա 'ի վերայ եկեալ յաղ-
 թեսցէ նմա , զսպառազինութիւն հանէ , յոր յուսացեալն
 էր , և զաւար նորա բաշխեսցէ : Որ ոչ է ընդ իս՝ հա-
 կառակ իմ է . և որ ոչ ժողովէ ընդ իս , ցրուէ : Զոր-
 ծամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս .
 խնդրէ հանդիսա . և իբրեւ ոչ գտանէ՝ ասէ , զարձայց
 անդրէն 'ի տուն իմ ուստի ելի : Եւ դայ գտանէ մաք-
 րեալ և յարդարեալ : Զայնժամ երթայ և առնու եօթն
 այլ այսս չար եւս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ .
 և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն :
 Եւ եղև մինչգետ խօսէր զայս՝ ձայն եբարձ կին մի 'ի
 ժողովորդէնէ անտի և ասէ . երանի է որովայնին որ կրեացն
 զքեզ՝ և ստեանցն որ զիւցուցին զքեզ : Եւ նա ասէ ,
 նա երանի՛ այնոցիկ , որ լսեն զբանն Այ և առնեն :

Տէրի Բեր Անուան Բերնարտ

Եւ ուսուցանէր 'ի միում ժողովորդանոցայն 'ի շաբա-
 թրս : Եւ ահա կին մի զոր ունէր այս հիւանդութեան
 ամս ութուսասն . և էր կարկամալ և ոչ կարէր ամե-
 նեկն 'ի վեր հայել : Եւ տեսեալ զնա Զնի կոչեաց առ
 ինքն և ասէ ցնա , կին դու , արձակել ես 'ի հիւանդուէ
 քումն : Եւ եղ 'ի վերայ նորա ձեռն . և առ ժամայն
 ուղղեցաւ և փառաւոր առնէր զԱՅ : Պատասխանի ետ
 ժողովորդապետն ցատուցեալ թէ ընդէր 'ի շաբաթու բը-
 ժըլկեաց Զն . և ասէ ցժողովորդն վեց օր է՝ յորս ար-
 ժան է գործել . յայնս եկայք բժշկեցարուք , և մի յա-
 ռուր շաբաթու : Պատասխանի ետ նմա ասէր և ասէ ,
 կեղծաւորք , իւրաքանչիւրք 'ի ձէնջ 'ի շաբաթու ոչ ար-
 ձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մարդ և տանի տայ ջուր :
 Իսկ այս դուստր Աբրահամու էր , զոր կապեաց Սատանայ
 ահաւաղիկ ութուսասն ամ , ոչ էր արժան արձակել 'ի
 կապանաց անտի 'ի շաբաթու : Եւ զայս իբրեւ ասէր ,
 յամօթ լինէին ամենքին որ հակառակն կային նմա : Եւ
 ամ ժողովորդն ուրախ լինէր 'ի վերայ ամ փառաւորու-
 թեանցն՝ որ գործէին 'ի նմանէ :

Տէրի Բեր Անուան Բերնարտ

Եւ եղև 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն իշխա-
 նայն փարիսեւոց 'ի շաբաթու ուտել հաց՝ և նոքա ըս-
 պասէին նմա : Եւ ահա այր ոմն էր անդ ջրդողեալ ա-
 ռաջի նորա : Պատասխանի ետ Զն և ասէ ցօրինաւորս
 և ցփարիսեցիս՝ եթէ արժան իցէ 'ի շաբաթու բժշկել .
 և նոքա լուռ եղեն : Եւ բուռն հարեալ զնմանէ՝ բը-
 ժըլկեաց զնա և արձակեաց : Եւ ասէ ցնոսա՝ ոյր ուրուք
 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրհոր , և ոչ վաղ-
 վաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու : Եւ ոչ կարա-
 ցին տալ նմա պատասխանի առ այն :

Տէրն Բար Երեմիայի Գրքի

Եւ եղև մինչ երթայր նա յԱրուսաղէմ . և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և գալիլեացոց : Եւ մինչ դեռ մտանէր 'ի գեօղ ուրեմն , պատահեցին նմա տասն այր բորոտ , որք կային 'ի հեռաստանէ . բարձին զձայնս և ասեն , Եթէ վարդապետ , ողորմեաց մեզ : Եւ իբրեւ ետես զնոսա՝ ասէ ցնոսա . երթայք ցուցէք զանձինս քահանային . և եղև իբրեւ զնացին առժամայն սրբեցան : Մի ոմն 'ի նոցանէ իբրեւ ետես , եթէ բժշկեցաւ , դարձաւ անդրէն , 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱՃ : Անկաւ առ ոստ նորա 'ի վերայ երեսաց իւրոց՝ և զոհանայր զնմանէ . և ինքն էր սամարացի : Պատասխանի ետ Եթէ և ասէ , ոչ տասն սորա սրբեցան . իսկ արդ ինունքն ուր են . զի ոչ գտան դառնալ տալ փառս ԱՅ , բայց միայն այլազղիս այս : Եւ ասէ ցնա . արի զնա զի հաւատք քո կեցուցին զքեզ :

Տէրն Բար Երեմիայի Գրքի

Եւ եղև 'ի մօտել նորա յԱրիբով կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիի : Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն , հարցանէր թէ զինչ իցէ այն : Եւ պատմեցին նմա՝ թէ Եթէ նազովրեցի անցանէ : Աղաղակեաց և ասէ , Եթէ որդի Դաւթի , ողորմեաց ինձ : Եւ որ առաջի երթային՝ սաստէին նմա զի լուսեցէ . և նա եւս առաւել աղաղակէր , որդի Դաւթի , ողորմեաց ինձ : Օտեղի էառ Եթէ և հրամայեաց ածել զնա առ իւր . և իբրեւ մերձ եղև առ նա՝ եհարց զնա և ասէ , զինչ կամիս դու զի արարից քեզ . և նա ասէ , տէր , զի բացին աչք իմ , և տեսից : Եւ Եթէ ասէ ցնա՝ հայեաց , հաւատք քո կեցուցին զքեզ : Եւ առժամայն ետես . երթայր զՅետ նորա և փառաւոր առնէր զԱՃ . և ամենայն ժողովրդեանն տեսալ տայր օրհնութիւն Աստուծոյ :

Ի ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԵՐԸՆԻՆ

Տէրն Բար Երեմիայի Գրքի

Եւ յետ երկուց աւուրց ել անտի և զնաց 'ի Գալիլիա : Օր ինքն իսկ Եթէ վկայեաց՝ եթէ մարդարէ յիւրում դաւառի պատիւ ոչ ունի : Այլ յորժամ եկն նա 'ի Գալիլիա , ընկալան զնա գալիլեացիքն . զի տեսալ եւս էր զամ նշանսն , զոր արար յԱրուսաղէմ 'ի տօնին . քանզի և նորա եկեալ էին 'ի տօնն : Եկն դարձեալ 'ի Կանա գալիլեացոց՝ ուր արար զՋուրն զինի : Եւ անդ էր թագաւորալն մի , որոյ որդի նորա հիւանդ կայր 'ի Կափառնայում : Կա իբրեւ լուաւ , եթէ Եթէ եկեալ է 'ի Հրէաստանէ 'ի Գալիլիա , եկն առ նա . և աղաչէր զի իջէ և բժշկեսցէ զորդի նորա . քանզի մերձ էր 'ի մեռանել : Ասէ ցնա , եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք : Ասէ ցնա թագաւորալն , տէր , էջ մինչեւ մեռեալ իցէ մանուկն իմ : Ասէ ցնա Եթէ , երթ որդին քո կենդանի է . և հաւատայ այրն բանին զոր ասաց նմա Եթէ և զնաց : Եւ մինչդեռ իջանէր՝ ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա . աւետիս ետուն և ասեն՝ թէ մանուկն նորա կենդանի է : Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց . և ասին ցնա՝ երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն : Գիտաց հարն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Եիսուս , թէ որդին քո կենդանի է . և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր : Օայս դարձեալ երկրորդ նշանս արար Եթէ եկեալ 'ի Հրէաստանէ 'ի Գալիլիա :

Տէրն Բար Երեմիայի Գրքի

Յետ այսորիկ տօն էր հրէից , և ել Եթէ յԱրուսաղէմ : Եւ էր յԱրուսաղէմ 'ի Պորթատիկէ աւազանին՝ որ կոչէր երրայեցերէն Բեթհեզդայ՝ հինգ սրահ : Երբ

անկեալ զնէր բազմութիւն յոյժ հիւանդաց . կուրաց
կաղաց՝ դոսացեղոց՝ որ ակն ունէին ջրոցն յուզելոյ : Եւ
հրեշտակ տեսան իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և
յուզէր զՅուրս . և որ նախ ՚ի շարժումն ջրոցն իջանէր
յաւազանն՝ բժշկէր , ոչ ունեցով նշան հիւանդութեան .
Եւ անդ էր այր մի , որոյ երեսուն և ութ ամ էր ՚ի
հիւանդութեան իւրում . զնա իբրեւ ետես Յն՝ զի ան-
կեալ զնէր , և զիտաց եթէ բազում ժամանակք են այ-
նուհետեւ , ասէ ցնա՝ կամիս ողջ լինել : Պատասխա-
նի ետ նմա հիւանդն . տէր , ոչ զոք ունիմ , թէ յոր-
ժամ ջուրքն յուզեցին , արկցէ զիս յաւազանն . և մինչ
ես դանդաղիմ , այլ որ քան զիս յառաջագոյն իջանէ :
Ըսէ ցնա Յն , արի առ զմահիւն քո և զնա : Եւ ող-
ջացաւ այրն . և յարեաւ առ զմահիւն իւր և շրջէր . և
էր շարաթ յաւուրն յայնմիկ : Ըսեն հրեայքն ցբժշկելն՝
շարաթ է և ոչ է արժան քեզ առնուլ զմահիւն քո .
Պատասխանի ետ նոցա և ասէ . որ բժշկեացն զիս , նա
ասաց ցիս , առ զմահիւն քո և զնա : Հարցին ցնա և
ասեն , ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ , առ զմահիւն քո
և շրջեաց : Եւ բժշկեալն ոչ զիտէր թէ ո՞վ իցէ . քան-
զի Յն խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղուջէ անտի : Եւտ
այտորիկ դտանէ զնա Յն ՚ի տաճարին , և ասէ ցնա . Ա-
հաւազիկ ողջացար , մի եւս մեղանչէր , զի մի շար ևս
ինչ լինիցի քեզ : Գնաց այրն և պատմեաց հրէիցն , եթէ
Յն էր որ բժշկեացն զիս : Եւ վասն այնորիկ հաւածէին
զՅն հրեայքն , զի զայն անէր ՚ի շարաթու : Եւ Յն
պատասխանի ետ նոցա՝ Հայր իմ մինչեւ ցայժմ դորձէ՝
և ես դորձեմ : Վասն այնորիկ առաւել խնդրէին հը-
րեայքն սպանանել զնա , զի ոչ միայն լուծանէր զաբա-
թըս , այլ և Հայր իւր կոչէր զՄատուած , և հաւասար
առնէր զանձն Մատուծոյ :




Տէրի Բեր Յիսուս Բրիտոս

Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ՚ի ծռէ . և
հարցին ցնա աշակերտքն նորա և ասեն . Սարբի , ո՞ր
ֆեսս է . սորա՞ , թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի .
Պատասխանի ետ Յն , ոչ դորա ֆեսս է , և ոչ հօր և
մօր իւրոյ , այլ զի յայանի լեցին գործքն Այ ՚ի դմա .
Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեա-
լըն զիս՝ մինչ աւուր կայ . զայ զինչէր , յորժամ ոչ ոք
կարէ գործել : Մինչդեռ յաշխարհի եմ , լոյս եմ աշ-
խարհի : Օայս իբրեւ ասաց , եթուք ՚ի գետին . և ա-
րար կաւ ՚ի թրոյն , և ձեփեաց զկաւն ՚ի վերայ աշաց
կուրին : Եւ ասէ ցնա՝ երթ լուս յաւազանին Սելովմայ
որ թարգմանի առաքեալ . չոքաւ լուացաւ , եկն և տե-
սանէր : Իսկ զրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառա-
ջագոյն՝ եթէ մարացիկ էր , ասէին՝ ո՞չ սա էր որ նըս-
տէրն և մուրանայր . կէսքն ասէին նա է . այքն ասէին
ոչ այլ նման է նմա . և ինքն ասէր՝ թէ ես եմ : Ըսեն
ցնա՝ իսկ զիմորդ բացան աչք քո : Եւ ետ պատասխա-
նի . այր մի՝ որում Յնն ասեն , կաւ արար և ձեփեաց
զաչս իմ , և ասէ ցիս՝ երթ ՚ի Սելովմա և լուս . չո-
քայ լուացայ՝ և տեսանեմ : Ըսեն ցնա՝ ո՞ր է նա . ա-
սէ ցնոսա՝ ոչ զիտեմ :

Ըծին առ փարիսեցիսն զնա՝ որ երբեմն կոյրն էր . և
էր շարաթ յորժամ զկաւն արար Յն և երաց զաչս
կուրին : Գարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն՝ թէ
զիմորդ տեսանես . և նա ասէ ցնոսա՝ կաւ եզ ՚ի վերայ
աշաց իմոց , և լուացայ և տեսանեմ : Ըսեն ոմանք ՚ի
փարիսեցւոյն . ոչ է այրն այն յԱյ զի զշարաթս ոչ
պահէ . կէսքն ասէին , իսկ զիմորդ կարէ մարդ մեղաւոր
այսպիսի նշանն առնել . և էին հերձուածք ՚ի մէջ նոցա .
Ըսեն դարձեալ ցկոյրն՝ դու զի ասես վասն նորա՝ զի ե-
րաց զաչս քո . և նա ասէ՝ թէ մարդարէ է : Եւ ոչ
հաւատային հրեայքն զնմանէ՝ եթէ կոյր էր և բացաւ ,

մինչեւ կոչեցին զծնօղս բացելուն : Հարցին ցնոսա և ասեն . սա է որդին ձեր , զորմէ դուքն ասէիք՝ թէ կոյր ծնաւ . արդ զիւրդ տեսանէ : Պատասխանի ետուն նոցա ծնօղքն նորա և ասեն . զիտեմք՝ զի սա է որդին մեր և զի կոյր ծնաւ . բայց զիւրդ այժմիդ տեսանէ՝ ոչ զիտեմք . կամ թէ ո՛ր երաց զաչս դորա՝ մեք ոչ զիտեմք . ցլա իսկ հարցէք , ինքնին 'ի չափ հասեալ է՝ ինքն իսկ խօսեսցի վասն իւր : Չայս ասացին ծնօղքն նորա , զի երկնչէին 'ի հրէիցն . քանզի ուխտ եղեալ էր հրէից , եթէ ոք խօստովանեսցի . զնա Քրիստոս՝ 'ի բաց կացցէ 'ի ժողովրդեանէն : Վասն այնորիկ ասացին ծնօղքն նորա , թէ ինքնին 'ի չափ հասեալ է՝ ցնա իսկ հարցէք :

Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր , և ասեն ցնա , տուն փառս ԱՅ , մեք զիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է : Եւ նա ասէ , թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ զիտեմ . բայց ըայս զիտեմ՝ զի կոյր էի՝ և արդ տեսանեմ : Դարձեալ ասեն ցնա . զինչ արար քեզ՝ զիւրդ երաց զաչս քո : Պատասխանի ետ նոցա , այժմ ասացի ձեզ և ո՛չ լուայք՝ զի կամիք միւսանդամ լսել . մի թէ և դուք կամիք աշակերտել նմա : Երբա հայհոյէին զնա և ասէին . դու լիջիր նորա աշակերտ . մեք Մովսէսի աշակերտ եմք . մեք զիտեմք՝ զի ընդ Մովսէսի խօսեցաւ ԱԾ . զսա ոչ զիտեմք ուստի՝ իցէ : Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա՝ այդ իսկ են սքանչելիք . զի դուք ոչ զիտեք ուստի՝ իցէ՝ և զիմ զաչս երաց : Գիտեմք՝ զի ԱԾ մեղաւորաց ոչ լսէ . բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամն նորա առնիցէ , նմա լսէ : Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ երաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ : Եթէ ոչ ԱՅ էր այրն այն , ոչ կարէր առնել ինչ . Պատասխանի ետուն և ասեն ցնա՝ 'ի մեզս իսկ ծնեալ ես ամենեւին . և դու վարդապետ լինիս մեր . և հանին զնա արտաքս : Լուաւ ԶՅ՝ եթէ հանին զնա արտաքս . և իբրեւ եզիտ զնա , ասէ ցնա՝ դու հաւատաս յԱրդի Աստուծոյ : Եւ պատասխանի ետ և ասէ , տէր , ո՛վ է զի հաւատացից 'ի նա , Ասէ ցնա ԶՅ . և տեսեր զնա , և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է : Եւ նա ասէ , հաւատամ տէր , և երկիր եպագ նմա :



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL004006

